Armenian nouns have the categories of definite and indefinite. The definite category shows that the object is known to the speaker. The indefinite category (անորոշ առում) shows that the object is unknown to the speaker. The definite category is expressed by means of articles (հոդ) ը or ն, and the indefinite category by means of article մի or by absence of any article.

Examples:

Expression of definite

Վարդը աճում է պարտեզում:

The rose grows in the garden

Ծերուկին եկավ:

The old man came.

Expression of indefinite

Վարդ է աճում պարտեզում:

A rose grows in the garden.

Մի ծերուկ եկավ:

An old man came.

Words that end with a consonant take the article "ը", e.g., ծառ - ծառը (tree), գիրք - գիրքը (book), թուղթ - թուղթը (paper), and those that end with a vowel take the article "ն", e.g. ձի - ձին (horse), առու - առուն (gutter), երեխա - երեխան (child), տղա - տղան (boy), ոսկի - ոսկին (gold), etc.

Sometimes instead of the article "ը", the article "ն" is used. This happens when the first sound of the coming word is a vowel, e.g., Ուսանողը գնաց - the student went away, but ուսանողն ասաց - the student said, սենյակը լուսավոր է - the room is light, but սենյակն արևոտ է - the room is sunny, etc.

Section 48

Only the Nominative, Dative and Accusative cases take a definite article.

====Ex. 67==== Write the following nouns with their corresponding definite article.

Հայացք, կոշիկ, ծայր, սենյակ, դուռ, բանալի, հայելի, ծերունի, ծառա, գրպան, տղա, ճառագայթ, բնակարան, գինի, կատու, ծաղկաման:

Example:

հայացք - հայացքը

բանալի - բանալին

====Ex. 68==== Nouns of indefinite form write in definite.

1. Սուրիկը վերցրեց թուղթ ու մատիտ և նամակ գրեց: 2. Նա նամակ ուղարկեց իր եղբորը: 3. Աշոտի քույրը կարդում է գիրք: 4. Նա շատ է սիրում գրքեր: 5. Ճանապարհին հանդիպեց բանակայինին: 6. Նա դաս է պատմում: 7. Մի կին էր անցնում փողոցով: 8. Մի գիրք նվիրեցին ինձ:

====Ex. 69==== Fill in the blanks with the corresponding articles.

1. Վաղուց նրա աչքեր___ չէին տեսնում, ականջներ___ ծանր էին լսում, իսկ գլուխ___ շարունակ դողում էր:
2. Նստում էր Հասո___ ժայռերի գլխի___, աչքեր___ ուղղում լայն հորիզոնի___:
3. Ձի___ զգում էր, որ հեծվոր___ իրեն փաղաքշական խոսքեր է ուղղում:
4. Տան դուռ___ ճռռալով բացվեց, և երևաց պրակտիկանտուհի___:
5. Պրակտիկանտուհու___ շատ դուր եկավ այդ պատասխան___:

Text for translation:

Vladimir Ilyich Lenin

Վլադիմիր Իլյիչ Լենին

Vladimir Ilyich Lenin was a friend of the workers. He wanted to change all the orders. He wanted all the working people to live well. Lenin struggled for work. Lenin began gathering those who were for the workers. As their number grew, the working party - the party of communists became stronger. The party saw that nothing will be achieved without struggle. All the workers around the world began to understand this.

Vocabulary
Բառարան

was a friend to workers - բանվորների բարեկամն էր wanted - ցանկանում էր, ուզում էր to change - փոխել, վերափոխել to live well - լավ ապրել struggle for work - պայքարում էր գործի համար to gather - հավաքել their number grew - նրանք ավելի շատացան will not achieve - չես հասնի all the countries - բոլոր երկրների

Cases of the Armenian Language
Հայերենի հոլովները

Section 49

There are seven cases in the Armenian language:

- Ուղղական - Nominative
- Սեռական - Genetive
- Տրական - Dative
- Հայցական - Accusative
- Բացառական - Ablative
- Գործիական - Instrumental
- Ներգոյական - Locative

Nominative Case * Ուղղական հոլով

Section 50

The nominative case, as the case of the object, shows the doer or the subject, e.g.

Աշակերտը գնաց դպրոց:

The pupil went to school.

Գարունը եկավ:

The spring came.

Դասերը վերջացան:

The lessons are over.

The nominative case may also be the nominal part of the compound predicate (ստորոգելիական վերադիր) and attribute (որոշիչ), e.g.

Սուրենը և Արամը ընկերներ են:

Aram and Suren are friends.

Ուսուցիչ Գրիգորյանը զեկուցում կարդաց:

Teacher Grigoryan read a report.

The nominative case answers the questions ո՞վ who? and ի՞նչ what?

Ex. 70

Copy out and underline the nouns in Nominative case.

1. Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր:
2. Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում:
3. Նրա բնակարանը գտնվում էր քաղաքի կենտրոնում:
4. Ննջարանի դռները բացվեցին:
5. Տիկին Ալիմյանը սկսեց հեկեկալ:
6. Ծուխն արդեն շրջապատել էր ամբողջ տունը:
7. Քրտինքը հոսում էր Միքայելի երեսից:
8. Տան մուտքի առջև կանգ էին առնում կառքեր, և նրանց միջից դուրս էին գալիս Ալիմյանների ազգականները, բարեկամները, ծանոթները: (Շիրվանզադե)

Ex. 71

Make up sentences using nouns as the nominal part of compound predicate.

Ուսանող, գիրք, կենդանի, մայր, հայր, ծառ, շենք, գյուղացի, քաղաքացի, բանվոր:

Example: Վահանը ուսանող է:

Ex. 72

Translate into Armenian.

Our country is the Soviet Union. It is a huge state. There are fields, forests, mountains and seas in our country. In the fields grow wheat, rye, oats, barley and corn. There is fish in rivers and seas. There are animals and birds in woods.

Vocabulary (Բառարան)

- huge - հսկա
- grow - աճում են
- rye - հաճար
- oats - վարսակ
- barley - գարի
- corn - եգիպտացորեն

Genitive case

Մեռական հոլով

The genitive case is used to determine belonging and is usually an uncoordinated attribute (հասկացուցիչ) in the sentence, e.g.

Աշակերտի գրքերը նոր են:
The books of the pupil are new.
Մենյակի դռները բացվեցին:
The doors of the room opened.

The uncoordinated attribute in the Armenian language usually stands before the attributive (definable) word.

Section 52

The genitive case has the following endings:

- -ի աշակերտ աշակերտի
- -ու ծերունի ծերունու
- -ան դուռ դռան
- -յան ուսանողություն ուսանողության
- -վա օր օրվա
- -ոջ քույր քրոջ
- -որ եղբայր եղբոր
- -ց Գրիգորենք Գրիգորենց

Definite articles are not used with the genitive case. The genitive case answers the question who's? – ու՞մ and why? – ինչի՞

====Ex. 73==== Copy out and underline the nouns in the genitive case.

1. Նա առաջին կուրսի ուսանող է:
2. Լոեցին ջութակի հնչյունները:
3. Պատշգամբում հանդիպեցի տանտիրոջ աղջկան:
4. Արամյանը մտավ քարտուղարի սենյակը:
5. Դռան առջև կանգնած էր մի երիտասարդ:
6. Մայրը վերցրեց որդու նկարը:
7. Խոսակցության ձայներից երեխաները արթնացան:
8. Արշակի դեմքը գունատ էր:

====Ex. 74==== Copy out and underline the genitive case endings.

1. Սենյակի օդը մաքուր է:
2. Էմման սրբեց պատուհանի ապակիները:
3. Այս տարվա ձմեռը շուտ անցավ:
4. Դռան բակալին ինձ մոտ է:
5. Մարիամը սեղանի վրա դրեց գինու բաժակները:
6. Իմ ընկերուհու սենյակը շատ գեղեցիկ է:
7. Իմ ընթերցանության դասը հետաքրքիր անցավ:
8. Բարձրացել է ուսանողության գիտակցական կարգապահությունը:
9. Նրա կնոջ եղբայրը մեց մոտ է աշխատում:
10. Իմ ընկերոջ ծնողները ապրում են գյուղում:
11. Երեխաները խաղում են Աշոտենց բակում:
12. Անուշի(?) եղբոր տղան դպրոց է գնում:
13. Քո հոր գրադարանը հարուստ է:

====Ex. 75==== Make up sentences using the following words in genitive case. Դպրոց, արև, ամիս, ուսում, եղբայր, ընկեր:

Example: Նրանք խաղում են դպրոցի բակում:

====Ex. 76==== Translate into Armenian.

1. Yerevan is the capital of Armenia.

2. During the day it is hot in Yerevan and chilly in the evening.
3. My sister's friend studies in the University.
4. A Russian language study group was organized by suggestion of the students.
5. He follows his father's advice.
6. He will return at the end of the month.

Dative Case

Տրական հոլով

The dative case shows a person or a subject, to which concerns or towards which is directed the action. The dative case answers questions ո՞ւմ (to who?) ի՞նչի(ն) (to what?). If the dative case is used in indefinite form (անորոշ առում) it coincides with the genitive case. In order not to confuse the dative indefinite with the genitive, it should be remembered that genitive shows belonging and is connected with nouns, and dative shows the subject to which the action is directed, and that's why it is mostly connected with verbs. Compare: Ուսանողի գիրքը նոր է - the book of the student is new: Ես մոտեցա մի ուսանողի - I came up to a student.

In the sentence, the dative case can be the:

Indirect object:

Ուսանողը մոտեցավ գրատախտակին:
The student went to the blackboard.
Դասախոսը գիրքը տվեց ուսանողին:
The teacher gave the book to the student.

Adverbial modifier of place:

Նրանք պառկած էին գետի ափին:
They were laying on the riverbank.

Adverbial modifier of time:

Գարնանը գնալու ենք Մոսկվա:
We will go to Moscow in spring.

Adverbial modifier of purpose:

Աշոտը գնաց գրադարան՝ գրքի:
Ashot went to the library for a book.

====Ex. 77==== Copy out and underline the nouns in the dative case.

1. Մայրս չէր հավատում այդ գրույցներին:
2. Ամեն մարդ նրա խորհրդին էր դիմում:
3. Նա նայեց իր եղբոր երեսին:
4. Նույն վայրկյանին բոլորը կանգնեցին:
5. Դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին:
6. Խումբը հետևեց նրա օրինակին:
7. Նա փաթաթվեց մոր պարանոցին:
8. Աչքերը հառել էր բեմին:
9. Երգչուհին ծաղիկները սեղմեց կրծքին:

10. Ես նայեցի Լևոնին:

11. Ուժեղ լույսը վնաս է աչքերին:

12. Համալսարանում հանդիպեցի իմ ընկերոջը:

====Ex. 78==== Make up sentences, using the following nouns in definite and indefinite forms of the dative case.

Ուսանող, գիրք, աշխատանք, բանվոր, ծառ: Example: Նա գիրք նվիրեց մի ուսանողի: Նա գիրք նվիրեց ուսանողին:

====Ex. 79==== Translate into Armenian.

1. He wrote a long letter to Aram.
2. This book belongs to my friend.
3. We relaxed on the beach of the sea.
4. They came near to their aim.
5. Students asked a favor of their teacher.

Accusative case

Հայցական հոլով

Section 55

The accusative case shows the object on which directly falls the action of the subject. The accusative case of direct modifier is used with transitive verbs, e.g.

Արամը սիրում է իր ուսուցչին:

Aram loves his teacher.

Արամը վերցրեց գիրքը:

Aram took the book.

Դասախոսը գովում է ուսանողին:

The tutor praises the student.

In Armenian the accusative case has the following peculiarity. If the noun shows or means a person, the accusative coincides with the dative case in form, e.g.

Նա հարգում է իր դասախոսին:

He respects his professor.

And if the noun shows an object or means one, the accusative case coincides with the nominative case in form, e.g.

Նա հարգում է իր աշխատանքը:

He respects his work.

A noun showing a person in Armenian can also be used in the meaning of a thing, compare:

Նա կանչեց բժշկին - Նա բժիշկ կանչեց:

He called the doctor. - He called a doctor.

Փողոցում տեսա այդ մարդուն: Փողոցում տեսա մի մարդ:

I saw that man in the street. I saw a man in the street.

In Armenian, nouns indicating animate (except persons) and inanimate objects, are taken as things. The accusative case answers the questions ում (whos) ինչ (what).

In a sentence the accusative case of a direct modifier can also be an:

Adverbial modifier of place:

Աշխատողները գնացին դաշտ:
Workers went to the field.

Adverbial modifier of time:

Գիշերը ձյուն եկավ:
It snowed last night.

Adverbial modifier of measure and quantity:

Մի ժամում անցանք քսան կիլոմետր:
We covered 20 km in one hour.

====Ex. 80==== Copy out and underline the nouns in accusative case.

1. Երեկ ես գիրք ու տետրակ գնեցի:
2. Այսօր նա տեսավ իր քրոջը:
3. Ես դեռ չեմ վերջացրել այդ դժվար աշխատանքը:
4. Դու կարդացել ես այդ պատմվածքը:
5. Կոլտնտեսականները հավաքում են առատ բերք:
6. Մայրը գրկեց իր երեխային:
7. Քնարիկը համբուրեց իր եղբորը:
8. Ուսանողները գնացին Սևան:
9. Նա մտավ պարտեզ:
10. Այս գիշեր ցուրտ էր:

====Ex. 81==== Copy out the nouns meaning person in one column and nouns meaning objects in another.

1. Ով չէր ճանաչում կավածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին:
2. Մահամերձն աչքերը բաց արավ, գլուխը դանդաղորեն բարձրացրեց:
3. Կորցնելով ամուսնուն՝ նա գտնում էր որդուն:
4. Մոր խոսքերը ճնշում էին նրա հոգին:
5. Նա ծրարը դրեց գրպանը:
6. Միքայելի առաջին միտքն էր գտնել եղբոր զավակներին ու կնոջը:
7. Ծուխն արդեն շրջապատել էր ամբողջ տունը:
8. Զարթնեցրեց ծառային, հետո աղախնին:
9. Նա վերցրեց նամակը:
10. Նա մի ձեռով բռնել էր Վասյային, մյուսով գրկել Ալոշային:

====Ex. 82==== Make up sentences using the following words in the accusative case:

փողոց, դերասան, բժիշկ, կավիճ, բաժակ, բանվոր:

Example: Երեխան դուրս եկավ փողոց:

====Ex. 83==== Change the direct modifier expressed by noun-thing into a noun person.

1. Նա ճանաչում է այդ փողոցը: 2. Մենք տեսել ենք այդ կինոնկարը: 3. Ով է նկարել նկարը: 4. Միրում եմ պայծառ եղանակ:

Example: Նա ճանաչում է անդ գրողին:

====Ex. 84==== Translate into Armenian.

1. I respect my teacher.
2. He took an exam of Armenian language.
3. I wish you health and luck in work.
4. The factory exceeded the plan.
5. The engineer invented a new car.
6. The worker got a bonus.
7. The principal called for Aram and Suren.
8. He listened to an interesting report about Earth Satellite.

Ablative case

Բացառական հոլով

The ablative case shows the subject from which starts, proceeds the action, and answers the questions *ն`ւմից* (from who) *ինչի`ց* (from what), e.g.

Անուշը իր մորից ստացավ:
Anush got a present from her mother.
Արամը դուրս եկավ Մոսկվայից:
Aram left Moscow.
Առավոտից անձրև էր գալիս:
It was raining since morning.

The ablative is formed by endings of *-ից* or *-ուց*, e.g., *գիրք - գրքից*, *քաղաք - քաղաքից*, *ուկի - ուկուց*, etc.

In sentences the ablative is usually an indirect object

Սուրենն իր ընկերոջից նամակ ստացավ:
Suren received a letter from his friend.
Ծառից տերև պոկեցի:
I picked a leaf from the tree.

It can also be:

Modifier of place:

Կայարանից դուրս եկավ գնացքը:
The train left the station.

Modifier of time:

Այս տարվանից մենք սովորում ենք հայերեն:
We study Armenian starting this year.

Modifier of reason:

Նա ցրտից կարմրել է:
He got red from the cold.

In literary language ablative doesn't take definite article.

====Ex. 85==== Copy out and underline the nouns in ablative.

1. Նա վերադառնում էր գյուղից:
2. Արտերից առատ բերք է սպասվում:
3. Ուսանողները դուրս եկան լսարանից:
4. Աշոտը ֆիզիկայից գերազանց թվանշան ստացավ:
5. Նա գոհ էր իր աշխատանքից:
6. Քույրը մեծ է եղբորից:
7. Էմման գրախանութից գնեց գեղարվեստական գրքեր:
8. Նրա աչքերից արտասուքներ էին թափվում:
9. Փողոցից կարելի է տեսնել բակն ու տան սրահը:
10. Գարունը այգիներից բերում էր ծառերի բույրը:
11. Իմ ընկերը անցյալ տարվանից աշխատում է գրադարանում:

====Ex. 86==== Translate the text of the previous exercise and point out how the meaning of the ablative is expressed in English.

====Ex. 87==== Make up sentences using the following nouns in ablative.

Անտառ, առու, լսարան, ծերունի, հող, աղավնի:

====Ex. 88==== Translate into Armenian.

1. Tourists from many countries visit Yerevan. 2. A picturesque view of Ararat opens from the third floor of the hotel. 3. They move from Yerevan to Tbilisi. 4. I got a letter from my friend. 5. In a few days he will return from practical work. 6. The doctor advised me to cancel the journey. 7. I enjoyed the trip around the country. 8. Many friends of mine leave for Leningrad in June.

Instrumental Case

Գործիական հոլով

Section 57

The instrumental case shows the instrument of the action and answers the questions ումն՝ Վ by who? and ինչն՝ Վ by what? in the sentence.

The instrumental case is an indirect object, e.g.

Աշակերտը գրում է մատիտով:
The student writes with a pencil.
Նա տարված է ընթերցանությամբ:
He is engaged in reading.

The instrumental case forms by endings ով, in some cases բ (յամբ), e.g., ծառ - ծառով, փողոց - փողոցով, ձեռք - ձեռքով, մեծություն - մեծությամբ, etc. Besides the indirect object in the sentence, the instrumental case can also be:

Modifier of place:

Տրամվայն անցնում է փողոցով:
The tramway is crossing the street.

Modifier of time:

Գիշերով մենք դուրս եկանք տնից:
We left the house at night.

Modifier of action:

Նրանք վազքով հասան հրապարակ:
They reached the square running.

In literary language the instrumental case doesn't take definite article.

Note: Verbs նշանակել to set, fix, համրել to count, ընտրել to choose, լինել to be, ղեկավարել to govern and some others rule the nominative case or the dative, but not the instrumental.

Ընկեր Գրիգորյանին ընտրեցին կոմիտեի նախագահ:
Mr. Grigoryan was chosen the president of the committee.
Սուրենը երկրորդ կուրսի ուսանող է եղել:
Suren was the student of the second course.

====Ex. 89==== Copy out and underline the nouns in instrumental case.

I. 1. Նրանք մտնում էին բակը հանգիստ քայլերով: 2. Մանեն մռայլ հայացքով նայում էր իր առջև բացված այդ հիանալի տեսարանին: 3. Խոշոր աչքերը վառված էին անկեղծ զայրույթով: 4. Նա լսում էր մեծ ուշադրությամբ և հետզհետե լցվում բարկությամբ: (Նար - Դոս)

II. 1. Զինվորները վերադառնում էին գիշերով, զենքով, առանց զենքի, ծածկվում էին ցերեկով մարագներում: 2. Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ: 3. Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճյուղերից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: 4. Դիլան դային ձորով իջավ ներքև: (Ակ. Բակունց)

====Ex. 90==== Make up sentences using the following words in instrumental case.

փողոց, դաշտ, ծով, կացին, աստամ, ձեռք, զեկուցում:

Example: Մեքենան սլանում է փողոցով:

====Ex. 91==== Translate into Armenian.

1. We went by train. 2. The pupil writes with a pencil. 3. He lives with his work. 4. I went there along the bank, and returned through the forest. 5. I will leave you for a few minutes. 6. She listened to him with delight. 7. It's necessary to go for physical training. 8. He was decorated with the Order of Lenin. 9. I am proud of successes achieved by our country.

Locative Case

Ներգոյական հոլով

Section 58

The locative case shows the place where the action takes place, and answers on questions ո՞րտեղ where, rarely ո՞ւմ մեջ in who. In the sentence locative case is the modifier of place, e.g.

Ուսանողը պարապում է հայոց լեզվի կաբինետում:

The student studies in the Armenian language cabinet.

Իմ եղբայրը աշխատում է գործարանում:

My brother works in the factory.

The locative case forms by ending ում, e.g., անտառ - անտառում, քաղաք - քաղաքում, լսարան - լսարանում, etc. In literary language the locative case doesn't take definite article. In the sentence locative case can be modifier of time, e.g.

Մի օրում ես վերջացրի իմ աշխատանքը:

I finished my work in a day.

Note: Not infrequently, genitive case + postposition մեջ express the meaning of the locative case, e.g., գրքի մեջ in the book, նամակի մեջ in the letter, ընկերոջ մեջ in a friend, բարեկամի մեջ in a relative, etc.

====Ex. 92==== Copy out and underline the nouns in locative case.

1. Նրա փոքր քույրը սովորում է դպրոցում:
2. Այգում խաղաղ էր:
3. Նրա աչքերում արցունք երևաց:
4. ըՓողոցներում ցելխ էր:
5. Ընտանիքում նրան բոլորն էլ սիրում էին:
6. Համալսարանում այսօր ժողով է լինելու:
7. Նա ապրում է հանրակացարանում:
8. Երկնքում փայլում են աստղերը:
9. ըՏղաները լողացան գետում:
10. Գրադարանում շատ գրքեր կան:

====Ex. 93==== Translate into English.

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Ծառում մի փչակ,
Փչակում մի բուն,
Բնում երեք ձագ
Ու վրան կկուն:
(Հովհ. Թումանյան)

====Ex. 94==== Make up sentences using the following nouns in locative case.

սենյակ, ճաշարան, դահլիճ, շաքաթ, պահարան:

Example: Երեխան խաղում է սենյակում:

====Ex. 95==== Translate into Armenian.

1. It was wet and cold in the forest.
2. The meeting took place in Lenin square.
3. In Moscow University study representatives of many nations.
4. A student club was opened in our department.
5. Much was said about the

lazy students at the meeting. 6. Ashot studies in the 9th grade. 7. Tourists stopped at the hotel. 8. There are many nice buildings in Yerevan. 9. When those in Moscow go to bed, those in Kamchatka wake up.

====Ex. 96==== Read. Determine the cases of nouns.

Արևի շողը դիպավ Լևոնի աչքերին: Նա վեր ցատկեց, նստեց անկողնի մեջ ու դուրս նայեց լուսամուտից՝ սգալով անորոշ մի կսկիծ: Սարալանջերն արդեն սևացել էին: Չյունը նահանջում էր դեպի հեռավոր գագաթները: Դրսում մի կով բառաչեց թավ ու երկար: Արևն ամբողջովին դուրս ելավ լեռան թիկունքից: Այդ ի՞նչ կսկիծ էր: Այդպիսի կսկիծով քնից զարթնում են այն մարդիկ, որոնք նախորդ օրը կորցրել են թանկագին մի բան, կամ գործել են ծանր մի հանցանք: (Ն. Զարյան)

====Ex. 97==== Make up sentences using words բժիշկ and գիրք in all the cases.

Example: ուղղական, ո՞վ - Բժիշկը փրկեց հիվանդի կյանքը:

Types of Declension of Nouns

Գոյականի հոլովումը

Section 59

There are 8 types of declensions in the Armenian language. The type of declension is determined by the index (հոլովիչ) of the genitive case. The genitive case has the following endings (indexes): ի, ու, ան, յան, վա, ոջ, որ, ց. Endings ի, ու, վա, ոջ, ց are directly added to the stem, e.g., անտառ - անտառի (forest - forest's), ծերունի - ծերունու (old man - old man's), օր - օրվա (day - day's), ընկեր - ընկերոջ (friend - friend's), Գրիգորենք - Գրիգորենց (Grigor - Grigor's). Regarding ան, յան, որ they in fact are not endings, but the indexes of changing stems, e.g., տուն - տան (house - house's), մեծություն - մեծության (grandeur - grandeur's), եղբայր - եղբոր (brother - brother's).

Section 60

Distinctions of the declension system of the Armenian language are expressed only in forms of Genitive case (and the Dative case coinciding with it). In all the other cases nouns in all 8 declensions practically have one and the same endings.

Declension by ի

ի Հոլովում

Section 61

The largest part of the Armenian nouns belong to declension on ի, e.g., ձեռք (hand), ոտք (leg), բերան (mouth), սեղան (table), լույս (light), դաս (lesson), քար (stone), փողոց (street), գնացք (train), խնձոր (apple), մատիտ (pencil), բժիշկ (doctor), արև (sun), etc.

Examples of declensions of nouns by ի

Singular Եզակի թիվ

Ուղղական	Nominative	ո՞վ	ուսանող (ը)	(the) student
Սեռական			Genitive ու՞մ	ուսանողի
student's				

Տրական	Dative	ու՞մ	ուսանողի (ն)	to (the) student
Հայցական	Accusative	ու՞մ	ուսանողի (ն)	(the) student

ի՞նչ(ը) ուսանող(ը) (the) student

Բացառական	Ablative	ումի՞ց	ուսանողից	from the student
Գործիական	Instrumental	ումն՞վ	ուսանողով	by, of the student
Ներգոյական	Locative	-	-	-

Plural - Հոգնակի

Ուղղ.	ովքեր	ուսանողներ (ը)	(the) students
Սեռ.	ու՞մ	ուսանողների	students'
Տր.	ու՞մ	ուսանողների (ն)	to (the) students
Հայց.	ու՞մ,	ուսանողների (ն)	(the) students

ինչե՞ր(ը) ուսանողներ(ը) (the) students

Բաց.	ումի՞ց	ուսանողներից	from students
Գործ.	ումն՞վ	ուսանողներով	by the students

Singular - Եզակի թիվ

Ուղղ.	ի՞նչ (ը)	անտառ (ը)	(the) forest
Սեռ.	ինչի՞	անտառի	forest's
Տր.	ինչի՞ (ն)	անտառի (ն)	to (the) forest
Հայց.	ի՞նչ (ը)	անտառ (ը)	(the) forest
Բաց.	ինչի՞ց	անտառից	from the forest
Գործ.	ինչո՞վ	անտառով	by, of the forest
Ներգ.	ինչու՞մ	անտառում	in the forest

Plural - Հոգնակի թիվ

Ուղղ.	ինչե՞ր (ը)	անտառներ (ը)	(the) forests
Սեռ.	ինչերի՞	անտառների	forests'
Տր.	ինչերի՞ (ն)	անտառների (ն)	to (the) forests
Հայց.	ինչե՞ր (ը)	անտառներ (ը)	(the) forests
Բաց.	ինչերի՞ց	անտառներից	from the forests
Գործ.	ինչերո՞վ	անտառներով	by the forests
Ներգ.	ինչերու՞մ	անտառներում	in the forests

Section 62

All plural Armenian nouns decline by the way of declension by ի. Exceptions form the nouns belonging to the declension by ց.

====Ex. 98==== Decline the following nouns in singular and in plural.

դասախոս, բանվոր, քաղաք, գործարան:

====Ex. 99==== Decline the words ձկնորս and ծով in sentences.

Example: Ուղղ. ո՞վ - Ձկնորսը ձուկ է որսում:

====Ex. 100==== Copy out the sentences inserting the missing endings of the nouns.

1. Աշակերտը գիրքը մաքուր է: 2. Աշակերտը մոտեցավ գրատախտակի: 3. Գիրքը դրված է ս դան: 4. Նա շատ է սիրում իր երեխաների: 5. Էմման դուրս եկավ սենյակ: 6. ըն սուցիչը գոհ էր իր աշակերտների: 7. Նրանք հպարտանում են իրենց աշխատանք: 8. Երեխան վ գում է փողոց: 9. Ես աշխատում եմ գործարան: 10. Գրադարանը շատ գրքեր կան:

====Ex. 101==== Copy out using the words in brackets in the necessary form.

1. Դաշտը վարում են (տրակտոր): 2. Եղբայրս ինձ (գիրք) նվիրեց: 3. ըՎաղուց նա հեռացել (գյուղ): 4. Դու ապրում ես (քաղաք): 5. Այդ աշխատանքը արվել է (մեքենա):

====Ex. 102==== Read and point out the nouns belonging to declension by ի.

Եվ արևածագին սկսնում էր գյուղի ծանր աշխատանքի առօրյան: Ձմեռն էր լավ: Աշխատանք քիչ կար, տավարը գոմում էր, խոտն ու դարմանը՝ մարագում: Պապս ոչ նստում էր դարբասի քարին, ոչ էլ պատկում բակի թախտի վրա: Արև օրերին նրա փոխարեն հավերը, սառած գետինը կոխ տալով, մոտենում էին, վիզները երկարում, թռչում ու շարվում թախտի վրա, գլուխները ծածկում թենրի տակ: (Ա. Բակունց)

Declension by ու Ու Հոլովում

Section 63

To the declension by ու belong:

1. Nouns ending with ի, e.g., ապակի glass, թշնամի enemy, քամի wind, գինի wine, որդի son, գյուղացի peasant, ձի horse, etc.
2. Infinitives (անորոշ դերբայ) used in the meaning of noun, e.g., կարդալ to read, գրել to write, սիրել to love, վազել to run, etc.
3. Nouns մարդ man, ամուսին husband, անկողին bed, and some others.

The distinctive peculiarity of the declension by ու is that vowel ի usually falls out in indirect cases, e.g., թշնամի (enemy) - թշնամու - թշնամուց, ծերունի (old man) - ծերունու - ծերունուց, etc. Monosyllabic words make exception: ձի (horse) - ձիու - ձիուց, etc. Nouns of this declension in ?c always end with ուց. (I don't get this. Maybe: the ablative of the declension in ու always ends in ուց?)

Example of declension by ու Ուղղ. ո՞վ որդին son Սեռ. ու՞մ որդու son's Տր. ու՞մ որդուն to the son Հայց. ու՞մ որդուն son Բաց. ու՞մից որդուց from son Գործ. ու՞մով որդով by, of the son Ներգ. - - -

ի՞նչը քամին wind կարդալը reading ինչի քամու wind's կարդալու reading's ինչի՞ն քամուն to the wind կարդալուն to the reading ի՞նչը քամին wind կարդալը reading ինչի՞ց քամուց from the wind կարդալուց from reading ինչո՞վ քամով by, of the wind կարդալով by reading ինչու՞մ քամում in the wind կարդալում in reading

In the plural nouns of this declension change by the declension "ի" e.g., քամիներ (winds) - քամիների - քամիներից, որդիներ (sons) - որդիների - որդիներից, etc.

====Ex. 103==== Decline the following words:

բժշկուհի, ոսկի, բանալի, վազել

====Ex. 104==== Copy out and underline nouns belonging to declension "ու" and define their case.

I. 1. Մանեն կանգ առավ ակամա և նայեց ընկերուհու աչքերին: 2. Հետևյալ օրը, կեսօրից առաջ, Մանեն նամակ էր գրում ամուսնուն: 3. Այս տարի գինին պատրաստել էմ արդեն նորագույն եղանակով: 4. Այժմ եկել էմ մի քանի գործիքներ տանելու: 5. Զաքարը չտես մարդու ազահություն էր ցույց տալիս: (Նար- Դոս)

II. 1. Թշնամու գորքերը փախուստի դիմեցին: 2. Ոսկին թանկարժեք մետաղ է: 3. Ծերունին նստել էր խնձորենու տակ: 4. Քամուց պատուհանի ապակին փշրվեց: 5. Նա շատ է սիրում իր փոքր որդուն:

====Ex. 105= Fill in the blanks with the word աղավնի (pigeon) in corresponding case forms.

1. _____ ճախրում է երկնքում:
2. _____ փետուրները սպիտակ են:
3. Աշոտը կեր է տալիս _____:
4. Նա բռնեց _____:
5. Ծիսը _____ առաջ անցավ:

Ex. 106. Translate into Armenian, underline nouns belonging to the declension by ու.

1. The teacher conducts the lesson.
2. The student takes a test.
3. The accountant didn't come to work.
4. Every person has his own habits.
5. The father carefully follows his son's studies.
6. She began to read when six years old.

Declension by **ան**

Ան Հոլովում

Section 64

The following belong to the declension by "ան":

1. Nouns with the suffix ում (in old Armenian ումն), e.g., որոշում (in old Armenian որոշումն), բուժում (treatment), ընթերցում (reading), զարգացում (development), ազատում (liberation), շարժում (motion), etc.
2. Part of monosyllabic nouns that used to end with ն, e.g., դուռ (from old Armenian դուռն) - door, մուկ - mouse, ձուկ - fish, թոռ - grandchild, եգ - ox, զառ - lamb, etc.
3. Some nouns ending with ուն, e.g., տուն - house, շուն - dog, etc.

Example of declension by "ան".

Ուղղ. տուն(ը) (the) house ձուկ(ը) (the) fish Մեռ. տան house's ձկան fish's Տր. տան(ը) to (the) house ձկան(ը) to (the) fish Հայց. տուն(ը) (the) house ձուկ(ը) (the) fish Բաց. տնից from the house ձկից from the fish Գործ. տնով by the house ձկով by the fish

շարժում(ը) (the) motion շարժման motion's շարժման(ը) to (the) motion շարժում(ը) (the) motion շարժումից from the motion շարժումով by the motion շարժմամբ " " "

Nouns of this declension change in the plural form with the declension "ի", e.g., տուն - տան, տներ - տների - տներից; դուռ - դռան, դներ - դների - դներից, etc.

Notes:

1. Also declined by "ան" are the nouns աշուն - autumn, գարուն - spring, child - մանուկ, summer - ամառ, ձմեռ - winter. The latter two can also have the declension "վա".
2. The word աղջիկ - girl declines with "ան", in the genitive case it has the ending ա - աղջիկ - աղջկա.
3. Nouns with suffix ում in instrumental case can have two endings ով or բ, e.g., կառուցումով - կառուցմամբ (by building), կատարումով - կատարմամբ (by fulfillment), etc.
4. Nouns with the suffix ում can also decline by the declension "ի", e.g., որոշում- որոշումի, խոստում- խոստումի, etc.
5. Nouns belonging to the "ան" declension group as a rule do not take the form of the locative case.

====Ex. 107==== Decline in singular and in plural the nouns եզ, որոշում, դուռ.

====Ex. 108==== Read and point out the nouns belonging to declension "ան".

1. Տան դուռը բացվեց: 2. Սևանա լճում շատ ձկներ կան: 3. Դաշտում մի գառ էր արածում: 4. Ուսանողները ցած իջան սարերից: 5. Ես ներկա էի նրա զեկուցմանը: 6. Գարնանը ծառերը ծաղկում են: 7. Նորից եկան աշնան անձրևոտ օրերը: 8. Այդ որոշման կատարմամբ հետաքրքրվում էին բոլորը: 9. Կատուն մուկ բռնեց:

====Ex. 109==== Copy out, instead of dots insert the word լեռ (mountain) in the corresponding case forms.

Ուղղ. ... գտնվում է գետի ափին: Սեռ. ... ստորոտում արածում էին ոչխարները: Տր. Նրանք նայում էին ձյունապատ ... : Հայց. Դպրոցականները բարձրացան ... : Բաց. Նրանք ցած իջան ... : Գործ. Մենք հիացած էինք այդ գեղեցի ... :

====Ex. 110==== Translate into Armenian and underline the nouns belonging to the declension "ան":

1. It is very hot in our town during the summer. 2. In winter cold winds blow. 3. The most beautiful time in our country is in autumn. 4. This year spring came very early. 5. Nobody stays at home in this weather. 6. My friends went fishing. 7. That treatment gave good results.

Declension by յան

Յան Հոլովում

Section 65

To this declension belong nouns with suffix ություն, e.g., պետություն state, միություն union, մարդկություն humanity, հպարտություն pride, ուրապություն gladness, ուսանողություն the students, etc.

Example of declension by յան.

Singular - Եզակի թիվ

Ուղղ. ի՞նչ(ը) միություն(ը) (the) union Սեռ. ինչի՞ միության union's Տրակ. ինչի՞ն միության(ը) to (the) union Հայց. ի՞նչ(ը) միություն(ը) (the) union Բաց. ինչի՞ ց միությունից from the union Գործ. ինչո՞վ միությունով by the union միությամբ " Ներգ. ինչու՞ մ միությունում in the union

In the plural, nouns of this declension change by the declension by ի.

Notes:

1. To the declension by յան belong the words անկյուն corner, արյուն blood, սյուն pillar, ձյուն snow, which can also change by the declension by ի.
2. In this declension the inside of the root also changes: the diphthong յու turns into յա, e.g., անկյուն - անկյան, արյուն - արյան.

====Ex. 111==== Decline in singular and in plural the nouns մեծություն, բարություն, խաղաղություն.

====Ex. 112==== Read and point out the nouns belonging to the declension by յան.

1. Սովետական Միությունը հզոր երկիր է: 2. Մեր կառավարությունը հոգատար է աշխատավորության նկատմամբ: 3. Համալսարանի ուսանողությունը աչքի է ընկնում իր կարգապահությամբ և կազմակերպվածությամբ: 4. Կոլտնտեսությունը բարձր բերք ստացավ: 5. Մենք պայքարում ենք խաղաղության համար: 6. Պահպանել մաքրություն: 7. Նա աշխատում է մեր հիմնարկությունում: 8. Էմման աշխատում է ջանասիրությամբ: 9. Բյուրոն հաստատեց պատի թերթի խմբագրության կազմը: 10. Մարտի դաշտում նա ցուցաբերեց խիզախություն: 11. Ներկայացման առաջին գործողությունն ավարտվեց: 12. Նա հաղթահարեց դժվարությունները:

====Ex. 113==== Decline in sentences (in singular and plural) the word պետություն.

====Ex. 114==== Translate into Armenian.

1. His scientific activity brought good benefits to the country. 2. The last edition of his works quickly sold out. 3. He really enjoyed the trip. 4. We are not afraid of difficulties. 5. The achievements of Soviet science are great. 6. The announcement declared about the meeting of the establishment's employees. 7. A collective review of the film is being organized. 8. The community of the town celebrated the anniversary of the scientist.

Declension by վա

Վա Հոլովում

Section 66

To this declension belong most of the words showing time, e.g., օր day, ամիս month, շաբաթ week, տարի year, առավոտ morning, կեսօր noon, ամառ summer, ձմեռ winter, գիշեր night, ցերեկ daytime, etc. Nouns belonging to declension by վա may have two forms - one with ending and the other without it, e.g., օրվանից օրից, ամսվաից ամսից, etc. In instrumental and locative cases the index of the declension completely falls out, e.g., օրով - որում, ամսով - ամսում, etc.

Example of declension by վա

Ուղղ. ի՞նչ(ը) օր(ը) day Սեռ. ինչի՞ օրվա day's Տրակ. ինչի՞ (ն) օրվա(ն) to the day Հայց. ի՞նչ(ը) օր(ը) day Բաց. ինչի՞ ց օրից from the day օրվանից " Գործ. ինչո՞վ օրով by the day Ներգ. ինչու՞ մ օրում in the day

ամիս(ը) month ամսվա month's ամսվա(ն) to the month ամիս(ը) month ամսից from the month ամսվանից " ամսով by the month ամսում in month

In the plural, nouns of this declension change by the declension by ի, e.g., օրեր - օրերի - օրերից, etc.

Notes:

1. Some words of this declension in singular may also change by the declension by ի, e.g., օր - օրի, ամիս - ամսի, ժամ - ժամի. As the noun տարի ends with ի, it can also change by the declension by ու, e.g., տարի - տարուց.
2. Words րոպե (minute), վայրկյան (second) only change by the declension by ի.

====Ex. 115==== Decline in singular and in plural the nouns գիշեր and ժամ.

====Ex. 116==== Copy out and underline the nouns of declension by վա.

- Տարին ունի 365 կամ 366 օր: Օրն ունի 24 ժամ: Մի ժամն ունի 60 րոպե: Բոլորն ունի 60 վայրկյան:
- Տարին ունի 4 եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Ամռանը ցերեկը երկար է, գիշերը՝ կարճ: Ձմռանը ցերեկը կարճ է, գիշերը՝ երկար:
- Տարին ունի 12 ամիս՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

====Ex. 117==== Decline the nouns առավոտ and տարի in sentences.

Example: Ուղղ. Առավոտը բացվեց:

Declension by որ

Որ Հոլովում

Section 67

To this declension belong only the nouns հայր father, մայր mother, եղբայր brother and those polysyllabic words whose second part consists of one of these words, e.g., նախամայր forefather, նախահայր forefather, հորեղբայր (uncle by father), մորեղբայր (uncle by mother), etc.

Example of declension by որ

Ուղղ. հայր(ը) (the) father Մեռ. հոր father's Տրակ. հոր(ը) to (the) father Հայց. հոր(ը) (the) father հայր(ը) " Բաց. հորից from the father Գործ. հորով by the father

մայր(ը) (the) mother մոր mother's մոր(ը) to (the) mother մոր(ը) (the) mother մայր(ը) մորից from the mother մորով by the mother

In the plural, nouns of this declension change by the declension by ի, e.g., մայրեր - մայրերի - մայրերից, etc.

Notes:

1. Nouns of this declension do not have the form of the locative case. Instead of it the genitive + postposition մեջ is used, e.g., եղբոր մեջ in brother, հոր մեջ in father, etc.
2. In indirect cases the diphthong այ turns into ու, e.g., մայր - մոր - մորից, հայր - հոր - հորից, etc.

====Ex. 118==== Use the corresponding case forms of the word մայր instead of dots.

Սուրենի ... ուսուցչուհի է: Նրա ... աշխատանքը սկսվում է երեկոյան: Ես օգնում եմ իմ ... : Սուրենը շատ է սիրում իր ... : Նա իր ... նվեր ստացավ: Նա հպարտանում է իր ... :

Declension by ոջ

Ոջ Հոլովում

Section 68

To this declension belong some nouns showing persons, e.g., ընկեր friend, տեր owner, քույր sister, կին woman, սկեսուր mother-in-law, աներ father-in-law, տալ sister-in-law, տիկին lady, and also polysyllabic (better: compound?) words whose second part is formed by one of these nouns, e.g., դասընկեր classmate, մորաքույր aunt, հողատեր landowner, etc.

Example of declension by ոջ.

Ուղղ. ո՞վ քույր(ը) (the) sister Մեռ. ու՞մ քրոջ sister's Տրակ. ու՞մ քրոջ(ը) to (the) sister Հայց. ու՞մ քրոջ(ը) (the) sister Ինչ(ը) քույր(ը) (the) sister Բաց. ումի՞ց քրոջից from sister Գործ. ումն՞վ քրոջով by sister

տեր(ը) (the) owner տիրոջ owner's տիրոջ(ը) to (the) owner տիրոջ(ը) (the) owner տեր(ը) (the) owner տիրոջից from the owner տիրոջով by the owner

Notes:

1. In the plural, noun կին woman changes by the declension by ց, կանայք - կանանց, etc.
2. The nouns ընկեր friend, աներ father-in-law, սկեսուր mother-in-law may also change by the declension by ի (ընկեր-ընկերի - ընկերից etc.), although mostly in spoken language.

====Ex. 119==== Insert the word ընկեր in corresponding case forms instead of dots.

Իմ ... այսօր եկավ մեր տուն: Իմ ... հայրն աշխատում է գործարանում: Աշտը հեքիաթ է պատմում իր ... : Բոլորը սիրում են Աշտի ... : Ես շատ գոհ եմ նրա ... : Նա հիացած է իր ... :

====Ex. 120==== Read and point out the nouns of ոջ or որ declension.

Մեր ընտանիքը բաղկացած է 6 հոգուց: Հայրս բանվոր է, մայրս՝ ուսուցչուհի: Ես ունեմ մեկ քույր և երկու եղբայր: Քրոջս անունը Հայկանուշ է: Նա սովորում է 8-րդ դասարանում: Մի եղբորս անունը Աշոտ է, մյուսինը՝ Արամ: Աշոտը 20 տարեկան է: Նա սովորում է պոլիտեխնիկական ինստիտուտի 3-րդ կուրսում և ունի շատ ընկերներ: Մյուս եղբայրս՝ Արամը, դեռ շատ փոքր է: Նա ընդամենը 5 տարեկան է: Մենք բոլորս սիրում և հարգում ենք մեր ծնողներին:

Declension by ց

Ց Հոլովում

Section 69

To this declension belong the nouns with particles *անք, ենք, ննք*, e.g., *Գրիգորենք* (relatives of Grigor), *Վարդանենք* (relatives of Vardan), *քեռնք* (uncles family), etc. Nouns of this declension only have the plural form.

Example of declension by g.

Ուղղ. Աշոտենք քեռնք Մեռ. Աշոտենց քեռնց Տրակ. Աշոտենց քեռնց Հայց. Աշոտենց քեռնց
Բաց. Աշոտենցից քեռնցից Գործ. Աշոտենցով քեռնցով

In this type of declensions the genitive case serves as the initial form for forming other indirect cases.

Note:

1. Nouns of this declension do not take definite article.
2. By this declension also change the words *մարդիկ* people, *կանայք* women (*մարդիկ* - *մարդկանց*, *կանայք* - *կանանց*)
3. In modern Armenian some words have the old case forms, e.g., *դուստր* daughter *դստեր*, *կայսր* tsar *կայսեր*, *սեր* love *սիրո* - *սիրույն*, etc.

====Ex. 121==== Read. Define the type of declension, case, number, definite and indefinite case of the nouns.

Աբովյանը

Հայրը պատմում էր, և սենյակի լռության մեջ նրա պատմությունը հեքիաթի նման կախարդիչ էր դարձել թեև նա պատմում էր մեծ հայրենասերի մասին: Իսկ փոքրիկը հմայված լսում էր և երագում: Նա իր մանկական աչքերով կարծես տեսնում էր այդ անձնվեր, խանդավառ գրողին, հետևում էր նրա բոլոր շարժումներին: Հայրն էլ տարված էր իր նյութով: Նրան թվում էր, թե ինքն էլ նվագում է մի սքանչելի սիմֆոնիա: Երաժշտական դրվագների պես հնչեց գրողի բարձրանալը Արարատ, նրա Դորպատի երագներն ու հայրենիքի կարոտը, նրա վերադարձը հայրենիք, նրա վսեմ ստեղծագործությունը, նրա այրվելը հայրենիքի սիրուց և անհայտացումը: Հայրը վերջացրեց և սկսեց ծխել: Եվ սենյակի խոր լռության մեջ փոքրիկը ոտների ծայրերով մոտեցավ, փարվեց հորը, նայեց շուրջն ու փսփսալով հարցրեց. - Հիմա Աբովյանի ոտնատեղերը կա՞ն Արարատի վրա:

(Դ. Դեմիրճյան)

Noun Suffixes

Գոյականի ածանցներ

Section 70

The most frequently used noun suffixes are:

- *-ակ* - gives the noun diminishing-hypocoristic meaning, e.g., *տուն* - *տնակ* house - small house, *դուռ* - *դռնակ* door, group *խումբ* - *խմբակ*.
- *-արան* - Forms nouns with the meaning of location, place, e.g., *նստարան* bench, *ճաշարան* diner, *թեյարան* tea-house, *լսարան* auditorium, *գործարան* factory, *ննջարան* bedroom, *զանգարան* treasure-house, etc.
- *-անք* - Forms verbal nouns, e.g., *վիրավորանք* insult, *աշխատանք* work, *զարդարանք* decoration, *հայհոյանք* curse, *հարգանք* respect, *հանցանք* guilt, *տանջանք* torture, etc.

- -իկ - Gives the noun diminishing-hypocoristic meaning, etc. մասնիկ particle, թիթեռնիկ butterfly, ոտիկ leg, թաթիկ paw, մանկիկ baby, etc.
- -իչ - Forms nouns with the meaning of the doer of the action, e.g., փրկիչ life-saver, նկարիչ artist, մատնիչ sneak, բնակիչ inhabitant, երգիչ singer, վարիչ manager, գրիչ pen, շարժիչ mover, սրբիչ towel, etc.
- -մունք - Forms verbal nouns, e.g., ուսմունք study, զգացմունք feeling, հուզմունք excitement, բաժանմունք department etc.
- -յուն - Generally forms nouns from onomatopoeic roots, e.g., դոփյուն footfall, խոխոջյուն purl, պայթյուն explosion, մոնչյուն roar, գոչյուն scream, վրջյուն murmur, տրոփյուն knock, հնչյուն sound, etc.
- -անց - Forms nouns with the meaning of location, place, e.g., հյուրանոց hotel, հիվանդանոց hospital, ծաղկանոց flower garden, մեղվանոց bee-garden, ամառանոց cottage, զորանոց barracks, etc.
- -ոց - forms nouns with the meaning of: 1) location, place: դպրոց school, փողոց street, ամրոց fortress, հնոց stove, գերեզմանոց cemetery. 2) instrument: սփռոց table-cloth, կապոց package, ծածկոց cover, սոց saw. 3) action name: խշշոց rustling, թշշոց hissing, փսփոց whisper.
- -ող - Forms nouns with the meaning of a person, doer: ծնող parent, գրող writer, ուսանող student, ընթերցող reader.
- -որդ - Forms nouns with the meaning of a person: որսորդ hunter, առաջնորդ leader, հակառակորդ adversary, անցորդ passerby, գնորդ buyer, լողորդ swimmer.
- -ություն - Forms numerous abstract and collective nouns: լավություն kindness, հպարտություն pride, համարձակություն courage, կոպտություն roughness, ուրախություն gladness, միություն union, ուսանողություն the students, գյուղացիություն peasants, etc.
- -ուհի - Forms names of females: ուսուցչուհի teacher, աշակերտուհի pupil, տնտեսուհի mistress, ընկերուհի girlfriend, գեղեցկուհի pretty, բանաստեղծուհի poetess, հայուհի Armenian, աշխատավորուհի worker, etc.
- -ում - Forms verbal nouns: որոշում decision, շարժում motion, զարգացում development, զեկուցում speech, ծագում origination, գնահատում estimation, etc.
- -պան - Forms nouns showing profession: այգեպան gardener, դռնապան door-keeper, խանութպան shop-keeper, սայլապան carter, ձապան groom, etc.
- -ստան - Forms nouns with the meaning of location, place: Հայաստան Armenia, Վրաստան Georgia, Չինաստան China, մենաստան cloister, etc.
- -ացի - Forms nouns showing the native or the inhabitant of some place: քաղաքացի citizen, գյուղացի peasant, ամերիկացի American, վրացի Georgian, etc.
- -վածք - Forms verbal nouns: պատմվածք story, հյուսվածք cloth, գրվածք work, հորինվածք composing, խառնվածք character, կազմվածք figure, կառուցվածք structure.
- -ք - Forms nouns with different meanings: ձեռք hand, ոտք leg, փառք praise, խոսք speech, թռիչք flight, շարք row, պարտք debt, գիրք book, etc.

Note: Suffix p in old Armenian was the particle of plural.

====Ex. 122==== Copy out and underline the nouns with suffixes.

1. Սուրիկը զեկուցում կարդաց ուսանողական գիտական խմբակում: 2. Լավագույն զեկուցման համար նա ստացավ առաջին կարգի մրցանակ: 3. Աշխատանքը իզուր չի կորչում: 4. Ուսանողները օգտվում են ուս-հայերեն բառարանից: 5. Իմ եղբայրը նկարիչ է: 6. Աշտը հանգստանում է ամառանոցում: 7. Քո ընկերուհիները պարապում են ընթերցարանում: 8. Սովետական Միությունում ապրում են բազմազգ ժողովուրդներ: 9. Հայերը, վրացիները և ադրբեջանցիները հարևան ազգեր են: 10. Օր-օրի վրա գեղեցկանում է Հայաստանի մայրաքաղաքը Երևանը:

====Ex. 123==== Add suffixes to the following roots and translate into English.

գիր____
միտ____ կյան____
ոտ____ ել____
ձեռ____ զեն____
աչ____ մուտ____
խել____ շեն____
շար____ կուրծ____
փառ____ վար____
կառ____ խոր____
բեր____ շնորհ____
հետ____ հան____
խոս____ վեր____

Ex. 124

Make up new words adding suffixes to the following words.

Նկար, գետ, բանվոր, մեծ, լավ, լիճ, երգ, գործ, քաղաք, որս.

Ex. 125

Make up nouns by adding the following suffixes.

արան, անք, ություն, որդ, ուհի, ակ.

Chapter 3

ADJECTIVES

Ածական Անուն

Categories of adjectives and their peculiarities

Ածականի տեսակները և առանձնահատկությունները

Section 71

Adjectives are words expressing properties of objects (e.g., կարմիր red, հետաքրքիր interesting, խելացի clever, etc.) and, hence, qualifying nouns.

Section 72

Adjectives in the Armenian language can be qualitative (որակական) and relative (հարաբերական).

1. Qualitative adjectives show the quality and the property of objects, e.g., մեծ large, լավ good, գեղեցիկ pretty, փոքր small, խոլոք kind, քաղցր sweet, խելացի clever, etc.
2. Relative adjectives show indications of objects in comparison with other objects, e.g., լեռնային rocky, երկաթյա iron, հասարակական public, աշակերտական pupil, ոսկե golden.

Section 73

Adjectives in the Armenian language have some peculiarities:

1. On account of absence of grammatical category of gender in the Armenian language, one invariable form of adjective corresponds to all three gender forms, e.g.

English Armenian

red pencil կարմիր մատիտ

red rose կարմիր վարդ

red flag կարմիր դրոշ

1. ???????????? (something missing?)

Ex. 126

Read and point out the adjectives.

Երեկո

Երեկոն փոեց իր թները մութ,

Անուշ նիրհեցին երկինք ու երկիր.-

Աչքերդ փակիր, ինձ քնքուշ գրկիր,

Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ:

Լայն ստվերներն ընկան անաղմուկ,

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ...

Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ,

Իմ սիրուն մանուկ, իմ քնքուշ մանուկ...

Կրծքիս դիր դեմքը քո տխրադալուկ,

Մոռացիր կյանքի տառապանքը մութ,

Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ,

Իմ սիրուն մանուկ, իմ քնքուշ մանուկ...

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ,

Ննջեցին անուշ երկինք ու երկիր.

Աչքերդ փակիր, ինձ քնքուշ գրկիր,

Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ...

(Վ. Տերյան)

Ex. 127

Translate into English.

երկնագույն էծան
կապույտ հին
մանիշակագույն նոր
գորշ նեղ
բրնձե ուժեղ
մուգ-կարմիր թույլ
մուգ-կապույտ լայն
խայտաբղետ բարակ

Ex. 128

Translate into Armenian.

white good black bad red pretty pink ugly orange long yellow short brown light green dark

Degrees of comparison of qualitative adjectives

Որակական ասականների համեմատության աստիճանները

Section 74

There are three degrees of comparison: positive, comparative, superlative.

1. The positive form is the plain stem of an adjective (e.g., ծանր heavy, դանդաղ slow, կարմիր red, երկար long, մեծ large, etc.)
2. The comparative degree is used when there are two objects, actions or phenomena compared or contrasted. The comparative degree is formed by means of an adverb (more), which stands before the adjective and is written separately, e.g., կարմիր - ավելի կարմիր red - redder, երկար - ավելի երկար long - longer, մեծ - ավելի մեծ large - larger.

The comparative degree can also be expressed by means of combination of the positive form of the adjective with the comparable noun in ablative case, e.g., Եղբայրը մեծ է քրոջից: The brother is older than the sister. Վոլգան երկար է Դնեպրից: The Volga is longer than the Dnepr.

In similar cases forms of comparative degrees can be used, e.g., Եղբայրը ավելի մեծ է քրոջից: The brother is older than the sister. Վոլգան ավելի երկար է Դնեպրից: The Volga is longer than the Dnepr.

1. The superlative degree is used when an object, an action or a phenomenon is compared or contrasted with more than two objects, actions or phenomena. The superlative degree is formed by means of word սաֆն, which is put before the adjective and joins it by means of a connective vowel ա, e.g.

կարմիր - սաֆնակարմիր red - reddest
լավ - սաֆնալավ good - best
մեծ - սաֆնամեծ large - largest

Some adjectives can form the superlative degree by means of suffix ազույն, e.g.

վատ - վատագույն bad - worst

լավ - լավագույն good - best
մեծ - մածագույն large - largest
ազնիվ - ազնվագույն honest - most honest

խոշոր - խոշորագույն great - greatest

Ex. 129

Form the comparative and superlative degrees of the following nouns and translate into English.

առողջ լայն նեղ մուրթ խաղաղ գեղեցիկ մռայլ խոր սիրելի դառն հաստ քաղցր տխուր ազնիվ սպիտակ բարձր

Example:

Առողջ - ավելի առողջ - ամենաառողջ
healthy - healthier - healthiest

====Ex. 130==== Translate into English.

1. Նա լավ ուսանող է: Նա ավելի լավ ուսանող է: Նա ամենալավ ուսանող է:
2. Միրուշը գեղեցիկ ծաղիկներ քաղեց: Հասմիկն ավելի գեղեցիկ ծաղիկներ քաղեց: Ռոզան ամենագեղեցիկ ծաղիկները քաղեց:
3. Աշոտը հետաքրքիր գիրք է կարդում: Արամը ավելի հետաքրքիր գիրք է կարդում: Սուրենը ամենահետաքրքիր գիրքն է կարդում:

====Ex. 131==== Translate into Armenian.

1. Is your sister older than you? No, she is younger than me.
2. February is the shortest month.
3. The Soviet Union is the largest country in the world.
4. This boy is the youngest in the family.
5. This article is more interesting than the other one.
6. My apartment is larger than yours.
7. Earth is smaller than the sun, but larger than the moon.
8. Your research was more interesting than his.
9. Today is colder than yesterday.

Usage of adjectives with nouns

Ածականների գործածությունը գոյականների հետ

Section 75

When used with nouns, Armenian adjectives change neither by case nor by number, e.g.

Singular - Եզակի թիվ Plural - հոգնակի թիվ

Ուղղ. լավ գիրք(ը) (the) good book լավ գրքեր(ը) Մեռ. լավ գրքի a good book's լավ գրքերի Տր. լավ գրքին(ը) to (the) good book լավ գրքերի(ն) Հայց. լավ գիրք(ը) (the) good book լավ գրքեր(ը) Բաց. լավ գրքից from the good book լավ գրքերից Գործ. լավ գրքով by the good book լավ գրքերով Ներգ. լավ գրքում in the good book լավ գրքերում

====Ex. 132==== Decline the following word combinations in singular and in plural.

?անասեր ուսանող, լայն փողոց, հետաքրքիր դասախոսություն, բարի մարդ:

====Ex. 133==== Translate into English.

1. Ես արդեն կարդացել եմ այդ գեղարվեստական գիրքը:
2. Ես ձեր նամակը կարդացի մեծ հետաքրքրությամբ:
3. Նա իր ձմեռային արձակուրդներն անցկացրեց գյուղում:
4. Այդ մեքենաշինական գործարանում աշխատում են շատ բանվորներ:
5. Նա հաճախ է մամուլում հանդես գալիս գիտական հոդվածներով:
6. Երեկ ես մեծ հաճույքով դիտեցի այդ նոր այդ նոր գեղարվեստական կինոնկարը:
7. Դա մեր քաղաքի ամենագեղեցիկ շենքերից մեկն է:
8. Մոսկվան Մովետական Միության ամենամեծ քաղաքն է:

====Ex. 134==== Translate into Armenian and underline the adjectives.

1. Meresyev was fast asleep.
2. They considered it an easy and simple work.
3. He walked on deep snow.
4. Nothing could be seen behind the tall and thick trees.
5. Guys slowly carried the heavy load.
6. It was dark and cold in the small hut.
7. He received good and joyful news.
8. Soviet partisans saved pilots.
9. Soldiers advanced to the planned goal in most difficult conditions.
10. They welcomed their old friends with great joy.

Usage of adjectives in the meaning of nouns

Ածականների գործածությունը գոյականների նշանակությամբ

Section 76

Adjectives in the Armenian language can be used in the meaning of nouns. Such adjectives show not only the indication, but also the object that has that indication. So in the sentence Նա ուներ մի կարմիր վարդ և մի դեղին վարդ (He had a red rose and a yellow rose) the object (վարդ - rose) and its indications (կարմիր, դեղին - red, yellow) are shown by means of different words. And in the sentence Կարմիրը գեղեցիկ է դեղինից (Red is prettier than yellow) the adjectives mean not only the indication, but also the object: կարմիրը means կարմիր վարդը, դեղինից means դեղին վարդից. Adjectives used in the meaning of nouns take definite article and decline by the way of declension by ի.

Singular - Եզակի թիվ

Ուղղ. մեծ(ը) (the) big one կարմիր(ը) (the) red one Սեռ. մեծի կարմրի Տր. մեծի(ն) կարմրի(ն) Հայց. մեծ(ը) կարմիր(ը) Բաց. մեծից կարմրից Գործ. մեծով կարմրով Ներգ. մեծում կարմրում

Plural - Հոգնակի թիվ

Ուղղ. մեծեր(ը) (the) big ones կարմիրներ(ը) (the) red ones Սեռ. մեծերի կարմիրների Տր. մեծերի(ն) կարմիրների(ն) Հայց. մեծեր(ը) կարմիրներ(ը) Բաց. մեծերից կարմիրներից Գործ. մեծերով կարմիրներով Ներգ. մեծերում կարմիրներում

Note: The accusative case of the adjective used in the meaning of person coincides with the dative case, e.g.,
Նա փոքրին շատ է սիրում: He likes the little one very much.

====Ex. 135==== Make up sentences using the following adjectives as nouns.

փոքր, մեծ, լավ, կարմիր

====Ex. 136==== Decline the adjectives սպիտակ, ուժեղ, խելոք.

====Ex. 137==== Translate into English.

1. Փոքրերը քնեցին, իսկ մեծերը դեռ խաղում են:
2. Խուսափիր ծուլից ու շաղակրատից:
3. Բոլորն արհամարհում են թուլամորթներին:
4. Առաջավորները պարզևատրվեցին:
5. Նա հինը պատռեց և գնեց նորը:
6. Լավը թողեց, վատը վերցրեց:
7. Սպիտակն արժե 5 ռուբլի, իսկ սևը՝ տաս ռուբլի:

====Ex. 138==== Translate into Armenian.

I. 1. He went to weddings to amuse the rich and the happy. 2. After a few seconds appeared the blind. 3. A blind boy was standing in front of me. 4. Usually Verner laughed at his sick sleeve (what do you mean?)

II. 1. The Reds won from (or: beat) the Whites. 2. We must respect the older. 3. The young have the way. 4. The black won on the 30th move. 5. He had a lot of relatives.

====Ex. 139==== Write adjectives used in the meaning of nouns at the dots.

1. Իմ քույրերից մեկը մեծ է ինձանից, մյուսը՝ փոքր: ... 25 տարեկան է, իսկ ... 16:
2. Ամեն շաբաթ օր նա գնում էր սպիտակ ու կապույտ ծաղիկներ: ... դնում էր գրասեղանին, իսկ ... լուսամուտի գոգին:
3. Երկու եղբայր են լինում՝ մեկը խելոք, մյուսը գիժ: ... շատ է աշխատում, ... քիչ:
4. Արկղում կային դեղին և կարմիր խնձորներ: ... վերցրեց, իսկ ... թողեց:

Syntactic functions of adjectives

Ածականների դերը նախադասության մեջ

Section 77

Adjectives may serve in the sentence as:

- a. an attribute, e.g. Երևանն ունի մեծ և գեղեցիկ շենքեր: There are large and pretty houses in Yerevan.
Ուսանողական ժողովն սկսվեց ժամը 8-ին: The student meeting began at 8 o'clock. b. nominal part of compound predicate, e.g. Ծաղիկը գեղեցիկ է: The flower is pretty. Կյանքը ուրախ է: Life is joyful.

Section 78

In the Armenian language the qualitative adjective without any morphological changes can serve as adverbial modifier of mode of action in the presence of a verb-predicate, e.g., բարձր ձայն (loud voice) and նա բարձր

է խոսում (he speaks loudly), գեղեցիկ գիրք (beautiful book) and նա գեղեցիկ է գրում (he writes beautifully), լավ երգ (good song) and լավ է երգում (he sings well).

Note: Adjectives used as modifiers are considered to be adverbs by some authors. But this is not right. If a word showing indication can be used with noun and verb, then it is an adjective, and if it can be used only with verb, then it is an adverb. (This is not right either. Adjectives modify nouns; adverbs modify verbs, adjectives and other adverbs. The difficulty arises because many languages do not reflect this distinction clearly in their grammar by using dedicated forms. English is an example of a language that does make the distinction (suffix -ly, and some special words: well vs. good).)

Section 79

Adjectives used in the meaning of nouns in the sentence can serve as the subject, the object and other parts of the sentence.

====Ex. 140==== Indicate the syntactic functions of the adjectives.

Անցիր դու ծովեր, օվկիաններ անտակ,
Շրջիր աշխարհը, ծայրից ծայր գնա,
Շատ երկրներ կան մայր արևի տակ,
Բայց մեր երկրի պես այլ երկիր չկա:
Խորն են ու պայծառ ողջ ջրերը մեր:
Երկիրը ազատ, ընդարձակ ու լայն,
Աճում են, ծաղկում մեր հանդ ու դաշտեր,
Աղմկում անդուլ անթիվ գործարան:
Զգայուն սրտով, իմաստուն ձեռքով
Տրված է մեզ մեծ բարեկամություն.
Ժողովուրդները մեր սովետական
Ապրում են, ծաղկում մի ընտանիքում:
Նրանք հարազատ եղբոր պես սիրով
Ապրում են, ծաղկում ազատ ու անվախ...
Անցիր անհատակ օվկիաններ ու ծով,
Չկա մերի պես երկիր համերաշխ:
(Մ. Իսակովսկի)

====Ex. 141==== Translate into Armenian.

1. Here is the grey, old house. Now it's empty and silent.
2. Every evening is good of something.
3. Southern America is larger than Northern America.
4. The sick didn't recognize me.
5. The rich rubbed (robbed?) the poor.
6. After a few seconds the blind appeared.

Suffixes of adjectives

Ածականակերտ ածանցներ

Section 80

The substantial part of Armenian adjectives is formed by means of suffixes and prefixes. The most commonly used suffixes of the adjective are:

- -ական: սովետական soviet, մանկական baby, եղբայրական brother, հերոսական heroic, etc.
- -ային: լեռնային rocky, դաշտային field, գիշերային night, etc.
- -ավետ: shows predominance of some quality: հոտավետ fragrant, բուրավետ aromatic, etc.
- -ավոր: լուսավոր light, վիրավոր wounded, փառավոր glorious, վաստակավոր distinguished, etc.
- -ավուն: indicates incompleteness, insufficiency of the quality, e.g., երկարավուն longish, դեղնավուն yellowish, կարմրավուն reddish, սևավուն blackish, etc.
- -ե and -յա: serve to indicate relation to the material, e.g., արծաթե or արծաթյա silver, ոսկե or ոսկյա golden, փայտե or փայտյա wooden, երկաթե or երկաթյա iron, etc.
- -ոտ, -ուն: shows the presence of some quality inside or on surface of the object, e.g., կեղտոտ dirty, ժանգոտ rusty, արյունոտ bloody, յուղոտ greasy, իմաստուն wise, փայլուն shiny, հնչուն resonant.
- -ելի, -ալի: հաճելի pleasant, սիրելի lovely, տանելի tolerable, զարմանալի amazing, հասկանալի understandable, ցանկալի desirable, etc.

Section 81

There are a number of prefixes in the Armenian language which form adjectives in negative meaning. Such prefixes of adjectives are:

- ան-: անազնիվ dishonest, անհաջող unlucky, անտուն homeless, անքուն sleepless.
- ապ-: ապօրինի illegal, ապերախտ ungrateful, ապերջանիկ unhappy.
- դժ-: դժբախտ unfortunate, դժգոհ dissatisfied, դժգույն pale.
- տ-: տգեղ ugly, տկար weak, տհաճ unpleasant.
- չ-: this prefix is used only in some words, e.g. չկամ malevolent, չբեր barren.

The most commonly used negative prefix is ան.

====Ex. 142==== Copy out separately adjectives with suffixes and without suffixes.

Այս տարի Անահիտը իր որդու՝ Սուրիկի համար ամառային նոր հագուստ գնեց. սպիտակ բլուզ, սպիտակ անդրավարտիք: Կոշիկներն էլ նույնն էին և նույնպես սպիտակ: Ամառը սպիտակ շորեր հագնելը լավ է: Դրանք պաշտպանում են արևից, և մարդ իրեն լավ է զգում: Բայց նորությունը Սուրիկի կյանքում այն ծղոտյա գլխարկն էր, որ այս անգամ մայրը նվիրեց նրան: Այ, դա լավ էր, հետաքրքրական: Երբ Սուրիկը ծղոտյա գլխարկը ծածկեց, ավելի գեղեցկացավ, իսկ որ ամենակարևորն էր՝ այդ գլխարկը հովանոցի պես փովեց նրա վրա, արևի այրող ճառագայթները չկարողացան ընկնել նրա գլխին, դեմքին, որ շատ հաճելի էր:

====Ex. 143==== Translate into Armenian.

peasant school German heroic human spring reddish rocky blackish ignorant golden copper

====Ex. 144==== Make up three adjectives by means of each of the negative prefixes. - տուն Example: ան - բախտ - ձայն

====Ex. 145==== Form adjectives by adding suffixes to the following nouns.

Դպրոց, ուսուցիչ, քաղաք, հայր, փոշի, ձև, ծաղիկ, քար, գիրք:

Chapter 4

NUMERALS

Numerals

Թվական Անուն

Categories of numerals

Թվականի տեսակները

Section 82

Numerals are the part of speech that indicates number or order of objects. In the Armenian language we distinguish quantitative քանակական, ordinal դասական and distributive բաշխական numerals.

Quantitative numerals

Քանակական թվականներ

Section 83

Quantitative numerals indicate the number or the quantity of the object and answer the questions ինչքան, քանի, որքան (how much?).

Quantitative numerals of the Armenian language

1-10 11-20 21-90 100 and higher 1 մեկ 11 տասնմեկ 21 քսանմեկ 100 հարյուր 2 երկու 12 տասներկու 22 քսաներկու 200 երկու հարյուր 3 երեք 13 տասներեք 30 երեսուն 300 երեք հարյուր 4 չորս 14 տասնչորս 33 երեսուներեք 400 չորս հարյուր 5 հինգ 15 տասնհինգ 40 քառասուն 500 հինգ հարյուր 6 վեց 16 տասնվեց 50 հիսուն 600 վեց հարյուր 7 յոթ 17 տասնյոթ 60 վաթսուն 700 յոթ հարյուր 8 ութ 18 տասնութ 70 յոթանասուն 800 ութ հարյուր 9 ինն ինը 19 տասնինն 80 ութսուն 900 ինն հարյուր 10 տասը 20 քսան 90 իննսուն 1000 հազար

2.000 երկու հազար 1.000.000 միլիոն 2.000.000 երկու միլիոն 1.000.000.000 միլիարդ

Formation of quantitative numerals

Քանակական թվականների կազմությունը

Section 84

Numerals in the Armenian language can be simple պարզ, complex բարդ and compound բաղադրյալ. Simple պարզ are called those numerals that consist of one stem. They are numerals from 1 to 10, also հարյուր (hundred), հազար (thousand), միլիոն, միլիարդ. Complex բարդ are called those numerals that consist of

two stems. The numerals from 11 to 99 belong to this group, e.g., տասնմեկ, տասնհինգ, քսանչորս, յոթանասուներ, etc. The compound parts of complex numerals are written together.

Note: Complex are also the names of tens (երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն) though the meaning of the second stem in these numerals is obscured.

Compound բաղադրյալ are called the numerals that consist of two or more separate words. Compound numerals are written separately, e.g., հարյուր մեկ, երկու հարյուր քառասունհինգ, հազար ինն հարյուր հիսունինն etc.

====Ex. 146==== Write the following numerals by samples of writing.

1, 2, 3, 10, 19, 30, 18, 9, 7, 44, 15, 50, 8, 17, 80, 12, 100, 226, 705, 1000, 1568.

====Ex. 147==== Read, translate into English.

1. Յուրաքանչյուր ձեռք ունի հինգ մատ: Երկու ձեռքը միասին ունեն տասը մատ: Ութերի մատները նույնպես տասն են: Դու քանի՞ ատամ ունես: Ես ունեմ երեսուներկու ատամ:
2. Նա ապրում է երկու սենյակից բաղկացած բնակարանում: Սենյակում դրված են երկու մահճակալ, մեկ սեղան, վեց աթոռ:
3. Նա քսան տարեկան է, իսկ դու տասնութ տարեկան ես: Ես ութ տարեկան հասակում ընդունվել եմ դպրոց: Այժմ տասնվեց տարեկան եմ և սովորում եմ իններորդ դասարանում:

====Ex. 148==== Translate into Armenian.

There are thirty five students in our class. From them twenty girls and fifteen boys. We have six lessons every day. Each lesson lasts fifty minutes. The breaks last ten minutes, and the big break twenty. Five hundred students are studying in our faculty. We study four languages: Russian, Armenian, English and Latin.

====Ex. 149==== Translate into Armenian. Write the numerals in full.

January 13 of 1926, March 31 of 1950, September 22 of 1948, October 9 of 1960.

Example: Հազար ինն հարյուր քսանվեց թվի հունվարի տասներեքին:

====Ex. 150==== Copy out the text and indicate the composition of the numerals.

1. Հազար ինն հարյուր հիսուներեք թվականին ավարտվեցին Երևանի Լենինի հրապարակի ձևավորման աշխատանքները: 2. Մոսկվայի համալսարանը հիմնադրվել է հազար յոթ հարյուր հիսունհինգ թվականին՝ ռուս մեծ գիտնական Լոմոնոսովի ջանքերով: 3. Այժմ Մոսկվայի համալսարանում սովորում է մոտ քսանհինգ հազար ուսանող: 4. Համալսարանն ունի ավելի քան երկու և կես միլիոն խորանարդ մետր ծավալ: 5. Նրա մեջ կտեղավորվի մոտ երկու հարյուր հիսուն դպրոցական շենք:

Ex. 151. Translate into Armenian.

There are 12 months in a year. 7 months have 21 days, 4 months have 30, and one, February has 28 or 29 days. There are 365 days in a year. In a week 5 days are working, and two are holidays.

Ordinal numerals

Դասական թվականներ

Section 85

Ordinal numerals indicate the order of objects and answer the questions որ՞երորդ, քանի՞երորդ (which?). Ordinal numerals form from quantitative numerals by adding suffixes րորդ or րերորդ. Suffix րորդ takes only the numerals երկու, երեք, չորս, all the others take suffix րերորդ. Exception is the word առաջին first, consisting from word առաջ and suffix ին.

առաջին first երկրորդ second երրորդ third չորրորդ fourth հինգերորդ fifth վեցերորդ sixth յոթերորդ seventh ութերորդ eighth իններորդ ninth տասներորդ tenth տասնմեկերորդ eleventh տասներկուերորդ twelfth քսաներորդ twentieth քսանմեկերորդ twentyfirst երեսուներորդ thirtieth քառասուներորդ fortieth հիսուներորդ fiftieth հարյուրերորդ hundredth հարյուր մեկերորդ hundred and first երկու հարյուր քսանհինգերորդ two hundred twentyfifth

In compound ordinal numerals only the last word takes suffix րերորդ, e.g., երկու հարյուր ութերորդ, հազար չորս հարյուր հինգերորդ, etc. Ordinal numerals can be marked by means of:

a. Roman numerals: I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX (20), XXX (30), XL (40), L (50), C (100); b. Letters of the Armenian alphabet: ա (1), բ (2), գ (3), դ (4), ե (5), զ (6), է (7), ը (8), թ (9), ժ (10), ժա (11), ժբ (12), ժգ (13), ժդ (14), etc. c. Arabic numerals. In this case after the Numeral a dash is put and is written րդ, e.g., 2-րդ (2nd), 5-րդ (5th), 20-րդ (20th). The word առաջին is written 1-ին.

====Ex. 152==== Form ordinal numerals from quantitatives.

Մեկ, երկու, չորս, հինգ, տասը, տասհինգ, տասնութ, քառասունհինգ, ութսունչորս, հարյուր ինն, երկու հարյուր տասներեք:

====Ex. 153==== Copy out, underline the ordinal numerals.

1. Ֆիզիկայի ֆակուլտետի հինգերորդ կուրսի ուսանողները հանձնեցին իրենց արաջին պետական քննությունը: 2. Երկրորդ կուրսի ուսանողները պարապում են երեսուներկուերորդ լսարանում: 3. Լուսինն ապրում է երկրորդ հանրակացարանի չորրորդ հարկի քսանիններորդ սենյակում: 4. Սովետական երկրորդ արհեստական արբանյակը շատ մեծ էր առաջին արբանյակից: 5. Արդեն իններորդ տարին է, որ նա աշխատում է գործարանում:

====Ex. 154==== Make up sentences with following ordinal numerals.

Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, տասներորդ, տասներեքերորդ, քառասունհինգերորդ:

Example: Նա նստում է առաջին շարքում:

====Ex. 155==== Write with Arabic numerals.

Առաջին, ութերորդ, քսաներկուերորդ, վաթսուներորդ, հարյուրմեկերորդ, տասներեքերորդ: E.g. 8-րդ.

====Ex. 156==== Translate into Armenian and underline the ordinal numerals.

The new study year began the first of September. I study in the fourth year at the Medical Institute. My sister studies at the University in first course. Our group occupies the seventh place by progress in the Institute. All twenty five students of our group are comsomsols. We have five tests and three exams in this term. We take our first exam the 8th of January, the second - 15th, the third - 22nd. In 1959 students from Baku visited us.

Distributive numerals

Բաշխական թվականներ

Section 86

Distributive բաշխական numerals show the quantitative distribution of objects. They form from quantitatives by means of suffix ալան.

մեկական one each երկուական two each երեքական three each չորսական four each հնգական five each քսանական twenty each հարյուրական hundred each

Section 87

Number expressed by a fraction is called a fractional number (կոտորակային). In the Armenian language the numerator of the fraction is expressed by a quantitative numeral, and the denominator by an ordinal or is formed from its distributive, e.g., $1/5$ is read մեկ հինգերորդ or հինգերորդական, $2/7$ - երկու յոթերորդ or երկու յոթերորդական, etc.

====Ex. 157==== Form distributive numerals from the following quantitatives.

2, 3, 6, 4, 8, 10, 15, 21, 25.

====Ex. 158==== Underline the distributive numerals and translate them into English.

1. Յուրաքանչյուր շարքում կանգնած են չորսական ուսնող: 2. Մայրը երեխաներին բաժանեց երկուական խնձոր: 3. Բոլորից պահանջվում է հնգական ռուբլի: 4. Երեքական շարքերով պիտներները անցնում են հրապարակով: 5. Յուրաքանչյուր աշակերտ պետք է ներկայացնի մեկական տետր:

====Ex. 159==== Read the following fractional numerals.

$1/2$, $1/8$, $5/6$, $18/20$, $8/15$, $13/64$, $2/9$.

====Ex. 160==== Translate into Armenian and underline the numerals.

1. Each group sent for subbotnik (a day of voluntary unpaid labour) 15 students. 2. There are 25 collective farmers in each brigade. 3. Each student got five notebooks, three pencils, and one pen. 4. There were 25 chairs in each row. 5. It was decided to collect 5 rubles from each.

Use of numerals with nouns

Թվականների գործածությունը գոյականի հետ

Section 88

Numerals, just like adjectives, when used with nouns change neither by case nor number, e.g., երեք տղա three boys, երեք տղայի three boys', երեք տղաներից from three boys, երրորդ կուրսը the third course, երրորդ կուրսի the third course's, երրորդ կուրսից from the third course, etc.

Quantitative numerals

Քանակական թվականներ

Singular - եզակի թիվ

Ուղղ. չորս աշակերտ four students Սեռ. չորս աշակերտի four students' Տր. չորս աշակերտին to four students Հայց. չորս աշակերտին to four students Բաց. չորս աշակերտից from four students ործ. չորս աշակերտով by four students

Ordinal numerals

Դասական թվականներ

Singular - եզակի թիվ

Ուղղ. իններորդ ալիք(ը) (the) ninth billow Սեռ. իններորդ ալիքի ninth billow's Տր. իններորդ ալիքի(ն) to (the) ninth billow Հայց. իններորդ ալիք(ը) (the) ninth billow ործ. իններորդ ալիքով by ninth billow Բաց. իններորդ ալիքից from ninth billow Ներգ. իններորդ ալիքում in ninth billow

Distributive numerals

Բաշխական թվականներ

Ողղ. երկուական գիրք Սեռ. երկուական գրքի Տր. երկուական գրքի Հայց. երկուական գիրք Բաց. երկուական գրքից ործ. երկուական գրքով Ներգ. երկուական գրքում

Section 89

The following peculiarities occur when numerals are used in the Armenian language.

a. When combined with a noun, numerals are always used in unchanged form. Compare: երկու ուսանող two students հինգ ուսանող five students երկու ուսանողի two students' երկու ուսանողով by two students b. Usually, when in Armenian nouns are used with numerals they are put in singular form, e.g., տաս ուսանող ten students, հինգ գիրք five books. Only in case the "plurality" is emphasized the noun is used in plural. Compare:

Ութ ուսանող լավ են սովորում: Eight students study well. Ութ ուսանողներ լավ են սովորում: Eight students study well.

====Ex. 161==== Make up sentences using the following word combinations in various cases.

Չորս սենյակ, երկրորդ հարկ, հնգական տետրակ:

====Ex. 162==== Copy out the numerals with nouns and translate them into English.

1. Նույն օրը երեկոյան Սմբատի և Միքայելի միջև տեղի ունեցավ առաջին ընդհարումը: 2. Մարութխանյանը, երկու բաժակ թեյ պահանջելով, սկսեց նրա հետ խոսել բարեկամաբար: 3. Հենց առաջին հայացքից տիկինը հետաքրքրվել էր տարօրինակ հասարակությամբ: 4. Անցավ երկու-երեք շաբաթ: 5. Չուպրովն առաջին և երկրորդ դռների միջև ընդհարվեց Դավիթ Չարգարյանի հետ: 6. Հինգերորդ բուրգի սնունդներն ընկավ մեկը մյուսի ետևից, ճարճատելով ու չորս կողմ տարածով կայծերի հեղեղ: 7. Անցան սգի առաջին օրերը: (Շիրվանզադե)

====Ex. 163==== Translate into Armenian.

1. The teacher gave three notebooks and two pencils to each student. 2. About 40 rubles was spent on repairing the school. 3. 2/3 of the class are comsomols. 4. A meeting will take place after the fifth class. 5. It's the third day snowing. 6. Five students remained from each group. 7. The hunters killed two wolves, three foxes and one bear. 8. The hall is for 650 persons. 9. From Moscow to Leningrad is more than 600 km. 10. The meeting will start at 8 p.m. 11. 27 workers of the factory got vouchers to sanatoriums. 12. The train leaves at 12 at night.

Declension of numerals

Թվականների հոլովումը

Section 90

Numerals, just like adjectives, in the Armenian language decline only when they are used in the meaning of nouns. In that case the numeral means not only a number but also an object. E.g. Երեքն էլ գնացին: All three went away.

Առաջինը լավ էր սովորել դասը, իսկ երկրորդը՝ ոչ: The first one knew his lesson well; the second one not. Numerals used in the meaning of noun take definite article and change by the declension by ի.

Ուղղ. երեքը three քսանմեկը twentyone Սեռ. երեքի of three քսանմեկի Տր. երեքին to three քսանմեկին Հայց. երեքին to three քսանմեկին երեքը three քսանմեկը Բաց. երեքից from three քսանմեկից ործ. երեքով by three քսանմեկով Ներգ. երբում in three քսանմեկում

Ուղղ. վեցերորդ the sixth հարյուրերորդ the hundredth Սեռ. վեցերորդի of the sixth հարյուրերորդի Տր. վեցերորդին to the sixth հարյուրերորդին Հայց. վեցերորդին to the sixth հարյուրերորդին վեցերորդը the sixth հարյուրերորդը Բաց. վեցերորդից from the sixth հարյուրերորդից ործ. վեցերորդով by the sixth հարյուրերորդով Ներգ. վեցերորդում in the sixth հարյուրերորդում

Note: In compound numerals only the last word is declined, e.g., հազար ինն հարյուր հիսունիննի, հազար ինն հարյուր հիսունիննով, երկու հարյուր յոթանասունչորսերորդից, etc.

====Ex. 164==== Decline the numerals մեկ, երկու, քսան, չորրորդ, քսաներորդ.

====Ex. 165==== Translate into English.

Դուք ժամացույց ունե՞ք: Այո, ես ժամացույց ունեմ: Ասացե՛ք, ինդրեմ, ժամը քանի՞սն է: Ուրն անց է քսան րոպե: Տասին 15 է պակաս: Օրը քանի՞ ժամ ունի: Օրն ունի 24 ժամ: Ես սովորաբար քնում եմ գիշերվա ժամը 11-ին: Վեր եմ կենում 7 անց կեսին: 8-ից մինչև 8 անց 10 րոպե զբաղվում եմ ֆիզկուլտուրայով: Լվացվում եմ 8 անց կեսին: Նախաճաշում եմ ժամը 9-ին: Մեր դասերը սկսվում են 1 անց կեսին և տևում են մինչև ժամը 7 անց 20 րոպե: Մեր առաջին դասը հետաքրքիր է անցնում: Հետաքրքիր են անցնում նաև երկրորդը, երրորդը, չորրորդը:

====Ex. 166==== Translate into Armenian.

I came to work the first. The others came at eight. I fulfilled the 60% of my daily plan till 12 o'clock. From 1 to 3 I fulfilled the rest of the 40%. In the evening, from 8 to ten thirty I study at school. At the same school study more than 400 workers of our factory. There are 14 classes at school: two sixth, three seventh, four eighth, two tenth. In sixth grade study 60 students, in seventh - 80, in eighth 100, in ninth - 91 students, and in tenth - 67 students. More than 100 students study in postal tuition colleges. Every second worker is a student. The management of the factory made all the study conditions. Great privileges are promised by the soviet

government to the working youth. During the exam period the students get holidays of 20 days, their working day finishes at three, and not at five.

Syntactic functions of numerals

Թվականների շարահյուսական կիրառությունները

Section 91

Numerals in the sentence serve as:

- a. attribute: Շինարարները կառուցեցին քսան շենք: Builders built twenty buildings. Երկրորդ դասը սկսվում է ժամի 10-ին: The second lesson starts at ten o'clock.
- b. the nominal part of compound predicate: րքերի թիվը հինգն է: Number of books is five. Նա մեր կուրսում առաջինն է: He is the first in our class.
- c. modifier of measure (combined with nouns indicating measure, weight, etc.): Մենք գնացինք երեսուն կիլոմետր: We covered thirty kilometers.

Numerals used in the meaning of noun can serve as the subject, attribute, etc., in the sentence.

====Ex. 167==== Say what part the numeral plays in the sentence.

1. Երկրորդ կուրսի քսան ուսանողներն էլ հաջող հանձնեցին իրենց առաջին քննությունը: 2. Երկու ընկերներ միասին գնացին անտառ: 3. Այս գիրքն արժե քսան ռուբլի:

====Ex. 168==== Copy out, write the numerals in full.

Ո՞ր կենդանին ինչքան է ապրում Ամենից երկար ապրող կենդանին փիղն է, որն ապրում է 150 տարի: այլաձուկն էլ է մոտ 150 տարի ապրում: Կենդանիները միջին հաշվով ապրում են՝ միօրիկ թիթեռը՝ 1 օր, մայիսյան բզեզը՝ 1 ամիս, մորեխը՝ 2 ամիս, խխունջն ու մուկը՝ 3 տարի, սկյուռը՝ 5 տարի, խոզն ու նապաստակը՝ 8 տարի, սոխակն ու աղվեսը՝ 14 տարի, խեցգետինը՝ 16 տարի, ձին՝ 17 տարի, կկուն՝ 28 տարի, առյուծը՝ 30 տարի, արջը՝ 40, կարապը՝ 50, ագռավը՝ 100, գայլաձուկն ու փիղը՝ 150 տարի:

Chapter 5

PRONOUNS

ԴԵՐԱՆՈՒՆ

The meaning and classes of pronouns

Դերանունների նշանակությունը և տեսակները

Section 92

Pronouns are called the group of words which have a generalized meaning of objects, indication of objects and indication of actions. Pronouns in the Armenian language are used instead of nouns, adjectives, numerals and adverbs, e.g.

1. Դասախոսը մտավ լսարան. նա սկսեց դասախոսությունը:

The tutor entered the auditorium; he started the lecture.

1. Ես կարդացի մի հետաքրքիր գիրք. այդպիսի գիրք դեռ չէի կարդացել:

I read an interesting book; I never read such a book before.

1. Երրորդ կուրսում սովորում են 30 ուսանողներ. այդքան ուսանողներ կան նաև չորրորդ կուրսում:

30 students study in third course, there are as many students in fourth course too.

1. Դու այսօր լավ էիր պատասխանում. այդպես դու երբեք չէիր պատասխանել:

You answered well today, you have never answered so before.

Section 93

In the Armenian language the pronouns can be divided into following classes:

1. Անձնական - Personal
2. Ցուցական - Demonstrative
3. Փոխադարձ - Reciprocal
4. Հարցական - Interrogative
5. Հարաբերական - Relative
6. Որոշյալ - Definite
7. Անորոշ - Indefinite
8. Ժխտական - Negative

Personal pronouns

Անձնական դերանուններ

Section 94

Personal pronouns are:

Armenian English

Ես	<i>I</i>
դու	<i>you</i>
նա	<i>he (she, it)</i>
ինքը	<i>himself</i>
մենք	<i>we</i>
դուք	<i>you</i>

նրանք *they*
 իրենք *themselves*.

Declension of personal pronouns

(Why is there no column for նա in the table for Singular?)

Singular - Եզակի թիվ

Case	First person		Second person		Third person	
	Armenian	English	Armenian	English	Armenian	English
Ուղղ. (nom)	Ես	<i>I</i>	դու	<i>you</i>	ինքը	<i>himself</i>
Սեռ. (gen)	իմ	<i>my</i>	քո	<i>your</i>	իր	
Տր. (dat)	ինձ	<i>me</i>	քեզ	<i>you</i>	իրեն	
Հայց. (acc)	ինձ	<i>to me</i>	քեզ	<i>to you</i>	իրեն	
Բաց. (abl)	ինձանից	<i>from me</i>	քեզանից	<i>from you</i>	նրանից	
	ինձանից		քեզանից		իրենից	
Գործ. (ins)	ինձնով	<i>by me</i>	քեզնով	<i>by you</i>	նրանով	
	ինձանով		քեզանով		իրենով	
Նեգ. (loc)	ինձնում	<i>in me</i>	քեզնում	<i>in you</i>	նրանում	
	ինձանում		քեզանում		իրենում	

Plural - Հոգնակի թիվ

Case	First person		Second person		Third person		
	Armenian	English	Armenian	English	Armenian	English	
Ուղղ. (nom)	մենք	<i>we</i>	դուք	<i>you</i>	նրանք	<i>they</i>	իրենք <i>themselves</i>
Սեռ. (gen)	մեր	<i>our</i>	ձեր		նրանց		իրենց
Տր. (dat)	մեզ	<i>to us</i>	ձեզ		նրանց		իրենց
Հայց. (acc)	մեզ	<i>to us</i>	ձեզ		նրանց		իրենց
Բաց. (abl)	մեզանից	<i>from us</i>	ձեզանից		նրանցից		իրենցից
	մեզանից		ձեզանից				
Գործ. (ins)	մեզնով	<i>by us</i>	ձեզնով		նրանցով		իրենցով
	մեզանով		ձեզանով				
Ներգ. (loc)	մեզնում	<i>in us</i>	ձեզնում		նրանցում		իրենցում
	մեզանում		ձեզանում				

Notes

- The accusative case of personal pronouns coincides with the dative case by form, e.g. Ես մտնեցա քեզ. I came up to you. Ես հարգում եմ քեզ. I respect you.
- Personal pronouns of first and second persons have two forms in ablative, instrumental and locative cases; ինձանից - ինձանից, ինձնով - ինձանով, ինձնում - ինձանում. The first forms, i.e. forms without *u* are more used in literary language.
- The pronouns ինքը himself, իրենք themselves also have the forms ինքս (literally ես ինքս I myself), ինքդ (դու ինքդ - you yourself), ինքներս (մենք ինքներս - we ourselves), ինքներդ (դուք ինքներդ - you yourselves).

Section 95

The genitive case of personal pronouns of I and II persons in the English language correspond with the possessive pronouns my, your, our, your.

Իմ գիրքը հետաքրքիր է:
My book is interesting.
Ձեր տղան լավ է սովորում:
Your boy studies well.

Section 96

? (?)

Section 97

In some cases the genitive case of personal pronouns takes definite article. In this case the pronoun obtains material meaning and declines, e.g.

Դուք բառարան չունեք, ես ուզում եմ ձեզ տալ իմը:
You do not have a dictionary, I want to give you mine.

The forms of the genitive case of personal pronouns used in the meaning of nouns, decline in the following way:

Ուղղ. իմը mine քոնը yours Սեռ. իմի քոնի Տր. իմին քոնին Հայց. իմը քոնը իմին քոնին Բաց. իմից քոնից Գործ. իմով քոնով Ներգ. իմում քոնում Ուղղ. մերը ours ձերը yours Սեռ. մերի ձերի Տր. մերին ձերին Հայց. մերը ձերը մերին ձերին Բաց. մերից ձերից Գործ. մերով ձերով Ներգ. մերում ձերում

In the plural the pronouns մերը, ձերը have the forms մերոնք, ձերոնք, which change by the declension by g, e.g., ձերոնք - ձերոնց - ձերոնցից, etc.

Section 98

Personal pronoun-nouns serve in the sentence as subject, object, uncoordinated attribute, nominal part of compound predicate, e.g.

Մենք Սովետական Միության քաղաքացիներ ենք: (subject)
We are citizens of Soviet Union.
Բոլորը գնահատում են ձեզ: (direct object)
Everybody appreciates you.
Քո ծնողներն ապրում են գյուղում: (uncoordinated attribute)
Երգողը նա է: (nominal part of compound predicate)
(literally - The singer is he)

====Ex. 169==== Read and point out the personal pronouns.

Ես չեմ հիշում՝ երբ և ու՞ր
Հանդիպեցի քեզ, ու դու
Վրդովեցիր համր ու լուռ
Հանգստությունն իմ հոգու:
Գիտեմ, գիտեմ այս աղոտ
Երկրում քեւ (քեզ?) չեմ գտնելու,

Դու անհայտ ես, անծանոթ,
Դու հեռու ես, դու հեռու...

(Վ. Տերյան)

====Ex. 170==== Decline in sentences the pronouns ես, դու, մենք, դուք, ինքը.

====Ex. 171==== Translate into English.

I.

1. Ես չգիտեմ, թե որտեղ եմ դրել քո բառարանը:
2. Երեկ նա ինձ պատմեց իր ճանապարհորդության մասին:
3. Նա շատ է սիրում մեզ հետ խոսել իր երեխաների մասին:
4. Նրանք միշտ դասերը պատրաստում են մեր տանը:
5. Մենք սովորում ենք համալսարանում. մեզինց (մեզնից?) գոհ են մեր դասախոսները. մեզանով հպարտանում է ֆակուլտետը:
6. Ես ամռանը եղա Կիրովականում:
7. Երբ մենք հանգստանում էինք Մոչիում, ես հաճախ էի լողանում ծովում:
8. Ես ինքս կպատասխանեմ նրա նամակին:
9. Դու ինքդ պիտի խոսես նրա հետ:
10. Մենք ինքներս կստորագրենք դիմումի տակ:
11. Ես կարծում եմ, որ դա կարող էք անել ինքներդ:
12. Դուք ինքներդ եք ուզում մասնակցել երեկույթին:
13. Նա ինքը կանի այդ աշխատանքը:
14. Ինքս կհարցնեմ նրանից:

II.

1. Ես քեզ կնվիրեմ իմ գիրքը, դու էլ ինձ նվիրիր քոնը:
2. Ես ձեզ կկարդամ իմ բանաստեղծությունը, դուք էլ կարդացեք ձերը:
3. Ես դեռ չեմ վերջացրել իմ առաջադրանքը. իսկ քոնը պատրաստ է:
4. Ձերոնք որտեղ են պարապելու. մերոնք պարապելու են գրադարանում:
5. Դու վերցրու նրա գրիչը և փոխարենը տուր քոնը:
6. Մեր ուսանողներն արդեն վերադարձել են Մոսկվայից, իսկ ձերոնք՝ Մերոնք նույնպես վերադարձել են:

====Ex. 172==== Translate into Armenian.

1. Have you seen comrade Hakobyan? Yes I have seen him and his wife. I saw them in the club. Their son also was with them. 2. Do you want to explain to them their mistakes? 3. He gave us these books and asked to return them after two days. 4. She doesn't want to talk about herself. 5. She bought a new hat for herself. 6. They made this thing themselves. 7. We ourselves will talk to her. 8. I met my friend. 9. Do you like your speciality? 10. He is dissatisfied with his own behaviour. 11. I read your article, I liked it. 12. Today is my birthday, when is yours? 13. We have 10 excellent pupils in our group, how about (in) yours? 14. Who is going leave for Leningrad from your folk? 15. Give this book to him, and his book to Aram.

====Ex. 173==== Read, define the case of the personal pronouns, say what part of the sentence they serve as.

Ու այն օրը գնացի արը փնտրելու. գնացի շատ հեռու, քաղաքի ծայրը ու գտա արևկող մի բնակարան: - Սիրուն կակաչներ, արևի զավակներ, ավելի լավ չէ՞ր ձեզ մոտ բերելի իմ ոսկեծամիկ աղջկան: Դուք նրան կգուգեիք կարմիր ու կանաչ... Բայց, հա, գիտեմ դուք նրան հաց չէիք տա...

դուք սնվում եք վաղորդյան ցողով... Լսեցեք, ես դեռ չեմ վերջացրել... Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տուն, բայց երբ լուսացավ, նա ինձ կանչեց. ձեռքս բռնեց ու փակեց աչքերը... Հետո եկան մարդիկ ու տարան նրան... Ու երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից, մենք բոլորս այրվեցինք լալուց, իսկ ես դարձա արևի հիվանդ: Ես գնում էի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արևածագին: Ու միշտ տեսնում էի աղջկանս՝ արևը գրկած և իր մազերը նրա վրա փռած... Բայց երբ պատմում էի արևի մասին, կինս ու մայրս չէին հավատում. նրանք կարծում էին, թե ես խելագար եմ, և ողբում էին այրված, ցամաքած աչքերով: (Արագի, "Արևը")

Demonstrative pronouns

Ցուցական դերանուններ

Section 99

The demonstrative pronouns generally point out the object, quality of the object and indication of the action. The demonstrative pronouns divide into four groups:

1. demonstrative pronoun - nouns
2. demonstrative pronoun - adjectives
3. demonstrative pronoun - numerals
4. demonstrative pronoun - adverbs

Section 100

The demonstrative pronoun-nouns are սա (this), դա (that), նա (that), սրանք (these), դրանք (those), նրանք (those).

The pronouns: սա, սրանք (this, these) point at the object situated in direct closeness from the speaker; դա, դրանք (that, those) point at the object situated not too far from the speaker. նա, նրանք (that, those) point at a separate object. (Wouldn't it be better to relate the forms դա, դրանք to proximity to the listener, i.e., the addressed person?) Examples: Սա իմ գիրքն է This is my book (here the speaker talks about a book that is in his/her hands or is very close to him/her). Դա քո գիրքն է That is your book (here the speaker talks about a book, that is in his/her (or: the listener's?) hands or is very close to him/her). Դա (Նա?)(այն) նրա գիրքն է That is his book (here the speaker talks about the book far from him/her).

Declension of demonstrative pronoun-nouns

Singular - Եզակի թիվ

Ուղղ. սա this դա (that) նա (that) Սեռ. սրա of this դրա նրա Տր. սրան to this դրան նրան Հայց. սա this դա նա Բաց. սրանից from this դրանից նրանից Գործ. սրանով by this դրանով նրանով Ներգ. սրանում in this դրանում նրանում

Plural - Հոգնակի թիվ

Ուղղ. սրանք these դրանք (those) նրանք (those) Սեռ. սրանց of these դրանց նրանց Տր. սրանց to these դրանց նրանց Հայց. սրանք these դրանք նրանք Բաց. սրանցից from these դրանցից նրանցից Գործ. սրանցով by these դրանցով նրանցով Ներք. սրանցում in these դրանցում նրանցում

Notes: 1. Demonstrative pronouns in the accusative case have two forms, one of them coincides with the dative and shows a person, the other coincides with the nominative and shows an object. E.g.

Սուրենը սրան (երեխային) վերցրեց:

Suren took him (the child).

Սուրենը սա (գիրքը) վերցրեց:

Suren took this (the book).

2. Demonstrative pronouns նա, նրանք are at the same time the personal pronouns of the third person.

Demonstrative pronoun-nouns in the sentence can serve as subject, object, nominal part of compound predicate.

E.g., Սրանք ուսման գերազանցիկներն են: These are the excellent ones of study (subject). Իմ գրիչը դա

է: Literally: My pen is that (nominal part of compound predicate). Դրանք տուր ինձ: Give those to me

(object).

Section 101

Demonstrative pronoun-adjectives are: այս this, այդ that, այն that, այսպիսի, այդպիսի, այնպիսի such;

նույնպիսի the same, սույն this, նույն, միևնույն the same, մյուս other.

These pronouns when used with nouns change neither by number nor by case. E.g.

Այս գիրքը հետաքրքիր է:

This book is interesting.

Այս գիրքը դեռ չեմ կարդացել:

I haven't read this book yet.

Նրանք պարապում են այս գրքով:

They study with this book.

Section 102

Pronouns այս, այդ, այն point at three degrees of separations. E.g.

1. այս մատիտը this pencil 2. այդ մատիտը that pencil 3. այն մատիտը that pencil

Pronouns այս, այդ, այն keep the meaning of three degrees of separations in composition of compound pronouns too: այսպիսի, այդպիսի, այնպիսի (such), այստեղ (here), այդտեղ (there), այնտեղ (over there), այսպես, այդպես, այնպես (so), etc.

Section 103

Pronouns այս, այդ, այն can be used independently. In this case they have material meaning and represent the equivalents of pronouns սա, դա, նա, e.g. Այս տար, այն բեր: Take this, bring that. Compare: Սա տար, նա բեր: Take this, bring that. (So the imperative of բերել is irregular: բեր, instead of բերիր? This is not listed in Lesson 6 (Verbs), Section 188.)

Section 104

Some pronoun-adjectives can be used in the meaning of nouns and decline.

Singular Plural Ուղղ. այդպիսինը (such) այդպիսիները (such) Սեռ. այդպիսինի այդպիսիների Տր. այդպիսինին այդպիսիներին Հայց. այդպիսինը այդպիսիները այդպիսինին այդպիսիներին Բաց. այդպիսինից այդպիսիներից Գործ. այդպիսինով այդպիսիներով Ներգ. այդպիսինում այդպիսիներում

Demonstrative pronoun-adjectives in the sentence serve as attribute and as the nominal part of compound predicate, e.g.

Այդ նկարը ինձ դուր է գալիս:

I like that picture. (attribute)

Նա այդպիսին է:

Such is she. (nominal part of compound predicate)

Section 105

Demonstrative pronoun-numerals are այսքան այդքան այնքան (so much, so many), նույնքան նույնչափ (as much as, as many as), այսչափ այդչափ այնչափ (so much, so many). In the sentence these pronouns serve as attribute, modifier of measure and quantity, nominal part of compound predicate, e.g.

Ես այդքան գիրք չունեմ:

I do not have so many books.

Նրա ունեցածը այնքան է, որքան քոնը:

He has as much, as you.

Նա այնքան վազեց, որ հոգնեց:

He ran so much, that got tired.

Section 106

Some pronoun-numerals can be used in the meaning of nouns and in this case they can decline:

Ուղղ. այսքանը (so much) այդքանը (so much) Սեռ. այսքանի այդքանի Տր. այսքանին այդքանին Հայց. այսքանը այդքանը այսքանին այդքանին Բաց. այսքանից այդքանից Գործ. այսքանով այդքանով Ներգ. այսքանում այդքանում

Section 107

Demonstrative pronoun-adverbs are այսպես այդպես այնպես (so), այստեղ (here), այդտեղ (there) այնտեղ (over there). These pronouns serve in the sentence as various modifiers, e.g.

Նա այսպես է երգում:

He sings so.

Այնտեղ նոր շենքեր են կառուցվում:

New buildings are being built over there.

Section 108

Pronoun-adverbs indicating place can decline, but they have the forms of genitive, ablative and instrumental cases. E.g.

այստեղ - այստեղի - այստեղից - այստեղով այդտեղ - այդտեղի - այդտեղից - այդտեղով այնտեղ - այնտեղի - այնտեղից - այնտեղով =====Ex. 174===== Make up sentences with pronouns սա, դա, սրանք, դրանք in different cases.

=====Ex. 175===== Define the syntactic functions of demonstrative pronouns in the sentence.

1. Դա մի երկար ու լայն սենյակ էր: 2. Այնտեղ դրված էին մի քանի դեղնագույն պահարաններ: 3. Այդ թերթում տպագրվում են հետաքրքիր լուրեր: 4. Այստեղ քանդում են հին շենքերը, այնտեղ կառուցում են նորերը: 5. Այդպիսի սենյակում կարելի է լավ շիսատել և հանգստանալ: 6. Նրա ընկերներն արդեն այնտեղ են: 7. Այնքան եմ գնացել ու եկել, քայց հարցը չի լուծվում: 8. Այսպես պետք է հարվածել թշնամուն: 9. Այսքան շենքեր են կառուցվել մեր փողոցում: 10. Քրանցքը պետք է անցնի այստեղից: 11. Այդ գրավորի մեջ սխալներ չկան: 12. Սա իմ վերջին խոսքն է: 13. Իմ սիրելի

ուսանողները սրանք են: 14. Իմ սիրած գիրքը սա է: 15. Նա իր ճառը վերջացրեց այդպիսի նախադասությամբ: 16. Բոլորը խոսում են նույն հարցի մասին: 17. Սույն դիմումով խնդրում եմ ձեզ լուծել այս հարցը:

====Ex. 176==== Make up sentences with pronouns այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի.

====Ex. 177==== Translate into English.

1. Սա գիրք է, իսկ դա ամսագիր է: 2. Սա իմ բառարանն է, իսկ դա՝ քոնը: 3. Սրանք իմ տետրերն են, իսկ դրանք՝ քո տետրերը: 4. Սա նկար է: 5. Սրանք ի՞նչ են. սրանք նկարներ են: 6. Դրանք գեղեցիկ իրեր են: 7. Սա այն տունն է, որտեղ ապրել եմ ես: 8. Դա այն աշակերտն է, որը երեկ ուշացել էր դասից: 9. Սրանք իմ ընկերներն են: 10. Դրանք քո ընկերուհիներն են: 11. Այդ քաղաքն ինձ շատ է դուր գալիս: 12. Այս տանը մի ժամանակ գրադարան կար: 13. Վաղը այս ժամանակ կլինեմ քեզ մոտ: 14. Այն դասախոսը պարապում է հայերեն, իսկ այդ դասախոսը՝ գերմաներեն: 15. Ես այսպիսի մարդ չեմ տեսել: 16. Դու այդպիսի մարդ ճանաչո՞ւմ ես: 17. Նա այնպիսի բաներ է պատմում, որ մենք չենք լսել: 18. Սույն հարցը քննարկվեց ժողովում: 19. Այդքան գրքեր ե՞րբ ես գնել: 20. Նա երեկ այստեղ խոսում էր քո մասին: 21. Դու միշտ այդպե՞ս ես կարդում: Այո, ես միշտ այդպես եմ կարդում:

====Ex. 178==== Translate into Armenian.

1. Behind that forest are situated the fields of our farm. 2. There are many mushrooms in that forest. 3. We need to go to that forest. 4. In this building the school is situated, and in that one the club. 5. Leave these, and take those. 6. This is my pencil, that is yours and that is his. 7. In this school teaches my mother, and in that one studies my sister. 8. I passed two exams, so many passed you and as many passed he. 9. They stayed in that country for a month. 10. I like such work. 11. Roses grow here, and carnations there. 12. I will stay here, you sit here, and he will stay there. 13. Can you do so? Yes, I can do so.

Reciprocal pronouns

Փոխադարձ դերանուններ

Section 109

The reciprocal pronouns in the Armenian language are միմյանց, իրար, մեկմեկու. The meaning of these three pronouns in the English language is expressed by means of the word combination "one another".

Ուղղ. - - - - Սեռ. միմյանց իրար մեկմեկու one another Տր. միմյանց իրար մեկմեկու Հայց. միմյանց իրար մեկմեկու Բաց. միմյանցից իրարից մեկմեկուց Գործ. միմյանցով իրարով մեկմեկով

Ex. 179

Make up sentences with the pronoun միմյանց in different cases.

Ex. 180

Translate into English. 1. Նրանք սիրում են իրար: 2. Արդեն երկու տարի է, ինչ նրանք գիտեն իրար: 3. Նրանք հաճախ օգնում են միմյանց: 4. Աշոտն ու Արամը հեռու են ապրում իրարից: 5. Մենք բաժանվեցինք միմյանցից: 6. Քույր ու եղբայր հարգում են մեկմեկու: 7. Իմ բարեկամները հաճախ են տեսնում իրար:

Ex. 181

Translate into Armenian. 1. They know each other well. 2. They love each other. 3. They looked at one another. 4. Friends often go to each other. 5. Girlfriends often meet each other. 6. The pupils decided to meet in the evening. 7. Aram and Hakob met their friend. 8. They hardly recognized each other. 9. The friends treated each other very well. 10. Aram and Surik help each other.

Interrogative pronouns

Հարցական դերանուններ

Section 110

Interrogative pronouns ask questions about the object, indication of the object and action.

Section 111

Interrogative pronoun-nouns are *ն՞վ* who?, *ի՞նչ* what?, and have the plural forms *ովքե՞ր*, *ինչե՞ր*. The pronoun *ի՞նչ* declines in plural as in singular; pronoun *ն՞վ* declines only in singular, in plural it only has the form of the nominative case *ովքե՞ր*.

Singular - եզակի թիվ Ուղղ. *ն՞վ* (who?) *ի՞նչը* (what?) *ովքե՞ր* *ինչե՞րը* Սեռ. *ու՞մ* *ինչի՞* - *ինչերի՞* Տր. *ու՞մ* *ինչի՞ն* - *ինչերի՞ն* Հայց. *ու՞մ* *ի՞նչը* - *ինչերիը* Բաց. *ումի՞ց* *ինչի՞ց* - *ինչերի՞ց* Գործ. *ումո՞վ* *ինչո՞վ* - *ինչերո՞վ* Ներգ. - *ինչու՞մ* - *ինչերու՞մ*

In the sentence interrogative pronoun-nouns have the syntactic function of noun, e.g., (My try: *Ո՞վ դուրս գնաց*) (Who went away?), (My try: *Ի՞նչը ես կարդում դու*) (What are you reading?), etc.

Section 112

Interrogative pronoun-adjectives are *ն՞ր*, *ինչպիսի՞*, *որպիսի՞* (which?). These pronouns serve for expressing questions about qualitative or relative indications of the object, e.g., *ն՞ր ուսանողը* - *ջանասեր ուսանողը* (which student? - the diligent student), *ինչպիսի՞ քամի* - *ծովային քամի* (which wind? - sea wind), etc.

Pronouns *ն՞ր*, *ինչպիսի՞*, *որպիսի՞* serve in the sentence as attributes, e.g., *ն՞ր կոլտնտեսականը* (which farmer?), *ինչպիսի՞ գրքեր* (which books?), *որպիսի՞ համարձակություն* (what boldness?), etc.

If the interrogative pronoun-nouns are used in the meaning of noun, they decline.

Ուղղ. *ն՞րը* (which?) *որո՞նք* (which?) Սեռ. *որի՞* *որո՞նց* Տր. *որի՞ն* *որո՞նց* Հայց. *ն՞րը* *որո՞նք* *որի՞ն* *որո՞նց* Բաց. *որի՞ց* *որոնցի՞ց* Գործ. *որո՞վ* *որոնցո՞վ* Ներգ. *որու՞մ* *որոնցու՞մ*

Ուղղ. *ինչպիսի՞նք* (what?) *ինչպիսիներ՞ը* Սեռ. *ինչպիսիների՞* *ինչպիսիների՞* Տր. *ինչպիսիների՞ն* *ինչպիսիների՞ն* Հայց. *ինչպիսի՞նք* *ինչպիսիներ՞ը* *ինչպիսիների՞ն* *ինչպիսիների՞ն* Բաց. *ինչպիսիների՞ց* *ինչպիսիների՞ց* Գործ. *ինչպիսինո՞վ* *ինչպիսիներո՞վ* Ներգ. *ինչպիսինու՞մ* *ինչպիսիներու՞մ*

Section 113

Interrogative pronoun-numerals are *քանի՞*, *ինչքա՞ն*, *որքա՞ն* (how much?), *քանի՞ երրորդ*, *ո՞ր երրորդ* (which by order ("how manieth")). They express questions about the quantity or order of objects and serve in

the sentence as attribute, nominal part of compound predicate. Pronouns որքա՞ն, ինչքա՞ն can serve as modifiers of measure, e.g.

Քանի՞ եղբայր ունես դու: How many brothers do you have? Ո՞ր րեբրորդ դասարանում է սովորում ձեր տղան: What grade is your son in? Դա ինչքա՞ն է: How much is that? Նա ինչքա՞ն խոսեց: How much did he talk?

Section 114

Interrogative pronoun-adverbs are որտե՞ղ (where?), ու՞ր (where?), ե՞րբ (when?), ինչպե՞ս (how?), ինչու՞ (why?). They express questions about indications of actions and serve in the sentence as modifiers of time, place, etc. E.g.

Ու՞ր ես գնում դու:

Where are you going?

Ե՞րբ են սկսվում մեր դասերը:

When do our classes start?

Որտե՞ղ է աշխատում քո հայրը:

Where does your father work?

Ինչպե՞ս պատահեց, որ նա անբավարար ստացավ:

How did it happen, that he got an unsatisfactory mark?

Of these pronouns only ե՞րբ and որտե՞ղ decline; ե՞րբ has only forms of genitive and ablative, and որտե՞ղ only has forms of the genitive, ablative and instrumental case որտեղի՞ - որտեղի՞ց - որտեղո՞վ.

Ex. 183

Decline in sentences pronouns ո՞վ, ի՞նչ:

Ex. 184

Ask questions to bolded words.

1. Բժիշկն ամեն օր այցելում է հիվանդին: 2. Սուրենից գոհ են բոլորը: 3. Գրքերը սեղանի վրա են: 4. Կոլտնտեսականները վերջացրին գարնանային աշխատանքները: 5. Սկսվեց հունձը: 6. Երեկ ես գնեցի հայերեն բացատրական բառարան: 7. Այս խանութում լավ ռադիոընդունիչներ են վաճառում: 8. Նա հմուտ ուսուցիչ է: 9. Նա ձմեռային արձակուրդներն անցկացրեց գյուղում: 10. Լեռնային կլիման առողջարար է ինձ համար: 11. Փչում է ուժեղ ծովային քամին: 12. Ծովափից արդեն հեռացել էինք հինգ կիլոմետր: 13. Իմ եղբայրը սովորում է ինստիտուտի հինգերորդ կուրսում, իսկ քո եղբայրը՝ համալսարանի չորրորդ կուրսում: 14. Ես քսան տարեկան եմ, իսկ դու՝ քսաներկու: 15. Ես բանվոր եմ և աշխատում եմ գործարանում, իսկ դու կոլտնտեսական ես և աշխատում ես կոլտնտեսությունում: 16. Ես ապրում եմ քաղաքում, իսկ դու ապրում ես գյուղում: 17. Այսօր ես թատրոն եմ գնալու: 18. Նա գյուղից է եկել: 19. Ամեն օր ժամը ութին ես տանն եմ լինում: 20. Այսօր ես ինձ շատ լավ եմ զգում: 21. Մեր բանակը հերոսաբար կռվեց թշնամիների դեմ: 22. Նա գլխովին ջախջախեց գերմանաֆաշիստական զավթիչներին:

Example:

1. Ո՞վ է ամեն օր այցելում հիվանդին: Բժիշկն ամեն օր ու՞մ է այցելում:

Ex. 184

Translate into English.

1. Ո՞վ է գիրքը դրել սեղանին: 2. Ովքե՞ր են պատրաստել դասը: 3. Ձեզանից ովքե՞ր են կատարել տնային աշխատանքը: 4. Նրանցից ու՞մ հարցրիք այդ մասին: 5. Դուք ու՞մ եք սպասում: 6. Նրանք ի՞նչ էին խոսում իմ մասին: 7. Ինչպիսի՞ գրքեր ես կարդում: 8. Այսօր ինչպիսի՞ գրքեր գնեցիր: 9. Հայո՞ր գրողին ես շատ սիրում: 10. Ո՞ր փողոցի վրա է գտնվում ձեր տունը: 11. Ո՞ր հարկում ես դու ապրում: 12. Ինչքան ուսանողներ մասնակցեցին շաբաթօրյակին: 13. Քանի՞ կիլոգրամ միրգ գնեցիր: 14. Ու՞ր ես գնում: 15. Որտե՞ղ կգտնեմ նրան: 16. Ո՞վ գիտե նրա հասցեն: 17. Ովքե՞ր են թելադրություն գրել առանց սխալի: 18. Նա ինչպե՞ս է սովորում: 19. Դու որտե՞ղ ես պարապում: 20. Ինչի՞ մասին էինք խոսում, երբ հանդիպեցի ձեզ: 21. Որտեղո՞վ է անցնում ճանապարհը: 22. Ե՞րբ վերադարձար Կիևից: 23. Երբվանի՞ց ես ճանաչում նրան:

Translate into Armenian.

1. Who wrote this work? 2. Who of them you asked about it? 3. Who did you give your book? 4. What did he present to you? 5. Who knows his phone number? 6. How many students are there in your class? 7. When is your friend leaving for Moscow? 8. What languages are you studying right now? 9. Who is your tutor of Armenian language? 10. What works of Armenian writers do you read? 11. Where are these tourists from? 12. When do your exams start? 13. Where did you spend your summer? 14. How do you study? 15. How old is your brother? 16. We bought red and white roses. Which do you like more? 17. What time are you here from? 18. Where are you from? 19. Where do your parents live? 20. Where did students of second year leave for?

Relative pronouns

Հարաբերական դերանուններ

Section 115

Interrogative pronouns without interrogative intonation are called relative pronouns. Relative pronouns, etc. are used in compound sentences as conjunctive words to join the subordinate clause to the main one. In the form of subordinate clause relative pronouns serve as various parts of the sentence, e.g.

Սա այն ուսանողն է, որը երեկ ելույթ ունեցավ:

This is the student that had a speech yesterday.

Ահա այն մարդը, որին մենք երեկ տեսանք գրադարանում:

This is the man we saw in the library yesterday.

Նա ապրում է այնտեղ, որտեղ դու ես ապրում:

He lives where you live.

Երբ ուսուցիչը ներս մտավ, բոլոր աշակերտները ոտքի կանգնեցին:

When the teacher entered all the students stood up.

Դու այսօր այնպես ես պատասխանում, ինչպես պատասխանում էիր երեկ:

Today you are answering just like you answered yesterday.

Note: Relative pronoun-conjunctive words in the main clause can correspond with demonstrative pronouns. So, with relative pronouns ինչ, որը, ինչպես, որպես, ուր, որտեղ in the main sentence correspond այն, այնպես, այնտեղ.

Examples:

Դա այն չէ, ինչ ես եմ ասում:

It's not what I am saying.

Սա այն մարդն է, որը երեկ ելույթ ունեցավ:

This is the man that had a speech yesterday.

Մենք գնացինք այնտեղ, որտեղ դուք:

We went where you did.

Ես գրում եմ այնպես, ինչպես դու:
I write just like you do.

Ex. 186

Translate into English.

1. Նա ինձ համար կարդաց այն նամակը, որն ստացել էր իր եղբորից: 2. Այն հոդվածը, որը ես երեկ թարգմանեցի, շատ հեշտ էր: 3. Ես հանդիպեցի այն ուսանողներին, որոնք վերադարձել էին արտադրական պրակտիկայից: 4. Այն դերասանը, որի մասին խոսում էին, կգա երեկոյան: 5. Դա այն չէ, ինչ ես եմ ուզում: 6. Դու այն չես կարդում, ինչ ուսուցիչը հանձնարարել է: 7. Ով շատ է աշխատում, նա շատ է ստանում :8. Ով լավ է սովորում, նա բարձր գնահատական է ստանում :9. Խնդրիր միայն նրան, ով կարող է քո խնդիրքը կատարել:10. Ես աշխատում եմ այնտեղ, որտեղ դու ես աշխատում: 11. Մենք գնացինք այն պարտեզը, որտեղ շատ ծաղիկներ կան: 12. Այս գիրքն այնքան հետաքրքիր չէր, որքան ես կարծում էի: 13. Դու ևս պարապում ես այնքան, որքան ես: 14. Հիմա դու այնպես ես աշխատում, ինչպես աշխատում էիր առաջ: 15. Ես այնպես եմ սովորում, ինչպես դու: 16. Երբ դու եկար դպրոցից, ես արդեն տանն էի: 17. Երբ նա վերջացրեց իր գրավոր աշխատանքը, ես դեռ իմը նոր էի սկսել: 18. Ես սիրում եմ այնպիսի ծաղիկներ, ինչպիսիք դու ես սիրում:

Ex. 187

Translate into Armenian.

1. My friend lives in the house, which is situated in the center of the town. 2. This is the man we saw in the park yesterday. 3. He showed me the letter he got from his sister. 4. We saw a mountain the top of which was covered with snow. 5. I did it like you advised. 6. Everybody went to (the place) where the sight to the sea opened. 7. When we finish the work, then we will rest. 8. I found what I looked for. 9. He brought what I asked for. 10. My friend told me about the Ural, where he stayed last year. 11. This is the house I was born in.

Definite pronouns

Որոշյալ դերանուններ

Section 116

Definite pronouns of the Armenian language are **ամեն** (every, any, each), **ամենքը** (all, everybody), **բոլոր** (all), **բոլորը** (everybody), **յուրաքանչյուրը** (every(body), any(body)), **ամեն մեկը** (anybody), **ամեն ինչ** (everything (also anything?)), **յուրաքանչյուր նք** (everybody), **ամեն նք** (everybody), **ողջ** (all), **ամբողջ** (all), **համայն** (all). By their meaning and syntactic functions in the sentence definite pronouns are correlated to numerals, adjectives and nouns. Definite pronoun-adjectives are **ամեն**, **բոլոր**, **յուրաքանչյուր**, **ողջ**, **ամբողջ**, **համայն**. These pronouns usually serve in the sentence as attributes, e.g.

Բոլոր դասախոսները ներկա էին:

All the tutors were present.

Ողջ աշխարհը շրջագայել է:

He went round the whole world.

Նա կատարեց ամբողջ աշխատանքը:

He did all the work.

Definite pronoun-nouns are **ամենքը**, **բոլորը**, **ամեն մեկը**, **ամեն ինչը**, **ամեն նք**, **յուրաքանչյուր նք**. These pronouns serve in the sentence as subject, object, etc. E.g.

Բոլորը եկան:

Everybody came.

Ամեն ինչ վերջացավ:

Everything is over.

Նա սիրում է ամենքին:

He loves everybody.

Definite pronoun-nouns except ամեն ոք and յուրաքանչյուր ոք, decline. Declension of definite pronoun-nouns

Case	<i>all</i>	<i>all</i>
Ուղղ. բոլորը (all)	ամենքը (all)	
Մեռ. բոլորի	ամենքի	
Տր. բոլորին	ամենքին	
Հայց. բոլորը	ամենքը	
բոլորին	ամենքին	
Բաց. բոլորից	ամենքից	
Գործ. բոլորով	ամենքով	

Case	<i>each</i>	<i>all</i>
Ուղղ. յուրաքանչյուրը (each)	ամեն ինչ (all)	
Մեռ. յուրաքանչյուրի	ամեն ինչի	
Տր. յուրաքանչյուրին	ամեն ինչի	
Հայց. յուրաքանչյուրին	ամեն ինչ	
Բաց. յուրաքանչյուրից	ամեն ինչից	
Գործ. յուրաքանչյուրով	ամեն ինչով	
Ներգ. յուրաքանչյուրում	ամեն ինչում	

Ex. 188

Translate into English.

1. Բոլոր աշխատավորները խաղաղություն են ցանկանում: 2. Նրանց նպատակը մեկ է: 3. Ամեն մի ուսանող պետք է բարեխղճորեն կատարի իր պարտականությունները: 4. Ամենքը բարեխղճորեն էին կատարում իրենց պարտականությունները: 5. Ամեն ինչ պետք է անել խաղախության գործի համար: 6. Նա իր ամբողջ ուժերը նվիրել է ուսման գործին: 7. Ամեն մեկը մի նվեր ստացավ: 8. Ամեն մեկից մի գիրք պահանջեցին: 9. Մի թե դու ամեն ինչ գիտես: 10. Ամեն ոք շտապում էր դեպի տուն: 11. Ես լավ եմ հասկանում յուրաքանչյուրի միտքը: 12. Իմ գրադարանում եղած բոլոր գրքերը կարդացել եմ: 13. Բոլորից ավելի ինձ դուր է գալիս այս գիրքը: 14. Նա թողեց ամեն ինչ և հեռացավ մեզանից:

Ex. 189

Translate into Armenian.

1. Each of us should know this well. 2. He spent all summer in the village. 3. All the students came to subbotnik. 4. He agrees with me in everything. 5. The whole country is getting ready for holidays. 6. Everything interested him. 7. All the students came to classes. 8. Everybody went for a walk. 9. Each student must work for two days on building of the new building of the University. 10. This is everybody's responsibility. 11. He dedicated all his life to his Native Land.

Indefinite pronouns

Անորոշ դերանուններ

Section 117

The indefinite pronouns are ինչ-որ (some), ինչ-որ մեկը (somebody), ինչ-ինչ (some), այլ (other), ուրիշ (other), մեկը (one, someone), ոմն (some), ոմանք (some), այսինչ, այնինչ (some), որևէ (some), ովևէ (anybody), ինչևէ (something), երբևէ (some day, sometime), որևիցե (some), ինչևիցե (something), երբևիցե (sometime), ուրևէ (somewhere), etc. Indefinite pronoun-nouns are ինչ-որ մեկը, ոմանք, etc.; pronoun-adjectives are ինչ-որ, ուրիշ, այլ, ինչ-ինչ, etc.; and pronoun-adverbs are երբևիցե, ինչևիցե, երբևէ, etc. (Exercise 190 below has a few more: որոշ (some, certain?), մի քանի (some, a number?).)

Pronouns correlated with nouns decline. Pronouns ինչ-որ մեկը, մի քանիսը change by the declension by ի and ոմանք by the declension by ց.

Case Surface form

Ուղղ. ոմանք (some)

Մեռ. ոմանց

Տր. ոմանց

Հայց. ոմանց

Բաց. ոմանցից

Գործ. ոմանցով

Ներգ. -

Indefinite pronouns have the same syntactic functions in the sentence as nouns, adjectives and adverbs. E.g.

Ինչ-որ մեկը ներս մտավ:

Somebody came in.

Որևէ տեղեկություն ունե՞ս իմ ընկերոջից:

Do you have any news about my friend?

Ex. 190

Translate into English.

1. Մեղանի վրա թափված էին ինչ-որ թղթեր: 2. Ինչ-ինչ մարդիկ սիրում են խոսել այդ մասին: 3. Ինչ-որ մեկը ծեծում էր դուռը: 4. Որոշ ուսանողներ սխալ (սխաձալ?) են կատարել տնային վարժությունը: 5. Մի քանի ուսանողներ (-ներ?) այսօր պետք է քննություն հանձնեն: 6. Մի քանի ծառեր ամբողջ տարին կանաչ են մնում: 7. Մի քանիսը այսօր լավ չէին պատրաստել հայերենի դասը: 8. Քաղաքում ինչ-որ լուրեր էին պտտվում: 9. Ինձ ուրիշ օրինակ տվեք: 10. Նա որևէ վատ բան չի արել: 11. Նա այլ նպատակներ ունի: 12. Այլ խնդիրներ են դրված մեր առաջ: 13. Երբևիցե ես այդ չեմ մոռանա: 14. Ոմանք գնում են, որ նրա հարցը պետք է քննել (քննեն?): 15. Ոմանց կարծիքով նրա վեպը չափազանց հետաքրքիր է և արժեքավոր: 16. Դու երբևէ եղե՞լ ես որևիցե մեծ քաղաքում: 17. Երբևէ դու քո խոստումը կկատարե՞ս:

Ex. 191

Translate into Armenian.

1. Somebody left the door open. 2. Did anybody call me? 3. Has anybody come here? 4. Could you tell me something about that writer? 5. Why didn't you bring anything to read? 6. Have you talked about this with anybody? 7. I didn't tell anybody about it. 8. Did you meet anybody in the hall? 9. Have you read anything about this question? 10. Any of you can do this. 11. One of us must go there. 12. Anybody can understand this.

Negative pronouns

Ժխտական դերանուններ

Section 118

Negative pronouns are *ոչ ոք*, *ոչ մեկը* (nobody); *ոչինչ* (nothing); *ոչ մի* (no, none). These pronouns except *ոչ մի*, decline.

Case	nothing	nobody	nobody
Ուղղ.	ոչինչը	ոչ ոք (nobody)	ոչ մեկը (nobody)
Մեռ.	ոչինչի	ոչ ոքի	ոչ մեկի
Տր.	ոչինչին	ոչ ոքի	ոչ մեկին
Հայց.	ոչինչը	ոչ ոքի	ոչ մեկը
Բաց.	ոչինչից	ոչ ոքից	ոչ մեկից
Գործ.	ոչինչով	ոչ ոքով	ոչ մեկով
Ներգ.	ոչինչում -		ոչ մեկում

Negative pronouns have the syntactic functions of nouns or numerals.

Ոչ ոք չի մոռացել իր խոստումը:
 Nobody has forgotten his promise.
 Այնտեղ ոչինչ չգտանք:
 We found nothing in there.
 Ոչ մի ուսանող չի բացակայում:
 No student is absent.

Ex. 192

Translate into English.

1. Ես ոչ մի տեղոկություն չունեմ նրանից: 2. Դու դեռ ոչ մեկին ոչինչ չէ՞ս ասել: 3. Ոչ ոք չգիտեր նրա հասցեն: 4. Նա ինձ ոչինչ չի ասել այդ մասին: 5. Ոչ մեկը չկարողացավ պատասխանել այդ հարցին: 6. Ոչ մեկի պատասխանը ինձ չբավարարեց: 7. Ոչ ոք չէր սպասում որ նա կգա: 8. Պրովետարները ոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շոթաներից: 9. Փողոցում իմ ծանոթներից ոչ ոքի չհանդիպեցի: 10. Նրանցից ոչ ոք չեկավ մեզ մոտ: 11. Նա ոչ մի գեղարվեստական գիրք մինչև վերջ չի կարդացել:

Ex. 193

Translate into Armenian.

1. Nobody knew his address. 2. He didn't write anything to me about it. 3. I am not waiting for anybody this evening. 4. Nothing is known about it yet. 5. Nobody expected that he would come. 6. There is no post department (office?) in this street. 7. None of us will go there today. 8. Nobody of them knew about it. 9. None of us has been there. 10. None of them came yesterday. 11. Nobody asked me about it. 12. Nobody was home when I returned.

Articles

Հոդեր

Section 119

Articles of the Armenian language can be:

- Definite and indefinite (որոշիչ և անորոշ).
- Possessive (ստացական).
- Defining person (դիմորոշ).
- Demonstrative (ցուցական).

Articles in the Armenian language, except the indefinite article մի are put at the end of the word. The definite articles are ը and ն, the indefinite is the article մի.

Section 120

Possessive articles are -u for the first person and -դ for the second person. These articles show belonging and substitute for genitive case of personal pronouns of I and II persons, e.g.

եղբայրս - իմ եղբայրը my brother եղբայրդ - քո եղբայրը your brother գիրքս - իմ գիրքը my book գիրքդ - քո գիրքը your book

Note: Articles of third person ը and ն are used very seldom for showing belonging. In this meaning they are generally used with postpositions մոտ (near, by), հետ (with), վրա (on, above), տակ (under), etc. E.g., Նա հետը մի գիրք բերեց - Նա իր հետ մի գիրք բերեց (He brought a book with him). The possessive articles are used with all the case forms and can always be substituted by the genitive case of personal pronouns.

Examples: Ուղղ. Սենյակդ (քո սենյակը) մաքուր է: Your room is clean. Սեռ. Սենյակիդ (քո սենյակի) պատերը սպիտակ են: The walls of your room are white. Տր. Մոտեցա սենյակիդ (քո սենյակին): I came near to your room. Հայց. Հավաքիր սենյակդ (քո սենյակը): Clean up your room. Բաց. Սենյակիցդ (քո սենյակից) դուրս եկ: Come out of your room. Գործ. Քիչ էս զբաղվում սենյակովդ (քո սենյակով): You spend little time on your room. Ներգ. Սենյակումդ (քո սենյակում) իրեր շատ կան: There are too many things in your room.

The same possessive articles are used with nouns in singular and in plural, e.g. Գիրքս (=sing.?) (իմ գրքերը) my books and գրքերս (մեր գրքերը) our books Գիրքդ (=sing.?) (քո գրքերը) your books and գրքերդ (ձեր գրքերը) your (plural) books

(This example is confusing.)

To express belonging of objects of many persons between the stem and the ending ն is added, e.g. Գրքերս (իմ գրքերը) my books and գրքներս (մեր գրքերը) our books Գրքերդ (քո գրքերը) your books and գրքներդ (ձեր գրքերը) your books

Note: Usage of genitive case of personal pronouns together with nouns with possessive article is not correct. E.g., it should be said տղասս փոքր է, and not իմ տղասս փոքր է:

Section 121

Articles defining person (դիմորոշ) are: -u for the first person, -դ for the second person, -ը and -ն for the third person.

Article -u gives the word the meaning of first person, e.g.

Ես՝ ուսանողս, կարգապահ եմ:
I, the student, am disciplined.
Կոմերիտականներս ուսման առաջավորներ ենք:
We, comsomols, are study leaders.
Երկուսս կատարեցինք այդ աշխատանքը:
We both did that work.

Article -դ gives the word the meaning of second person, e.g.

Դու՝ ուսանողդ, պետք է կարգապահ լինես:
You, student, must be disciplined.
Կոմերիտականներդ ուսման առաջավորներ եք:
You, comsomols, are study leaders.
Երկուսդ կատարեցիք այդ աշխատանքը:
You both did that work.

Articles -ը and -ն are used with words with the meaning of third person, e.g.

Նրանք՝ ուսանողները, կարգապահ են:
They, students, are disciplined.

Articles defining person can be used with all case forms, e.g.

Case	Example
Ուղղ.	Ես՝ ուսանողս, դասերից չեմ բացակայել: I, student, have not missed lectures.
Մեռ.	Իմ՝ ուսանողիս օրը հետաքրքիր է անցնում: My student's day is interesting.
Տր.	Դու ասացիր (not: ասեցիր?) ինձ՝ ուսանողիս: You said to me, the student.
Հայց.	Նա տեսավ ինձ՝ ուսանողիս: He saw me, the student.
Բաց.	Նա նամակ ստացավ ինձնից՝ ուսանողիցս: He received a letter from me, the student.
Գործ.	Ինձնով՝ ուսանողովս, հպարտանում են իմ ընկերները: My friends are proud of me, the student.

Section 122

The article -u is demonstrative. This article with the meaning of pronoun այս, is used only with some words, e.g.

Օրերս մենք կոմերիտական ժողով ունեցանք:
The other day we had a comsomol meeting.
Վերջերս նա շատ լավ է սովորում:
Lately he studies very well.

Ex. 194

Substitute the genitive case of personal pronouns with corresponding possessive articles.

1. Իմ ծնողները ապրում են գյուղում: 2. Քո ծնողներն ապրում են քաղաքում: 3. Իմ եղբայրը այս տարի ավարտում է բժշկական ինստիտուտը: 4. Քո եղբայրը սովորում է պոլիտեխնիկական ինստիտուտում: 5. Իմ բառարանը քեզ մոտ է, ե՞րբ ես վերադարձնելու: 6. Քո հողվածը մեծ հաջողություն ունեցավ: 7. Մեր սրտերը լի (what does լի mean?) են պայքարի վճռականությամբ: 8. Ձեր գրքերը թողել էիք լսարանում: 9. Իմ ընկերները այսօր երեկոյան գալու են մեզ մոտ: 10. Խնդրում եմ իմ դիմումը հանձնել դեկանին: 11. Ես սիրով կկատարեմ քո խնդրանքը: 12. Նրանք քո բանաստեղծությունը չեն կարդացել:

Ex. 195

Add articles -u or -դ to the following words and translate into English. Մայր, հայր, քույր, եղբայր, տուն, գրիչ, բառարան, ամսագիր, սիրտ, գլուխ, ձայն, աչք, գրքեր, տեսրակներ, մրգեր, նկարներ, խնձորներ, երեխաներ:

E.g. Մայրս - my mother, մայրդ - your mother.

Ex. 196

Translate into English.

1. Նա դեռ չի պատասխանել նամակիս: 2. Ես անմիջապես կպատասխանեմ նամակիդ: 3. Ե՞րբ կվերջացնես գործերդ: Գործերս կվերջացնեմ երկու շաբաթից հետո: 4. Ամռանը ու՞ր էիր ուղարկել երեխաներիդ: Երեխաներիս ուղարկել էի պիոներական ճամբար: 5. Ինչպե՞ս է առողջությունդ: Առողջությունս լավ է: 6. Ընկերներս այսօր վերադառնալու են գյուղից: 7. Ընկերդ այսօր մեկնելու է Երևան: 8. Գիրքս նվիրեցի գրադարանին: 9. Գիրքդ կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: 10. Այսօր հեռախոսս չի աշխատում, պետք է զանգահարեմ քո հեռախոսով: 11. Ասա՞՜ս ոչ մի ազդեցություն չունեցավ: 12. Դիմումիդ կպատասխանեմ երկու օր (not: օրից?) հետո: 13. Դեռ հիշում եմ խոսքերդ, որ ասացիր ((again) not: ասեցիր?) անջատման պահին: 14. Ձեռքդ տուր ինձ, մենք եղբայրներ ենք:

Ex. 197

Read and copy out the nouns with possessive articles.

Ստեփան Շահումյանին
 Աչքերդ կապույտ եթերի նման
 Եվ հոգիդ շուշան.
 Սիրտդ խորունկ ծով, ազնիվ աննման,
 Ընկեր Շահումյան:
 Ձայնդ զանգակի վսեմ մի դողանջ
 Թափանցել գիտեր
 Եվ ոգևորել շաշտովն իր սքանչ
 Վհատած սրտեր:
 Խոսքդ չէր լոկ խոսք, այլ պատգամ հզոր
 Կայծակնող ու վառ.
 Թշնամիներդ են մինչև այսօր
 Քեզնից դողահար:
 (Հ. Հակոբյան)

Ex. 198

Translate into English.

1. Մենք՝ ուսանողներս, պատվով կատարեցինք այդ առաջադրանքը: 2. Դուք՝ ուսուցիչներդ, շնորհակալ գործ եք կատարում: 3. Հինգերորդ կուրսեցիներդ պետք է օրինակ ծառայեք մյուսների համար: 4. Կոմերիտականներս ուսման առաջավորներ ենք: 5. Ես՝ ժողովրդիս ծառաս, ամեն ինչ կանեմ ինձ արդարացնելու համար: 6. Դու՝ բժիշկդ, պատվով ես կատարում քո պարտականությունները: 7. Հայ գրողներս ամեն ինչ կանենք մեր գրականության հետագա զրագացման համար: 8. Ես՝ աշակերտս, հարգում եմ մեծերին: 9. Դուք՝ մեծերդ, պետք է օրինակ տաք փոքրերին:

Ex. 199

Define the type of pronouns and say their cases.

Մի հզոր առյուծ նստել էր ճանապարհին: Գազանները գալիս ու դողալով անցնում էին այդ ճանապարհով: Առյուծը հարցրեց նրանց.

- Ինչու՞ եք փախչում, այդ ու՞մ ահից եք փախչում:

Նրանք պատասխանեցին:

- Դու էլ փախիր, որովհետև ահա գալիս է մարդը:

Առյուծն ասաց.

- Ո՞վ է մարդը, ի՞նչ է նա, ո՞րն է նրա ուժը և ի՞նչ կերպարանք ունի նա, որ փախչում եք նրանից:

- Կգա, քեզ կտեսնի և վայ քո օրին:

Ահա հանդից գալիս է մի հողագործ մարդ: Առյուծն ասաց նրան.

- Մի՞ թե դու ես մարդը, որ վախեցնում ես գազաններին:

Մարդն ասաց.

- Այո, ես եմ:

Առյուծն ասաց.

- Արի կռվենք:

Մարդն ասաց.

- Լավ, կռվենք, բայց քո զենքերը քեզ վրա են, իսկ իմը՝ տանն են: Արի նախ քես կապեմ, որ չփախչես, մինչև ես գնամ, շենքերս վերցնեմ գամ ու կռվենք:

Առյուծն ասաց.

- Լավ, կապիր ինձ, շուտ գնա և ետ դարձիր:

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապեց ծառին, մի մեծ փայտ կտրեց ծառից և սկսեց խփել առյուծին: Առյուծը բացականչեց.

- Եթե դու ես մարդը, ավելի ամուր և անխնա խփիր իմ կողերին, որովհետև իմ խելքին այդ է արժանի:

Վարդան Այգեկցու առակներից

Chapter 6

VERBS

ԲԱՅ

Personal and impersonal forms of the verb

Բայի դիմավոր և անդեմ ձևերը

Section 123

Verbs are words denoting actions or condition of objects, e.g., գրել to write, կարդալ to read, վազել to run, խաղալ to play, դեղնել to go yellow, մնալ to stay, etc. Verbs in the Armenian language have two forms: personal (դիմավոր) and impersonal (անդեմ). Personal forms of the verb express person, number, mood, time and usually serve in the sentence as predicate, e.g.

Նա ապրում է Երևանում:

He lives in Yerevan.

Դու վերջացրել ես քո աշխատանքը:

You finished your work.

Ես աշխատում եմ գործարանում:

I work in the factory.

Impersonal forms of the verb, in contrast to personal, denote the action without expressing person, number, mood and time, e.g., գրել to write, գրած written, գրող writing, etc.

Impersonal forms

Դերբայներ

Section 124

Impersonal forms of the verb in the Armenian language are called դերբայներ. To the impersonal forms of the Armenian verb in the English language correspond the infinitive, adverbial participle and participles. There are seven impersonal forms in Armenian.

1. Անորոշ դերբայ infinitive
2. Անկատար դերբայ present participle
3. Ապանի դերբայ future participle
4. Վաղակատար դերբայ past participle
5. Հարակատար դերբայ effective participle
6. Ենթակայական դերբայ subjective participle
7. Ժխտական դերբայ negative participle

Infinitive

Section 125

The infinitive form of the verb expresses the general idea of action or condition, e.g., կարդալ to read, գնել to buy, վաճառել to sell, etc. The infinitive of the verbs ends with ել or ալ, e.g., լսել to listen, նկարել to draw, գրել to write, խոսել to speak, քայլել to walk, մտածել to think, գնալ to go, կարդալ to read, զգալ to feel, խաղալ to play, etc. Verbs ending with ել are called verbs of first conjugation (or verbs of ե conjugation), and verbs ending with ալ verbs of second conjugation (or verbs of ա conjugation).

Section 126

By composition the infinitive forms of the verb divide into two groups, simple (պարզ) and with suffix (ածանցավոր). Simple (պարզ) are those verbs that do not have a suffix, e.g., վազել (to run), խոսել (to speak), կարդալ (to read), մնալ (to stay), etc. Verbs that have a suffix are called with suffix (ածանցավոր), e.g., թռչել (to fly), տեսնել (to see), հագցնել (to dress), գրվել (to be written), etc.

Section 127

Verbs with suffix divide into the following groups:

1. Proper suffixed verbs (սուկածանցավոր բայեր), with suffixes ան, են, ն, չ, e.g., հեռանալ (to go away), մեծանալ (to grow), սևանալ (to blacken), վաճենալ (to be afraid), մոտենալ (to come close), փախչել (to run away), etc. 2. Causal verbs (պատճառական բայեր), with suffixes եցն, ցն, ացն, e.g., սովորեցնել (to teach), բարձրացնել (to rise), հագցնել (to dress), etc. 3. Passive verbs (կրավորական բայեր), with suffix վ, e.g. սիրվել (to be loved), հարգվել (to be respected), կարդացվել (to be read), etc. 4. Frequentative verbs (բազմապատկական), with suffixes ատ, ոտ, տ, e.g., կտրատել (to break), մորթոտել (to cut out), կտրտել (to cut).

Note: Suffix կոտ is a frequentative suffix too, but it is used only in the word թռչկոտել (to jump up).

Section 128

The infinitive form of the verb serves in the sentence:

a. As part of the compound predicate, e.g.

Նա ուզում է աշխատել գրադարանում:

He wants to work at the library.

Նա կարողացավ ժամանակին վերջացնել աշխատանքը:

He managed to finish the work on time.

b. As predicative in impersonal sentences, e.g.

Պահպանել մաքրություն:

Keep clean.

Վերջացնել աշխատանքը:

Finish the work.

Բարձրացնել ուսման որակը:

To raise the quality of study.

The infinitive can be used in the meaning of noun. In this case it declines by the declension by ու.

to love to walk Ուղղ. սիրելի(ը) գնալ(ը) Սեռ. սիրելու գնալու Տր. սիրելու(ն) գնալու(ն) Հայց. սիրել(ը) գնալ(ը) Բաց. սիրելուց գնալուց Գործ. սիրելով գնալով

The infinitive doesn't have a plural form. In the sentence the infinitive with the meaning of noun serves as:

a. subject

Ծիւելն արգելվում է:

No smoking.

b. uncoordinated attribute

Ես հանգստանալու ժամանակ չունեմ:

I do not have time for rest.

c. object

Նա շատ է սիրում կարդալ:

He really likes to read.

Նա սպասում է քո գալուն:

He is waiting for your return.

d. modifier of aim

Նա գնաց գրադարան պարապելու:

He went to the library to study.

e. modifier of mode of action

Նա ծիծաղելով եկավ ինձ մոտ:

He came up to me laughing.

Section 129

Verbal nouns of the English language also correspond to infinitive forms in Armenian, e.g.

Կարդալը զարգացնում է մարդու միտքը:

Reading develops one's brain.

Also the present and past participles (if the infinitive in Armenian is in instrumental case), e.g. (I suggest: Where present and past participles are used in English to form subordinate clauses, they can be expressed in Armenian by means of the infinitive in instrumental case, e.g.)

Տուն մտնելով, նա տեսավ իր հին ընկերոջը:

Entering the room (house) he saw his old friend.

Վերջացնելով աշխատանքը՝ նա գնաց տուն:

He went home having finished the work.

====Ex. 201==== Copy out the verbs and form their infinitives. Գիրք Կարդալու Սերը

Ես տխրում եմ, և ծիծաղում, երբ հիշում եմ, թե որքան վիրավորանք ու տագնապ է պատճառել ինձ իմ ընթերցանությունը: Գրքերը, որ ես վերցնում էի իմ հարևանուհուց, սարսափելի թանկարժեք բան էի կարծում. վախենալով, որ պառավ տանտիրուհիս հանկարծ կարող է վառել դրանք, դադարեցի հարևանուհուց գիրք խնդրել: Սկսեցի նկարագարող գրքույկներ վերցնել խանութից, որտեղից ամեն առավոտ հաց էի գնում: Ես կարդում էի այդ գրքերը և ամեն անգամ կարդալու համար վճարում մեկ կոպեկ: Կարդում էի փայտանոցում, երբ գնում էի փայտ ջարդելու, կամ ձեղնահարկում, որտեղ նույնպես անհարմար էր ու ցուրտ: Երբեմն, երբ գիրքը շատ էր հետաքրքրում ինձ կամ պետք էր շուտ վերջացնել, գիշերը վեր էի կենում և մոմ վառում: Բայց պառավ տանտիրուհիս նկատելով, որ գիշերը մոմերը կարճանում են, սկսեց մոմերը չափել: Եթե առավոտյան մոմը մի քիչ պակասում էր, խոհանոցում անասելի աղմուկ էր բարձրանում: (Մ. Գորկի)

====Ex. 202==== Distribute the following verbs by the given table. Simple verbs Proper suffix verbs Causal verbs Passive verbs Frequentative verbs այրել գտնել խաղացնել բաժանվել նստոտել գնալ Այրել, բաժանել, գնալ, խաղացնել, բաժանվել, գտնել, երգել, ընկնել, գիտենալ, մոտենալ, ամրանալ,

կատարել, դողալ, մաճացնել, բուժվել, ընդունվել, իջնել, թռչել, կորչել, վախենալ, զգալ, հանգչել, հագնել, պատմել, անհայտանալ, բարեկամանալ, արհամարհել, ազդվել, մաճացնել, բարձրացնել, շատանալ, մաճանալ, սիրել, սովորել, սկսել, նստոտել, ջարդոտել, փշրտել, ջարդվել, թնդալ, խաղալ:

====Ex. 203==== Decline լսել, զգալ:

====Ex. 204==== Translate into English.

1. Դու կարող ես այդ աշխատանքը վերջացնել երկու շաբաթում: 2. Ես վճռել եմ գործս ավարտել մի շաբաթում: 3. Դու ուզում ես ինձ հետ գրադարա՞ն գալ: 4. Նա սիրում է ճաշից հետո զբոսնել: 5. Նրանք կարողացան հաղթահարել դժվարությունները: 6. Որոշել եմ ամեն օր երկու ժամ հայերեն պարապել: 7. Ուզում եմ անպատճառ իմանալ այդ: 8. Ո՞վ է ցանկանում պատմել դասը: 9. Նա թողեց ամեն ինչ և սկսեց զբաղվել գեղարվեստական գրականությամբ: 10. Հարկավոր է ճշտորեն կատարել հանձնարարությունը: 11. Պետք է սիրել հայրենիքը: 12. Հաճելի է ծովում լողանալը: 13. Նա ծիւղը վաղուց է թողել: 14. Գնացինք գրադարան գիրք վերցնելու: 15. Սպասելուց ձանձրացանք: 16. Սպասելով ձանձրացանք: 17. Վազելով անցավ մեզ մոտով: 18. Կարդալն իմ սիրելի զբաղմունքն է: 19. Արդեն քնելու ժամանակն է: 20. Պետք է հարգել մեծերին: 21. Նրա գալը անսպասելի էր: 22. Ժամանակին ավարտել աշխատանքը: 23. Անպայման կատարել պլանները: 24. Կատարել և գերակատարել պլանները: 25. Կատարել և գերակատարել կուսակցության առաջադրանքները: 26. Պահպանել մաքրություն: 27. Հարգել ուրիշի աշխատանքը: 28. Ամեն ինչ անել առաջավորներին հասնելու համար: 29. Դաշտում ոչ մի հասկ չթողնել: 30. Խնդրում եմ դիմումս չմերժել:

Present participle

Անկատար դերբայ

Section 130

The present participle expresses the general idea of action in process. The present participle has two forms. The first form is formed from the stem of infinitive by means of ում, the second from full form of infinitive ending իս.

Present participle

Infinitive First form Second form

քնել to sleep քնում քնելիս պայքարել to struggle պայքարում պայքարելիս լողալ to swim լողում լողալիս գնալ to go գնում գնալիս գտնել to find գտնում գտնելիս փախչել to run away փախչում փախչելիս մեծանալ to grow մաճանում մեծանալիս վախենալ to be afraid վախենում վախենալիս բարձրանալ to rise բարձրացնում բարձրանալիս գրվել to be written գրվում գրվելիս

The present and past imperfective tense of indicative mood form by means of the present participle and corresponding forms of the auxiliary verb.

Present tense of indicative mood Սահմանական եղանակի ներկա ժամանակ Past tense of indicative mood Սահմանական եղանակի անցյալ ժամանակ

եմ (I am writing) էի (I was writing) գրում ես (you are writing) գրում էիր (you were writing) է (he, she, it is writing) էր (he, she, it was writing)

ենք (we are writing) էինք (we were writing) գրում եք (you are writing) գրում էիք (you were writing) են (they are writing) էին (they were writing)

Note: the present participle of the verbs տալ (to give), լալ (to cry), գալ (to come) are formed only by means of ending իս (տալիս, լալիս, գալիս).

Section 131

The participles by իս, in contrast to other forms by ում, mean (express) extra action and usually serve in the sentence as modifier of time, e.g.

Կարդալիս նա հուզվում է: He gets excited while reading. Երեխան վազելիս վայր ընկավ: The child fell while running.

Note: The participles by իս are called secondary forms (երկրորդական ձևեր) and together with the verb լինել (to be) make the forms of secondary compound tenses, e.g.

Այդ ժամանակ նա սովորելիս է լինում Մոսկվայում: At that time he was studying in Moscow.

====Ex. 205==== Form present participles from the following verbs. աճել, նստել, կանգնել, գոռալ, եռալ, բազմանալ, երջանկանալ, թողնել, պարծենալ, կորչել, խորացնել, սիրվել:

Example: Աճել (infinitive), աճում (I form), աճելիս (II form).

====Ex. 206==== Copy out substituting the infinitive by present participle.

Բոլոր սովետական մարդիկ (սիրել) են Մոսկվան, նրա մասին (մտածել) են ամբողջ աշխարհի աշխատավորները: Շատ ժողովուրդներ են (ապրել) սովետական երկրում: Յուրաքանչյուր ժողովուրդ իր քաղաքներն ունի, բայց բոլոր ժողովուրդները գիտեն ու (սիրել) են Մոսկվան: Կարմիր հրապարակում տեղի են (ունենալ) Սովետական բանակի զորահանդեսները և մայրաքաղաքի աշխատավորության շքերթները: Դամբարանի տրիբունայից ժողովրդին (ողջունել) են կուսակցության և կառավարության ղեկավարները: Կրեմլի մեծ պալատի լուսավոր դահլիճներում է (հավաքվել) ՄՍՀՄ Գերագույն սովետը: Մեր հայրենիքի ծայրերից այստեղ (հավաքվել) են երկրի լավագույն զավակները՝ պատգամավորները: Նրանք (վճռել) են պետական կարևոր հարցեր: Մոսկվայում է (աշխատել) ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը, ՄՍՀՄ ՄԻՆիստրների սովետը: Մոսկվայում է (գտնվել) Սովետական Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն:

====Ex. 207==== Copy out present participles with auxiliary verbs.

Ծագում է մանուկ արևը գարնան Կովկաս լեռների ձյունի պատնեշից, Ջարթնում են մեկ- մեկ սարերն աննման Ձմռան անվրդով քնի մշուշից: Ահա Լասվարի վիթխարի ուսին Բազմում է արփին թարմացած ուժով, Սարեր ու ձորեր իրար երեսին Նայում անվրդով քնի մշուշով... Վերջին ձյուններն էլ արդեն հալ ընկան, Արտասվեց իսկույն լեռների հսկան, Ամեն մի ձորից աղբյուր է հոսում, Ամեն մի թփից բյուբյուլ է խոսում: Եվ դալար հովիտ, և ժայռի կրծքեր, Արձագանք տալով, գարուն են հնչում. Ձմռան փարախից հովվական երգեր, Ջեփյուռի թևով սարերն են թռչում:

(Վ. Միրաքյան)

====Ex. 208==== Translate into Armenian and underline the present participles.

1. He is good at chess. 2. I often talk to her about my trip. 3. He sings very well. 4. My brother is studying in the next room. 5. He reads Armenian books without a dictionary. 6. I am waiting for my friend. 7. He conducts Armenian language (what do you mean?). 8. I am proud of my Native Land. 9. He works at degree project (on his graduation project?). 10. Red roses grow in our garden.

Future participle

Ապառնի դերբայ

Section 132

Future participle (ապառնի դերբայ) expresses the general idea of future action. Future participle forms from infinitive by means of ending ու, e.g., գրել (to write) - գրելու, սիրել (to love) - սիրելու, խաղալ (to play) - խաղալու, զգալ (to feel) - զգալու, etc. So the future participles have էլու for verbs of first conjugation, and ալու for verbs of second conjugation.

Infinitive Future participle

լսել (to listen) լսելու խոսել (to speak) խոսելու վազել (to run) վազելու ծիծաղել (to laugh) ծիծաղելու կարդալ (to read) կարդալու աղալ (to grind) աղալու շողալ (to shine) շողալու մնալ (to stay) մնալու

By means of future participle and corresponding form of the auxiliary verb form the future and future perfect tenses.

Future tense of indicative mood Future perfect of indicative mood

եմ էի խոսելու ես խոսելու էիր է էր

ենք էինք խոսելու եք խոսելու էիք են էին

When used independently, the future participle serves in the sentence as attribute: խմելու ջուր - drinking water or water for drinking, ուտելու հաց - edible bread, գրելու թուղթ - writing paper.

Note: The future participle coincides by form with the genitive case of the infinitive.

====Ex. 209==== Form future participles from the following verbs. Դիմել, երդվել, զեկուցել, ավստսալ, խղճալ, հազալ, իմանալ, ծանոթանալ, հասնել, մոտենալ, ժպտալ, մեծացնել, բարձրացնել, գրվել.

E.g. դիմել - դիմելու.

====Ex. 210==== Copy out and underline the future participles.

1. Այսօր գնալու եմ թատրոն: 2. Այստեղ տեսնելու եմ մոտիկ ընկերոջը: 3. Նա ինձ համար մի գիրք է բերելու: 4. Տանը եղբայրս սպասելու է ինձ: 5. Նա Մոսկվայից վերադառնալու է երկու շաբաթից հետո: 6. Մինչև կիրակի նրան չեմ տեսնելու: 7. Նա Երևան է մեկնելու այսօր երեկոյան: 8. Նա մեզ դիմավորելու է կայարանում: 9. Ես այնտեղ եմ գնալու վաղը: 10. Նրանք ևս մասնակցելու են այս աշխատանքներին: 11. Ես այսօր պարապելու եմ գրադարանում: 12. Դու ե՞րբ ես գնալու ինձ մոտ: Ես քեզ մոտ եմ գալու այսօր երեկոյան: 13. Դասերից հետո դուք ի՞նչ եք անելու: 14. Ճաշից հետո չե՞ք հանգստանալու: Հանգստանալու ենք:

Verb stems

Section 133

Armenian verbs are formed from two stems, the infinitive stem and the past perfect stem.

1. To find the infinitive stem the endings of the infinitive form ել and ալ should be separated (removed, dropped, omitted).

Infinitive Infinitive stem

վազել to run վազ- գրել to write գր- կարդալ to read կարդ- զգալ to feel զգ- մեծանալ to grow մա(ե?)ծան- վախենալ to be afraid վախեն- փախչել to run away փախչ- գտնել to find գտն- բարձրացնել to raise բարձրացն-

2. In contrast to the infinitive stem, formation of the past perfect stem depends on the morphological composition of the verb.

a. The simple verbs of first (by ե) and second (by ա) conjugation form the past perfect stem by replacing the infinitive endings with grammatical suffixes եց (for verbs of first conjugation) and աց (for verbs of second conjugation).

Infinitive Past perfect stem

վազել to run վազեց- գրել to find գրեց- նստել to sit նստեց- ծիծաղել to laugh ծիծաղեց- զգալ to feel զգաց- մնալ to stay մնաց- գնալ to go գնաց- աղալ to grind աղաց-

b. Verbs with suffixes ն and չ form the past perfect stem by removing both the infinitive ending and suffix ն or չ. Infinitive Past perfect stem

գտնել to find գտ- մտնել to enter մտ- փախչել to run away փախ- թռչել to fly թռ-

c. Verbs with suffixes ան, են form the past perfect stem by replacing the suffixes and infinitive endings (անալ, ենալ) with grammatical suffixes եց and աց. Infinitive Past perfect stem

հեռանալ to go away հեռաց- մոռանալ to forget մոռաց- մոտենալ to come close մոտեց- վախենալ to be afraid վախեց-

d. The causal verbs form the past perfect stem by replacing the suffix + ending ցնել with գր. Infinitive Past perfect stem

բարձրացնել to raise բարձրացր- մեծացնել to enlarge մեծացր- մոտեցնել to bring close մոտեցր- հագցնել to dress հագցր-

Past participle

Վաղակատար դերբայ

Section 134

The past participle expresses the general idea of an action accomplished in the past. a. The past participle forms from simple (and also passive and frequentative) verbs of first conjugation by means of the infinitive stem and ending ել. Thus, the forms of the infinitive and past participle of these verbs coincide.

Infinitive Infinitive stem Past participle

նայել to watch նայ- նայել սիրել to love սիր- սիրել գրել to write գր- գրել համբուրել to kiss համբուր- համբուրել ջարդոտել to break ջարդոտ- ջարդոտել ջարդվել to break ջարդվ- ջարդվել կատարվել be fulfilled կատարվ- կատարվել

b. The past participle of verbs of second conjugation forms from the past perfect stem and ending ել. The past participle of these verbs has the form ացել (in some cases եցել).

Infinitive Past perfect stem Past participle

զգալ to feel զգաց- զգացել գնալ to go գնաց- գնացել կարդալ to read կարդաց- կարդացել մա(ե?)ծացնել to grow մեծաց- (մեծացր-?) մեծացել (մեծացրել?) սևանալ to blacken սևաց- սևացել մոտենալ to come up մոտեց- մոտեցել

c. Note: The past participle of verbs with suffixes ն and չ and causal verbs also forms from the past perfect stem.

Infinitive Past perfect stem Past participle

գտնել to find գտ- գտնել (գտել?) մտնել to enter մտ- մտնել (մտել?) թռչել to fly թռ- թռչել (թռել?) կորչել to be lost կոր- կորել վերջացնել to finish վերջացր- վերջացրել մոտեցնել to draw nearer մոտեցր- մոտեցրել կորցնել to lose կորցր- կորցրել

d. Thus when forming the past participle of personal suffixed verbs, the suffixes ն and չ fall out and the final ն of causal verbs replaces by ր.

Section 135

The past participle isn't used independently. It forms the past and past perfect tenses with corresponding forms of the auxiliary verb.

Past tense Past perfect

I conjugation

եմ էի սիրել ես սիրել էիր է էր

ենք էինք սիրել եք սիրել էիք են էին

II conjugation

եմ էի զգացել ես զգացել էիր է էր

ենք էինք զգացել եք զգացել էիք են էին

====Ex==== 211. Form the past participles of the following verbs.

Կազմել, հավաքել, լռել, հարգել, շտապել, ուղարկել, երևալ, զնգալ, խնդալ, շնչալ, սողալ, ամրանալ, գեղեցկանալ, ընթանալ, խորանալ, ձևանալ, գիտենալ, ունենալ, անցնել, ելնել, հագնել, իջնել, դիպչել, սառչել, ուրախացնել, խորացնել, ձանձրացնել, հեռացնել, թարմացնել:

E.g. Infinitive Past participle հավաքել հավաքել երևալ երևացել հեռացնել հեռացրել

====Ex. 212==== Copy out and underline the past participles.

Ձուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ, Գարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել, Իմ սրտում էլ ես թևերդ փռել, Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սեր: Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն, Ծաղկել ես սարում, անտառում, արտում... Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում, Ողջույն քեզ, արև, ողջույն քեզ, զարուն:

(Վ.Տերյան)

Ex. 213. Translate into English

a. 1. Երեկ այդ մասին ես խոսել եմ նրա հետ: 2. Անցած շաբաթ ես նրանից նամակ եմ ստացել: 3. Մենք արդեն վերջացրել ենք մեր աշխատանքը: 4. Ես ձեզ բերել եմ հետաքրքիր գրքեր: 5. Նա կարդացել է այդ վեպը: 6. Որտե՞ղ եք դրել իմ բառարանը: 7. Արդեն մի ամիս է, ինչ չեմ հանդիպել նրան: 8. Այդ մասին ես ձեզ ասել եմ երկու անգամ: 9. Դուք այդ վարժությունը ճիշտ չեք կատարել: 10. Այս գործարանը կատարել է տարեկան պլանը: 11. Երեկ նա դեռ չէր վերադարձել քաղաքից: b. - Դու ե՞րբ ես ընդունվել համալսարան: - Ես համալսարան եմ ընդունվել 1960 թ.: - Ինչպե՞ս ես հանձնել ընդունելության քննությունները: - Ընդունելության քննությունները հանձնել եմ "լավ" և "գերազանց" գնահատականներով: - Այսօր համալսարան գնացե՞լ ես: - Այո, գնացել եմ: - Հայոց լեզվի և գրականության կաբինետում ու՞մ ես հանդիպել: - Հանդիպել եմ Վաչիկին ու Արմենին և գրուցել նրանց հետ այսօրվա երեկույթի մասին:

Effective participle

Հարակատար դերբայ

Section 136

The effective participle (հարակատար դերբայ) shows a condition, presenting the result of a past action, e.g., գրած written, կարդացած read, etc. The effective participle forms from the infinitive and past perfect stems by adding the ending ած. a. Simple verbs of first conjugation, as well as causal (this is contradicted under b.; probably this should be: passive) and frequentative verbs, form effective participles from the infinitive stem.

Infinitive Infinitive stem Effective participle

նայել to watch նայ- նայած սիրել to love սիր- սիրած գրել to write գր- գրած համբուրել to kiss համբուր- համբուրած սպասել to wait սպաս- սպասած կատարվել to happen կատարվ- կատարված կտրատել to cut կտրատ- կտրատած

b. All the verbs of II conjugation form effective participles from the past perfect stem.

Infinitive Past perfect stem Effective participle

զգալ to feel զգաց- զգացած գնալ to go գնաց- գնացած կարդալ to read կարդաց- կարդացած մեծանալ to grow մեծաց- մեծացած սևանալ to blacken սևաց- սևացած մոտենալ to come up մոտեց- մոտեցած

c. Verbs with suffixes ն and չ, causal verbs with suffixes ացն, եցն, ցն also form the effective participle from the past perfect stem, e.g.

Infinitive Past perfect stem Effective participle

գտնել to find գտ- գտած մտնել to enter մտ- մտած փախչել to run away փախ- փախած թռչել to fly թռ- թռած բարձրացնել to raise բարձրացր- բարձրացրած հագցնել to dress հագցր- հագցրած

(Maybe the organisation of this section could be brought more in line with that of Section 133, which discusses the formation of the past perfect stem.)

Section 137

The effective participle is used together with corresponding forms of the auxiliary verb to form the past and past perfect (effective, not perfect?) tenses.

Past effective of indicative mood Past perfect effective of indicative mood

I conjugation

եմ էի նստած ես նստած էիր է էր

ենք էինք նստած եք նստած էիք են էին

II conjugation

եմ էի գնացած ես գնացած էիր է էր

ենք էինք գնացած եք գնացած էիք են էին

Section 138

The effective participle can also be used independently, and in this case serves as:

a. Attribute Կարդացած գիրք read book Ստացած նամակ received letter Այրված թուղթ burnt paper Քնած երեխա sleeping child Հոգնած մարդ tired man

b. (Note: it appears that the effective participle treads a very fine line between active and passive voice.)

c. Modifier of mode of action Հիացած լսել to listen enraptured (delightedly) Բարկացած խոսել to speak angrily Չարմացած նայել to watch astonished

Section 139

The effective participle can also be used in the meaning of noun. In this case it declines by the declension by ի.

Singular - հոգնակի թիվ Ուղղ. քնածը (the sleeping one) կարդացածը (the reading one) Մեռ. քնածի կարդացածի Տր. քնածին կարդացածին Հայց. քնածին կարդացածին Բաց. քնածից կարդացածից Գործ. քնածով կարդացածով

Plural - եզակի թիվ Ուղղ. քնածները (the sleeping ones) կարդացածները (the reading ones) Մեռ. քնածների կարդացածների Տր. քնածներին կարդացածներին Հայց. քնածներին կարդացածներին Բաց. քնածներից կարդացածներից Գործ. քնածներով կարդացածներով

The effective participle with the meaning of noun serves in the sentence as:

a. Subject: Քնածը արթնացավ: The sleeping person woke up. b. Object: Նա չի մոռանում իր կարդացածը: He doesn't forget what he has read. Գրածից ոչինչ չի հասկանում: He doesn't understand a thing from what has been written. c. Uncoordinated attribute: Մտացածի մի մասը (maybe: մաս (indefinite)?) նա տվեց մեզ: He gave us part of what he received.

====Ex. 214==== Form effective particles from the infinitive form of the verbs.

Ապրել, բուժել, ժխտել, լուծել, եռալ, երևալ, չորանալ, ելնել, գտնել, կատարել, էժանացնել, զարգացնել, սառչել, դողալ, դիպչել:

E.g., ապրել - ապրած, եռալ - եռացած:

====Ex. 215==== Translate and underline the effective particles.

1. Այսօր ես շատ եմ աշխատել և հոգնած եմ: 2. Նա հիացած էր բնության գեղեցիկ տեսարաններով: 3. Մենք կանգնած ենք հին հուշարձանների առաջ: 4. Տարեկան պլանը գերակատարված է: 5. Երեխան քնած է խաղաղ ու հանգիստ քնով: 6. Բոլոր տոմսերը վաճառված են: 7. Ստացված են նոր ապրանքներ: 8. Այդ հարցը վաղուց լուծված է: 9. Ես ստացա քո ուղարկած իրերը: 10. Ուսումնասիրված հարցը շատ հետաքրքիր էր: 11. Գրքերը դրված են դարակում: 12. Դու ստացար նրա նվիրած ժամացույցը: 13. Քո գրված հոդվածները կարդացվում են հետաքրքրությամբ: 14. Նրա ներկայացրած նկարը արժանացավ մրցանակի:

====Ex. 216==== Translate into English.

1. Դու քնած ես քո տաք անկողնում, իսկ ես շատ եմ աշխատել ու հոգնած եմ: 2. Տրամվայը կանգնած է շտապիր: 3. Բոլոր տեղերը զբաղված են: 4. Բոլոր տոմսերը վաճառված էին, և մենք չկարողացանք թատրոն գնալ: 5. Ես շատ ուրախացած եմ, որ դու հաջողությամբ վերջացրել ես քո աշխատանքները: 6. Նրա ուղարկած նամակները միշտ ուշացումով էին ստանում: 7. Քնած երեխաներն արթնացան: 8. Քնածներն արթնացան: 9. Քո գրած հոդվածը տպվելու է պատի թերթի հերթական համարում: 10. Նա խոսում է հուզված և ջղայնացած: 11. Բացված է թերթերի ու ամսագրերի բաժանորդագրությունը: 12. Ամեն ինչ արված է հարցը հաջողությամբ լուծելու համար: 13. Տարեկան պլանը արված և գերակատարված է: 14. Հրագրան գետի վրա կառուցված են Երևանի, Քանաքեռի, Գյումուշի, Սևանի հիդրոկայանները:

Subjective participle

Ենթակայական դերբայ

Section 140

The subjective participle is formed by means of the ending ող. With verbs of I conjugation ող is added to the infinitive stem, and with verbs of II conjugation to the past perfect stem.

Formation of subjective participles I. conjugation

Infinitive Infinitive stem Subjective participle

գրել to write գր- գրող forms with -ing նայել to watch նայ- նայող սպասել to wait սպաս- սպասող գտնել to find գտն- գտնող լսել to listen լս- լսող փախչել to run away փախչ- փախչող վերջացնել to finish վերջացն- վերջացնող

II. conjugation

Infinitive Past perfect stem Subjective participle

կարդալ to read կարդաց- կարդացող forms with -ing խաղալ to play խաղաց- խաղացող զգալ to feel զգաց- զգացող գնալ to go գնաց- գնացող մեծանալ to grow մեծաց- մեծացող վախենալ to be afraid վախեց- վախեցող առողջանալ to recover առողջաց- առողջացող

The subjective participle doesn't take part in forming the forms of mood and in the sentence it serves as attribute. E.g.

կարդացող աշակերտ a student that reads ծաղկող ծառեր blooming trees ծիծաղող երեխա laughing child մտածող մարդ a person that thinks

The subjective participle can be used in the meaning of noun. In this case it serves in the sentence as subject, object, uncoordinated attribute, etc. E.g.

Շատ կարդացողը խելոք կլինի: (subject)

(Someone) who reads a lot will be clever.

Կարդացողի միտքը պայծառ է ու լուսավոր: (uncoord. attr.)

The mind of one who reads is clear and bright.

Ես իսկույն տեսա ինձ դիմավորողներին: (object)

I immediately saw the ones who met me.

The subjective participle with the meaning of noun declines by the declension by ի.

Singular - եզակի թիվ

Ուղղ. լսողը (listener, -ing) խոսողը (speaker, -ing) Սեռ. լսողի խոսողի Տր. լսողին խոսողին Հայց. լսողին խոսողին Բաց. լսողից խոսողից Գործ. լսողով խոսողով

Plural - Հոգնակի թիվ

Ուղղ. լսողները խոսողները Սեռ. լսողների խոսողների Տր. լսողներին խոսողներին Հայց. լսողներին խոսողներին Բաց. լսողներից խոսողներից Գործ. լսողներով խոսողներից

Note: Some Armenian words ending in ող have both the meaning of noun and subjective participle. Depending on their meaning, these forms are translated into English as present participle or noun, e.g.

ընթերցող reader and someone who reads (is reading)

գրող writer and writing

ուսանող student and someone who is studying

ծնող parent and someone who is giving birth

====Ex. 217==== Form subjective participles from the infinitive form of the verbs.

Մաքրել, նկարել, որոշել, ջախջախել, հեկեկալ, հոգալ, սողալ, արդարանալ, ծանրանալ, հեռացնել, մոտեցնել, հագնել:

====Ex. 218==== Translate into English.

1. Կարծես թե ինձ ժպտում էին բոլորը՝ խաղացող մանուկները, աշխատող բանվորները, անգամ ծաղկող ծառերը: 2. Գայլից վախեցողը անտառ չի մտնի: 3. Շենքը կառուցողները պատվով

կատարեցին իրենց խոստումը: 4. Դահլիճում սպասողները սկսեցին դժգոհել: 5. Ելույթ ունեցողները հավանություն տվեցին որոշմանը: 6. Հարձակվող զորքերի թափը մի պահ թուլացավ: 7. Նահանջողները կանգ առան և խրամատավորվեցին: 8. Խաղաղության համար պայքարող մարդիկ հաղթանակ կտանեն: 9. Պարզևատրվող բանվորները արտադրության առաջավորներ էին: 10. Ժողովրդի ազատության համար կռվողը մահից չի վախենում:

Ex. 219. Translate into Armenian

1. Students of middle school worked on fields of farms during summer. 2. The reader ordered books on history of USSR. 3. Over the blooming fields of our Native Land sing beautiful birds. 4. Students are getting ready for Prom. 5. The Soviet youth should be in first rows of of builders of communism. 6. Investigators of Arctic started the examination (study) of sea stream. 7. On the green bushes looking at water sparkled dew. 8. The Cossack, letter in his hands fell down the horse. 9. The heavy breathing carriage- and- three stopped by the big house. 10. He looked at me with eyes that didn't see anything.

Negative participle

Ժխտական դերբայ

Section 141

The negative participle (Ժխտական դերբայ) is used for forming negative forms of the conditional mood. So, for example in the forms չեմ կարդա I will not read, չես կարդա you will not read, չի կարդա he will not read, չենք կարդա we will not read, չեմ գրի I will not write, չես գրի you will not write, չի գրի he will not write, չենք գրի we will not write, the words կարդա and գրի present the negative participle.

a. The negative participle from verbs of I conjugation form from the infinitive stem and ending ի.

Infinitive Infinitive stem Negative participle

գրել to write գր- գրի խոսել to speak խոս- խոսի վազել to run վազ- վազի գտնել to find գտն- գտնի փախչել to run away փախչ- փախչի

b. The negative participle of verbs of II conjugation form from the infinitive stem and ending ա.

Infinitive Infinitive stem Negative participle

կարդալ to read կարդ- կարդա խաղալ to play խաղ- խաղա մեծանալ to grow մեծան- մեծանա շատանալ to grow bigger շատան- շատանա ինելոքանալ to get clever ինելոքան- ինելոքանա

c. The negative participle is only used to form the negative form of the conditional mood.

Ex. 220

Form negative participles from the infinitive form of the verbs.

Կանչել, կապել, հարգել, նստել, թնդալ, հավատալ, ցանկանալ, ուշանալ, լայնացնել, անել, առնել, փախչել:

Ex. 221

Copy out and underline negative participles.

1. Այսուհետև ես այդպես չեմ սովորի: 2. Կարծում եմ, որ նա իր խոստումը չի մոռանա: 3. Դու այսօր թատրոն չես գնա: 4. Այդ երբեք չի լինի: 5. Նա այսօր մեզ մոտ չի գա: 6. Դասախոսությունը այդպես ուշադրությամբ չէին լսի, եթե հետաքրքիր չլիներ: 7. Ես այդ մասին էլ չեմ խոսի: 8. Դու այդ մասին նրանց չես հայտնի: 9. Դու այսօր կվերջացնես աշխատանքդ: 10. Դու կպարապես նրա հետ: Ոչ, չեմ պարապի: 11. Կարծում եմ, որ նա այդպիսի բան էլ չի անի: 12. Դրանից հետո ոչ մի դասից չեմ բացակայի:

Code table of impersonal forms of verb (participles and adverbial participles)

Բայերի դերբայական ձևերի ընդհանուր պատկերը

Simple verbs I conjugation II conjugation Անորոշ դերբայ infinitive նայել (to watch) խաղալ (to play)
 Անկատար դերբայ present participle նայում խաղում նայելիս խաղալիս Ապառնի դերբայ future
 participle նայելու խաղալու Վաղակատար դերբայ past participle նայել խաղացել Հարակատար
 դերբայ effective participle նայած խաղացած Ենթակայական դերբայ subjective participle նայող
 խաղացող Ժխտական դերբայ negative participle նայի խաղա

Suffixed verbs Suffixes -ան -են -ն -չ Անորոշ inf. մեծանալ (to grow) մոտենալ գտնել թռչել Անկատար
 pres. part. մեծանում մոտենում գտնում թռչում մեծանալիս մոտենալիս գտնելիս թռչելիս Ապառնի
 future part. մեծանալու մոտենալու գտնելու թռչելու Վաղակատար past part. մեծացել մոտեցել գտնել
 թռել Հարակատար eff. part. մեծացած մոտեցած գտած թռած Ենթակայական subj. part. մեծացող
 մոտեցող գտնող թռչող Ժխտական neg. part. մեծանա մոտենա գտնի թռչի

Suffixes of causal verbs -եցն -ացն -ցն Անորոշ inf. սովորեցնել բարձրացնել հազցնել Անկատար pres.
 part. սովորեցնում բարձրացնում հազցնում սովորեցնելիս բարձրացնելիս հազցնելիս Ապառնի
 future part. սովորեցնելու բարձրացնելու հազցնելու Վաղակատար past part. սովորեցրել
 բարձրացրել հազցրել Հարակատար eff. part. սովորեցրած բարձրացրած հազցրած Ենթակայական
 subj. part. սովորեցնող բարձրացնող հազցնող Ժխտական neg. part. սովորեցնի բարձրացնի հազցնի

Note: Passive (գրվել, սիրվել, etc.) and frequentative (թռչկոտել, կոտրատել, etc.) verbs form impersonal forms the same way as simple verbs of I conjugation.

Ex. 222

Write all the impersonal forms of verbs պարապել, ժպտալ, կատարել, մնալ:

Ex. 223

Read and copy out the impersonal forms of verbs.

Ննջարանի խորքում նստած էր Մարությանը և վշտահար խոնարհվել էր ծնկների վրա: Մոր
 մահճակալի մոտ նստած էր Եվան և անթարթ աչքերով նայում էր հիվանդի դեմքին: Լապտերի
 կարմիր լույսի տակ նրա դեմքը սրվել, պլպլում էր, աչքերն անբնական կերպով մեծացել, սառել
 էին: Շուրջը տիրող քարացած լուրջունը, լապտերի միապաղաղ աղոտ- կարմիր լույսը մահվան
 տպավորություն էին թողնում:

Եվ մահվան այդ կաշկանդող տպավորության տակ Եվայի անշարժ հայացքը հառած էր մոր դեմքի
 վրա, մինչև որ նրան թվում էր, թե կարմիր լույսի թափանցիկ շղարշով պատած այդ դեմքը կամաց-
 կամաց շարժվում, երկարում ու լայնանում է, փակ աչքերի լայն փոված թերթերունքները

բարձրանում են ծանրությամբ բերանը սկսում է բացվել և ահա, որտեղ որ է պիտի լավի այդ սարսափելի ճիչը, որ արձակեց մայրն այդ առավոտ որդու մահվան գույժը լսեսով:

Եվան ցնցվում էր, անթարթ նայելուց շաղվող հայացքը հեռացնում էր մոր դեմքից, գլուխը ետ էր ձգում աթոռի մեջքի վրա և աչքերը փակում: Լապտերի լույսը վերնից ուղղակի ընկնում էր նրա դեմքին, և այդ դեմքն այնքան անշարժ, այնքան անզգա էր երևում:

(Նար- Դոս, "Մահը")

Personal forms of verbs

Բայի դիմավոր ձևեր

Section 142

Verbs that can be conjugated are called personal. In Armenian personal verb forms occur in the categories of mood, tense, person and number. In the sentence personal forms usually serve as predicate.

Mood

Բայի եղանակները

Section 143

Mood is the form of the verb which shows the relation between the action expressed by the predicate and reality. This relation is established by the speaker. Armenian has five moods.

1. Actions represented as real facts are expressed by the indicative mood (սահմանական եղանակ). Ես կարդացի այդ գիրքը: I have read that book. Երեկոյան նա կարդում է: He reads in the evening. Դու կարդալու ես այդ գիրքը: You will read that book. 2. The optative mood (ըղձական եղանակ) expresses a desirable action. Գնամ տուն և սովորեմ դասերս: I would go home and study my lessons. Տեսնեի նրան ու պատմեի ամեն ինչ: I would see her and tell her everything. 3. The conditional or subjunctive mood (պայմանական կամ ենթադրական եղանակ) shows the conditional character, supposability of the action. Անցյալ տարի կընդունվեի համալսարան, եթե լավ պարապեի: I would have entered the University last year, if I studied properly. Լավ կլիներ, որ այդ հոդվածը գրեիր: It would be good, if you wrote that article. 4. The stimulating mood (հարկադրական եղանակ) shows necessity, obligation of the action. Նա այսօր պիտի վերջացնի աշխատանքը: He must finish the work today. Մենք պետք է կատարենք մեր խոստումը: We must keep our promise. 5. Commands and requests are expressed by the imperative mood (հրամայական եղանակ). Ծածկի՛ր դուռը: Shut the door. Գնացե՛ք տուն: Go home.

Auxiliary verb

Օժանդակ բայ

Section 144

The auxiliary verb եմ (to be) has present and past tense forms.

Present tense Past tense Sing. Plur. Sing. Plur. եմ ենք էի էինք ես եք էիր էիք է են էր էին

Note: All personal forms of the present tense, except the III person singular (է) are written with է. All forms of the past tense are always written with է. In the conjugating system of the Armenian language the auxiliary verb plays an important role. Thanks to them the 8 tenses of the indicative mood are formed, e.g., գրում եմ (I am writing), գրում էի (I was writing), գրել եմ (I wrote), գրելու եմ (I will write), etc. In the positive conjugation the auxiliary verb is usually put after the impersonal form of the verb, e.g.

Նա սովորում է համալսարանում:

He studies at the University.

Դու գնալու ես տուն:

You will go home.

If the logical stress doesn't fall on the verb predicate, the auxiliary verb is put after the word that carries the logical stress, etc.

Նա է սովորում համալսարանում:

He studies at the University.

Նա համալսարանում է սովորում:

He studies at the University.

Դու ես գնալու տուն:

You will go home.

Դու տուն ես գնալու:

You will go home.

Section 145

The auxiliary verb եմ also takes part in forming the compound nominal predicate, e.g.

Ես բանվոր եմ:

I am a worker.

Դու ուսանող ես:

You are a student.

Նա իմ ընկերն է:

He is my friend.

Դուք բարեկամներ էիք:

You are (were! oops?) relatives.

Notes:

1. The auxiliary verb that makes part of the compound predicate, is called copula (հանգույց).
2. In case there are several predicates in the sentence, the auxiliary verb is usually part of only one of them, e.g.

Նստում եմ ու նամակ գրում:

I am sitting and writing a letter.

Ես բանվոր եմ, իսկ դու՝ գյուղացի:

I am a worker, and you are a peasant.

Section 146

Conjugation of the auxiliary verb in negative form (օժանդակ բայի ժխտական խոնարհումը). The negative form of the auxiliary verb forms by means of particle չ.

Present tense Past tense Sing. Plur. Sing. Plur. չեմ չենք չեի չեինք չես չեք չեիր չեիք չի (չէ) չեն չեր չեին

Note: The negative form of the auxiliary verb keeps the spelling of the positive forms եմ - չեմ, էի - չէի, etc. In the negative conjugation the auxiliary verb is put before the impersonal form, e.g.

Գրում եմ- չեմ գրում: I am, am not writing. Պարսպում ենք- չենք պարսպում: I am, am not studying.
Խոսելու է- չի խոսելու: He/she will, will not talk.

When the negative form of the auxiliary verb makes part of a compound nominal predicate, it is put after the word just like the positive form, e.g.

Սա գիրք է: This is a book. Սենյակը լուսավոր է: The room is light. Սա գիրք չէ: This is not a book.
Սենյանը լուսավոր չէ: The room is not light.

Note: In the III person singular the auxiliary verb has two negative forms: չէ and չի. Չի is used in the composition of the verbal predicate, չէ in the composition of the nominal predicate. E.g.

չի գրում he isn't writing չի գրել he was not writing սա լավ թուղթ չէ this isn't a good paper նկարը գեղեցիկ չէ the picture isn't pretty

Ex. 224

Copy out, underline the auxiliary verbs and define their tense, person and number.

Աշնանային պայծառ առավոտներից մեկն էր: Ամպերի միջից տեղ-տեղ երևում էր երկնքի կապույտը: Շուրջը խաղաղ էր ու հանգիստ: Վերևում աղավնիներ էին ճախրում: Թեթև հովից մեղմ շրշում էին ոսկետերև բարդիները: Աշունը իր բազմազան գույներով զարդարել էր Երևանի Կիրովի անվան զբոսայգին: Պիոներական թմբուկը զվարթ կանչով այգի էր հրավիրում պատանիներին: Շքանշաններով ու մեդալներով զարդարված օդաչուները խմբվել էին պուրակի կենտրոնում: Սպիտակ մետաքսով ծածկված էր նվիրական հուշարձանը: Մարդիկ անհամբեր սպասում էին հուշարձանի բացմանը: Մի ծերունի իր կնոջ ու թոռնիկի հետ կանգնած էր առջևում: Թոռնիկը մի ահագին ծաղկեփունջ էր բռնել: Ծերունին ու կինը աշխատում էին նրանից աննկատելի պահել իրենց հուզմունքը: -Այ, այն ծերունին ու տիկինը Նելսոնի ծնողներն են, իսկ մանուկը Նելսոնի որդին է,- ասում էր օդաչուներից մեկը իր տղային:

Ex. 225

Replace the present forms of the auxiliary verbs with past forms.

1. Մենք սպասում ենք մեր ավագ ընկերներին: 2. Ձյուն է գալիս: 3. Ես նստած եմ այգում: 4. Դուք կարդացել էք այդ ամսագրերը: 5. Նրանք ավարտել են աշնանացանը: 6. Ծովը խաղաղ է: 7. Ես կանգնած եմ ծովափին: 8. Ժամացույցը սեղանի վրա է: 9. Դու աշխատում ես գրադարանում: 10. Նրանք հայերեն լավ են խոսում: 11. Նա օտար լեզուներ է սովորում: 12. Երկինքը ջինջ է ու կապուտակ: 13. Օդը մաքուր է և թարմ: 14. Այս կինոնկարը գրավիչ է ու հետաքրքիր: 15. Նա առաջավոր բանվոր է:

E.g., Մենք սպասում էինք մեր ավագ ընկերներին:

Ex. 226

Copy out the sentences using auxiliary verbs in negative form.

1. Ես տեսել եմ այդ նկարը: 2. Նա վերադարձել է հանգստյան տնից: 3. Դու հոգնել ես: 4. Նրանք քեզ նամակ են ուղարկել: 5. Նա ինձ այդ մասին ասել է: 6. Ժողովը վերջացել է: 7. Խանութները փակ են:

8. Հացը թարմ է: 9. Ես լսել էի այդ երգը: 10. Նրանք սպասու էին ձեզ: 11. Դուք հանգստանում էիք: 12. Դու հանրակացարանում էիր ապրում: 13. Նրանք մեր հյուրերն էին: 14. Նա ինստիտուտի ուսանող էր: 15. Ես վերջացրել էի իմ գործը:

E.g., Ես չեմ տեսել այդ նկարը:

Ex. 227

Translate into Armenian and underline the auxiliary verbs.

1. Students are getting ready for exams. 2. You study Armenian language. 3. The writer is working on his new work. 4. I want to read this book. 5. Did you write the letter? No, I didn't yet. 6. Have you seen this play? 7. Students go for sports. 8. He didn't take part in the competition. 9. Our sportsmen took the first places. 10. Classes start at 8 o'clock in the morning.

Person and number

Դեմք և թիվ

Section 116

Conjugated forms of verbs have three persons. The first person (առաջին դեմք) shows that the action is performed by the speaker itself, e.g.

Ես զբոսնում եմ այգում:

I am walking in the park.

Մենք գնացինք թատրոն:

We went to the theatre.

The second person (երկրորդ դեմք) shows that the action is performed by the hearer, e.g.

Դու ապրում ես քաղաքում:

You live in town.

Դուք սովորում եք առաջին կուրսում:

You are first year students.

The third person (երրորդ դեմք) shows that the action is performed by an object or person that is not taking part in the conversation, e.g.

Նա սիրում է իր աղջկան:

He loves his daughter.

Երեխաները խաղում են բակում:

Children are playing in the yard.

Section 147

Personal forms of verb have two numbers, singular (եզակի) and plural (հոգնակի). The singular shows that the action is performed by a single person or object, e.g.

Ես ապրում եմ Երևանում:

I live in Yerevan.

Դու վերջացրիր աշխատանքը:

You finished the work.

Նա գնաց տուն:
He went home.

The plural shows that the action is performed by two or more persons or objects, e.g.

Մենք ապրում ենք Երևանում:
We live in Yerevan.
Դուք վերջացրիք աշխատանքը:
You finished the work.
Նրանք գնացին տուն:
They went home.

Ex. 288

Read, and define the person and number of verbs.

Դասերը վերջացան: Արդեն սկսվել են քննությունները: Ուսանողները ամբողջ օրը պարապում են կաթինետներում: Ես վաղը հանձնելու եմ առաջին քննությունը: Ես կարդացել եմ այն գրականությունը, որ հանձնարարել է դասախոսը: Հայոց լեզվի քննությունը նշանակված է ամսի 15- ին: Դու հայերեն լավ գիտես և կարող ես հաջող հանձնել այդ առարկան: Նինան հայերեն է սովորում անցյալ տարվանից: Մենք միշտ օգնում ենք նրան: Նինան արդեն թելադրություն է գրում առանց սխալի: Մենք մեր բոլոր քննությունները հաջող կհանձնենք:

Ex. 229

Copy out the text, using the pronouns and verbs in plural.

1. Ես նրան երեկ եմ տեսել: 2. Մինչը անցյալ տարի նա ապրում էր Լենինգրադում: 3. Դու այդ աշխատանքը կվերջացնես ժամի 3- ին: 4. Ես պարապում եմ տանը: 5. Դու պարապում եմ գրադարանում: 6. Իմ եղբայրը աշխատում է գործարանում: 7. Երեկ նա վերադարձան Կիրովականից: 8. Դու ցանկանում ես սովորել հայերեն: 9. Նա իրեն վատ է զգում: 10. Նա ինձ շատ սպասեց:

Tenses of the verb

Բայի ժամանակները

Section 148

In the Armenian language the verb has three basic tenses: present, past and future. The present tense (ներկա ժամանակ) shows that the action is happening at the moment of speaking.

Ես գնում եմ տուն:
I am going home.
Աշակերտը պատրաստում է դասը:
The pupil is preparing his lessons.

The past tense (անցյալ ժամանակ) shows that the action happened before the moment of speaking.

Նա գնացել է տուն:
He went home.
Ես աշխատում էի պարտեզում:

I was working in the garden.
Դուք լսեցիք իմ ընկերոջ ձայնը:
You heard my friend's voice.

The future tense (ապառնի ժամանակ) shows that the action will happen after the moment of speaking.

Ես գնալու եմ տուն:
I will go home.
Դու պետք է գնաս Մոսկվա:
You must go to Moscow.

These three basic tenses have their subgroups. Thus, for example, there is a past tense of the present and a past tense of the other (perfect? effective?) past, etc.

Ex. 230

Read and define the tense of the verbs (present, past, future).

1. Այդ գիրքը կարդացել եմ մի քանի օր առաջ: 2. Ես մեծ հետաքրքրությամբ կարդում եմ քո նամակները: 3. Նա այդ դեպքի մասին ինձ արդեն ասել է: 4. Այդ կանոնը ես լավ հասկացա: 5. Դու բացատրելու ես դժվար հասկանալի տեղերը: 6. Նա հողվածը վերջացնելու է վաղը: 7. Երեկ նրան տվեցի իմ գիրքը: 8. Նա խոստանում է օգնել մեզ: 9. Դու պիտի գնաս նրա հետ: 10. Մենք գրելու ենք միասին: 11. Գործարանում աշխատում էին շատ բանվորներ: 12. Այդ արտահայտությունը նա հաճախ է գործածում: 13. Ամսագրերը ուղարկել էր իմ եղբայրը: 14. Դու կկարդաս այդ բանաստեղծությունը: 15. Ի՞նչ պիտի ուղարկեք ձեր հորը: 16. Ու՞մ ես տեսնելու գործարանում: 17. Այդ դեպքը ես շատ լավ եմ հիշում:

Indicative mood

Սահմանական եղանակ

Section 149

The indicative mood has nine tenses:

1. Ներկա ժամանակ Present tense
2. Անյալի անկատար Past imperfective
3. Ապառնի ժամանակ Future tense
4. Անցյալի ապառնի Future perfect
5. Վաղակատար Past tense
6. Անցյալի վաղակատար Plusquamperfect
7. Հարակատար Past effective
8. Անցյալի հարակատար Past perfect effective
9. Անցյալ կատարյալ Past perfect

In Armenian, these tenses, except the past perfect, form by means of participle-adverbial participles and the auxiliary verb, and are called main compound tenses of indicative mood (սահմանական եղանակի գլխավոր բաղադրյալ ժամանակներ). The past perfect is formed from the stem of the verb and personal verbal endings, and is called simple tense of indicative mood (սահմանական եղանակի պարզ ժամանակ).

Present tense

Section 150

The present tense shows that the action is happening at the moment of speaking. This tense is formed by means of the present participle and personal forms of the auxiliary verb of the same tense.

Present tense

I. conj. լսել to listen II. conj. գնալ to go Singular Plural

1. լսում եմ I (listen) am listening 1. լսում ենք we (listen) are listening 2. լսում ես you are listening 2. լսում եք you are listening 3. լսում է he is listening 3. լսում են they are listening

1. գնում եմ I (go) am going 1. գնում ենք we (go) are going 2. գնում ես you are going 2. գնում եք you are going 3. գնում է he is going 3. գնում են they are going

Ex. 231

Conjugate the following nouns in present tense: սպասել, մտածել, զգալ, հասկանալ.

Ex. 232

Copy out and underline verbs of present tense.

Կարծես թե դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն են կրկին.
Նորից դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին:
Մանում ու հեքիաթ ես ասում
Մանում ես անվերջ ու արագ.-
Միրում եմ պարզկա քո լեզուն,
Ձեռքերդ մաշված ու բարակ:
Նայում եմ մինչը որ անգոր
Գլուխս ծնկիդ է թեքվում.
Նորից ես մանում եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:
Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթըդ անվերջ օրորում,
Իլիկըդ խոսում է անուշ...
(Վ. Տերյան)

Ex. 233

Translate into Armenian and underline verbs in the present tense.

1. I often talk to my friend about our trip to the Caucasus. 2. He is studying in the next room. 3. He doesn't see me looking at him. 4. I get many magazines and journals. 5. He reads Armenian books without a dictionary. 6. He now rarely comes to me, as he is getting ready for his exams. 7. Aram is reading an interesting book. 8. He works at the factory during the day, and in the evening he studies in college. 9. My working day starts at 8 a.m.

Past imperfective

Անցյալի անկատար

Section 151

The past imperfective tense shows an action that happened in the past. It is formed by means of the present participle and personal forms of the auxiliary verb of the past tense.

Singular Plural

1. լսում էի I listened/was listening 1. լսում էինք we listened/were listening 2. լսում էիր you listened 2. լսում էիք you listened 3. լսում էր he listened 3. լսում էին they listened

1. գնում էի I went/was going 1. գնում էինք we went/were going 2. գնում էիր you went 2. գնում էիք you went 3. գնում էր he went 3. գնում էին they went

Ex. 234

Conjugate the following verbs in past imperfective tense.

գնահատել, ծիծաղել, զարգանալ, մնալ.

Ex. 235

Read the text, copy out verbs in the past imperfective tense.

Այդ գիշեր փետրվարյան դաժան քամին փչում էր ծովից: Գործարանների շշակները սուլում էին: Լենինը Սմոլնի էր կանչում բոլորին, ով պատրաստ էր կռվելու իր երկրի համար: Հայրենիքը վտանգի մեջ էր: Գերմանացիները պետրոգրադի վրա էին գալիս: Լենինն աշխատում էր ամբողջ գիշերը: Կոչ էր գրում ժողովրդին: Երբեմն նա վեր էր կենում, մոտենում պատուհանին: Սմոլնու բակում խարույկներ էին վառվում, գնդացիներ կային. մարտիկները մոխրագույն շինելներ հագած ինչ-որ տեղ սրեր ու հրացաններ էին փոխադրում:

Ex. 236

Translate into English.

1. Ես պատրաստում էի դասերս: 2. Նա երեկոները զբոսնում էր: 3. Մենք բնակվում էինք Աբովյան փողոցի վրա: 4. Դուք սովորում էիք գյուղատնտեսական ինստիտուտում: 5. Նա բանաստեղծություններ էր գրում: 6. Ես բոլորից շուտ էի վերջացնում իմ գործերը: 7. Մենք ամառը հանգստանում էինք ծովափին: 8. Դու նրանից շատ բան էիր պահանջում: 9. Մենք խոսում էինք քննությունների մասին: 10. Դու անցյալ օրը գնում էիր քո ընկերոջ մոտ: 11. Նա սպասում էր իր քրոջը: 12. Նա լավ էր կարդում: 13. Դու հաջողությամբ էիր պատասխանում դասախոսի հարցերին:

Ex. 237

Translate into Armenian and underline verbs in the past imperfective tense.

1. They worked well yesterday. 2. He was speaking so fast that I couldn't understand him. 3. He was telling us about his journeys. 4. When I entered the room, he was writing a letter. 5. The speaker was speaking very loudly. 6. My friend relaxed in Cyprus last year. 7. I used to see him every day. 8. I was walking in the park. 9.

Famous actors performed in this hall. 10. Students were getting ready for the holiday. 11. Many inhabitants met him. 12. He read a lot and advanced the Soviet people.

Future and future perfect tenses

Ապառնի, և անցյալի ապառնի ժամանակներ

Section 152

The future tense (ապառնի ժամանակ) shows an action that will take place after the moment of speaking. This tense is formed by means of the future participle and personal forms of the auxiliary verb of the present tense.

Singular Plural

1. լսելու եմ I will listen/be listening լսելու ենք we will listen/be listening 2. լսելու ես you will listen լսելու եք you will listen 3. լսելու է he will listen լսելու են he will listen

1. գնալու եմ I will go/be going գնալու ենք we will go/be going 2. գնալու ես you will go գնալու եք you will go 3. գնալու է he will go գնալու են they will go

Section 153

The future perfect tense (ապառնի ժամանակ) is formed by means of the future participle and personal forms of the auxiliary verb of the past tense.

Singular Plural

1. լսելու էի I had to listen լսելու էինք we had to listen 2. լսելու էիր you had to listen լսելու էիք you had to listen 3. լսելու էր he had to listen լսելու էին they had to listen

1. գնալու էի I had to go գնալու էինք we had to go 2. գնալու էիր you had to go գնալու էիք you had to go 3. գնալու էր he had to go գնալու էին they had to go

Ex. 238

Conjugate the following verbs in future and future perfect tenses. նկարել, ավարտել, խաղալ, իմանալ:

Ex. 239

Copy out replacing the future tense with future perfect.

1. Նա Լենինականից վերադառնալու է երկու շաբաթից հետո: 2. Նրան անպայման տեսնելու եմ: 3. Նա իր արձակուրդն անցկացնելու է Սոչիում: 4. Նրանք մեկնելու են երեկոյան: 5. Քննությունը հանձնելու եմ երկու օրից հետո: 6. Նա մեզ դիմավորելու է կայարանում: 7. Դու մասնակցելու ես երեկույթին: 8. Շուտով սկսվելու են դասերը: 9. Ուսանողները վերադառնալու են ամառանոցից: 10. Ես գնալու եմ կայարան դիմավորելու իմ ընկերներին: 11. Դրանից հետո նա ամեն օր երկու ժամ հայերեն է պարապում: 12. Նա այդ աշխատանքը հաջողությամբ է կատարելու: 13. Գիշերը, հավանաբար, անձրև է գալու: 14. Ժողովը տևելու է երկու ժամ: 15. Դուք ժամանակին տեղ եք հասնելու: 16. Ամեն ինչ անելու եմ հարցը լուծելու համար: 17. Ուսանողական գիտական ընկերության բաժանմունքի նիստում լսելու եմ մի շարք զեկուցումներ:

E.g. Նա Լենինականից վերադառնալու էր երկու շաբաթից հետո:

Past and plusquamperfect tenses

Վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակներ

Section 154

The past tense (վաղակատար ժամանակ) shows an action that happened before the moment of speaking.

Նա ավարտել է իր աշխատանքը:

He finished his work.

Քո նամակը ստացել եմ:

I received your letter.

The past tense is formed by means of the past participle and personal forms of the auxiliary verb of the present tense.

Singular Plural

1. լսել եմ I listened 1. լսել ենք we listened 2. լսել ես you listened 2. լսել էք you listened 3. լսել է he listened
3. լսել են they listened

1. գնացել եմ I went 1. գնացել ենք we went 2. գնացել ես you went 2. գնացել էք you went 3. գնացել է he went
3. գնացել են they went

Section 155

Plusquamperfect tense (անցյալի վաղակատար ժամանակ) shows the past action accomplished before a given past moment and viewed back from that past moment.

Երեկ, երբ դու եկար ինձ մոտ, ես նամակն արդեն գրել էի:

Yesterday, when you came to me, I had already written the letter.

Երբ նա հասավ կայարան, գնացքն արդեն շարժվել էր:

When he went to the station, the train had already left.

Section 156

The plusquamperfect tense is formed by means of the past participle and personal forms of the auxiliary verbs of the past tense.

Singular Plural

1. լսել էի I had heard լսել էինք we had heard 2. լսել էիր you had heard լսել էիք you had heard 3. լսել էր he had heard լսել էին they had heard

1. գնացել էի I had gone գնացել էինք we had gone 2. գնացել էիր you had gone գնացել էիք you had gone
3. գնացել էր he had gone գնացել էին they had gone

Ex. 240

Conjugate the following verbs in past and plusquamperfect tenses.

գրել, վագել, կարդալ, դողալ:

Ex. 241

Copy out and underline the verbs in the past tense.

Այդ օրից անցել են դարեր,
Գահեր են գլորվել, չկան,
Վառվել են լույսեր ու ջահեր,
Շատ ջրեր են հոսել կշկշան:
Պակսել են ջրերը ծովի,
Աշտարակը թողել ցամաքում,
Ծնվել է ուժեղ կորովի
Դասակարգը Բաքու քաղաքում:
Ծնվել է մի նոր թրքուհի,
Ոսկեվարս արև նորածագ,
Որ շահ ու խանից ահ չունի
Արևի ոսկի լույսի տակ:
(Գ. Սարյան)

Ex. 242

Copy out replacing the plusquamperfect forms with past tense forms.

1. Ուղարկել էի նրանց պահանջած գրքերը: 2. Նրա նամակն ստացել էի: 3. Նա այդ մասին վաղուց էր գրել: 4. Դու խոսե՞լ էիր նրա հետ: Այո, խոսել էի: 5. Դու կարդացե՞լ էիր այս գիրքը: Այո, կարդացել էի: 6. Այդ պատմությունը վաղուց էի լսել: 7. Սկսվել էին ձմռան ցրտերը: 8. Եկել էր գարունը, ծաղկել էին ծառերը: 9. Այդ խնդրի մասին շատ էի մտածել: 10. Նա ևս մասնակցել էր այդ արշավախմբին: 11. Ես նոր բնակարան էի ստացել: 12. Ես հանձնել էի բոլոր քննություններս:

E.g. Ուղարկել էի նրանց պահանջած գրքերը:- Ուղարկել եմ նրանց պահանջած գրքերը:

Past effective and past perfect effective tenses

Հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ

Section 157

The past effective tense (հարակատար ժամանակ) shows a past action the results of which still continue at the moment of speaking.

Դու, կարծես, մրսած ես:
You seem to have caught a cold.
Երկինքը ծածկված է ամպերով:
The sky is covered with clouds.

The past effective is formed by means of the effective participle and personal forms of the auxiliary verb of the present tense.

Singular

1. մրսած եմ I have caught a cold 2. մրսած ես you have caught a cold 3. մրսած է he has caught a cold

Plural

1. մրսած ենք we have caught a cold 2. մրսած էք you have caught a cold 3. մրսած են they have caught a cold

Section 158

The past perfect effective (անցյալի հարակատար ժամանակ) shows an action the results of which continue at the given moment in the past.

Երեկ դու, կարծես, մրսած էիր:
Yesterday you seemed to have caught a cold.
Երկինքը ծածկված էր ամպերով:
The sky was covered with clouds.

The past perfect effective is formed by means of the effective participle and personal forms of the auxiliary verb of the past tense.

- մրսած էի
I had caught a cold
- մրսած էիր
you had caught a cold
- մրսած էր
he had caught a cold
- մրսած էինք
we had caught a cold
- մրսած էիք
you had caught a cold
- մրսած էին
they had caught a cold

Not all Armenian verbs have effective tenses. Active voice and most middle voice verbs do not have the past effective tenses. Among the middle voice verbs that do have these tenses are:

- նստել - to sit,
- կանգնել - to stand,
- պառկել - to lie,
- հոգնել - to be tired,
- քնել - to sleep,
- քրտնել - to sweat,
- հարբել - to be drunk.

Past effective tenses are mainly particular to passive voice verbs.

Ex. 243

Conjugate the following verbs in past effective and past perfect effective.

կանգնել, սիրվել, նստել, հուզվել.

Ex. 244

Copy out, underline the verbs in effective tenses.

1. Նա կանգնած էր լուսամուտի առաջ և նայում էր դեպի դուրս:
2. Երեխան կանգնած է մահճակալին:
3. Բոլորն արդեն քնած են:
4. Նա նստած էր լուռ:
5. Ես այսօր շատ եմ աշխատել և այժմ հոգնած եմ:
6. Այս կամուրջը կառուցված է անցյալ տարի:
7. Երբ ես ներս մտա, այդ հարցն արդեն քննարկված էր:
8. Հողվածն արդեն թարգմանված է:
9. Բոլոր տեղերն արդեն զբաղված էին:
10. Տոմսերը վաճառված են:
11. Քո հրամանը կատարված է:
12. Նա հարզված և սիրված է բոլորի կողմից:

Ex. 245

Translate into English.

1. Դիմումը ստորագրված է: Այո, ստորագրված է:
2. Համաձայնագիրն արդեն կնքված է:
3. Շենքը նոր է վերանորոգված:
4. Այս դպրոցական շենքը կառուցված է անցյալ տարի:
5. Երբ վարիչը եկավ, ամեն ինչ արված էր, փաստաթղթերը ստուգված էին ու կնքված:
6. Երբ նա վերադարձավ, տունն արդեն վերանորոգված էր:
7. Այս հարցը առայժմ դեռ չի լուծված:
8. Ամսագրում շատ հողվածներ են տպված հայ գրականության մասին:
9. Մի ամսում գործարանում արտադրված է 2 միլիոն ռուբլու արտադրանք:
10. Նրա գրքերը թարգմանված են շատ լեզուներով:

Ex. 246

Translate into Armenian.

1. This building was built last year.
2. A contract about cultural collaboration has been signed.
3. The schedule of classes is set.
4. When father returned, the children were sleeping.
5. All the seats in the hall were occupied.
6. A car was sent to the village for cleaning the cotton.

7. Cotton is gathered by machines this year.
8. A great harvest of vine was gathered by farmers.
9. It was talked about in the general meeting.
10. The works for planting of greenery in the town are finished.

Past perfect tense

Անցյալ կատարյալ ժամանակ

Section 159

The past perfect tense (անցյալ կատարյալ ժամանակ) is the only simple tense of the indicative mood. This tense shows a past action without relating it to any moment.

Ես կարդացի գիրքը:

I read that book.

Մենք նամակ գրեցինք:

We wrote a letter.

Նրանք ավարտեցին աշխատանքները:

They finished the tasks.

Section 160

To correctly construct the past perfect it is necessary to know the past perfect stem of verbs. This stem is formed by replacing the endings ել, ալ of the infinitive of simple verbs with եց (for verbs of first conjugation) and աց (for verbs of second conjugation). (This has been explained more thoroughly (and probably more correctly) in Section 133. Better refer to that section than present an over-simplified explanation here.)

Infinitive Past perfect stem

վազել to run վազեց- գրել to write գրեց- մնալ to stay մնաց- գնալ to go գնաց-

Section 161

In forming the past perfect, simple verbs take the following endings:

Singular Plural 1. ի 1. ինք 2. իր 2. իք 3. - 3. ին

These personal endings are directly added to the past perfect stem.

Singular Plural

1. լսեցի I heard լսեցինք we heard 2. լսեցիր you heard լսեցիք you heard 3. լսեց he heard լսեցին they heard

1. գնացի I went գնացինք we went 2. գնացիր you went գնացիք you went 3. գնաց he went գնացին they went

Note: Verbs with suffixes աւն, են, ն, չ and causal verbs with suffixes ացն, եցն, ցն form forms of the past perfect differently than simple verbs. (133., 178., 181.).

Ex. 247

Form the past perfect stem of the following verbs.

պատմել, մտածել, կատարել, լռել, խնդալ, խաղալ, լողալ, կարդալ.

Ex. 248

Conjugate the following verbs in the past perfect tense.

պատմել, մտածել, խնդալ, լողալ.

Ex. 249

Read, copy out verbs of past perfect tense, and find their infinitive.

ԱՅՐ ԱՆՈՒՆԸ ՅՆՅԵԼ ՉԻ ԼԻՆԻ

THAT NAME CAN'T BE ERASED

Իտալական բանտում
In italian jail

Մի անգամ ինձ ձերբակալեցին և ուղարկեցին բանտ: Շատերի հետ բանտարկված էր նաև մի զինվոր: Գիշերը նա համարյա չքնեց: Շարունակ դես-դեն էր շարժում սեղանն ու այծոռը: Լուսաբացին ես նրան հարցրի.

- Ինչու՞ գիշերն անհանգիստ էիր:

Նա չպատասխանեց, մեղմ ժպտաց ու գլխով ցույց տվեց պատը: Պատի վրա խոշոր տառերով գրված էր.

- Կեցցե Լենինը:

- Ո՞վ է գրել,- հարցրի նրան:

- Ես,- հպարտությամբ պատասխանեց նա:

Շուտով զարթնեցին մտուս բանտարկյալները: Բոլորը կարդացին զինվորի գրածը: Նրանք ներքին մի լուռ հրճվաբով արտահայտում էին իրենց խոր հարգանքը դեպի այդ անունը: Քիչ հետո ներս մտավ բանտի վերակացուն: Նա նույնպես կարդաց պատի վրա գրածը:

Ex. 250

Translate into English.

1. Ասաց, որ այսօր այցելելու է մեզ: 2. Նստեցի նրա մեքենան և տաս րոպեից հետո տանն էի: 3. Նա մանրամասնորեն պատմեց իր ճանապարհորդության մասին: 4. Մենք շատ սպասեցինք ձեզ, բայց դուք չեկաք: 5. Հայտնեցին, որ ժողովը հետաձգվել է: 6. Այս տարի առատ բերք ստացանք: 7. Կոլտնտեսականները ավարտեցին գարնանային նախապատրաստման աշխատանքները: 8. Օրերս ծանոթացա նրա հետ և մեր տուն հրավիրեցի: Նա սիրով ընդունեց հրավերս: 9. Նա տուն եկավ, ճաշեց, ճաշից հետո կարդաց օրվա լրագրերը և ապա երեխաներին տարավ զբոսայգի: 10. Նա դուռը փակեց, բանալին գրպանը դրեց, ժպտալով նայեց հարևան սենյակում խաղացող երեխաներին և շտապ քայլերով դուրս գնաց: 11. Կարդացի հանձնարարված բոլոր գրքերը, մշակեցի համապատասխան գրականությունը և քննությունը հանձնեցի շատ հաջող:

Ex. 251

Translate into Armenian.

1. The children were carried away with the game. 2. The hunters reached the edge of the wood. 3. He locked the door and went away. 4. Our class organized a rest evening. 5. He passed the arithmetics exam. 6. I carefully

listened to the speech of the famous writer. 7. I went away, and they stayed. 8. I read tales of Hovanes Tumanyan to kids. 9. He quickly swam to the bank. 10. Hakobyan was chosen the class monitor. 11. Did you follow the commander's order? 12. We went for a walk in the morning.

Optative mood

Ըղձական եղանակ

Section 162

The optative mood has two tenses, future and future perfect.

Section 163

The future tense of the optative mood shows that the action to happen is desirable.

Գնամ տուն, տեսնեմ նրան:

I would go home and see him.

Հանդիպեմ Սուրենին ու պատմեմ այդ մասին:

I would meet Suren and tell him everything.

The future tense of the optative mood forms by replacing the final լ of the infinitive with the following personal endings:

Singular Plural

1. մ 1. նք 2. ս 2. ք 3. - 3. ն

These endings take both first and second conjugation verbs. It should be remembered that the verbs of first conjugation in III person singular have the form with ի, and not with է, as it should have been expected, e.g., լսի (and not լսէ), գնի, ասի, etc. (Instead of the the explanation it is probably better to give a table listing the full endings to add to the stems for both conjugations. Instead of your last sentence I suggest: Furthermore, for verbs of the first conjugation the է changes to ի in the 3rd person singular, as one might have expected. E.g., լսի (and not լսէ), գնի, ասի, etc.)

Note: Sometimes one can come across forms with (missing!), which are archaic.

Singular Plural

1. լսեմ I would listen լսեմք we would listen 2. լսես you - - լսեք you - - 3. լսի he - - լսեն they - -

1. գնամ I would go գնանք we would go 2. գնաս you - - գնաք you - - 3. գնա he - - գնան they - -

Section 164

The future perfect of the optative mood shows an action whose accomplishment would have been desirable in the past.

Գնայի տուն, տեսնեի նրան:

I would have liked to go home and see him.

Հանդիպեի Սուրենին, պատմեի այդ մասին:

I would have liked to meet Suren and tell him everything.

The future perfect of the optative mood forms by replacing the final լ of the infinitive with the following personal endings:

Singular Plural

1. ի 1. ինք 2. իր 2. իք 3. ին 3. ինք Future perfect of optative mood. Singular Plural

1. գրեի I would have liked to write գրեինք we would have liked to write 2. գրեիր you - - գրեիք you - - 3. գրեր he - - - գրեին they - -

1. գնայի I would have liked to go գնայինք we would have liked to go 2. գնայիր you - - գնայիք you - - 3. գնար he - - - գնային they - -

Note: Before the personal endings of the future perfect tense of the optative mood յ is heard, which isn't written after ե (i.e., verbs of first conjugation) but is written after ա (i.e., verbs of second conjugation). E.g., վազեի, խոսեի, but խաղայի, կարդայի.

Ex. 252

Conjugate the following verbs in future and future perfect tenses of the optative mood.

սիրել, սովորել, խաղալ, մեծանալ.

Ex. 253

Copy out, adding endings of the future perfect of optative mood to the infinitive stems.

Ես սովոր..., դու սովոր..., նա սովոր..., մենք սովոր..., դուք սովոր..., նրանք սովոր...: Ես կարդ..., դու կարդ..., նա կարդ..., մենք կարդ..., դուք կարդ..., նրանք կարդ...:

Ex. 254

Copy out and underline verbs of optative mood.

a. Շուրթս դնեմ շուրթերին աղբյուրի Հեռավոր մի անտառի աղբյուրի Հովը իմ դեմքը շոյի, համբուրի... Երգս ջրերին խառնեմ, կարկաչին, Սիրտս բռնեմ հովերին, կանաչին, Ու անտառը սրտիս հետ հառաչի... Իմ աչքերը թող ցողեն թաց հողին, Ու մի եղեգ կանաչի այդ հողից, Սիրտս արթնանա նորից, ախ նորից...

(Գ. Սարյան) Ե. Լինեի չոքան սարերում հեռու, Գայիր, անցնեիր վրանիս մոտով, Իրար նայեինք անուշ կարոտով, Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու: Գնայիր աղբյուրն ու ետ դառնայիր, Թեթև, որպես վիթ, Էլնեիր ձորից, Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից Ու վրանիս մոտ հանգստանայիր:

(Վ. Տերյան)

Conditional or subjunctive mood

Պայմանական կամ ըղձական եղանակ

Section 165

The conditional mood has two tenses, future and future perfect.

Section 166

The future tense of the conditional mood shows an action accomplishment of which in the future is supposable or conditioned. The future tense of the conditional mood forms by means of the modal particle կ, which is prefixed to the forms of the future tense of the optative mood.

Future tense of optative mood Future tense of conditional mood Sing. Plur. Sing., Plur. 1. լսեմ լսենք կլսեմ I will hear կլսենք we will hear 2. լսես լսեք կլսես you - - կլսեք you - - 3. լսի լսեն կլսի he - - կլսեն they - -

1. գնամ գնանք կգնամ I will go կգնանք we will go 2. գնաս գնաք կգնաս you - - կգնաք you - - 3. գնա գնան կգնա he - - կգնան they - -

Section 167

The future perfect of the conditional mood shows as action which could have been accomplished in the future in the presence of necessary conditions.

Նրան նամակ կգրեի, եթե իմանայի նրա հասցեն:

I would write him a letter, if I knew his address.

Այդ հոդվածը ժամանակին կավարտեի, եթե ունենայի համապատասխան գրականություն:

I would finish that article on time, if I had the corresponding literature.

The future perfect of the conditional mood forms by means of the modal particle, which adds to the forms of the future perfect of the optative mood.

Future perfect of optative mood Future perfect of conditional mood Sing. Plur. Sing. Plur.

1. խոսեի խոսեինք կխոսեի կխոսեինք 2. խոսեիր խոսեիրք կխոսեիր կխոսեիրք 3. խոսեր խոսեին կխոսեր կխոսեին

1. գնայի գնայինք կգնայի կգնայինք 2. գնայիր գնայիրք կգնայիր կգնայիրք 3. գնար գնային կգնար կգնային

Note: The modal particle կ is written together with the verbs.

Ex. 255

Conjugate the following verbs in future and future perfect tenses of the conditional mood.

ասել, սպասել, ժպտալ.

Ex. 256

Copy out, replacing the infinitive of verbs with corresponding forms of the future perfect tense of the conditional mood.

1. Այսօր թատրոն (գնալ), եթե ժամանակ ունենայի: 2. Նրան անպայման (ասել) այդ մասին, եթե տեսնեի: 3. Նա (կատարել) քո ցանկությունը, եթե հնարավորություններ ունենար: 4. Մենք (սպասել) քեզ, եթե չուշանայինք: 5. Նրանք (գալ) երեկոյթին, եթե իմանային ժամը:

E.g., Այսօր թատրոն կգնայի, եթե ժամանակ ունենայի:

Ex. 257

Copy out, replacing the infinitive of verbs with corresponding forms of the future tense of the conditional mood.

1. Դու (նստել) ինձ մոտ: 2. Նա (կանչել) ինձ: 3. Այսօր երեկոյան ես (գալ) ձեր տուն: 4. Մենք (հայտնել) նրան ձեր խնդիրը: 5. Նրանք (բերել) մեր պահանջած գրքերը: 6. Դու այսօր լավ (պատասխանել) դասերդ: 7. Վաղը մենք (գնալ) զբոսայգի: 8. Այնտեղ (հանդիպել) իմ ընկերոջը:

E.g., Դու կնստես ինձ մոտ:

Ex. 258

Translate into English.

a. 1. Ես այնտեղ կգնամ վաղը: 2. Նա կվերադառնա հունվարի 5-ին: 3. Ե՞րբ կվերջացնես աշխատանքը: Աշխատանքը կվերջացնեմ ժամը 6- ին: 4. Նրանք Երևանում կմնան երկու շաբաթ: 5. Դուք միասին կթարգմանեք այդ գիրքը: 6. Նա համալսարանը կավարտի այս տարի: 7. Այսօր կտեսնեմ ընկերոջս և նրան կասեմ քո առաջարկության մասին: 8. Նա քաղաք կհասնի այսօր երեկոյան: 9. Դու կօգնես նրանց: 10. Այդ գիրքը կտամ քեզ: 11. Ես քեզ կհանդիպեմ կայարանում: 12. Այսօր տուն կգնամ սովորականից շուտ: 13. Շաբաթ օրը նա շուտ կվերջացնի աշխատանքը և կայցելի մեզ: 14. Նա կգա մի ժամից հետո: 15. Մենք արագ կգնանք և տեղ կհասնենք ժամանակին: 16. Նրան կհայտնես իմ գալու մասին: 17. Դու ևս կմասնակցես այդ արշավախմբին: 18. Հենց հիմա կգրեմ քո հեռախոսի համարը: 19. Գրադարանից կվերցնեմ ամսագրեր ու գրքեր և այս շաբաթ կպարապեմ տանը:

b. 1. Աշխատանքը ժամանակին կվերջացնեի, եթե չհիվանդանայի: 2. Եթե իմանայի այդ մասին, կօգնեի քեզ: 3. Ժամը վեցին տանը կլինեի, եթե չուշանար: 4. Նա հողվածը ժամանակին կգրեր, եթե խանգարողներ չլինեին: 5. Ես անպայման կասեի քեզ, եթե հանդիպեի: 6. Մենք երեկ անտառ կգնայինք, եթե անձրև չգար:

Chapter 6B

Incentive mood

Հարկադրական եղանակ

Section 168

The incentive mood has two tenses, future and future perfect.

Section 169

The future tense of the incentive mood shows an action which has to happen after the moment of speaking.

Նա պետք է գնա քաղաք: He has to go to town. Աշխատանքը պետք է ավարտեն այսօր: I must finish the work today.

The future tense of the incentive mood forms by means of the modal particle պիտի or պետք է (must, has to), which is put before the personal form of the future tense of the optative mood.

Future of optative mood Future of incentive mood

Sing. Sing.

1. խոսեն գնամ պիտի խոսեն պիտի գնամ 2. խոսես գնաս պիտի խոսես պիտի գնաս 3. խոսի գնա պիտի խոսի պիտի գնա

Plur. Plur.

1. խոսենք գնանք պիտի խոսենք պիտի գնանք 2. խոսեք գնաք պիտի խոսեք պիտի գնաք 3. խոսեն գնան պիտի խոսեն պիտի գնան

Section 170

The future perfect of the incentive mood shows an action which had to happen in the past.

Երեկ նա պիտի գնար քաղաք: He had to go to town yesterday. Աշխատանքը պիտի ավարտեի ժամը 6-ին: I had to finish the work at 6 o'clock.

The future perfect of the incentive mood forms by means of the modal particle պիտի or պետք է and personal forms of the future perfect of the optative mood.

Future perfect of incentive mood

Sing. Sing.

1. պիտի խոսեի I had to speak 1. պիտի գնայի I had to go 2. պիտի խոսեիր you had to speak 2. պիտի գնայիր you had to go 3. պիտի խոսեր he had to speak 3. պիտի գնար he had to go

Plur. Sing.

1. պիտի խոսեինք we had to speak 1. պիտի գնայինք we had to go 2. պիտի խոսեիք you had to speak 2. պիտի գնայիք you had to go 3. պիտի խոսեին they had to speak 3. պիտի գնային they had to go

Note: Modal particle պիտի or պետք է are written separately and can be separated from the conjugating form of the verb by other parts of the sentence. E.g., Այսօր ես պիտի գնամ Մոսկվա: Ես պիտի այսօր Մոսկվա գնամ:

Ex. 260

Conjugate the following verbs in form of incentive mood.

թարգմանել, ուրախանալ.

Ex. 261

Translate into English.

1. Այսօր պիտի գնամ գրադարան: 2. Դու պիտի ուշադիր լսես դասախոսությունները: 3. Նա պիտի գա ինձ մոտ: 4. Ես պիտի աշխատեմ գյուղում: 5. Դու պիտի մնայիր տանը: 6. Պիտի սպասեք քո ընկերոջը: 7. Այսօր երեկոյան պիտի հանդիպեմ նրան: 8. Նրանք այդ մասին պետք է գրեին ինձ: 9. Կարծում եմ, որ նա պիտի հասկանա իմ դրությունը: 10. Դու այդ գործը անպայման պիտի վերջացնես այսօր: 11. Նա պիտի կարդար այդ հոդվածը: 12. Ամառը պիտի գնամ Կիրովական: 13. Նրանք պիտի կատարեին իրենց խոստումը: 14. Դուրը պիտի փակեիր: 15. Դուրը պիտի բացեիր այս բանալիով: 16. Այսօր պիտի հեռագիր ստանամ: 17. Ժամը 8-ին նա գրադարանում պիտի լինի: 18. Ինձ ես պիտի ասեր այդ մասին: 19. Այդ բանաստեղծությունը պիտի անգիր սովորեք: 20. Քերականական կանոնը նա մի անգամ ես պետք է բացատրեր: 21. Այդ գիրքը պիտի տայիր ինձ: 22. Նրա հետ պիտի խորհրդակցենք մեր հետագա աշխատանքների մասին:

Ex. 259

Translate into Armenian and underline forms of the incentive mood.

1. I am to go to Moscow this summer. 2. She has to fulfil my request. 3. You had to do this work yesterday. 4. Young actors were to play in the play. 5. All the students are to go for sports. 6. We were to come back from probation period on September 15. 7. The professor is to read a lecture about M. Gorki's works. 8. You were to take the Armenian language exam the 15th of January. 9. I have to know this for sure. 10. You must always remember about this. 11. She should read this book. Imperative mood

Imperative Mood

Հրամայական եղանակ

Section 171

The imperative mood shows order, request, inducement to accomplishment of the action.

Գնա տուն, պատրաստիր՝ դասերդ:

Go home, do your lessons.

Պայքարեցեք ուսման բարձրա (not: բարձր?) որակի համար:

Struggle for high quality of study.

In Armenian, the imperative mood has only the form of second person singular and plural. Forms of the imperative mood form in the following ways:

a. For simple verbs the singular of the imperative mood is formed by means of ending իր (for verbs of first conjugation) and ա (for verbs of second conjugation), which join to the infinitive stem.

Infinitive Infinitive stem Second person sing. of imperative mood First conj.

գրել to write գր- գրի'ր write խոսել to speak խոս- խոսի'ր speak երգել to sing երգ- երգի'ր sing վազել to run վազ- վազի'ր run

Second conj.

խաղալ to play խաղ- խաղա' play կարդալ to read կարդ- կարդա' read մնալ to stay մն- մնա' stay գնալ to go գն- գնա' go

b. Note: In spoken language verbs of first conjugation take ending ի instead of իր - խոսի', գրի', երգի', etc.

c. Simple verbs of both first and second conjugation form the plural of the imperative mood by means of ending եք, which joins to the past perfect stem.

Infinitive Past perfect stem Plural of imperative mood

գրել գրեց- գրեցե՛ք խոսել խոսեց- խոսեցե՛ք երգել երգեց- երգեցե՛ք վազել վազեց- վազեցե՛ք խաղալ խաղաց- խաղացե՛ք կարդալ կարդաց- կարդացե՛ք մնալ մնաց- մնացե՛ք գնալ գնաց- գնացե՛ք

Note: Verbs of first conjugation can take the ending եք instead of եցեք, e.g., գրեք, խոսեք, երգեք, վազեք, etc.

The negative conjugation of imperative mood forms by means of particle մի, which is put before the verb and is written separately.

The negative conjugation of the imperative mood forms:

a. In the singular by means of particle մի and the positive form of the imperative mood.

Positive Negative

գրիր write մի՛ գրիր don't write լսիր listen մի՛ լսիր don't listen նստիր sit մի՛ նստիր don't sit խոսիր speak մի՛ խոսիր don't speak խաղա play մի՛ խաղա don't play մնա stay մի՛ մնա don't stay գնա go մի՛ գնա don't go

b. In the plural by means of մի and a special form of the imperative mood, formed by replacing the ending լ of the infinitive with ք.

Infinitive Negative form of imperative mood

գրել to write մի՛ գրեք do not write խոսել to speak մի՛ խոսեք do not speak սիրել to love մի՛ սիրեք do not love վազել to run մի՛ վազեք do not run խաղալ to play մի՛ խաղացեք do not play մնալ to stay մի՛ մնացեք do not stay գնալ to go մի՛ գնացեք do not go

Forms of imperative mood carry stress, which in positive forms falls on the vowel of last syllable, and in negative forms- on the particle մի. Stress is marked in the written language, e.g. խոսի՛ր- մի՛ խոսիր, խոսեցե՛ք- մի՛ խոսեցեք, կարդա՛- մի՛ կարդա, կարդացե՛ք- մի՛ կարդացեք:

(On the web I have come across forms like խոսի՛նք, could this be a we-form of the imperative (let's speak)? Or is it West-Armenian? How do you say things like "let's speak", "let me write", etc.?)

Ex. 263

Read and point out the verbs in imperative mood.

Հեռացի՛ր աշուն, համրորեն լացող, Ողջույն քեզ, մրրիկ ահեղաշաչյուն, Ողջույն քեզ, կովի առաջին հնչյուն՝ Լույսի պես կարող, խոսքի պես խոցող.

Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ, Բորբոքի՛ր սիրտս, ազատության երգ, Շողա՛ մռայլում, ըղձալի եզերք, Որոտա՛, շաչիր, փոթորկաբեր ամպ:

Վ. Տերյան

Ex. 264

Make up sentences with the verbs լսել, խաղալ, կատարել, զգալ in imperative mood.

E.g. Լսիր մեծերին.

Ex. 265

Copy out, write negative forms of the imperative mood next to the positive forms.

գրի՛ր ծիծաղեցե՛ք խոսի՛ր կատարեցե՛ք սովորի՛ր մտածեցե՛ք մնա՛ զգացե՛ք խաղա՛ մնացե՛ք վագեցե՛ք խաղացե՛ք

E.g., գրիր - մի գրիր

Ex. 266

Translate into English.

1. Փակիր լուսամուտը: 2. Կանչիր բժշկին: 3. Վազիր ընկերներին մոտ: 4. Մաքրեցեք ապակիները: 5. Գնացեք պարտեզ: 6. Հայտնեցեք նաև նրան: 7. Աշխատանքը ավարտեցեք ժամանակին: 8. Գնա և խոսիր դեկանի հետ: 9. Մնա այստեղ և սպասիր ինձ: 10. Կարդա այդ տեքստը և թարգմանիր: 11. Աշխատիր ժամանակին տեղ հասնել:

Ex. 267

Translate into Armenian.

1. Bring the paper. 2. Send the letter. 3. Listen to the older. 4. Sit quiet and write carefully. 5. Go home and bring my books. 6. Wait for me. 7. Do not speak loudly. 8. Do not disturb him. 9. Read this article. 10. Solve the equation quickly. 11. Hand me your book. 12. Do not walk so fast. 13. Do not wait for friends.

Negative conjugation

Ժխտական եղանակ

Section 172

The negative conjugation of all moods, except the imperative mood, forms by means of negative particle չ.

In the forms of compound tenses, particle չ joins the auxiliary verb, while the auxiliary verb here is used before the adverbial participle - participle forms.

Positive conj. Negative conj.

Present tense

1. գրում եմ I write չեմ գրում I don't write 2. գրում ես you write չես գրում you don't write 3. գրում է he writes չի գրում he doesn't write

Past Imperfective

1. գրում էի I was writing չէի գրում I wasn't writing 2. գրում էիր you - - չէիր գրում you - - 3. գրում էր he - - չէր գրում he - -

Past tense

1. գրել եմ I wrote չեմ գրել I didn't write 2. գրել ես you wrote չես գրել you didn't write 3. գրել է he wrote չի գրել he didn't write

Note: In negative forms of effective tenses the auxiliary verb is usually used after the adverbial participle-forms, e.g., նստած չեմ, կանգնած չեմ, գրված չէր, etc.

Section 173

In simple tenses the negative particle չ directly joins the verb.

Positive conj. Negative conj.

Past perfect

1. գրեցի չգրեցի 2. գրեցիր չգրեցիր 3. գրեց չգրեց

1. գրեցինք չգրեցինք 2. գրեցիք չգրեցիք 3. գրեցին չգրեցին

Optative mood

1. գրեմ չգրեմ 2. գրես չգրես 3. գրի չգրի

1. գրենք չգրենք 2. գրեք չգրեք 3. գրեն չգրեն

Section 174

In negative forms of the incentive mood չ usually joins the modal particle պիտի - պետք է, but it can also join the conjugating verb.

Positive conj. Negative conj.

1. պիտի գրեմ I have to write չպիտի գրեմ պիտի չգրեմ I don't have to write 2. պիտի գրես չպիտի գրես պիտի չգրես 3. պիտի գրի չպիտի գրի պիտի չգրի

1. պիտի գրենք չպիտի գրենք պիտի չգրենք 2. պիտի գրեք չպիտի գրեք պիտի չգրեք 3. պիտի գրեն չպիտի գրեն պիտի չգրեն

Section 175

The conditional mood has a special negative conjugation. It forms by means of negative forms of the auxiliary verb and the negative adverbial participle. (And, apparently, the modal particle կ is not used.) Future Positive conj. Negative conj. of conditional mood

1. կգրեմ I will write չեմ գրի I will not write 2. կգրես չես գրի 3. կգրի չի գրի

1. կգրենք չենք գրի 2. կգրեք չեք գրի 3. կգրեն չեն գրի

Future perfect 1. կգրեի I would write չէի գրի I would not write 2. կգրեիր չէիր գրի 3. կգրեր չեր գրի

1. կգրենիք չէինք գրի 2. կգրեիք չէիք գրի 3. կգրեին չէին գրի

Section 176

The negative form of the imperative mood forms by means of particle մի.

Ex. 268

Write in negative form. գնալու եմ կարդացել եմ գնալու ես կարդացել ես գնալու է կարդացել է
գնացինք հայտնենք գնացիք հայտնեք գնացին հայտնեն

պիտի ասեմ խոսում էի պիտի ասես խոսում էիր պիտի ասի խոսում էր

կպատմեմ կգայի կպատմես կգայիր կպատմի կգար

Ex. 269

Copy out replacing the positive form of verbs with the negative.

1. Կոլտնտեսականները այսօր հնձում են ցորենի արտը: 2. Եղբայրս վառում էր վառարանը: 3. Երեկոները գնում էր գրադարան և պատրաստում դասերս: 4. Նա ցանկացել է խոսել այդ մասին: 5. Մենք նրանից շատ բան էինք պահանջել: 6. Վաղը նա թռչելու է Լենինգրադ: 7. Նա ավարտելու էր իր գործերը: 8. Նա նստած է: 9. Նրան հրավիրեցի մեր տուն: 10. Գնամ տուն: 11. Խոսիր նրա հետ: 12. Վաղը դու այնտեղ կգնաս: 13. Ես քեզ կայարանում կդիմավորեմ: 14. Այսօր պիտի գնաս գյուղ: 15. Դու պիտի պատմեիր նրան: 16. Այսօր ձյուն կգա: 17. Անձրև է եկել: 18. Մնացինք անտառում: 19. Գնացինք նրանց մոտ: 20. Կարդա տեքստը և թարգմանիր: 21. Մտածեցեք դրա մասին: 22. Մնացեք տանը: 23. Նա աշխատում է մեր գործարանում: 24. Նա ապրել է այս տանը: 25. Նա կպատմի ինձ իր գործերի մասին: 26. Դու խնդրեցիր ինձ օգնել քեզ: 27. Դու բարձր ես խոսում:

E.g.: 1. Կոլտնտեսականներն այսօր չեն հնձում ցորենի արտը:

Table of conjugation of simple verbs

Պարզ բայերի խոնարհման աղյուսակ

Impersonal forms Դերբայներ

Անորոշ դերբայ	infinitive	սիրել	գնալ
Անկատար դերբայ	present participle	սիրում, սիրելիս	գնում, գնալիս
Ապառնի դերբայ	future participle	սիրելու	գնալու
Վաղակատար դերբայ	past participle	սիրել	գնացել
Հարակատար դերբայ	effective participle	սիրած	գնացած
Ենթակայական դերբայ	subjective participle	սիրող	գնացող
Ժխտական դերբայ	negative participle	(չեմ) սիրի	(չեմ) գնա

Personal forms

Դիմավոր ձևեր

Indicative mood - Սահմանական եղանակ						
Per- son	Positive conjugation Դրական խոնարհում			Negative conjugation Ժխտական խոնարհում		
Present tense - Ներկա ժամանակ						
S. 1.	սիրում եմ	I love	գնում եմ	I go	չեմ սիրում	չեմ գնում
2.	սիրում ես	you love	գնում ես	you go	չես սիրում	չես գնում
3.	սիրում է	he loves	գնում է	he goes	չի սիրում	չի գնում
P. 1.	սիրում ենք	we love	գնում ենք	we go	չենք սիրում	չենք գնում
2.	սիրում եք	you love	գնում եք	you go	չեք սիրում	չեք գնում
3.	սիրում են	they love	գնում են	they go	չեն սիրում	չեն գնում
Past imperfective - Անցյալի անկատար ժամանակ						
S. 1.	սիրում էի	I loved	գնում էի	I was going	չէի սիրում	չէի գնում
2.	սիրում էիր	you loved	գնում էիր	you were going	չէիր սիրում	չէիր գնում
3.	սիրում էր	he loved	գնում էր	he was going	չէր սիրում	չէր գնում
P. 1.	սիրում էինք	we loved	գնում էինք	we were going	չէինք սիրում	չէինք գնում
2.	սիրում էիք	you loved	գնում էիք	you were going	չէիք սիրում	չէիք գնում
3.	սիրում էին	they loved	գնում էին	they were going	չէին սիրում	չէին գնում
Future tense - Ապառնի ժամանակ						
S. 1.	սիրելու եմ	I will love	գնալու եմ	I will go	չեմ սիրելու	չեմ գնալու
2.	սիրելու ես	you will love	գնալու ես	you will go	չես սիրելու	չես գնալու
3.	սիրելու է	he will love	գնալու է	he will go	չի սիրելու	չի գնալու
P. 1.	սիրելու ենք	we will love	գնալու ենք	we will go	չենք սիրելու	չենք գնալու
2.	սիրելու եք	you will love	գնալու եք	you will go	չեք սիրելու	չեք գնալու
3.	սիրելու են	they will love	գնալու են	they will go	չեն սիրելու	չեն գնալու
Future perfect - Անցյալի ապառնի ժամանակ						
S. 1.	սիրելու էի	I should have loved	գնալու էի	I should have gone	չէի սիրելու	չէի գնալու
2.	սիրելու էիր	you - -	գնալու էիր	you - -	չէիր սիրելու	չէիր գնալու
3.	սիրելու էր	he - -	գնալու էր	he - -	չէր սիրելու	չէր գնալու
P. 1.	սիրելու էինք	we should have loved	գնալու էինք	we should have gone	չէինք սիրելու	չէինք գնալու
2.	սիրելու էիք	you - -	գնալու էիք	you - -	չէիք սիրելու	չէիք գնալու
3.	սիրելու էին	they - -	գնալու էին	they - -	չէին սիրելու	չէին գնալու
Past tense - Վաղակատար ժամանակ						
S. 1.	սիրել եմ	I loved	գնացել եմ	I went	չեմ սիրել	չեմ գնացել
2.	սիրել ես	you loved	գնացել ես	you went	չես սիրել	չես գնացել
3.	սիրել է	he loved	գնացել է	he went	չի սիրել	չի գնացել

P. 1. սիրել ենք	we loved	գնացել ենք	we went	չենք սիրել	չենք գնացել
2. սիրել եք	you loved	գնացել եք	you went	չեք սիրել	չեք գնացել
3. սիրել են	they loved	գնացել են	they went	չեն սիրել	չեն գնացել

Plusquamperfect tense - Անցյալի վաղակատար ժամանակ

S. 1. սիրել էի	I had loved	գնացել էի	I had gone	չէի սիրել	չէի գնացել
2. սիրել էիր	you - -	գնացել էիր	you - -	չէիր սիրել	չէիր գնացել
3. սիրել էր	he - -	գնացել էր	he - -	չէր սիրել	չէր գնացել

P. 1. սիրել էինք	we had loved	գնացել էինք	we had gone	չէինք սիրել	չէինք գնացել
2. սիրել էիք	you - -	գնացել էիք	you - -	չէիք սիրել	չէիք գնացել
3. սիրել էին	they - -	գնացել էին	they - -	չէին սիրել	չէին գնացել

Past effective tense - Հարակատար ժամանակ

S. 1. սիրված եմ	I am loved	զարմացած եմ	I am surprised	սիրված չեմ	զարմացած չեմ
2. սիրված ես	you - -	զարմացած ես	you - -	սիրված չես	զարմացած չես
3. սիրված է	he - -	զարմացած է	he - -	սիրված չէ	զարմացած չէ

P. 1. սիրված ենք	we are loved	զարմացած ենք	we are surprised	սիրված չենք	զարմացած չենք
2. սիրված եք	you - -	զարմացած եք	you - -	սիրված չեք	զարմացած չեք
3. սիրված են	they - -	զարմացած են	they - -	սիրված չեն	զարմացած չեն

Past perfect effective - Անցյալի հարակատար ժամանակ

S. 1. սիրված էի	I was loved	զարմացած էի	I was surprised	սիրված չէի	զարմացած չէի
2. սիրված էիր	you - -	զարմացած էիր	you - -	սիրված չէիր	զարմացած չէիր
3. սիրված էր	he - -	զարմացած էր	he - -	սիրված չէր	զարմացած չէր

P. 1. սիրված էինք	we were -	զարմացած էինք	we were -	սիրված չէինք	զարմացած չէինք
2. սիրված էիք	you - -	զարմացած էիք	you - -	սիրված չէիք	զարմացած չէիք
3. սիրված էին	they - -	զարմացած էին	they - -	սիրված չէին	զարմացած չէին

Past perfect - Անցյալ կատարյալ

S. 1. սիրեցի	I came to love	գնացի	I went	չսիրեցի	չգնացի
2. սիրեցիր	you - -	գնացիր	you went	չսիրեցիր	չգնացիր
3. սիրեց	he - -	գնաց	he went	չսիրեց	չգնաց

P. 1. սիրեցինք	we - -	գնացինք	we went	չսիրեցինք	չգնացինք
2. սիրեցիք	you - -	գնացիք	you went	չսիրեցիք	չգնացիք
3. սիրեցին	they - -	գնացին	they went	չսիրեցին	չգնացին

Imperative Mood - Հրամայական եղանակ

S. 2.	սիրի՛ր	love	գնա՛	go	մի՛ սիրիր	մի՛ գնա
P. 2.	սիրեցե՛ք (սիրե՛ք)	love	գնացե՛ք	go	մի՛ սիրեք	մի՛ գնացեք

Optative Mood - Ըղձական եղանակ

Future tense - Ապառնի ժամանակ

S. 1.	սիրեմ	I would love	գնամ	I would go	չսիրեմ	չգնամ
2.	սիրես	you - -	գնաս	you - -	չսիրես	չգնաս
3.	սիրի	he - -	գնա	he - -	չսիրի	չգնա
P. 1.	սիրենք	we would love	գնանք	we would go	չսիրենք	չգնանք
2.	սիրեք	you - -	գնաք	you - -	չսիրեք	չգնաք
3.	սիրեն	they - -	գնան	they - -	չսիրեն	չգնան

Future perfect - Անցյալի ապառնի ժամանակ

S. 1.	սիրեի	If I had loved	գնայի	If I had gone	չսիրեի	չգնայի
2.	սիրեիր	you - -	գնայիր	you - -	չսիրեիր	չգնայիր
3.	սիրեր	he - -	գնար	he - -	չսիրեր	չգնար
P. 1.	սիրեինք	we - -	գնայինք	we - -	չսիրեինք	չգնայինք
2.	սիրեիք	you - -	գնայիք	you - -	չսիրեիք	չգնայիք
3.	սիրեին	they - -	գնային	they - -	չսիրեին	չգնային

Conditional Mood - Պայմանական եղանակ

Future tense - Ապառնի ժամանակ

S. 1.	կսիրեմ	I will love	կգնամ	I will go	չեմ սիրի	չեմ գնա
2.	կսիրես	you - -	կգնաս	you - -	չես սիրի	չես գնա
3.	կսիրի	he - -	կգնա	he - -	չի սիրի	չի գնա
P. 1.	կսիրենք	we will love	կգնանք	we will go	չենք սիրի	չենք գնա
2.	կսիրեք	you - -	կգնաք	you - -	չեք սիրի	չեք գնա
3.	կսիրեն	they - -	կգնան	they - -	չեն սիրի	չեն գնա

Future perfect tense - Անցյալի ապառնի ժամանակ

S. 1.	կսիրեի	I would have loved	կգնայի	I would have gone	չէի սիրի	չէի գնա
2.	կսիրեիր	you - -	կգնայիր	you - -	չէիր սիրի	չէիր գնա
3.	կսիրեր	he - -	կգնար	he - -	չէր սիրի	չէր գնա
P. 1.	կսիրեինք	we - -	կգնայինք	we - -	չէինք սիրի	չէինք գնա
2.	կսիրեիք	you - -	կգնայիք	you - -	չէիք սիրի	չէիք գնա
3.	կսիրեին	they - -	կգնային	they - -	չէին սիրի	չէին գնա

Incentive Mood - Հարկադրական եղանակ

Future tense - Ապառնի ժամանակ

S. 1.	պիտի սիրեմ	I must love	պիտի գնամ	I must go	չպիտի սիրեմ	չպիտի գնամ
2.	պիտի սիրես	you - -	պիտի գնաս	you - -	չպիտի սիրես	չպիտի գնաս
3.	պիտի սիրի	he - -	պիտի գնա	he - -	չպիտի սիրի	չպիտի գնա

P. 1.	պիտի սիրենք	we must love	պիտի գնանք	we must go	չպիտի սիրենք	չպիտի գնանք
2.	պիտի սիրեք	you - -	պիտի գնաք	you - -	չպիտի սիրեք	չպիտի գնաք
3.	պիտի սիրեն	they - -	պիտի գնան	they - -	չպիտի սիրեն	չպիտի գնան
Future perfect tense - Անցյալի ապառնի ժամանակը						
S. 1.	պիտի սիրեի	I had to love	պիտի գնայի	I had to go	չպիտի սիրեի	չպիտի գնայի
2.	պիտի սիրեիր	you - -	պիտի գնայիր	you - -	չպիտի սիրեիր	չպիտի գնայիր
3.	պիտի սիրեր	he - -	պիտի գնար	he - -	չպիտի սիրեր	չպիտի գնար
P. 1.	պիտի սիրեինք	we - -	պիտի գնայինք	we - -	չպիտի սիրեինք	չպիտի գնայինք
2.	պիտի սիրեիք	you - -	պիտի գնայիք	you - -	չպիտի սիրեիք	չպիտի գնայիք
3.	պիտի սիրեին	they - -	պիտի գնային	they - -	չպիտի սիրեին	չպիտի գնային

(Question: don't the entries listed for the 'Past effective tense' in fact give the forms of the *passive* past effective tense?)

All the simple verbs of the first conjugation conjugate the same way as the verb սիրել to love, e.g., ազատել to free, ազդել to influence, աճել to grow, անջատել to separate, արգելել to forbid, բաժանել to divide, բռնել to catch, գլորել to roll, նայել to watch, երգել to sing, զինել to arm, ընդունել to get/receive, թրջել to wet, լուծել to solve, խոսել to speak, ծլել to sprout, կարել to saw, կոտրել to break, հառաչել to sigh, ձգտել to seek, մաքրել to clean, ներկել to paint, շոյել to pet, չվել to fly over, պառկել to lie, ջրել to water, սահել to slip, սովորել to study, վնասել to injure, տնկել to plant, փաթաթել to wind round, քաշել to pull and others.

Passive nouns with suffix վ also change by the first conjugation, e.g., սիրվել to be loved, գրվել to be written, ջարդվել to be broken, կարդացվել to be read, ազատվել to be freed, բաժանվել to be separate, հագնվել to get dressed, etc.; and frequentative verbs թռչկոտել to jump, կոտրոտել to break, and others.

Simple verbs of the second conjugation change the same way as the verb գնալ, e.g., աղալ to grind, բաղձալ to wish, գթալ to pity, եռալ to boil, երևալ to show up, զգալ to feel, զոջալ to feel sorry, թնդալ to thunder, թռվոալ to fly, ինդալ to laugh, ծլվլալ to twitter, կռնչալ to croak, մղկտալ to ache, մնալ to stay, նվալ to whimper, շողալ to sparkle, պսպղալ to shine, սուրալ to speed, քրքրալ to purl, and others.

Ex. 270

Conjugate in all moods and tenses the verbs գովել, ծաղկել, ջարդվել, գնալ, ժպտալ.

Ex. 271

Tell the mood, tense, person and number of verbs.

Տղմուտ գետի ափին

On the bank of the river Tghmut

Այս դեպքը կատարվել է մեզանից հազար հինգ հարյուր տարի առաջ:

Այդ ժամանակ, երբ հայերը իրենց երկրում զբաղված էին խաղաղ աշխատանքով, սուրհանդակ եկավ Արտաշատ՝ Հայաստանի մայրաքաղաքը, և հայտնեց, որ պարսից զորքը պատրաստվում է հարձակվելու Հայաստանի վրա: Հայերը լավ գիտեին, որ պարսից թագավորը ուզում է իրենց էլ ստրկացնել:

Այս լուրն իմանալուն պես, հայ նախարարները, զորավար Վարդան Մամիկոնյանի կոչով, ինենց զորքի հետ հավաքվեցին Արտաշատում: Այնտեղից զորքը շտապեց Հայաստանի սահմանը, որպեսզի թշնամուն հարվածի հենց սահմանի վրա և թույլ չտա Հայաստան մտնելու:

Շուտով հայոց զորքը հասավ Ավարայր կոչվող դաշտը, որ գտնվում էր Տղմուտ գետի ափին: Այդ գետի մյուս ափին գտնվում էր թշնամու զորքը:

Մութն ընկնելուն պես, Վարդանն իր զորքը դասավորեց ու սպասեց առավոտյան կովին: Հայոց զորքերի դրությունը ծանր էր. նրանք պետք է կռվեին իրենց թվով մեծ և ուժեղ քանակի դեմ: Թշնամու զորքի մեջ կային նաև փղեր: Այդ փղերի մեջքին շինված էին աշտարակներ, որոնց մեջ զինվորներ էին տեղավորված: Ճակատամարտի ժամանակ և փղերն էին կռվում իրենց կնճիթներով, և նրանց վրա նստած զինվորները:

Ըստ Դ. Դեմիրճյանի "Վարդանանք" վեպից

Verbs with suffixes ն, չ, աւն, են and their conjugation

Սուկաճանցավոր բայերը և նրանց խոնարհումը

Section 177

The verbs with suffixes ն, չ, աւն, են have a special type of conjugation. These suffixes, except աւն, have lost their original meaning and in the modern Armenian language do not give any new meaning to the verb. Suffix աւն, which is mostly particular to verbs of the middle voice, expresses formation or existence of somebody or something, e.g., մեծանալ to increase, երջանկանալ to become happy, հզորանալ to become stronger, etc. (As I understand it, they are intransitive and express a transformation of the subject.)

Section 178

The following verbs have suffixes ն and չ:

անցնել to pass առնել to take, to buy բուսնել to grow գտնել to find ելնել to get up ընկնել to fall down թողնել to abandon իջնել to go down հագնել to dress հասնել to reach հեծնել to ride մեռնել to die մտնել to enter տեսնել to see դիպչել to touch թռչել to fly կորչել to get lost հանգչել to become extinct սառչել to freeze ուռչել to swell կպչել to stick

The conjugation of verbs with suffixes ն and չ has the following peculiarities:

- In the formation of the past tense and imperative mood forms, suffixes ն and չ fall out, e.g., մտնել (to enter) - մտել եմ, մտած եմ, մտա - մտանք, մտիր - մտեք, etc.
- The imperative mood singular takes the ending իր, and in plural the ending եք. In everything else the conjugation of verbs with suffixes ն and չ coincides with the first conjugation of simple verbs.

Impersonal forms of verbs with suffixes ն and չ

Դերբայներ

Անորոշ դերբայ infinitive գտնել - to find թռչել - to fly Անկատար դերբայ present participle գտնում թռչում գտնելիս թռչելիս Ապառնի դերբայ future participle գտնելու թռչելու Վաղակատար դերբայ

past participle գտել թռել Հարակատար դերբայ effective participle գտած թռած Ենթակայական դերբայ
subjective participle գտնող թռչող Ժխտական դերբայ negative participle գտնի թռչի

Past perfect

Անցյալ կատարյալ

sing. plur.

1. գտա I found գտանք we found 2. գտար you found գտաք you found 3. գտավ he found գտան they found

1. թռա I flew թռանք we flew 2. թռար you flew թռաք you flew 3. թռավ he flew թռան they flew

Imperative mood

Հրամայական եղանակ

sing. plur.

գտի՛ր find գտե՛ք find մի՛ գտիր do not find մի՛ գտեք do not find թռի՛ր fly թռե՛ք fly մի՛ թռիր do not fly
մի՛ թռեք do not fly

Note: The verb թողնել (to leave) in past perfect takes endings եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին.

Section 179

Few verbs only have suffix են.

գիտենալ to know պարծենալ to brag կամենալ to wish վախենալ to be afraid հագնալ to be sated
ուզենալ (not: ուզել?) to want մերձենալ to become close ունենալ to have

The verbs with suffix ան make a larger group.

աղքատանալ to grow poorer ամրանալ to become stronger աշխուժանալ to become animated ավելանալ
to increase բազմանալ to increase բարձրանալ to rise գեղեցկանալ to become pretty լուսանալ to become
lighter ծերանալ to become older կուրանալ to become blind հարստանալ to become rich հիմարանալ to
become mad, go mad ձանձրանալ to get bored մեծանալ to grow up միանալ to join շատանալ to increase
դժբախտանալ to become unhappy զայրանալ to become angry զգաստանալ to prick up one's ears
ընթանալ to walk իրականանալ to fulfil լայնանալ to become wider լողանալ to swim ստրկանալ to
become a slave վատանալ to worsen վերջանալ to finish տաքանալ to get hot ուժեղանալ to become
stronger ուշանալ to be late փոքրանալ to decrease

In the conjugation of the verbs with suffixes են and ան there are the following peculiarities:

a. In the past perfect tense and in other forms formed from it (past participle, effective participle, subjective
participle, imperative mood) the suffixes են and ան correspondingly change into եց and աց, e.g., մոտենալ
(to come closer), մեծանալ (to grow), մոտեցել, մեծացել (past part.), մոտեցած, մեծացած (effect. part.),
մոտեցա, մեծացա (I pers. sing., past perf. tense), մոտեցիր, մեծացիր (sing., imper. mood).

b. The past perfect tense takes personal endings ա, ար, ավ, անք, աք, ան, e.g., մոտեցա (I came closer),
մոտեցար (you came closer), մոտեցավ (he came closer), մեծացանք (we grew up), մեծացար (you grew
up), մեծացան (they grew up).

c. The forms of the imperative mood in the singular take the ending իր, and in the plural եք, e.g., մոտեցիր, մոտեցեք come close, մեծացիր, մեծացեք grow up.

In all other forms the conjugation of verbs with suffixes են and սն coincides with the second conjugation of simple verbs.

Impersonal forms of verbs

Դերբայներ

Անորոշ դերբայ infinitive բարձրանալ մոտենալ Անկատար դերբայ present participle բարձրանում մոտենում բարձրանալիս մոտենալիս Ապառնի դերբայ future participle բարձրանալու մոտենալու Վաղակատար դերբայ past participle բարձրացել մոտեցել Հարակատար դերբայ effective participle բարձրացած մոտեցած Ենթակայական դերբայ subjective participle բարձրացող մոտեցող Ժխտական դերբայ negative participle բարձրանա մոտենա

Past perfect tense

Անցյալ կատարյալ

sing. plur.

1. բարձրացա I went up բարձրացանք we.. 2. բարձրացար you went up բարձրացաք you.. 3. բարձրացավ he went up բարձրացան they..

1. մոտեցա I came closer մոտեցանք we.. 2. մոտեցար you came closer մոտեցաք you.. 3. մոտեցավ he came closer մոտեցան they..

Imperative mood

Հրամայական եղանակ

բարձրացի՛ր come up բարձրացե՛ք մի՛ բարձրացիր do not come up մի՛ բարձրացեք մի՛ բարձրացիր մի՛ բարձրացեք (This line is the same as the previous.) մոտեցի՛ր come closer մի՛ մոտեցիր մի՛ մոտենա մոտեցե՛ք come closer մի՛ մոտենաք մի՛ մոտեցեք

Ex. 272

Write impersonal forms of verbs տեսնել, կորչել. Conjugate these verbs in past perfect tense.

Ex. 273

Form past participles and effective participles from the verbs.

անցնել, ելնել, ընկնել, հագնել, մեռնել, մտնել, թռչել, կորչել, սառչել, դիպչել.

E.g., անցնել - անցել - անցած.

Ex. 274

Write the verbs in brackets in past perfect tense.

1. Ես (տեսնել) նրան: 2. Նա (հասնել) մեզ: 3. Դուք (մտնել) գետը: 4. Նրանք (թռչել) Մոսկվա: 5. Դու (անցնել) փողոցով: 6. Ես (զտնել) իմ հին ընկերոջը: 7. Լուսյերը (հանգչել): 8. Նրանք ու՛ր (կորչել):

E.g., Ես տեսա նրան:

Ex. 275

Write the verbs in brackets in the past and plusquamperfect tense.

1. Ես (տեսել) նրան: 2. Նա (ընկնել) իմ հետևից: 3. Դու (հագնել) տոնական զգեստ: 4. Նրանք (հասնել) առաջավորներին: 5. Գետերն ու առուները (սառչել): 6. Լույսը (հանգչել):

E.g., Ես տեսել եմ նրան: Ես տեսել էի նրան:

Ex. 276

Conjugate the verbs մտնել, թռչել in all tenses and moods.

Ex. 277

Define mood, tense, person and number of the verbs with suffixes ն and չ.

1. Երբ ներս մտա, վիճաբանությունը դեռ շարունակվում էր: 2. Նա քամու արագությամբ դուրս թռավ: 3. Անցավ մի շաբաթ, և ես նրան դեռ չէի տեսնում: 4. ՄԻ քանի թույլից հետո հասել են զբոսավայրը և այնտեղ հանդիպել իրենց ընկերներին: 5. Ճանապարհն անցնում էր լեռների և կիրճերի միջով: 6. Գետերն ու առուները սառել էին և ծածկվել ձյունով: 7. Նա հագել էր իր տոնական զգեստները: 8. Նա սառույցի վրա սայթաքեց և ցած ընկավ: 9. Իջնում էր իրիկունը, վառվում էին Երևանի լույսերը: 10. Գրքերիցս երկուսը կորել են:

Ex. 278

Write all the impersonal forms of verbs վախենալ, հասկանալ.

Ex. 279

Conjugate the verbs գիտենալ and բազմանալ in the past perfect and in the imperative mood.

Ex. 280

Write past participles, effective and subjective participles of the verbs.

կամենալ, հագնալ, վախենալ, ունենալ, ամրանալ, անհայտանալ, գողանալ, զայրանալ, ընկերանալ, ընտելանալ, հասունանալ, հիվանդանալ, շատանալ, ոչնչանալ.

E.g., վախենալ - վախեցել - վախեցած - վախեցող; ամրանալ - ամրացել - ամրացած - ամրացող.

Ex. 281

Write the verbs in brackets in the corresponding past perfect tense forms.

1. Մենք (մոտենալ) բերդի ավերակներին: 2. Ես (վախենալ) նրա տեսքից: 3. Երեխաները ավելի (աշխուժանալ): 4. Մեքենան առաջ(սլանալ): 5. Մեր ցանկությունները (իրականանալ): 6. Նրանք նստեցին ծառերի տակ և (հանգստանալ): 7. Անջրևը (ուժեղանալ): 8. Նրան տեսնելով՝ դու շատ (ուրախանալ):

E.g., Մենք մոտեցանք բերդի ավերակներին:

Ex. 282

Form the forms of the imperative mood of the verbs.

արդարանալ, հառանալ, անհայտանալ, մոտենալ, հազենալ, գեղեցկանալ.

Ex. 283

Conjugate the verbs լուսանալ, ունենալ in all tenses and moods.

Causal verbs and peculiarities of their conjugation

Պատճառական բայեր և նրանց խոնարհման առանձնակատկույթյունները

Section 180

Suffixes եցն, ացն and ցն give the verb causal meaning and this is why verbs with these suffixes are called causal (պատճառական), e.g., նստել to sit, նստեցնել to seat or place, բարձրանալ to rise, բարձրացնել to raise, ուրախանալ to have fun, ուրախացնել to entertain, etc. Causal verbs form from verbs of middle and partly from active voice. From the simple verbs of first conjugation, and also from verbs with suffix են, causal verbs form by means of suffix եցն, and from verbs of second conjugation by means of ացն. Causal forms of verbs with suffixes ն and չ form by means of suffix ցն.

Causal verbs change by first conjugation.

Simple verbs of first conjugation Causal verbs վազել to run վազեցնել to make run նստել to sit նստեցնել to seat ծիծաղել to laugh ծիծաղեցնել to make laugh լռել to keep silence լռեցնել to make keep silence քնել to sleep քնեցնել to make sleep խոսել to speak խոսեցնել to make speak լսել to listen լսեցնել to make listen սովորել to study սովորեցնել to teach

Verbs of second conjugation Causal verbs ամուսնանալ to get married ամուսնացնել to marry off խաղալ to play խաղացնել to make play զգալ to feel զգացնել to make feel մեծանալ to increase (intr.) մեծացնել to increase (trans.) բարձրանալ to rise բարձրացնել to raise լայնանալ to become wider լայնացնել to make wider

Verbs with suffixes ն and չ Causal verbs հագնել to dress հագցնել to dress (somebody) մեռնել to die մեռցնել to kill մտնել to enter մտցնել to bring in թռչել to fly թռցնել to carry on wings կորչել to get lost կորցնել to lose հանգչել to go out հանգցնել to turn off

Note:

1. Almost all the verbs with suffix աւն form causal forms. 2. As an exception, the verb իջնել (to go down) takes the causal suffix եցն, and not ցն: իջեցնել (to bring down).

A number of verbs, generally from active voice, form causal forms from the infinitive and the verb տալ (to give), e.g.

զարդարել to decorate զարդարել տալ to have decorate բերել to bring բերել տալ to have bring տանել to take տանել տալ ... գրել to write գրել տալ ծեծել to beat ծեծել տալ շինել to make շինել տալ

The word տալ can also be used with causal verbs with suffixes, e.g., խոսեցնել տալ to make speak, սովորեցնել տալ to make to study, մոռացնել տալ to make to forget, etc. When the mentioned type of causal verb is conjugated, only the verb տալ changes, e.g.

զարդարել եմ տալիս I made (them) decorate զարդարել եմ տվել զարդարել կտամ

Section 181

In the conjugation of causal verbs with suffixes եցն, ացն, ցն there are some peculiarities.

a. The past perfect tense and the forms formed from its stem (past participle, effective participle and imperative mood) change their final causal suffix ն into ր, e.g., բարձրացնել (to raise) (past part.), բարձրացրել (effect. part.), բարձրացրած (past perf., I pers, sing.), բարձրացրու (imper. mood).

b. The past perfect tense takes the endings ի, իր, եց, ինք, իք, ին, e.g.

բարձրացրի I raised բարձրացրիր you raised բարձրացրեց he, she, it raised բարձրացրինք we raised
բարձրացրիք you raised բարձրացրին they raised

c. The imperative forms in singular take the ending ու, and in plural the ending եք, e.g., բարձրացրու, բարձրացրեք raise.

Impersonal forms of causal verbs

Պատճառական բայերի դերբայական ձևերը

Դերբայներ impersonal forms եցն ացն ցն

Անորոշ դերբայ infinitive քնեցնել բարձրացնել հանգցնել Անկատար դերբայ present participle քնեցնում բարձրացնում հանգցնում քնեցնելիս բարձրացնելիս հանգցնելիս Ապառնի դերբայ future participle քնեցնելու բարձրացնելու հանգցնելու Վաղակատար դերբայ past participle քնեցնրել բարձրացրել հանգցրել Հարակատար դերբայ effective participle քնեցրած բարձրացրած հանգցրած Ենթակայական դերբայ subjective participle քնեցնող բարձրացնող հանգցնող Ժխտական դերբայ negative participle քնեցնի բարձրացնի հանգցնի

Past perfect

Անցյալ կատարյալ

sing. plur.

1. քնեցրի I put to sleep քնեցրինք we put to sleep 2. քնեցրիր you put to sleep քնեցրիք you put to sleep 3. քնեցրեց he put to sleep քնեցրին they put to sleep

1. բարձրացրի I raised բարձրացրինք we raised 2. բարձրացրիր you raised բարձրացրիք you raised 3. բարձրացրեց he raised բարձրացրին they raised

Imperative mood

Հրամայական եղանակ

Positive form Singular քնեցրու' put to sleep բարձրացրու' raise Plural քնեցրե՛ք բարձրացրե՛ք

Negative form Singular մի' քնեցրու do not put to sleep մի' բարձրացրու do not raise Plural մի' քնեցրեք մի' բարձրացրեք

հազնցրու' turn off հազնցրե՛ք turn off մի' հանգցրու do not turn off մի' հանգցրե՛ք do not turn off

Ex. 284

Form the causal forms of the following verbs.

ամաչել, հիշել, մրսել, շտապել, քրտնել, փախչել, դողալ, լայնանալ, կորչել, հարստանալ, բարձրանալ, մեծանալ, ստրկանալ, հիվանդանալ, ծիծաղել, հագնել, խմել, շիկանալ, կշտանալ, բարեկամանալ:

E.g., ամաչել - ամեչեցնել, դողալ - դողացնել:

Ex. 285

Form the causal forms of the following verbs by means of verb տալ and translate into English.

բերել, կշռել, նվագել, ուղարկել, սիրել, կատարել, ծխել, ուղղել, տպագրել, նկարել, մաքրել, զարդարել:

Ex. 286

Form all the impersonal forms of the verbs լայնացնել, հիշեցնել, հանգցնել:

Ex. 287

Form the past participle and effective participle forms.

վերջացնել հասկացնել ամրացնել մոռացնել վազեցնել մերկացնել հիշեցնել հեռացնել կորցնել միացնել մեղմացնել հաշտեցնել խմեցնել

E.g., վերջացնել - վերջացրել - վերջացրած

Ex. 288

Conjugate the causal verbs ամրացնել, իջեցնել, կորցնել in the past perfect tense.

Ex. 289

Form the forms of the imperative mood of the verbs ամրացնել, միացնել, նստեցնել, թոցնել:

Ex. 290

Conjugate the verbs մոտեցնել, հասկացնել, փախցնել in all tenses and moods.

Ex. 291

Define the mood, tense, person and number of the causal verbs.

1. Հասուն քարերին էր դողացնում, Սև- ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, գեփյուռին ողբացնում, ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը գրգռում (Վ. Փափագյան): 2. Այդպիսի կսկիծով քնից զարթնում են այն մարդիկ, որոնք նախորդ օրը կորցրել են թանկագին մի բան...: 3. Լևոնը բարձրացնում էր գլուխը, նստում անկողնի մեջ, բայց չէր կարողանում աչքերը բաց անել...: 4. Լևոնը կովի պոչը բռնեց ու երկար վազեցրեց: 5. Բոլորն իսկույն նկատեցին, որ ձին նախագահին թոցնում է նրա կամքին հակառակ ուղղությամբ: 6. Ավագյանին իր մտայլ մտքերից սթափեցրեց Գրիգոր Սահակյանը: 7. Այստեղ դու կամրացնես Հայաստանի ամենամեծ կոլխոզը: 8. Գրիգորը շատ շուտով ամրացրեց պտուտակը և դուրս թռավ տրակտորի տակից: 9. - Ինչու՞ չես ուզում սովորեցնել քո պարտիական ընկերոջը: - Կսովորեցնեմ... միայն թե կարողանա սովորել: 10. - Ինձ թվում է, - խորամանկորեն ժպտաց Լևոնը, - թե ես անցկացրի մի շատ կարևոր միջոցառում: 11. Արևն սկսել էր տաքացնել հողը, և դաշտերից բարձրանում էր բարակ գոլորշի (Ն. Զարյան):

Ex. 292

Translate into English.

1. Նրանք վերջացրին իրենց աշխատանքը: 2. Գիրքը լայնացնում է մարդու մտահորիզոնը: 3. Դու ինձ հիշեցրիր իմ պարտքը: 4. Հայրը ուրախ պատմություններով զվարճացնում է երեխաներին: 5. Նա բարձրացրեց կարմիր դրոշը: 6. Ժամանակը մոռացնում է վշտերը: 7. Նպատակն արդարացնում է միջոցը: 8. Բժիշկն առողջացրեց հիվանդին: 9. Մայրը հագցնում է երեխային: 10. Քույրը կաթ է խմեցնում իր փոքր եղբորը: 11. Դու աստիճանաբար ավելացնու ես քո ծախսերը: 12. Ամրացրու այդ մեխը: 13. Ուսուցիչն աշակերտին այլ տեղ նստեցրեց: 14. Մեզ սովորեցրել են միշտ բարձր պահել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը: 15. Քնեցրու երեխային: 16. Նա ձանձրացնում է ինձ: 17. Կանգնեցրեք մեքենաները:

Ex. 293

Translate into Armenian.

to teach kids to stop the tramway to marry the son to increase the expense to raise a friend to remaind about a promise to bother your sister to bring close to victory to entertain your friends to hasten the school building to warm on a stove to wash the child to fasten on the wall to wake up the father

Voice

Բայի սեռերը

Section 182

The Armenian verb has three voices: active (ներգործական), passive (կրավորական) and middle (չեզոք).

Section 183

Verbs of active voice express an action requiring an object in accusative case. Active voice verbs rule over the accusative case without prepositions, and answer the questions ու՞մ (whom?), and ի՞նչ (what?), e.g.

Էմման գրեց ի՞նչ - նամակ:

What did Emma write - a letter.

Լենան հարգում է ու՞մ - իր ուսուցիչներին:

Who(m) does Lena respect - her teachers.

Երեխան կոտրեց ի՞նչը - բաժակը:

What did the child break - the glass.

All causal verbs belong to the active voice. Sentences with verbs of active voice are called active.

Section 184

The passive voice serves to show that the person or thing denoted by the subject of the sentence is not the doer of the action expressed by the predicate verb but is the object of this action. The subject of a passive verb does not act but is acted upon, it undergoes an action, e.g.

Ուսանողը պարգևատրվեց ռեկտորից:

The student was rewarded by the rector.

Նա սիրված է բոլորից:

He is loved by all.

Հարցը քննարկման մտցվեց սովետական պատվիրակության կողմից:

The question was put into discussion by the Soviet delegation.

Passive voice verbs are used in sentences of passive construction. Passive voice verbs form from active ones by means of suffix վ. This suffix is added to the infinitive stem of verbs of first conjugation and to the past perfect stem of verbs of second conjugation. All passive voice verbs belong to the first conjugation.

Active voice verbs of I conj. Infinitive stem Passive voice verbs

գրել to write գր- գրվել լսել to listen լս- լսվել ջարդել to break ջարդ- ջարդվել կատարել to do կատար- կատարվել գտնել to find գտն- գտնվել տեսնել to see տեսն- տեսնվել

Active voice verbs of II conj. Past perfect stem Passive voice verbs

կարդալ to read կարդաց- կարդացվել զգալ to feel զգաց- զգացվել աղալ to grind աղաց- աղացվել հասկանալ to understand հասկաց- հասկացվել իմանալ to know իմաց- իմացվել

The passive voice of all causal verbs forms from the past perfect stem of their non-causal forms.

Causal verbs P.p. stem of causal forms Passive voice verbs

իրականացնել to fulfil իրականաց- իրականացվել բարձրացնել to raise բարձրաց- բարձրացվել մոտեցնել to bring closer մոտեց- մոտեցվել ամրացնել to fasten ամրաց- ամրացվել խորացնել to make deeper խորաց- խորացվել հեռացնել to take farther հեռաց- հեռացվել

The Armenian passive voice has all the personal and impersonal forms of the active voice. In the modern Armenian language every single active voice verb has its pair passive form.

Active voice Passive voice

սիրել to love սիրվել գրել to write գրվել ընդունել to receive ընդունվել ավելացնել to add ավելացվել կարդալ to read կարդացվել զգալ to feel զգացվել

Section 185

The active voice can be replaced by the passive and the other way round. In so doing the subject of the active voice becomes the indirect object of the passive, (in ablative case or using կողմից by way of postposition), and the direct object turns into a subject.

Active voice

Գործարանի վարչությունը պարգևատրեց առաջավոր բանվորներին:

The administration of the factory rewarded the leading workers.

Passive voice

Առաջավոր բանվորները պարգևատրվեցին գործարանի վարչության կողմից:
The leading workers were rewarded by the administration of the factory.

Ժողովը մերժեց այդ առաջարկությունը:
The meeting refused that suggestion. (active).

Այդ առաջարկությունը մերժվեց ժողովի կողմից:
The suggestion was refused by the meeting. (passive)

Կառավարությունը քննարկում է այդ օրինագիծը:
The government is discussing that bill. (active).

Այդ օրինագիծը քննարկվում է կառավարության կողմից:
That bill is being discussed by the government.

In passive sentences very often doer of the action is not indicated.

Գործարանում սիստեմատիկաբար բարձրացվում է աշխատանքի արտադրողականությունը, իջեցվում է արտադրանքի ինքնարժեքը:
In the factory the productivity of labour is systematically increased, the cost of production decreased.
Մշակվում են խոպան դաշտերը, յուրացվում են անջրդի հողերը:
Virgin lands are being worked, and imperfect lands are being ploughed.

Verbs with suffix վ often have the meaning of middle voice, i.e., they show an action performed by the subject, e.g.

Բացվեց Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը:
An effulgent (bright, radiating, splendid) morning of Ararat valley began.
Զինվորները առաջ շարժվեցին:
The soldiers went on.
Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ.:
Hovanes Tumanyan was born in 1869.

Some verbs with suffix վ show that the doer of the action acts on itself, e.g., հագնվել to get dressed, զարդարվել to get decorated, սանրվել to brush up, լվացվել to wash up, սափրվել to shave. These kind of verbs are called reflexive (անդրադարձ). A number of verbs with suffix վ do not have their corresponding paired active verb. To these belong գանգատվել to complain, զբաղվել to be occupied, սխալվել to be mistaken, թաքնվել to hide, հրաժարվել to deny, վախճանվել to pass away, վհասվել to lose heart, despair, ցնորվել to go crazy, հարձակվել to attack, համարձակվել to have the courage to, հաշտվել to be reconciled, բնակվել to settle in. All these verbs belong to the middle voice.

Middle voice verbs show actions that do not need an object, e.g.

Արևի շողը դիպավ Լևոնի աչքերին:
The sun ray fell on Levon's eyes.
Նա վեր ցատկեց, նստեց անկողնի մեջ ու դուրս նայեց լուսամուտից:
He jumped up, sat on the bed and looked out of the window.

By means of suffixes եցն, ացն, ցն middle voice verbs can be turned into active voice ones.

Middle voice verbs Active voice verbs

ավելանալ to increase ավելացնել to increase բարձրանալ to rise բարձրացնել to raise կորչել to get lost կորցնել to lose ուրախանալ to be glad ուրախացնել to make glad կանգնել to stop կանգնեցնել to stop

Active voice verbs are called transitive (անցողական), and the passive and middle voice verbs intransitive (անանցողական), as the first ones need a direct object and the second ones not.

Ex. 294

Form the passive of the following verbs.

կոտրել մեծացնել գրել մոտեցնել կարդալ զգալ ծեծել բարձրանալ կառուցել հեռացնել պատռել իմանալ սպանել հուզել փրկել գրգռել հաստատել կատարել հասկանալ հավաքել

Ex. 295

Write all the impersonal forms of the verbs շարդվել, հեռացվել; conjugate these verbs.

Ex. 296

Read and define the mood, tense, person and number of the verbs with suffix վ.

Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ֆինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը: Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց: Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագնա մրգերը քաղած և արդեն դեղնոտ ծառերի սոսափից: Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:

(Ա. Բակունց, "Միրհավ")

Ex. 297

Translate into English.

1. Ստացվել են նոր գրքեր ու ամսագրեր: 2. Ե՞րբ է կառուցվել այս շենքը: Այս շենքը կառուցվել է 1950 թվին: 3. Նոր գրադարանը գտնվում է քաղաքի ծայրամասում: 4. Այդ գրքերը վաճառվում են քաղաքի բոլոր գրախանութներում: 5. Աշխատանքը կկատարվի երկու ամսից հետո և կներկայացվի ամբիոնի քննարկմանը: 6. Կմեկնեմ Մոսկվա, երբ արդեն վճռված կլինեն բոլոր հարցերը: 7. Արտադրական խորհրդակցություններում քննարկվում են բազմաթիվ կարևոր հարցեր: 8. Այս գիրքը հրատարակվել է Երևանում: 9. Ե՞րբ են սկսվելու ձեր ամառային արձակուրդները: 10. Ո՞ր բանալիով է բացվում այս դուռը: 11. Ընթերցարանը փակվում է ժամը տասին: 12. Գարնանը եղանակը հաճախ է փոփոխվում: 13. Ես չգիտեմ, թե ինչպես է արտասանվում այս բառը: 14. Տարեցտարի բարձրանում է սովորական ժողովրդի կենսամակարդակը: 15. Յոթնամյակի ընթացքում Սովորական Միության արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը զարգացան արագ տեմպերով: 16. Մեզ մոտ հաճախ են ցուցադրվում արտասահմանյան կինոնկարներ: 17. Ես վաղուց գիտեմ, որ դու հետաքրքրվում ես նկարչությամբ: 18. Նամակն ստորագրված է: Այո, ստորագրված է: 19. Այդ հարցը դեռ չի վճռված: 20. Այս փողոցը լրիվ վերականգնված է: 21. Այս խնդիրն արդեն լուծված է սովետական գիտնականների կողմից: 22. Օգտագործվել են եղած միջոցները:

Ex. 298

Translate into Armenian.

1. Our borders are carefully guarded by frontier guards. 2. The house is being built by the scheme of a young architect. 3. The streets of the town light up by the daylight lamps. 4. We gave each other hugs and kisses saying good-bye. 5. Your article will be published in the magazine. 6. Nice weather is expected today. 7. The university choir performance was on the radion. 8. The oldest Armenian manuscripts are kept in the Matenadaran (book depository). 9. Research works are being led in all the institutes of our country. 10. This book tells about the exploits of the Soviet people. 11. This list of literature is offered to you for your degree works. 12. The swimmingpool water is changed every day. 13. The study year in the institute begins the 1st of September.

Ex. 299

Define the mood of the verbs.

Լույսը բացվեց: Թշնամի բանակները նայեցին միմյանց: Ահռելի էր պարսից բանակը. կարծես սև անտառ լիներ դաշտում բուսած: Ջորքի հետևում կանգնեցրել էին հարբեցրած փղերին: Նրանք կնճիթները վեր ու վար էին շարժում, ոտներով հողը փորում և սպասում կռվին: Հնչեց պարսից շեփորը, որից հետո հայոց շեփորը: Եվ սկսվեց կռիվը: Ավարայրի դաշտը դրոշաց մարդկանց, փղերի ու ձիերի ոտների դոփյունից: Սուրացին նետերը, լավեցին վիրավորների հառաչանքները: Պարսից զինվորներն առաջ անցան և սկսեցին գետը մտնել: Հայ զինվորները նույնպես գետը մտան: Կռիվը սաստկացավ: Վտանգ կար, որ պարսիկները կարող են շրջապատել հայերին: Վարդանն այդ մասին զգուշացրեց իր զորքերին: Դրանից հետո Վարդանը հանկարծ հարձակվեց թշնամու զորքի միջին մասի վրա: Պարսիկներն այդպիսի հանդգնություն չէին սպասում: Կռիվն ավելի սաստկացավ: Հայերն անխնա կոտորում էին պարսիկներին: Բայց թշնամին էլ իր ուժերը կենտրոնացրեց Վարդանի դեմ: Սկսվեց անհավասար, հերոսական կռիվը: Հայ մարտիկները, անձնվիրաբար կռվելով, ընկնում էին մեկ-մեկ, բայց և լավ հարվածում էին պարսիկներին ու թուլացնում նրանց ուժը: Հերոսի մահով ընկավ նաև ինքը՝ Վարդան Մամիկոնյանը: Իրենց զորավարի մահվանից հետո հայ զինվորները կռիվը շարունակեցին հայկական լեռներում: Պարսից զորքը այդ կռիվներից հոգնեց և ջլատվեց. նա ջախջախված էր, պարսից թագավորը հայերին ստրկացնելու իր հանդուգն միտքը թողեց: Հայերի հերոսությունը, հայրենասիրությունը և անձնվիրությունը հաղթեցին:

(Ըստ Բ. Դեմիրճյանի "Վարդանանք" վեպից)

Compound verbs

Հարադիր բայեր

Section 187

Verbs that consist of two or more components but express one meaning, are called compound verbs (հարադիր բայեր). The Armenian language is rich of compound verbs.

դուրս անել to drive out վրա տալ to attack դուրս բերել to bring out սիրտ անել to risk դուրս գնալ to go out սիրտ տալ to cheer up դուրս տալ to chatter աչքի ընկնել to differ մեջ մտնել to get in լաց լինել to cry մեջ ընկնել to interfere քարշ տալ to drag մոտ գալ to come closer քարշ գալ to be dragged ներս գալ to come in ականջ դնել to cock an ear ներս մտնել to enter անց կենալ to pass ձեռք առնել 1. to undertake ցույց տալ to show 2. to mock բաց անել to open ձեռք քաշել to refuse եռ գալ to boil երես տալ to spoil

դուր գալ to like երես առնել to frolic գլուխ տալ to bow գլխի ընկնել to understand գլուխ բերել to adjust
ականջ անել to listen

In the conjugation of the compound verb the auxiliary verb is put between its composite parts. Thus, for example, the compound verb պար գալ (to dance) conjugates this way in the present tense:

պար եմ գալիս I am dancing պար ես գալիս you are dancing պար է գալիս he, she, it is dancing

պար ենք գալիս we are dancing պար եք գալիս you are dancing պար են գալիս they are dancing

Note: In morphological analysis the two parts should be taken together as one word.

Ex. 300

Conjugate the compound verbs դուրս գնալ, ներս մտնել, աչքի ընկնել:

Ex. 301

Define the mood, tense, person and number of the compound verbs.

1. Նա աչքի էր ընկնում իր բարձր հասակով: 2. Ես կանգ առա և երկար նայեցի նրան: 3. Երբ դու գանգահարեցիր, նրանք վաղուց դուրս էին եկել տնից: 4. Դու բաց կանես գիրքը և ցույց կտաս համապատասխան էջը: 5. Ինչպես երևում է, երեխան լաց է եղել: 6. Միտք էր անում անցած-գնացած օրերի մասին: 7. Գործը հաջողությամբ գլուխ կբերեին, եթե խանգարողներ չլինեին: 8. Ներս մտիր ու պատմիր նրան ամեն ինչ: 9. Ոչ մի կասկած չունեմ, որ նա վերջիվերջո գլխի է ընկնելու, որ ինքը սխալվել է: 10. Նստիր ինձ մոտ և ականջ արա խոսքերիս: 11. Դուր բաց պիտի անեմ առանց բանալիի:

Ex. 302

Replace the following simple verbs with corresponding compound pairs.

եռալ, անցնել, պարել, խաղալ, կանգնել, բանալ, վազել:

E.g., եռալ - եռ գալ

Ex. 303

Translate into Armenian and underline the compound verbs.

1. The sick is discharged from hospital. 2. They left the room long ago. 3. Representatives of neighbouring villages spoke at the meeting. 4. Open the door and ask permission to enter. 5. The artist showed his visitors his exhibition pictures. 6. Why is he crying? 7. The fourth year class differs by its being disciplined. 8. Kids really like this picture. 9. He understood what is what when it was too late. 10. The Soviet Union trades with many countries.

Irregular verbs

Անկանոն բայեր

Section 188

Some Armenian verbs have personal and impersonal forms that deviate from the common system of conjugation. These deviations mostly occur in the forms of the past, past effective, and past perfect tenses and in the imperative mood.

Irregular are the verbs:

տալ to give դնել to put գալ to come անել to do լալ to cry տանել to carry, take away լինել to be դառնալ to become ուտել to eat

The verbs տալ, գալ, լալ also have deviations in the forms of the present and past perfect tense.

Conjugation of irregular verbs

տալ to give Անորոշ դերբայ infinitive տալ Անկատար դերբայ present participle տալիս Ապառնի դերբայ future participle տալու Վաղակատար դերբայ past participle տվել Հարակատար դերբայ effective participle տված Ենթակայական դերբայ subjective participle տվող Ժխտական դերբայ negative participle (չեմ) տա Անցյալ կատարյալ - Past perfect. տվեցի տվեցիր տվեց տվեցինք տվեցիք տվեցին Հրամայական. - Imper. mood տու՛ր տվե՛ք մի՛ տու՛ր մի՛ տվե՛ք: (Apparently, the forms of the verb տալ with վ don't have passive meaning. Which raises the question: does տալ have a passive voice? And if so, how is it formed?) գալ to come Անորոշ գալ Անկատար գալիս Ապառնի գալու Վաղակատար եկել Հարակատար եկած Ենթակայական եկող Ժխտական (չեմ) գա Անցյալ կատարյալ եկա եկար եկավ եկանք եկաք եկան Հրամայական ե՛կ եկե՛ք մի՛ գա մի՛ եկ մի՛ եկեք լալ to cry Անորոշ լալ Անկատար լալիս Ապառնի լալու Վաղակատար լացել Հարակատար լացած Ենթակայական լացող Ժխտական (չեմ) լա Անցյալ կատարյալ լե(?)ցեցի լացեցիր լացեց լացեցինք լացեցիք լացեցին Հրամայական լա՛ց (not: լա՛ր?) լացե՛ք մի՛ լար մի՛ լաք մի՛ լացեք Note: Instead of լալ can be used the compound verb լաց լինել, which has the same meaning. լինել to be Անորոշ լինել Անկատար լինում, լինելիս Ապառնի լինելու Վաղակատար եղել Հարակատար եղած Ենթակայական եղող, լինող Ժխտական (չեմ) լինի Անցյալ կատարյալ եղա եղար եղավ եղանք եղաք եղան Հրամայական եղի՛ր եղե՛ք մի՛ լինի՛ր մի՛ եղիր մի՛ լինեք մի՛ եղեք ուտել to eat Անորոշ ուտել Անկատար ուտում ,ուտելիս Ապառնի ուտելու Վաղակատար կերել Հարակատար կերած Ենթակայական ուտող Ժխտական (չեմ) ուտի Անցյալ կատարյալ կերա կերար կերավ կերանք կերաք կերան Հրամայական կե՛ր կերե՛ք մի՛ կեր մի՛ ուտի՛ր մի՛ կերեք մի՛ ուտեք Կրավորական ուտվել դնել to put Անորոշ դնել Անկատար դնում, դնելիս Ապառնի դնելու Վաղակատար դրել Հարակատար դրած Ենթակայական դնող Ժխտական (չեմ) դնի Անցյալ կատարյալ դրեցի դրեցիր դրեց դրեցինք դրեցիք դրեցին Հրամայական դի՛ր դրե՛ք մի՛ դրեցե՛ք մի՛ դնի՛ր մի՛ դիր մի՛ դնեք մի՛ դրեք Կրավորական դրվել անել to do Անորոշ անել Անկատար անում, անելիս Ապառնի անելու Վաղակատար արել Հարակատար արած Ենթակայական անող Ժխտական (չեմ) անի Անցյալ կատարյալ արեցի արեցիր արեց արեցինք արեցիք արեցին Հրայական արա՛ արե՛ք մի՛ անի՛ր մի՛ արա մի՛ անեք մի՛ արեք Կրավորական արվել (Note: դնել and անել have the same irregularities - they change ն to ր in the past perfect, the imperative and the passive voice; as well as in the past perfect and past effective participles.)

տանել to carry, to take Անորոշ տանել Անկատար տանում, տանելիս Ապառնի տանելու Վաղակատար տարել Հարակատար տարած Ենթակայական տանող Ժխտական (չեմ) տանի Անցյալ կատարյալ տարա տարար տարավ տարանք տարաք տարան Հրամայական տա՛ր տարե՛ք մի՛ տանի՛ր մի՛ տար մի՛ տանեք մի՛ տարեք Հրամայական տարվել դառնալ to become Անորոշ դառնալ Անկատար դառնում, դառնալիս Ապառնի դառնալու Վաղակատար դարձել Հարակատար դարձած Ենթակայական դարձող Ժխտական (չեմ) դառնա Անցյալ կատարյալ դարձա դարձար դարձավ դարձանք դարձաք դարձան Հրամայական դարձի՛ր դարձե՛ք մի՛ դառնա մի՛ դարձիր մի՛ դառնաք մի՛ դարձեք

Notes:

1. In the past perfect the verbs տալ, անել, դնել can also have the forms without ending of the stem g, i.e., տվի (տվեցի), տվիր, տվա՛վ, տվինք, տվիք, տվին; արի (արեցի), արիր, արա՛վ, արինք, արիք, արին; դրի (դրեցի), դրիր, դրա՛վ, դրինք, դրիք, դրին; though these forms are generally particular to spoken language.

2. The following verbs have deviations in the imperative forms too:

Infinitive Imperative mood

բացել to open բա՛ց բացե՛ք թողնել to leave թո՛ղ թողե՛ք առնել to take ա՛ռ առե՛ք բերել to bring բե՛ր բերե՛ք տեսնել to see տե՛ս տեսե՛ք

3. The verb ասել (to say) changes by the second conjugation in past perfect tense and in imperative mood. The other forms of the verb form according to the first conjugation.

Past perfect ասացի ասացիր ասաց ասացինք ասացիք ասացին Imp. mood ասա՛ ասացե՛ք մի՛ ասա մի՛ ասեք Passive ասվել

Incomplete verbs

Պակասավոր բայեր

Section 189

The verbs կամ (am), ունեմ (have), գիտեմ (know), արժեմ (cost) are called incomplete. These verbs have a simple form in the present and past imperfective tenses, i.e., they form without an auxiliary verb and participle. (Are they regular in the other tenses?)

Conjugation of կամ, ունեմ, գիտեմ, արժեմ Present Past imperfective

- գիտեմ գիտենք գիտեի գիտեինք 2. գիտես գիտեք գիտեիր գիտեիք 3. գիտի գիտեն գիտեր գիտեին
- արժեմ արժենք արժեի արժեինք 2. արժես արժեք արժեիր արժեիք 3. արժի արժեն արժեր արժեին
- ունեմ ունենք ունեի ունեինք 2. ունես ունեք ունեիր ունեիք 3. ունի ունեն ուներ ունեին
- կամ կանք կայի կայինք 2. կաս կաք կայիր կայիք 3. կա կան կար կային

Ex. 304

Conjugate the verbs գալ, տալ, անել:

Ex. 305

Read and define the mood, person, tense and number of irregular verbs.

- Օրիորդը ձեռները դրեց ծոցը, հայացքը հառեց հեռու: 2. Մրաֆիոն Գասպարիչը գրեթե ուժով նրանց տարավ մյուս սենյակը: 3. Այրին և լավիս էր, և արտասովախառն ձայնով պատմում հանգուցյալի տանջանքները: 4. Ասաց ու դուրս գնաց, իջավ ցած և մտավ տան ներքին հարկում գտնվող խանութներից մեկը: 5. ՄԻ ուրիշ գրասեղան դրված էր խորքում: 6. Նա դրեց Սմբատի

առաջ մի թուղթ: 7. Այժմ միայն Սմբատը հասկացավ, թե ինչ տեսարանի վկա պիտի լինի: 8. Սմբատը երկուսին էլ մի բան տվեց՝ գլուխն ազատելու համար: 9. Նա սոված էր, ուտել էր ուզում, բայց այնքան հուզված էր, որ մի երկու պատառ պանիր ու հաց բերանը դնելով, վեր կացավ տեղից: 10. Երբեք Պետրոս Ղալունյանը չէր մտածել, թե այն, ինչ որ ինքն է անում, կարող է անել իր կինը: 11. Այժմ մեծ մասամբ նա տանն էր լինում: 12. Երկու ընկեր, որ տասնհինգ տարի միասին աղուհաց էին կերել, միմյանց սիրել ու պաշտպանել, այժմ կանգնած են դեմ ու դեմ իբրև թշնամիներ:

Chapter 7

Adverbs, Prepositions, Conjunctions, Interjections

Adverbs

Մակբայ

Section 190

The adverb is a part of speech, which points to different circumstances in presence of which the action is performed. Adverbs generally relate to verbs and in the sentence serve as different modifiers: (See also my comment in Lesson 4, Section 78.)

Այժմ նա աշխատում է ժամացույցների գործարանում:

Now he works at a watch factory.

Ամենուրեք եռում է աշխատանքը:

Work is in full swing everywhere.

Նա հերոսաբար կռվեց թշնամիների դեմ:

He heroically battled against enemy (the? enemies?).

Some adverbs can relate to adjectives. In this case they point to the indication of the indication of the object (this is confusing). E.g.

Սուրենը շատ լավ ընկեր է:

Suren is a very good friend.

Adverbs are invariable. Though some adverbs of place and time have the forms of cases, e.g., այժմ (now) - այժմվա - այժմվանից, վաղը (tomorrow) - վաղվա - վաղվանից, երեկ (yesterday) - երեկվա - երեկվանից, ներս (inside) - ներսի - ներսից, դուրս (outside) - դրսի - դրսից, etc.

Section 191

There are few primordial (??) adverbs in the Armenian language. If in the English language by means of morphological means adverbs can be formed from qualitative adjectives, e.g., loud - loudly, quick - quickly, etc., in the Armenian language the qualitative adjectives can be used with verbs without any changes, serving as adverbial modifiers of the mode of action.

Qualitative adjectives as attribute Qualitative adjectives as modifier

Սուրիկը լավ աշակերտ է: Նա լավ է սովորում: Surik is a good pupil. He studies well. Այս խանութում վաճառվում են գեղեցիկ ծաղիկներ: Իմ ընկերը գեղեցիկ է խոսում: In this shop beautiful flowers are sold. My friend talks beautifully. Այսօր վատ եղանակ է: Այսօր ինձ վատ էմ զգում: It's bad weather today. I feel poor (bad) today.

Types of adverbs

Մակբայների տեսակները

Section 192

According to their meaning adverbs fall into the following groups:

1. Adverbs of manner (mode of action) (ձևի մակբայներ): արագ fast, հանկարծ suddenly, միասին together, դանդաղ slowly, իսկույն, իսկույն նեթ immediately, դարձյալ still, կրկին again, կամաց slow, հետզհետե step by step, հաճախ often, շտապ quickly, հապճեպ hurriedly, մերթընդմերթ sometimes, etc. In here belong also many adverbs formed by means of suffixes, e.g. բարեկամաբար friendly, հերոսաբար heroic(ally), ազնվորեն honestly, հմտորեն skilfully, etc. Adverbs of this group answer the question ինչպե՞ս how? and serve in the sentence as modifier of manner.

Այդ լուրը իսկույն տարածվեց քաղաքում:

That news immediately spread in the town.

Հիվանդին շտապ տարան հիվանդանոց:

The sick was quickly taken to the hospital. (This is a passive translation of an active sentence.)

Նա բարեկամաբար սեղմեց իմ ձեռքը:

He shook my hand friendly.

2. Note: Some adverbs of manner in the Armenian language have degrees, e.g., արագ fast, ավելի արագ faster, ամենաարագ fastest; դանդաղ slow, ավելի դանդաղ slower, ամենադանդաղ slowest.

3. Adverbs of time (ժամանակի մակբայներ): այժմ now, հիմա now, այսօր today, երեկ yesterday, վաղը tomorrow, վաղուց long ago or for ages, դեռ yet, արդեն already, առավոտյան in the morning, երեկոյան in the evening, միշտ always, ընդմիշտ forever, հավետ, հավիտյան forever, երբեք never, etc. Adverbs of time answer the question ե՞րբ when? and serve in the sentence as modifier of time.

Ես կգամ երեկոյան:

I will come in the evening.

Այժմ նրանք զբաղված են:

They are busy now.

Վաղուց նրան չեմ տեսել:

I haven't seen her for ages.

Արդեն վերջացրել եմ գործերս:

I am already finished with my business.

4. Adverbs of place or direction (տեղի մակբայներ): ամենուր, ամենուրեք everywhere, ներս inside, առաջ ahead, ետ backwards, ներքև down, վերև up, վեր upwards, այլուր in other places, հեռու far, անդ there, այստեղ here, etc. Adverbs of place and direction answer the question որտե՞ղ, ու՞ր where? and serve in the sentence as modifier of place.

Ամենուրեք կառուցվում են նոր շենքեր:

New buildings are being built everywhere.

Նա ներքև էր նայում:

He was looking down.

Զինվորները շարժվեցին առաջ:

Soldiers went ahead.

5. Adverb of quantity (չափ ու քանակի): քանիցս, քանի անգամ how many times, բազմիցս many times, կրկնակի repeatedly, եռակի three times, քիչ- քիչ little by little, ավելի more, մասամբ partly, բոլորովին, ամբողջովին at all, շատ a lot, etc. These adverbs answer the question ինչքա՞ն, որքա՞ն how much? how many? and serve in the sentence as modifier of quantity.

Բազմիցս նախազգուշացրել են նրան այդ մասին:

He has been warned about it many times.

Նա բոլորովին մեղավոր չէ:

He is not guilty at all.

6. Modal adverbs (եղանակավորող մակբայներ) express the speaker's attitude towards the expressed idea. Modal adverbs can be:

a. affirmative (հաստատական): իրոք really, անշուշտ undoubtedly, իհարկե of course, անկասկած, անտարակույս doubtless, հարկավ of course, etc.

b. equivocal (երկբայական): թերևս perhaps, maybe, երևի apparently, probably, կարծես as if, ասես as if, գուցե maybe, արդյոք really?, միթե really?, indeed!

Նա, անշուշտ, հաջող կկատարի այդ առաջադրանքը:

He undoubtedly will successfully finish this task.

Դու, իհարկե, այդ մասին գիտես:

You surely (of course) know about this.

Վաղը անպատճառ կգամ քեզ մոտ:

I will be sure to come to you tomorrow.

Նրանք հիմա երևի պարապում են:

They are probably studying now.

Formation of adverbs

Մակբայների կազմությունը

Section 193

The most important suffixes by means of which adverbs form are the following:

- -աբար: եղբայրաբար like brothers, հերոսաբար heroically, գազանաբար like an animal, քաջաբար courageously, ազնվաբար fairly, honestly, անկեղծաբար frankly, etc.
- -որեն: հրապարակորեն publicly, անխուսափելիորեն inevitably, լայնորեն widely, հմտորեն skilfully, կոմունիստորեն like a communist, վարպետորեն masterly.
- -ապես: գլխավորապես generally, մոտավորապես about, հատկապես especially, հավասարապես equally, բարոյապես morally, ֆիզիկապես physically, տնտեսապես economically, քաղաքականապես politically.
- -ովին: լիովին completely, գլխովին completely, ամբողջովին wholly, բոլորովին absolutely, at all.
- -ակի: ուղղակի flatly, շաշտակի neatly, հանկարծակի suddenly.

Ex. 306

Read and define types of adverbs.

I. 1. Սակայն Մթնածորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: 2. Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգնեք, կնայեք, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը:

(Ա. Բակունց, "Մթնածոր")

II. 1. Թեև ամառը դեռ չէր վերջացել, բայց օդի մեջ արդեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը: 2. Երիտասարդն աչքերը բաց արեց, ձեռները կամաց հանեց վերարկուի թևերի միջից, ոտները դանդաղորեն ցած թողեց նստարանից: 3. Եվան խոսում էր համարձակ, արագ: 4. Եվան շատ հաճախ դիմում էր նրան զանազան հարցերով, բայց նա պատասխանում էր կարճ, կտրուկ: 5. Շահյանը երբեք չէր սիրել մոր համբուրները: 6. Աշխենը հենց նոր դուրս գնաց, իսկ ամուսինն ու աղջիկը Սուրենի հետ ճաշից հետո գնացել են զբոսանքի և, երևի, շուտով կվերադառնան: 7. Շահյանն արդեն բավական ձանձրացել էր տիկնոջ շատախոսությունից: 8. Աշխենը կրկին հիվանդոտ կերպով ժպտաց, թեթևակի գլխով արավ և գնաց նորից հորեղբոր բազկաթոռի մոտ: 9. Նա հանկարծ կծեց շրթունքը և սաստիկ կարմրեց: 10. Այդ լռությունից Շահյանն ավելի շփոթվեց և ձեռքը մեքենայաբար մեկնեց դեպի թեյի բաժակը: 11. Նա շարունակ պարապում է: 12. Հետևյալ օրը, վաղ առավոտյան, Աշխենը մի քանի տող նամակ գրեց և տվեց ծառային, որ շտապով տանի օրիորդ Սահակյանին տա:

(Նար- Դոս, "Մահը")

Ex. 307

Make up sentences using the following words as modifiers of manner and attribute.

Ճշգրիտ, համառոտ, ամուր, ուղիղ, լավ, գեղեցիկ, բարձր, հետաքրքիր, հանգիստ, ճիշտ:

E.g.

Նա տալիս էր համառոտ և ճիշտ պատասխան:

Նա պատասխանում էր համառոտ և ճիշտ:

Ex. 308

Translate into English.

1. Նրանք հոգնել էին և դանդաղ էին քայլում: 2. Նա հաճախ է այցելում մեզ: 3. Մենք միասին ենք աշխատում: 4. Իսկույն կհայտնեն նրան այդ մասին: 5. Կրկին պետք է աշխատեն այդ առարկայի վրա: 6. Հետզհետը քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը: 7. Նորից կհանդիպենք քեզ և այն ժամանակ ավելի մանրամասնորեն կխոսենք: 8. Աստիճանաբար նրանք ընտելացան իրար: 9. Շտապ գնա նրա մոտ: 10. Վերջացրու աշխատանքը և արագ շտապիր գրասենյակ: 11. Հազիվ կարողացա ժամանակ գտնել քեզ հանդիպելու համար: 12. Իսկույն ևեթ թող ամեն ինչ և եկ ինձ մոտ: 13. Մերթընդմերթ փայլատակում էր կայծակը: 14. Նա ազնվորեն է կատարում իր պարտականությունները: 15. Նրանք բարեկամաբար օգնեցին մեզ: 16. Դուք հերոսաբար կովեցիք թշնամիների դեմ: 17. Նա հմտորեն է վարում իր գործերը: 18. Հրապարակորեն խոստովանեց իր սխալները: 19. Այդ գործարանում լայնորեն կիրառվում են նոր մեթոդներ: 20. Նա մոտավորապես

քսան տարեկան է: 21. Նա մոտ քսան տարեկան է: 22. Դու ֆիզիկապես ուժեղ ես: 23. Այդ երկիրը տնտեսապես թույլ է զարգացած: 24. Նա քաղաքականապես պատրաստ է:

Ex. 309

Translate into English.

1. Այժմ ես ուսումնասիրում եմ հայոց լեզուն: 2. Այսօր ես շատ եմ աշխատելու: 3. Վաղը նա հանձնելու է վերջին քննությունը: 4. Ես նրան վաղուց չեմ տեսել: 5. Նա դեռ չի եկել, տանն է: 6. Երեկոյան կգաս մեզ մոտ: 7. Նա միշտ մեզ հետ կլինի: 8. Նա ընդմիշտ հեռացավ մեզանից: 9. Հավետ չեմ մոռանա նրա պայծառ կերպարանքը: 10. Հավիտյան կապրի նրա վեհ անունը: 11. Երբեք չպետք է խուսափել փոքր աշխատանքից, որովհետև փոքրից է գոյանում մեծը: 12. Ամենուրեք եռում է աշխատանքը: 13. Դրսից փչում է սառը քամին:

Ex. 310

Translate into English.

1. Այս պատմվածքը բոլորովին հետաքրքիր չէ: 2. Ես ամեննին համաձայն չեմ ձեզ հետ: 3. Նա ամբողջովին միացավ մեր առաջարկությանը: 4. Նա առաջադրանքը մասամբ է միայն կատարել: 5. Ժողովներում բազմիցս խոսվել է այդ մասին: 6. Նա համարյա ոչ մի անգամ մեզ մոտ չի եկել: 7. Ես այդ մասին համարյա ոչինչ չգիտեմ: 8. Դու այդ մասին շատ ես կարդացել: 9. Նա ընդհանրապես քիչ է կարդում: 10. Դու այսօր անպատճառ կտեսնես նրան: 11. Նա, իրոք, հավատում էր իմ անկեղծությանը: 12. Նրանք, անշուշտ, պարապում են գրադարանում: 13. Դու, անկասկած, նրա հետ խոսել ես: 14. Նա, անտարակույս, գիտեր իր հասցեն: 15. Թերևս նրանք այսօր գան մեզ մոտ: 16. Գուցե նրանք գան մեզ մոտ: 17. Մի՞թե նրան չես տեսել, մի՞թե նրա հետ չես խոսել: 18. Արդյոք նա չի՞ եկել:

Ex. 311

Translate into Armenian.

I. 1. The pupil reads aloud. 2. He pronounces the words clearly and correctly. 3. Our brigade works like communists. 4. They speak Armenian well. 5. We often go to concerts of symphonic music. 6. The wind is making noise joyfully. 7. We hug everybody like brothers. 8. She had to leave her parental house forever. 9. Suddenly voices were heard. 10. They wrote this article together. 11. It was quite in the room. 12. The sky slowly was covering with clouds. 13. Are you late to class again? 14. Friends one by one left for holidays. 15. Sometimes he thought that his age is the reason of all.

II. 1. The exams will begin soon. 2. He will come in the evening. 3. They were on the banks of Sevan yesterday. 4. We talked about it a lot in the evening. 5. I have never met him. 6. He thought that he could never do that. 7. The division's commander's order was received in the morning. 8. He has been making use of that advantage already a long time. 9. It will stay in his memory forever. 10. I read about it in the paper not long ago. 11. He hasn't received letters from his friend long time.

III. 1. The ships sailed forward and forward. 2. A town will be built in here. 3. No matter where I look I imagine your face everywhere. 4. It was quite and dark inside. 5. Fast footfalls of the horse were heard from behind. 6. The heavy branch of plum bends down. 7. Above the forest was showing up the white stripe of the sky. 8. A fair blazed up far away. 9. All his relatives live here, in this town. 10. A young man was sitting in front of him.

IV. 1. It was probably already after midnight when they went out of the village. 2. Can I really go now? 3. He is an honest man for sure. 4. Apparently I have read that book. 5. You, doubtless, will tell him about my request.

6. Of course, habit means much. 7. You probably want to get back to your place? 8. You will probably agree to help us. 9. We will surely keep our promise.

Prepositions and postpositions

Կապ

Section 194

Prepositions and postpositions point to distance, time, cause and other relations between objects. The term (copula) in the Armenian language combines the ideas of preposition and postposition. Prepositions and postpositions, together with the word they are used with, in the sentence serve as one part. A great number of postpositions are used in the Armenian language.

Երեխաները նստած են ծառի տակ:

The children are sitting under the tree.

Գրքերը դրված են սեղանի վրա:

The books are on the table.

Հայրը որդու համար գնեց նկարազարդ գիրք:

The father bought a book with pictures for his son.

Նա եղբոր հետ եկավ:

He came with his brother.

Առանց քո համաձայնության նա ոչ մի տեղ չի գնա:

He will not go anywhere without your permission.

Prepositions are:

- առանց - without,
- դեպի - to,
- մինչև - till,
- հանուն - for,
- ընդդեմ - against,
- նախքան - before,
- ըստ - by,
- ի - in, etc.

Postpositions are:

- մասին - about,
- համար - for,
- առթիվ - in connection with,
- նկատմամբ - in relation with,
- վերաբերմամբ - about,
- ներքո - under,
- միջև - between,
- հետ - together,
- պես - like,
- մոտ - near, by,
- առջև - in front,
- առաջ - ahead,
- հետո - after,
- փոխարեն - instead, etc.

There are more postpositions than prepositions in the Armenian language. Some "copulas" can stand before as well as after the word they relate to.

Բացի Սուրենից, բոլորը եկան:

Սուրենից բացի, բոլորը եկան:

Everybody except Suren came.

Շնորհիվ այդ միջոցառումների:

Այդ միջոցառումների շնորհիվ:

Thanks to those arrangements.

Section 195

Some postpositions with the meaning of place can have some forms of cases, e.g.

վրա on, over վրայից վրայով մեջ in, inside միջից միջով տակ under տակից տակով մոտ near, by մոտից մոտով

Some nouns, adjectives and adverbs can be used in the sentence in the meaning of both prepositions and postpositions. In this case they lose their material meaning and together with the dirigible (??) word serve as one part of the sentence, compare:

Ժամանակը արագ է անցնում:

Time flies quickly.

Բերքահավաքի ժամանակ բոլորն աշխատում էին ոտնորոտյամբ:

During the harvest everybody worked enthusiastically.

In the first sentence word ժամանակ (time) is used as a noun, and in the second as a postposition.

Categorematic (??) words used in the meaning of prepositions and postpositions are called linking words (կապական բառեր). Linking words are: ժամանակ time (during), դիմաց opposite, երեսից (opposite or facing?), պատճառով because of, միջոցով thanks to, through the mediation of, նպատակով with the purpose of, նման like, համապատասխան corresponding with, հեռու far from, նայած depending on, սկսած starting, շուտ quickly, առաջ in front of, վերև up (above, over), ներքև down (under), դուրս outside, հետո after, հակառակ against, etc.

(The terms 'dirigible' and 'categorematic' are so uncommon that their use in a language course textbook is more of an obstacle than it is useful. To the average language enthusiast they are not going to explain a lot.)

Ex. 312

Copy out prepositions and postpositions together with dirigible words.

1. Բառարանը թողել եմ սեղանի վրա: 2. Նա կանգնել էր ամբիոնի մոտ: 3. Բոլորը խոսում են ընկերոջ մասին: 4. Ես ամեն օր անցնում եմ նրա տան մոտով: 5. Նրանք ապրում են միևնույն հարկի տակ: 6. Նա ինձ ուղեկցեց մինչև տուն: 7. Տրամվայը գնում է դեպի կայարան: 8. Բացի ինձնից բոլորը գնացին քնելու: 9. Հյուրերը նստեցին սեղանի շուրջը: 10. Այս երկու նամակից բացի, ես նրանից նաև հեռագիր ստացա: 11. Նա իր եղբոր համար ամեն ինչ կանի: 12. Նա փողոց դուրս եկավ առանց վերարկուի: 13. Նրանք իրար հետ միշտ հայերեն են խոսում: 14. Քո և նրա միջև մեծ տարբերություն կա: 15. Ես տանը կլինեմ մինչև ժամը երեքը: 16. Ես կաշխատեմ նրա հետ գնալ մինչև մյուս կայարանը: 17. Աշխատասիրության շնորհիվ նա լավ արդյունքների հասավ: 18. Դասերից հետո քեզ հետ կգնանք լողանալու: 19. Բազմաթիվ քաջեր իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի: 20. Նա երեխայի պես է ծիծաղում:

Usage of prepositions and postpositions with cases

Կապերի հոլովական կիրառությունը

Section 196

Prepositions and postpositions in the Armenian language rule over genitive, dative and accusative cases.

1. With genitive case are used the following postpositions: առանց without, վրա on, մոտ near, տակ under, շուրջ round, մեջ in, համար for, հետ with, պես like, առթիվ in connection with, շնորհիվ thanks to, վերաբերյալ about (concerning), and others. E.g., սեղանի մոտ near the table, ծառի տակ under the tree, սենյակի մեջ in the room, ծառի վրա on the tree, երեխայի հետ with the child, տոնի առթիվ in connection with the holiday, etc.

2. With dative case are used the prepositions ըստ by, ընդդեմ against, contrary. E.g., ըստ ցուցակի by the (a!) list, ընդդեմ նրա ցանկության contrary to his wishes (wish?).

3. With accusative case are used the prepositions դեպի to, towards; մինչև till, up to; նախքան before. E.g., դեպի քաղաքը towards the town, մինչև դաշտը up to the field, մինչև ձմեռ till winter, նախքան նրա վերադարձը before his return.

Note: In written language the accusative case is ruled by seldom used prepositions առ by, ի to.

E.g., առ այսօր by this day, առ մեկը մայիսի by the first of May, ի հակադրություն contrary to, ի գիտություն (take it) into consideration, etc.

4. With the ablative case are used the postpositions զառ except, բացի besides, հետո after, ի վեր beginning with. E.g., դրանից զառ except that, քեզնից բացի besides you, դասերից հետո after lessons, այդ օրից ի վեր beginning with that day.

Section 197

With prepositions and postpositions առանց without, համար for, մոտ near, վրա on, over, հետ with, պես like, etc., personal pronouns of I and II persons are used in dative case. E.g., առանց (pre or post?) ինձ without me, ինձ համար for me, քո (քո is gen.) մոտ near you, քեզ վրա on you, մեզ հետ with us, ձեզ պես like you, etc.

Note: With instrumental case only the postposition հանդերձ with, is used, e.g., (ընտանիքով հանդերձ or ընտանիքով հանդերձ?) with the family.

Ex. 313

Point out which cases the prepositions and postpositions are used with.

1. Համբարձումը գլուխը կախել էր սեղանի վրա և ծխում էր: 2. Մինչև լուսաբաց դեռ շատ ժամանակ կար, երբ Գարեգինը արթնացավ: 3. Եվան դեռ հատուկ արագ շարժումներով զբաղված էր փոքրիկ եղբորը շալի մեջ փաթաթելով: 4. Այդ առաջին անգամն էր, որ նա մեն- մենակ նստած էր մի օրիորդի հետ: Եվան ծանր և հանդիսավոր քայլերով գնաց դեպի նա և, չարաճճի ժպիտը դեմքին, ձեռքը լուռ մեկնեց նրան: Նա հիշեց հոր պատմությունը Մարության եղբայրների ժառանգության մասին և զգաց, որ իր ուրախ տրամադրությունը խանգարվեց: 5. Այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան էր: Ոչ ոք առաջին պահին չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի

դրոճերի մոտ: Լուիզան մեզ առաջնորդեց դեպի գլխավոր սանդուղքը, բարձրացանք չորրորդ հարկը: Նրանց գնալուց հետո սենյակն այնչափ գոնե ազատվեց, որ ես կարող էի դիտել շուրջս: Նա գնում էր Լուիզայի մոտ, նստում և երկար ու երկար հարցուփորձ անում առաջիկա ճամփորդության մասին:

Ex. 314

Copy out the words in brackets, and put them in the right case.

1. Լևոնի հայացքը արագիլի հետևից գնաց ու կանգ առավ նորակառույց (կամուրջի) վրա: 2. Արտաքուստ նա համաձայն էր (Հասմիկ) հետ: 3. Քեռի Հարությունը իր խոսքերի (տպավորություն) տակ հուզվեց և շուտ եկավ արցունքները (թաքցնելու) համար: 4. Խմիչքը (մարդ) մեջ աշխուժացնում է նրա բնավորության հիմնական գծերը: 5. Այս մտքերով կլանված՝ Լևոնն իջնում էր դեպի նորակառույց (կամուրջ): 6. Հենց (դրոճեր) մոտ Հասմիկը թևանցուկ արավ Լևոնին: 7. Տուն (հասնել) պես Մացակը լամպը վառեց և Գրիգորին ուղարկեց Անուշի հետևից: 8. Բոլոր շենքերը լիքն էին, բացի գարաժ, որ կառուցված էր կոլխոզի հինգ (տրակտորներ) համար: (Վեմյան) հետ միասին նորից եղել էին (Արշակունի) մոտ, որ այս անգամ (Լամբարյան) մասին խոսել էր նվազ ոգևորությամբ:

Ex. 315

Translate into Armenian.

1. Your dictionary is on the table. 2. He is sitting by the window. 3. I will come to you after classes. 4. Who did you buy this book for? I bought it for you. 5. I told my friends about it. 6. Everyone was there, except my sister. 7. I will be home till eight in the evening. 8. I will talk with him about that matter tomorrow. 9. The airplane was flying over the skies. 10. The house was on the bank of the river. 11. He will do his best for you. 12. He put the basket on the table. 13. He likes to play with his kids. 14. I can't do that without your help. 15. He achieved this results thanks to hard work. 16. I want to tell you something about (concerning) this matter. 17. I never lived anywhere longer than (in) Yerevan.

Conjunctions

Շաղկապ

Section 198

According to their role in the sentence, conjunctions fall into two groups: coordinating (համադասական) conjunctions and subordinating (ստորադասական) conjunctions. Coordinating conjunctions connect homogeneous parts of a sentence and equivalent sentences, e.g.

Աշոտը և Արամը գնում են դպրոց:

Ashot and Aram go to school.

Քամին դադարեց, բայց դեռ չէր կտրվել:

The wind stopped, but the rain hadn't stopped yet.

Coordinating conjunctions are: և and, ու and, իսկ but, կամ or, բայց but, and, սակայն though, ևս also, էլ also, թե՛ թե՛ and and, կամ կամ or or, ո՛չ ո՛չ neither nor, այլ but, այլև also, etc.

Subordinating conjunctions connect the subordinating sentence with the main one, e.g.

Ես չեմ կարող աշխատել, որովհետև հոգնած եմ:

I can't work, because I am tired.

Նրանք ասացին, որ երեկոյան կգան մեզ մոտ:

They said, that they will come to us in the evening.

Subordinating conjunctions are: որ that, թե that, եթե if, որպէսզի to, որովհետև because, թեև though, թեկուզ at least, քան then, քանի որ as, etc.

Usage of coordinating conjunctions

Համադասական շարկապների կիրառությունը

Section 199

Conjunction **և** (and) is used to connect homogeneous parts of the sentence and equivalent sentences.

Ես ստացա քո նամակը և հեռագիրը:

I got your letter and telegram.

Արևը մայր մտավ, և երկնքում շողացին աստղերը:

The sun set, and the stars shone in the sky.

Conjunction **ու** (and), with the same usage as **և**, points to closeness, unity between parts of the sentence and the sentence. (That last part is not very clear but the second example below sheds some light.)

Հայր ու որդի աշխատում են շէնքի վրա:

Father and son work on the building.

Նա վերցնում է թուղթ ու գրիչ և նամակ է գրում իր եղբորը:

She takes paper and pen and writes a letter to her brother.

Conjunction **իսկ** (and) is used to connect opposite sentences.

Քույրս ուսուցչիկ է, իսկ եղբայրս՝ բժիշկ:

My sister is a teacher, and my brother is a doctor.

Ես գնում եմ թատրոն, իսկ դու՝ կինո:

I go to theatre, and you go to the movies.

Conjunctions **բայց**, **սակայն** (but, though) are used for opposing two actions, happenings, etc.

Նա ավարտել է համալսարանը, բայց դեռ չի աշխատում:

He graduated from university, but he isn't working yet.

Ճայլամը թևեր ունի, սակայն թռչել չի կարող:

The ostrich has wings though it can't fly.

Conjunction **կամ** (or) is used in opposing two sentences or separate parts of the sentence, by their meaning excluding or replacing each other.

Տուր ինձ գրիչ կամ մատիտ:

Give me a pen or a pencil.

Անձամբ խոսիր նրա հետ կամ հայտնիք հեռախոսով:

Talk to him personally or tell him by the phone.

Conjunction **ոչ թե ... այլ** (not ... but) is used for connecting two sentences, the first one of which expresses negation, and the second affirmation.

Նա ոչ թե արտասանում, այլ երգում է:

He is not reciting, but he is singing.

Սա ոչ թե լսարան, այլ կաբինետ է:

This is not an auditorium, but a cabinet.

Conjunction ոչ միայն ... այլև (not only ... but also) connects two sentences, one of which supplements the other.

Նա ոչ միայն լավ է սովորում, այլև օգնում է ընկերներին:

He doesn't only study well, but also helps his friends.

Conjunctions (էլ, ևս) (also, too) serve to express relations of unity and addition.

Ես էլ կգամ քեզ մոտ:

I will also come to you.

Դու էլ կխոսես նրա հետ:

You too will talk with him.

Սուրենին ևս կասես այդ մասին:

Tell Suren about it too.

There are a number of repeated conjunctions in the Armenian language, that stress and intensify the meaning of connecting parts of the sentence, e.g.

Շքերթներին մասնակցում էին թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները:

Both tutors and students took part in the parade.

Նա կամ գրադարանում է, կամ տանը:

He is either in the library, or at home.

Ո՛չ Արամը եկավ, ո՛չ Գագիկը:

Neither Aram, nor Gagik came.

Նա և՛ սովորում է, և՛ աշխատում:

He both studies and works.

Usage of subordinating conjunctions

Ստորադասական շաղկապների կիրառությունը

Section 200

Conjunction (որ) (that) is used to connect the subordinate clause to the principal clause.

Զգացի, որ նրա տրամադրությունը այսօր լավ չէ:

I felt, that she is in bed mood (hmm, interesting, but I assume you mean 'bad') today.

Պարզվեց, որ նա մեղավոր չէ:

It appeared, that he is not guilty.

Որ is also used to connect the subordinate clause of aim to the principle clause. In this case it corresponds to the English to.

Գնացի հիմնարկ, որ տեսնեմ նրան:

I went to the organization to see him.

Note: Conjunction *որ* (that) is often used with coordinating and subordinating conjunctions, and also with relative pronouns. E.g., *թե որ* if, *երբ որ* when, *մինչև որ* before, *երբ որ* when, *ով որ* who, *ինչ որ* what, *որտեղ որ* where, etc.

Conjunction *թե* (that) is used to connect the subordinate clause to the principal clause.

Ընկերս գրում է, *թե* ինքը գոհ է իր աշխատանքից:

My friend writes, that he is satisfied with his work.

Հայտնի չէ, *թե* նա երբ կվերադառնա (conj.?.; this form is not clear to me from Lesson 6 (Verbs))
քաղաքից:

It is not known when he will return from the town.

Conjunction *եթե* (if) expresses a relation of condition.

Եթե վաղը անձրև չգա, մենք անտառ կգնանք:

If it doesn't rain tomorrow, we will go to the forest.

Եթե քննությունները հաջող հանձնեմ, գնալու եմ ծովափ հանգստանալու:

If I pass my exams well, I will go to beach to rest.

Conjunction *որպեսզի* (to) expresses relation of aim.

Գնացի տուն, որպեսզի տեսնեմ նրան:

I went home to see him.

Conjunction (because) expresses relation of cause.

Նա աշխատանքի չի եկել, որովհետև հիվանդ է:

He hasn't come to work, because he is sick.

Conjunctions (though) have concessive meaning.

Թեև արեգակը թեքվել էր դեպի արևմուտք, բայց դեռ շոգ էր:

Though the sun declined to the west, it was still hot.

Թեպետ քեզ հրավիրեցին, բայց դու չեկար:

Though you were invited, you didn't come.

Թեկուզ բոլորը եկել էին, բայց ժողովը դեռ չէր սկսվել:

Though everyone had come, the meeting hadn't start yet.

(Note that in the examples above the word *բայց* goes untranslated.)

Conjunction *քան* (than) shows relation of comparison.

Դու ավելի լավ ես կարդում, քան նա:

You read better than he.

Note: Relative pronouns *ով* who, *ինչ* what, *որ(ը)* which, *որոնք* which, *որտեղ* where, etc., are used as subordinate conjunctions in subordinate clauses.

Ex. 316

Translate into English.

I. 1. Եղանակը վատ էր, և մենք ժամանակի մեծ մասը անցկացնում էինք տանը: 2. Շուտով անձրևը դադարեց, և նրանք շարունակեցին իրենց ճանապարհը: 3. Նա մնաց զբոսայգում, իսկ ես տուն եկա: 4. Ոչ թե հերոսներն են պատմություն ստեղծում, այլ պատմությունն է հերոսներ ստեղծում: 5. Արևը ծածկվեց լեռների հետևում, բայց դեռ լույս էր: 6. Կամ դու կգաս ինձ մոտ, կամ ես կգամ քեզ մոտ: 7. Ոչ ես էի նրան նամակ գրում, ոչ էլ նա ինձ: 8. Նա ոչ միայն աշխատում է, այլև սովորում է երեկոյան ինստիտուտում:

II. 1. Ես գիտեմ, որ նա հեռակայում է: 2. Նա ինձ ասաց, որ իր եղբորից նամակ է ստացել: 3. Ես համոզված եմ, որ նա հաջողությամբ կավարտի աշխատանքը: 4. Ես չգիտեմ, թե նա ինչ կպատասխանի մեզ: 5. Ես տվեցի նրան ամսագիրը, որպեսզի կարդա այդ հետաքրքիր հոդվածը: 6. Գործը ժամանակին չավարտեցի, որովհետև չգտա համապատասխան գրականություն: 7. Եթե հանդիպեմ նրան, անպայման կասեմ այդ մասին: 8. Եթե դասագիրք ունենայի, դասս անպայման լավ պատրաստած կլինեի: 9. Թեև շատ աշխատեցի, բայց չկարողացա ժամանակին տեղ հասնել:

Ex. 317

Translate into Armenian.

I. 1. I got a letter and a telegram. 2. The sun has set, but it is still light. 3. I can't do it now, as I am very busy. 4. Ashot said, that he will come in the evening. 5. If you wish, I can help you. 6. He works hard not to fail the exams. II. 1. Some time went on, but the health of poor Dubrovski was still bad (Pushkin). 2. Before Yegorushka had never seen not a steamer, not a locomotive, nor wide rivers (Chekhov). 3. To eat a fish, you need to get to the water. 4. When father returned, we talked about everything in detail. 5. I have never seen people dance so beautifully (Gladkov). 6. People answered that Andrey Gavrilovich left (Pushkin). 7. When it dried up and became warm, everybody gathered to start the way.

Interjections

Ձայնարկություն

Section 201

Interjections are words expressing emotions and inducements, but do not name them, e.g. վա~յ oh, վա~իս ah, ո~հ eh, ալվա~ղ alas, ափսո~ս pity, հե~յ hey, ջա~ն jan (tender address), օ' oho, ահա~ ահա, պա~հ hullo, օ~ֆ oh, etc. Interjections do not make part of the sentence. Signs of stress or exclamation are put over the interjections. Interjections separate from other parts of the sentence by commas.

Ա~իս, ինչու շուտ անցան իմ մանկության օրերը:

Oh, why did my childhood days pass so soon.

Վա~հ, այդ ե՞րբ ես եկել:

Hullo, when have you come?

ա~ն, նորից եկավ գարունը:

Jan, spring is here again.

Ex. 318

Copy out and underline interjections.

1.

Է~յ, հին ծանոթներ, Է~յ կանաչ սարեր, Ահա ձեզ տեսա ու միտս ընկան Առաջս եկան երջանիկ օրեր, Սիրելի դեմքեր, որ հիմա չկան:

3.

Դավիթը եկավ կանգնեց մեյդանում. - Վա՛հ, էս քաղաքցիք ի՜նչ վաղ են քնում: Հե՛յ կովատեր, հե՛յ գովշատեր: Ելե՛ք շուտով բաց արե՛ք դռներ, Ով մինն ուներ- տասն եմ բերել, Ով տասն ուներ- քսանն եմ բերել:

5.

Ձենով Օհան լալով երգեց. - Ափսո՛ւ, հազա՛ր ափսոս հրեղեն մեր ձին, Ա՛խ, հրեղեն մեր ձին. Ափսո՛ւ, հազա՛ր ափսոս մեր ոսկի գոտին Ա՛խ, մեր ոսկի գոտին. Ափսո՛ւ, թանկ կապեն, որ հազին տարավ, Ա՛խ, որ հազին տարավ...

(Հով. Թումանյան)

Ex. 319

Read and define parts of speech.

Աշունը մոտենում էր իր վախճանին: Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք, քեռուս տունը տեղափոխվելուց հետո: Դաշտերը ստանում էին տխուր և գունաթափ կերպարանք, կանաչ մարգագետինները, օրըստօրե դեղնելով, մեռելային դեմք էին կրում: Անխղճաբար փչում էր սառը քամին և թափում էր մերկ ծառերի մնացած տերևները: Երկնքի խոժոռ և մոխրագույն դեմքի վրա գլորվում էին մթին ամպերի ահագին բեկորներ և արգելում էին արևի թույլ ճառագայթները: Խիստ տխուր եղանակով լսվում էր կռունկների խուլ կոնյունը, որոնք բարձր եթերի միջով, եռանկյունի շարքերով, դիմում էին դեպի օտար աշխարհ: Ծիծեռնակներ ամեննին չէին երևում. նրանք վաղուց էին գաղթել: Միայն մրջյունները խիստ եռանդով կրում էին դեպի իրենց ամբարները ընդդեմների զանազան տեսակներ: Ամեն արարած պատրաստվում էր ընդունել ձմեռը- իր անախորժ հուրը:

(Բաֆֆի, "Կայծեր")

Chapter 8

Lexicology and wordformation

Բառագիտություն և Բառակազմություն

Composition of word

Բառի կազմությունը

Section 202

The word (բառ, apparently?) as the principal unit of speech consists of parts connected with each other. The component parts of the word in the Armenian language are: stem (արմատ), affix (ածանց), basis (հիմք) and ending (վերջավորություն). E.g., the form of the word գործարանում (in factory) consists of four parts: գործ (stem), -արան (suffix), գործարան (basis) and -ում (ending).

Stem

Արմատ

Section 203

The stem is an indissoluble part of the word, which expresses its general and main meaning and defines the lexical meaning of all relative words. Thus, the lexical meaning in the words աշակերտական (= աշակերտ + ական) student, աշակերտել (= աշակերտ + ել) to study with sb (sb = somebody?), աշակերտուհի (= աշակերտ + ուհի) (female) student, are connected with the meaning of the stem աշակերտ (student).

Section 204

Stems in words can modify or remain unchanged:

քաղաք	town	սիրտ	heart
քաղաքացի	citizen	սրտագին	cordial
քաղաքացիական	civil	սրտային	cordial
քաղաքային	urban	սրտիկ	heart (small)
ծով	sea	տուն	house
ծովակ	lake	տնակ	house (small)
ծովային	sea (adj.)	տնային	brownie (cookie)
		տնական	domestic

As can be noticed, only the stems սիրտ and տուն changed in the above mentioned words.

Section 205

Unmodified stems are generally used as independent words and are called stem words (արմատական բառեր). E.g., անուն - name, բերան - mouth, գլուխ - head, դաշտ - field, եղբայր - brother, թուղթ - paper, ժամ - hour, լավ - good, դու - you, շաքար - sugar, կին - woman, etc.

Section 206

Modified words are devoid of independent use and represent versions of the stem (արմատի տարբերակներ) that are not used in the end of a word: (Not sure what you mean here. Is this about, e.g., the version լուս of the stem of լույս?)

լույս	light	լույս	light
լուսավոր	light (adj.)	անլույս	without light
լուսավորել	light up	աչքալույս	congratulations
լուսանակ	break day	կիսալույս	twilight
գիր	letter	գիր	letter

գրել	to write	անգիր	by heart
գրական	literary	գրագիր	clerk
գրիչ	pen	ծանուցագիր	notice
սեր	love	սեր	love
սիրել	to love	աշխատասեր	diligent
սիրային	love (adj.)	խաղաղասեր	peaceableness
սիրելի	beloved	ընթերցասեր	who loves to read

Ex. 320

Copy out and underline the unmodified words with one and modified words with two lines.

Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգին,
 Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
 Թող մանկանա քո շուրթերին
 Մեր ավեհե՛ր հայոց լեզուն...
 Արարատի սուրբ ձյունի պես,
 Պահիր նրան սրտիդ մոտիկ,
 Քո պապերի աճյունի պես,
 Ու ոստիսի զարկիցը սև
 Դու պաշտպանիր կրծքով նրան,
 Ինչպես մո՛րդ կպաշտպանես,
 Թե սու՛ր քաշեն մորդ վրա,
 Ու տե՛ս որդիս, ուր էլ լինես,
 Այս լուսնի տակ ու՛ր էլ գնաս,
 Թե մորդ անգամ մտքից հանես,
 Քս մա՛յր լեզուն չմոռանաս...
 ([Ս. Կապուտիկյան](#), "Խոսք իմ որդուն")

Ex. 321

Define the stems of words.

ակնոց, արդարացի, բաժակ, գիշերային, ընդհանուր, իսելք, մայրական, նախադասություն, շնորհալի, վախկոտ, պատասխանել, ժամանակ:

Ex. 322

Define how many stems each of the words has.

արծաթափայլ, բազմաթիվ, գյուղատնտես, դասախոսություն, լրագրավաճառ, ծիծաղաշարժ, կիսագրագետ, փաստաթուղթ, քննադատ:

Ex. 323

Make up three new words from each word.

ամիս, ազնիվ, բույս, գին, տեր, պղինձ, ջուր, ամուր:

E.g., ամիս- ամսական, ամսաթիվ, ամսագիր.

Ex. 324

Define the stems of the following words and say which of them are used as independent words.

հիանալ, լիզել, հեղուկ, հիմնադիր, բուժարան, նրբակազմ, հայրենասեր, ծխախոտ, երկարատև, թանաքաման:

Ex. 325

Make up a couple of new words from the following words (both modified and unmodified).

տեր, հուր, բույս, գետ, բույժ.

E.g.

տեր - տիրել - տիրապետություն

տեր - անտեր - տնատեր

Ex. 326

Translate into Armenian and explain the differences between the Armenian and English words.

illiterate, sunflower, report, deserved, board, fraternal, library, window, compass.

Affixes

Ածանցներ

Section 207

Affixes are parts of words which stand before or after the stem and form new words.

E.g., անտուն (= ան + տուն) - homeless, արտագրել (= արտ + ա + գրել) to copy, գետակ (= գետ + ակ) - brook, նստարան (= նստ + արան) bench, էություն (= է + ություն) - essence, ուսում (= ուս + ում) study, etc.

Affixes in the Armenian language divide into prefixes (նախածանց) and suffixes (վերջածանց).

Prefixes

Նախածանցներ

Section 208

Affixes that stand before the stem are called prefixes (նախածանցներ). There are a number of prefixes in the Armenian language, the most derivative (instead of most derivative I suggest: most commonly used) of which are:

- արտ- (in the meaning of out-), e.g., արտադպրոցական out-of-school (adj.), արտահաստիքային free-lance (adj.), արտահայտություն - expression, արտաշնչել - breathe out, արտատպել - reprint, արտասահման - abroad, etc.

- բաց- e.g., բացակա - absent, բացահայտել - to expose, բացառություն - exception, բացատրություն - explanation, etc.
- գեր- e.g., գերազնահատել revalue, գերակատարել overfulfill, գերադրական excellent, գերերջանիկ overhappy, գերբնական supernatural, etc.
- ենթ- ենթակա subject, ենթահանձնաժողով subcommittee, ենթադրություն supposition, etc.
- ընդ- e.g., ընդարձակ - spacious, ընդհատակյա - underground, ընդգծել - underline, ընդհանրացնել - summarize, ընդհատել - interrupt, ընդմիջում - break, etc.
- հակ- (in the meaning of anti-), e.g., հակաառողջապահական - insanitary, հակադրություն - opposition, հակասություն - contradiction, հակաօդային - anti-aircraft, հակազիտական - anti-scientific, հակաճառել - conflict, etc.
- համ- 1. e.g., համաշխարհային - world (adj.), համամիութենական - All-Union (??) (adj.), համամարդկային - common to all mankind, համալսարան - university, etc. 2. համամիտ - like-mindedness, համաչափ - even, համաձայնություն - agreement, համագոր - equal in strength, համախմբել - to unite, համագումար - conference, etc.
- մակ- e.g., մակագրել - inscribe, մակբայ - adverb, մակերես - surface, մականուն - nickname, etc.
- նախ- e.g., նախագահ - president, նախադասություն - sentence, նախազգուշացում - warning, նախապատմական - prehistoric, նախապատերազմյան - prewar, նախապատրաստել - prepare, նախապատրաստություն - preparation, etc.
- ներ- e.g., ներդրում - deposit, ներարկել - inject, ներգրավել - include, ներածություն - introduction, ներշնչում - suggestion, etc.
- վեր- 1. e.g., վերադիր - superimposed, վերակացու - supervisor, վերահաս - coming - approaching, վերահսկել - to supervise, etc. 2. վերաբնակիչ - migrant, վերամշակել - process, վերապատրաստում - retraining, վերապրուկ - survival, վերարտադրել - reproduce, վերանորոգել - restore, վերլուծություն - analysis, etc.
- տար- e.g., տարագրություն - banishment, տարազնաց - latrine, տարալեզու - polyglot, տարատեսակ - variety, տարաձայնություն - disagreement, etc.

Notes:

- Negative particles *ան*, *սպ*, *տ*, *չ*, *դժ* are also considered as prefixes, which are generally used to form adjectives.
- Between the prefix and the stem in most cases a connecting vowel (*ա*) is put: հակադրություն, բացատրել, արտադրանք:

Ex. 327

Copy out and underline the prefixes.

1. Ստորին հարկը բաղկացած էր խանութներից ու գրասենյակներից, վերինն ամբողջովին Ալիմյաններիին էր: 2. Մի քանի ընկերություններ անցած վերադարձավ՝ հասակով իրենից մի փոքր ցած՝ առողջակազմ մի տղամարդու հետ: 3. ուշակեց նաև, որ փեսան իր աներձագի տրամադրությունն արդեն լարել է իր դեմ: 4. Նա բացատրություն պահանջեց: 5. Ընդարձակ քարե սանդուղքով վեր բարձրանալով բիշոպի հետ, նա մտավ մի սենյակ, անցավ մի մեծ սրահ: 6. Սմբատը դիտում էր աննման տեսարանն ու հրճվում: 7. իտեր նրա պատմությունը, գիտեր շատ ուրիշ համանման պատմություններ: 8. Շունը հուր էր արտադրում, իսկ աչքերը կորցրել էին մարդկային ամեն արտահայտություն: 9. Տիկին Անուշը շարունակ պնդում էր, թե պետք է անպատճառ ամուսնուց բաժանվի: 10. ու էր անչափ Շուշանիկը, բայց բոլորովին տարբեր պատճառով: (Շիրվանզադե, "Քառս")

Ex. 328

Make up three words from each of the prefixes արտ-, հակ-, ներ-, վեր-, ան-.

Ex. 329

Copy out the prefixes from the following words.

անարդարություն, ապերախտ, արտասահմանյան, բաղաձայն, բացատրել, գերբնական, երթադրություն, թերակշռել, համակրանք, հակատանկային, ներդրում, պարագիծ, վորանորոգել:

Ex. 330

Translate into Armenian and underline the prefixes.

indifferent, idiot, expression, explanation, agreement, opposition, inscription, objection, to object.

Suffixes

Վերջածանցներ

Section 209

Affixes that stand after the stem are called suffixes (վերջածանց). There are more than 100 suffixes in the Armenian language, by means of which lots of new words can be formed, belonging to different parts of speech. (70, 80, 193 (are these section numbers?)). Besides the suffixes already mentioned in other sections, these are no less productive:

- անակ- հաղթանակ victory, գուպանակ spring, ժամանակ time, եղանակ weather, ցուցանակ signboard, մրցանակ prize, etc.
- անի- գեղանի pretty, լեզվանի thunderer (eloquence language (as in literary expression?))
- ստ- պոչատ dock-tailed, գունատ pale, կրճատ brief, կիսատ incomplete, etc.
- արար- գործարար business (adj.), կովարար pugnacious, ձևարար tailer's cutter, ներկարար painter, etc.
- գար- խելագար crazy, ցավագար ailing, լեզվագար chatterer, etc.
- գին- հիվանդագին ailing, թախանձագին convincing, լալագին sorrowful, մոլեգին furious, սրտագին cardiac (cardiac, cordial?), etc.
- գույն- ազնվագույն most honest, հնագույն most ancient, բարձրագույն highest, խոշորագույն largest, etc.
- եղ- համեղ tasty, ուժեղ strong, հանճարեղ ingenious, սհեղ terrible, գունեղ colorful, etc.
- եղեն- ոսկեղեն gold, ուտելեղեն edible products, ամանեղեն dishes, սպիտակեղեն linen, հրեղեն flame-colored, etc.
- ենի- մայրենի native, վայրենի wild, խնձորենի apple tree, տանձենի pear tree, կեռասենի cherry tree, etc.
- եստ-, իստ-, ուստ-, պահեստ store-house, գովեստ praise, հանգիստ rest, փախուստ flight, հագուստ clothes, կորուստ loss, etc.
- երրորդ-, բորդ-, երկրորդ second, չորրորդ fourth, իններորդ ninth, քսանհինգերորդ twentyfifth, հարյուրերորդ hundredth, etc.
- ին- վերջին last, վերին top, վերստին again, խորին deep, դժվարին difficult, etc.
- կոտ- վախկոտ coward, ցասկոտ angry, ամաչկոտ diffident, նախանձկոտ envious, ծիծաղկոտ smiling, etc.
- յալ- անցյալ past, դարձյալ again, կատարյալ perfect, որոշյալ definite, տվյալ given, present, etc.

- յան- առավոտյան in the morning, երեկոյան in the evening, մայիսյան may (adj.), արևելյան eastern, պլատոնյան Platonic, etc.
- ուկ- մարդուկ small person, թզուկ lilliputian, խղճուկ pitiful, հեղուկ liquid, կտրուկ sharply, etc.
- ույթ- ձանձրույթ bore, երևույթ happening, երեկույթ evening, ձևույթ morpheme, սովորույթ custom, զայրույթ fury, etc.
- ույք- հաճույք pleasure, պիտույք belonging, դրույք salary, կահույք furniture, etc.
- ունդ- սերունդ generation, սնունդ nourishment, ծնունդ birth, etc.
- ուրդ- ժողովուրդ people, խորհուրդ conference, արձակուրդ holiday, խառնուրդ blend, պարապուրդ truancy, etc.
- ցու- հարսնացու bride, սերմացու seed, մահացու deadly, etc.

Note: Before suffixes beginning with a consonant usually a connecting vowel *u* is put, which can be taken as part of the suffix.

Ex. 331

Copy out and underline the suffixes.

Կարճ ժամանակ նայեց ինձ զարմացած, հետո ուսերը թոթվեց տարակուսանքով և գլուխը նորից կախեց գրքի վրա, առանց այլևս ոչ մի խոսք արտասանելու. ըստ երևութին, ուզում էր հասկացնել, որ հանգիստ թողնեմ իրեն և հեռանամ: Բայց ես համառորեն կանգնած էի նրա առջև և ակամա հիանում էի, դիտելով նրա գեղեցիկ գլուխը շատ հարուստ, փափուկ ու փայլուն մազերով, որոնք նոր ծագած արևի թեք ճառագայթների տակ բազմազան երանգներ էին ընդունում, ինչպես փոքրիկ երեխաների թավշյա մազերը:

(Նար- Դոս, "Մպանված աղավնին")

Ex. 332

Form derivative words from the following words.

ազգ, գիր, եղբայր, ընկեր, քաղաք, using suffixes -ական, -ային, -ացի, -ություն, -ին, -ավոր:

E.g. -ական ազգ -ային -ություն

Ex. 333

Copy out the given words and mark the suffixes.

աշխատանք, բրդոտ, գլխավոր, դպրոց, եղբայրական, զինվոր, զարդարանք, ընկերաբար, իտալացի, լեհուհի, խոհուն, երգիչ, կարգին, կենարար, հանդերձարան, մատնիչ, շնորհք, հոգյակ, որսորդ, պտուտակ, ցուցմունք, վերջապես, տասնյակ, ուժեղ, փայտյա, քաջություն:

E.g., աշխատանք = աշխատ + անք

Ex. 334

Make up derivative words by means of the following suffixes.

-արար, -եղեն, -ենի, -յան

E.g., արար: շինարար, գործարար, փրկարար, հայտարար:

Basis and ending

Հիմք և վերջավորություն

Section 210

The part of the word without the ending is called basis (հիմք), and the ending (վերջավորություն) is the invariable part of the word that stands after the basis. Endings do not form new words, and only express grammatical relations between words. As endings in the Armenian language occur indexes of declensions and conjugations, articles (ս, դ, ն, ը) and particles of plural (եր, ներ, իկ, ք). E.g., in the sentence Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է the forms Երևան, Հայաստան and մայրաքաղաք are the bases, and -ը, -ի, -ն are the endings.

Section 211

A basis can be either underivative or simple (պարզ), or derivative (բաղադրյալ). The underivative (պարզ) basis consists of only one stem, e.g., տուն house, քաղաքից from the town, գրել to write, սենյակում in the room, etc. In this case the basis coincides with the stem of the word. The derivative basis can consist of:

- one stem and one or more affixes (prefixes and suffixes), e.g., լուսավոր light (adj.), գրականություն literature, համաշխարհային world (adj.), անամոթաբար shameless, etc.
- two or more stems, e.g., գրասեղան writing table, խմբագիր editor, գյուղատնտես agriculturist, etc.
- two or more stems and one or more affixes, e.g., անպարտաճանաչ lacking in conscientiousness, գյուղատնտեսություն agriculture, անգրագիտություն illiteracy, մանրալուսանկարչություն microphotography, etc.

Ex. 335

Copy out and underline the stems of the words.

Երջանկությունը թե երկար լիներ՝
Ինչու՞ կթռչեր ջահելությունը,
Ինչու՞ նրա հետ
Կթռչեր անհետ
Մարդուս հասակի անդարձ գարունը.
Երջանկությունը թե անդարձ լիներ՝
Ինչու՞ չէիր գա իմ գիրկը նորից,
Ինչու՞ ինձ սիրտդ մտքից կհաներ,
Ինչու՞ չէր պոկվի սիրտս հուշերից,
Երջանկությունը թե հավերժ լիներ,
Ինչու՞ կարոտդ գլխիս կձյուններ...
[Հովհ. Շիրազ](#)

Ex. 336

Define the types of word in the given words.

արձանագրություն, դատարան, թարգմանիչ, ժամացույց, լուռ, ծիծաղ, նյարդային, հասարակ, վիրաբույժ, բերքահավաք.

Ex. 337. Copy out and underline the endings.

Դու մի՛ հավատա ժպտուն աչքերին.
Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կորստյան անդունդի ծայրին,
Միամիտ մարդկանց քաշելու համար:
Ահա պոետն էլ պատրանքով հարբած՝
երվեց մի անգամ ժպտուն աչքերի,
Ու որքա~ն տանջվեց, տառապեց խաբված,
Ու որքա~ն սրտում գանգատներ ունի...
Դու շատ մի՛ խաբվիր ժպտուն աչքերից.
Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ,
Ծլում են սրտի ավերակներից,
Տխուր հատակը ծածկելու համար:
Ահա պոետն էլ՝ տառապած մի մարդ,
Որ սրտում այնքան գանգատներ ունի,
Բայց հաճախ այնպես ժպտում է զվարթ,
Ասես թե քեզնից բախտավոր լինի:
[Հովհ. Թումանյան](#)

Ex. 338

Copy out and define the component parts (stems, affixes, bases and endings) of each word.

Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը: Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողերով, որ աչք էին շլացնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պատած էր ձյունի ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում էր իր դեմքը անթափանցիկ շղարշով: Կանաչագարդ դաշտավայրը, ցողված մարգագետիններով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ակեղծությամբ: (գ?)եղեցիկ էր այդ առավոտը:

([Ըաֆֆի](#), "Սամվել")

Types of words by formation

Բառերի տեսակներն ըստ կազմության

Section 212

By formation words in the Armenian language divide into two groups: simple (պարզ) and compound (բաղադրյալ).

Section 213

Simple are called words that consist of one stem, e.g., տուն house, մարդ man, էս I, քաղաքից from the town, սեղաններ tables, կարդացի I read, etc.

Section 214

Compound are called words formed:

- a. from one stem and one or more affixes, e.g., դասարան class, դժբախտություն misfortune, ուսումնական study (adj.), etc.
- b. by means of several stems, e.g., շոգեքարշ steam locomotive, դասատու teacher, հեռագրալար telegraph wire, etc.
- c. from one stem and one or more affixes, e.g., քննադատություն criticism, անսահմանափակություն unlimited, մարդասիրական philanthropic, etc.

Conditioned by these peculiarities, compound words divide into: a) պարզ ածանցավոր (simple productive), b) բարդ (composite) and c) բարդ ածանցավոր (composite productive).

Section 215

Simple productive are called words that have one stem and one or more affixes. E.g., աղաչանք (= աղաչ + անք) entreaty, անթառամ (= ան + թառամ) unfading, բազմություն (= բազմ + ություն) multitude, զինվորական (= զին + վոր + ական) soldier (adj.), սիրային (= սիր + ային) love (adj.), վերամշակում (= վերա + մշակ + ում) processing, մակագրություն (= մակա + գր + ություն) inscription, etc.

Section 216

Composite are called words formed of two or more stems. E.g., ատամնաբույժ (= ատամն + ա + բույժ) dentist, բազկաթոռ (= բազկ + աթոռ) arm-chair, ժամադրավայր (= ժամ + ա + դր + ա + վայր) dating place, երկնակամար (= երկն + ա + կամար) sky, այնօր (= այս + օր) today, հեռախոսագիր (= հեռ + ա + խոս + ա + գիր) telephone message, etc.

Note: In most cases in the Armenian language composite words form from two stems.

Section 217

Composite productive are called composite words that have some affix, e.g., անձնազոհություն (= անձն + ա + զոհ + ություն) selfless, (ինքնասպասարկում?) (= ինքն + ա + սպաս + արկ + ում) self-service, հանրագիտարան (= հանր + ա + գիտ + արան) encyclopaedia, քաղաքատնտեսություն (= քաղաք + ա + տն + տես + ություն) political economy, բազմադարյան (= բազմ + ա + դար + յան) centuries-old, etc.

Ex. 339

Copy out and separate the stems from prefixes and suffixes. անազնվություն, բժշկական, ենթախումբ, անսխալ, ընդօրինակել, թիկնեղ, արտասահմանյան, գործարանային, լեզվանի, կեղծարար, համակրանք, մեղմորեն, նախապատրաստություն, բերք, սահուն:

Ex. 340

Define which of these given words are with prefix, suffix, or prefix-suffix.

արտադրական, բնակարան, ժամանակավոր, լրջություն, համագյուղացի, մարդկային, ստուգողական, անսահման, դժգույն, վճռականորեն, ապերախտ, բացատրական, փոշոտ:

Ex. 341

Copy out and define simple productive words.

արնան լուսե ամպի նման՝
Այս խավար կյանքում
Դու նետել ես մի թովչական
Ժպիտ իմ հոգուն:
Մոլոր սրտիս տառապանքի
Անլույս աշխարհում
Դու վառել ես մի այլ կյանքի
Արևոտ հեռուն:
Դրոշմել ես բոցե կնիք
Մեռած իմ հոգում.
Դու՛ իմ հավատ, իմ հայրենի՛ք,
Դու՛ իմ փրկություն...
Վ. Տերյան

Ex. 342

Copy out and underline composite words.

1. չեքով կերպով սեղմում է Ջագունյանի ձեռքը և հրավիրում հյուրասենյակ: 2. Հետևյալ օրը Էմման, մտաբերելով գիշերվա իր դրությունը, շատ զարմացավ: 3. Երկաթուղակայարանում նրան ճանապարհ դրին Ջաքարն ու Էմման և նրա մորաքրոջ փեսան ու աղջիկը: 4. Այդ բոլորին դուռը արագ բացվեց, և շտապով ներս մտավ մանկահասակ մի կին: 5. Հյուրասենյակում Ջագունյանը կանգնած էր լուսամուտի մոտ և հանում էր շագանակագույն ձեռնոցները: 6. Հյուրանոցի մուտքի մեջ կախած գրատախտակի վրա կարդալով Ջագունյանի ազգանունը և նրա բռնած սենյակի համարը, նա բարձրացավ վերև:

([Նար-Դու](#), "Ջագունյան")

Ex. 343

Translate into Armenian.

airplane, samovar, machine-gun, earthquake, fisher, diligent, land surveyor, specialist, selfish.

Ex. 344

Translate into English.

առակազիր, բախտախնդիր, գրավաճառ, դասախոս, ժամացույց, լավատես, խմբագիր, կարճատես, շքանշան:

Ex. 345

Read and define composite productive words.

1. Վիճաբանությունը գուցե շարունակվեր, եթե կրկին ներս չմտներ Լևոնը: 2. Ես հաղորդում էի նրան բոլորը, ինչ որ լսում էի տանտիրուհուց: 3. Մի քանի բոլե նրան պաշարեց անձնասիրության և ամոթի զգացումը: 4. Բայց կեղծ ինքնասիրությունը, որ այնքան ստրկացրել էր

նրան, այս անգամ ևս օգնության հասավ: 5. Թվաց ինձ, որ նա հետաքրքրվեց կոշկակարի խոսքերով և պահանջեց մանրամասնություններ:

([Շիքվանգադե](#), "Արտիստը")

Ex. 346

Translate into English.

աշխարհագրություն, փայտամշակում, ուղղախոսական, վիրաբուժություն, վարսավիրանոց, մասնագիտական, գրաճանաչություն, համաձայնագիր, վերահաշվառում.

Ex. 347

Translate into Armenian.

autobiography, world outlook, ten year old, geology, illiteracy, majority, responsibility, class struggle.

Ex. 348

Read and find simple and composite words with their variety.

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ ահատեսիլ ու հաղթական՝
Երևում էր երկաթուղու կայարանը հսկայական.
Լսվում էր մեկ շոգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում-
Մորթում էին կարծես այնտեղ խելագարված մի անասուն...
Ճշում է սուր, հուսակտուր, ու հուսահատ ձայնը նրա,
Որպես անդարձ մահի մի լուր տարածվում էր դաշտի վրա:
Ցրված էր նա, կայարանի, դաշտովը մեկ լայնատարած՝
Դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք, ու արևելք-
Ուղիները երկաթագիծ ձգվել էին ամենուրեք:-
Երակների պես երկաթե քաղաքամոտ կայարանից:
Հեռու~, հեռու~ ձգվել էին ուղիները երկաթագիծ:
([Ե. Չարենց](#), "Ամբոխները խելագարված")

Types of composite words

Բարդության տեսակները

Section 218

Composite words in the Armenian language divide into two groups:

a. Իսկական բարդություններ (real composite words), e.g., հեռախոս telephone, քաղցրաձայն mellifluent (sweetvoiced, honeyvoiced), ջրաղաց watermill, կարմրադրոշ holding the red flag, etc.

b. անիսկական բարդություններ (unreal composite words), e.g., որովհետև because, այսօր today, լաց լինել to cry, կանաչ-կարմիր green-red, հինգ-վեց five-six, մեկ-մեկ one by one, տեսակ-տեսակ various, etc.

Real composite words

Section 219

Real are called those composite words, which are closely connected with each other and together have a definite lexical meaning.

Real composite words have the following peculiarities:

a. Their components usually combine with each other by means of connecting vowel *u*, e.g., գրադարան (= գր + *u* + դարան) library, բոցավառ (= բոց + *u* + վառ) fiery, ժամացույց (= ժամ + *u* + ցույց) watch, հրամանատար (= հրաման + *u* + տար) commander, etc.

b. In those cases where the coming component begins with a vowel, the connecting vowel isn't used, e.g., թանաքաման (= թանաք + աման) inkpot, զուգընթաց (= զուգ + ընթաց) accompanying, հանրօգուտ (= հանր + օգուտ) of general utility, դասընկեր (= դաս + ընկեր) classmate, etc. Note: This rule is not followed by those real composite words, in which as the first component serves the word ամենա, e.g., ամենախիմաստուն (= ամեն + *u* + իմաստուն) wisest, ամենաուրախ (= ամեն + *u* + ուրախ) happiest, ամենօգտակար (= ամեն + *u* + օգտակար) most useful, ամենաազնիվ (= ամեն + *u* + ազնիվ) most honest, etc.

c. In case the first component ends with vowel *i*, the latter joins vowel *u*, and turns into *te*, e.g., բարեկամ (< բարի + *u* + կամ) friend, շոգեքարշ (< շոգի + *u* + քարշ) steam locomotive, գարեջուր (< գարի + *u* + ջուր) beer, տարեդարձ (< տարի + *u* + դարձ) anniversary, ուղեգիր (< ուղի + *u* + գիր) voucher, etc.

d. Real composite words can also form without the connecting vowel. Such forms, however, don't make a large group, e.g., լրտես (= լր + տես) spy, հրձիգ (= հր + ձիգ) incendiary, հրթիռ (= հր + թիռ) rocket, ջրկիր (= ջր + կիր) water carrier, ջրհոր (= ջր + հոր) ditch, քաղհան (= քաղ + հան) weeding, etc.

Note: Words that in Old Armenian had the final letter *u*, and in present word combinations serve as the first component, usually restore it, e.g., ատամ - ատամնաբույժ, բեռ - բեռնատար, լեռ - լեռնադաշտ, մաս - մասնագետ, etc.

Ex. 349

Form real composite words from the given word combinations and translate them into English.

ազգ-անուն, ազդ-նշան, արև-շող, բազում-օգուտ, գիր-մեքենա, թուխ-հեր, ինքն-գլուխ, լի-արժեք, ծածուկ-գիր, կանաչ-գարդ, մարդ-համար, նավ-հանգիստ, չար-որակ, ջերմ-եռանդ, սիրտ-բաց, տառ-կիր, ուղիղ-ձիգ, քաջ-սիրտ.

E.g., ազգ-անուն = ազգանուն surname

Ex. 350

Form productive words from the given words using suffixes -ություն, -ային, -ական.

ուշադիր, բարեկամ, դասակարգ, ընկերասեր, խոսակից, ձկնորս մասնագետ.

E.g., ձկնորս ձկնորսություն, ձկնորսական, ձկնորսային:

Ex. 351

Copy out and underline real composite words. Say which of them are formed without the connecting vowel.

1. Շատ դժվար էր սպիտակամորթի համար համոզել սևամորթին, որ սպիտակամորթն անկեղծ է: 2. Առավոտվանից ջրհորն էին իջեցնում մի փոքրիկ կողով: 3. Ամառ և ձմեռ մեզ համար ժամանակն ու ժամացույցն ունենին իրենց խստագույն օրինաչափությունը: 4. Քնած ընկերների շնչառությունն է միայն լավում, կարծես ոսկյա հասկերն են շնչում: 5. Մթնշաղ է, բայց փողոցում շատ մարդիկ կան, օդը տաք է: 6. Եվ արևադարձային այդ երկրում կառուցվում են մարմարյա քաղաքներ: 7. Մաքրեցին թանձր փոշին արվեստագետի ստեղծագործությունների վրայից: 8. Երեկո էր, երբ շոգենավը հասավ Նյու- Յորքի նավահանգիստը: 9. Ինետան սեղանի շուրջը մի քանի բաժակ զարեջուր խմելուց հետո՝ ես առաջարկեցի Ասատուրին գնալ և երաժշտություն լսել: 10. Նրան զարմացրեց փոքրիկ մայրաքաղաքի արտակարգ եռուզեռը:

Վ. Թոթովենց

Ex. 352

Translate the following words into Armenian and underline their connecting vowel.

hydrocarbon, eye-witness, inable-bodied, having many children, honest, strike, textbook, selfconsciousness, newspaper seller, near-sighted, flue.

Unreal composite words

Անիսկական բարդություններ

Section 220

Unreal are called those composite words, between components of which the syntactic connection is not fully obscured. Thus, they are used either separately, or can be easily separated from each other.

The unreal composite words divide into three groups:

1. Կցական բարդություններ - adjoining
2. Հարադիր բարդություններ - compound
3. Կրկնավոր բարդություններ - repetitions

Adjoining composite words

Կցական բարդություններ

Section 221

Adjoining are called those unreal composite words, components of which can easily be separated from each other although they are used together, e.g., այսօր (= այս + օր) today, ինչպես (= ինչ + պես) how, տանտիկին (= տան + տիկին) householder, որևէ (= որ + և + է) some, որպեսզի (= որ + պես + զի) to, տասնհինգ (= տասն + հինգ) fifteen, առևտուր (= առ + և + տուր) trade, etc.

Note: The component parts of this type of composite words, as a rule, are written together. They take one stress, which falls on the vowel of last syllable: ինչպիսի' (which), որտե'ղ (where), այսպե'ս (so), etc.

Ex. 353

Form adjoining composite words from the given words.

կես-օր, այդ-չափ, այն-տեղ, այս-քան, ել-ու-մուտ, կես-գիշերային, ինչ-պես, մի-և-նույն, քսան-երկու, նույն-պես, որ-և-իցե.

Ex. 354

Copy out and underline adjoining composite words.

1. Իսկ ձմռանը արևն այստեղ հազվադեպ է երևում: 2. Տանտերը լղար մի մարդ էր, կարճ խուզած մազերով: 3. Երկրի ու համաշխարհային մասշտաբի լուրերն այստեղ հասնում են նույն օրը: 4. Եվ դրվեց Նազարի առաջքաշման հարցը: 5. Եվ Նազար Աղայանը, որ լիկկայանում էր գրաճանաչ դարձել, այնուամենայնիվ կարողացավ քսանհինգ տարուց ավելի ղեկավարել շրջանը: 6. Այնտեղ նույնպես դրությունը լավ չէ: 7. Երկուշաբթի օրը, երբ Արշավիր Դագեսյանը գալիս է աշխատանքի, քարտուղարուհին նրան մի ծրար է հանձնում: 8. Նա մոտավորապես քառասուներեք-քառասունհինգ տարեկան մարդ էր, բայց երբեմն ծերանում էր այնպես, ասես յոթանասուն տարեկան լիներ:

(Ս. Այվազյան, "Բարի առավոտ")

Ex. 355

Translate into English.

այսուհետև, այնուամենայնիվ, երբևիցե, որովհետև, քառասունչորս, այնպիսի, երեքշաբթի, ամենուրեք.

Compound composite words

Հարադիր բարդություններ

Section 222

Compound are called those unreal composite words that are formed by means of comparing different words. There are various types of them in the Armenian language. E.g., գոռում-գոչում hue and cry, կանաչ-կարմիր green-red, գնալ-գալ go-come, երկու-երեք two-three, տուն ու տեղ house and place, սար ու ձոր mountain and canyon, մարդ ու կին man and woman, քայլ առ քայլ step by step, թույլ տալ to permit, պար գալ to dance, զգալ տալ to make felt, etc.

Section 223

Components of compound composite words are written separately. These composite words consist of:

- Words that are close in meaning. In that case a dash is put between them, e.g., տխուր-տրտում sad-depressed, աղմուկ-աղաղակ hue and cry, անթիվ-անհամար countless, կահ-կարասիք utensils, etc.
- Words of opposite meaning. In this case also a dash is put between them, e.g., գիշեր-ցերեկ day and night, սև-պիտակ black and white, բարձրանալ-իջնել rise and fall, մեծ-փոքր big and small, etc.

c. Words that combine with each other by means of conjunction ու or prepositions ընդ, առ. In this case, except the conjunction and the preposition each part is stressed, e.g., մե'ծ ու փո'քր big and small, մե'րթ ընդ մե'րթ sometimes, ժամանա'կ առ ժամանա'կ time to time, խո'սք ու զրու'յց word and talk, կե'ր ու խու'մ food and drink, կա'րգ ու կանո'ն order and rule, etc. Note: In case if the stress falls on the second component, the compound composite word is written together, and turns into an adjoining composite word, e.g., ջա'րդ ու փշու'ր and ջարդուփշու'ր, մե'րթ ընդ մե'րթ and մերթընդմե'րթ, ա'նց ու դա'րձ and անցուդարձ, etc.

d. Forms formed from words of different meaning. Here belong mostly compound verbs, of which the components are written separately, e.g., բաց անել to open, թույլ տալ to allow, լաց լինել to cry, դուրս գալ to go out, ներս մտնել to enter, վեր կենալ to stand up, etc.

Ex. 356

Copy out and underline the compound composite words.

1. րել- կարդալ չգիտեր: 2. Դեսպանատան աշխատակիցը մի տասը-քսան բոպե այս ու այն կողմ է վազվզում: 3. Բառերը չորացել-կպել են շուրթերիցս ու հագիվ են պոկվում: 4. Մերթ ընդ մերթ կանգնեցնում է մեքենան ու վայր իջնում: 5. Իսկ ալիքները չորանում են օրեցօր, ժամ առ ժամ: 6. Իմ կյանքը անցավ ծափ ու ծաղկի մեջ: 7. Տղան ժամանակ չտվեց երկար-բարակ մտածելու: 8. Արքի է զարնվում հաստատության մեջ լինող կարգ ու կանոնը: 9. Ճանապարհով մերթ ընդ մերթ գալիս-անցնում էին գործից վերադարձող հոգնած ու արևախանձ գյուղացիները:

([Ս. Կապուտիկյան](#), "Քարավանները դեռ քայլում են")

Ex. 357

Read and explain peculiarities of forming compound composite words.

1. Նա միանգամից գունատվեց և տեղն ու տեղը մնաց քարացած: 2. Այժմ Սաքուլը ոտով-գլխով կորած էր վերմակների տակ: 3. Փողոցում բոլորովին պատահական կերպով, երես առ երես հանդիպեցի նրան: 4. Կինը հանկարծ արթնացավ ու վեր թռավ տեղից: 5. Այդ և հետևյալ օրը Սաքուլը զիջեր-ցերեկ պառկած էր անկողնում՝ եկեղեցու պատի տակ: 6. Դավիթ Ֆոմիչը ահ ու սարսափով բռնված՝ իր ընտանիքի հետ նորից փախավ Հյուսիսային Կովկաս: 7. Ադամին դուր չեկան անձանոթի անձնավստահ գոռում- գոչումները: 8. Իտնականներն ահ ու դողով սկսեցին հերթով նայել, զննել, քննել գտնված իրերը: 9. Դահիճներն իսկույն դուրս տարան նրանց ու բոլորին էլ մի առ մի գլխատեցին:

[Նար-Դոս](#)

Ex. 358

Find the words, formed from compound composite words.

1. Նստեց ու սկսեց մանրամասն հարցուփորձ անել: 2. Կերուխումը շարունակվեց: 3. Եվ նրա արդուզարդի ու կրծքի վրա միշտ անպակաս էին այդ երկու գույնի ծաղիկները: 4. Նա կարուձևի վարժուհի էր: 5. Փողոցներում անցուդարձը գրեթե դադարել էր: 6. Պատրիկյանը աչքերը խոնարհեց և սկսեց գլխարկը մեքենայաբար շուռումուռ տալ ծնկան վրա: 7. Իրար դեմուդեմ նստած էին Պետրոսի փոքրիկ տղան ու աղջիկը:

[Նար-Դոս](#)

Repetitions

Կրկնավորներ

Section 224

Repetitions are compound words formed by repetition of one and the same word, e.g., առանձին-առանձին one by one, տեսակ-տեսակ various, մեծ-մեծ big-big, երկար-երկար long-long, սիրուն-սիրուն pretty-pretty, սև-սև black-black, կամաց-կամաց slow-slow, լավ-լավ good-good, մեկ-մեկ one by one, etc.

Note: Between the components of this type of words usually a dash is put in written language.

Section 225

Repetitions, which the Armenian language is so rich of, can also be used with changed sound. Mostly the second part changes sound, e.g., մանր-մունր, պարապ-սարապ, դատարկ-մատարկ, բան-ման, հարայ-հուրայ, աման-չաման... but ավալ-թավալ (< թավալ - թավալ), առոք-փառոք (< փառոք - փառոք), արան-տարան (< տարան - տարան), etc.

Note: When compound parts of repetitions join each other by means of conjunction ու or prepositions (ընդ, առ), they make compound composite words which in their turn can turn into adjoining composite words, e.g., մե'կ-մե'կ - մե'կ առ մե'կ - մեկառմե'կ, մե'րթ ընդ մե'րթ - մերթընդմե'րթ, լի ու լի' - լիուլի', ձի'գ ու մի'գ - ձիգումի'գ, շու'ռ ու մու'ռ - շուռումու'ռ, etc.

Ex. 359

Copy out and underline repetitions.

1. չորսընթաց անուշ- անուշ մտմտալով, մանուկ օրերից մի հեքիաթ է պատմում՝ մանկության պես սիրուն, մանկության պես ոսկի: 2. Ուրախ- ուրախ բարևեցի խմբված ընկերներին ու ընկերուհիներին: 3. -Թող տուն գա, առոք-փառոք ապրի: 4. Դաշտերից ու արտերից դանդաղ-դանդաղ տուն էին դառնում շինականները: 5. Երաժշտությունը նվագում էր, և տեղ-տեղ պարում էին զույգերը: 6. Բույնը մնաց- մնաց ինքնիրեն քանդվեց: 7. Ճանապարհի ավերին հազարաբույր ու հազարաթույր ծաղիկները բյուր- բյուր ձևերով՝ պճնազարդել էին բուրաստանները: 8. Լալիս էր երեխան լուռ ու մունջ, և արցունքները գլոր- գլոր սահում էին նրա գունատ երեսից: 9. ... Բայց սիրում էր մեծ- մեծ խոսել և գլուխ գովել: 10. Տեսան ուրիշ- ուրիշ մարդիկ, ուրիշ- ուրիշ բարքեր ու ժամանակին եկան կանգնեցին հոր առջև:

[Ավ. Իսահակյան](#)

Ex. 360

Form repetitions from the given words and use them in sentences.

արագ, բարձր, գույն, գույգ, լայն, խեղճ, ծանր, կապույտ, մեկ, նոր, շատ, սուր, տաք:

Ex. 361

Translate into Armenian and underline the repetitions.

1. - Oh, no, he told me himself,- I have already asked him about it,- he didn't really live like that and lost many-many minutes. 2. He only little- little quivered, but no sound was heard. 3. - I look, how she so devout- devout crosses herself. 4. - If so, then I have been cheated at, cheated but not by Chebarov, long-long ago.

Dostoyevski

(Note: although you can leave these repetitions in English to suggest the Armenian repetitions you want in the translation, most of them are not good style in English.)

Ex. 362

Make sound-changing repetitions from given words.

մարդ, մանր, շարան, ոլոր, աղ, բան, պակաս, ձայն.

E.g., մարդ - մուրդ:

Abbreviated words

Հասարակումներ

Section 226

In the Armenian language abbreviated words form:

a. Of the first letters of words:

ՍՍՀՄ - (USSR) Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԱՄՆ - (USA) Ամերիկայի Միացյալ նահանգներ
ՄԱԿ - (UN) Միավորյալ ազգերի կազմակերպություն
ՄՄԿԿ - (CPSU) Սովետական Միության կոմունիստական կուսակցություն
բուհ institute of higher education - բարձրագույն ուսումնական հաստատություն

b. This type of abbreviated words is called letteral (տառայաին).

c. Of initial syllables of words: Կենտկոմ (the Central Committee) - կենտրոնական կոմիտե, քաղդեկ (political instructor) քաղաքական դեկավար, ժողտնտխորհ (Council of National Economy) - ժողովրդական տնտեսության խորհուրդ, խմբկոլ editorial board - խմբագրական կոլեգիա, զինկոմ military commissary - զինվորական կոմիսար, քաղկոմ town committee քաղաքային կոմիտե, etc.

This type of abbreviated words is called syllabic (վանկային);

d. Of first syllable of the first word and a full word: արհմիություն (trade union) - արհեստակցական միություն, բուժօգնություն (medical aid service) - բժշկական օգնություն, ժողդատարան (People's Court) - ժողովրդական դատարան, պատխմբագիր (managing editor) - պատասխանատու խմբագիր, քաղբաժին (political department) քաղաքական բաժին, etc.

This type of abbreviated words is called syllable-wordly (վանկաբառային).

Besides these three general types in the Armenian language are also used such abbreviated words which consist:

1. Of initial syllables and initial letters: ՀամԼԿԵՄ (L. Y.C. S.U.) Համամիութենական Լենինյան Կոմունիստական Երիտասարդության Միություն, Համ Կ(բ)Կ (S. P. S. U. (B). Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) միություն;

2. Of full word and initial letters or the other way around: Հայկական ՍՍՀ (Armenian SSR) - Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, ՍՍՀ Միություն (Union of SSR)- Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն: Such abbreviated words are called mixed (խառը).

Note: Abbreviated words formed from common nouns are usually written with small letter: unցապ (social insurance), բուհ (institute of higher education), շրջկոմ (district committee), քաղբյուրո (Political Bureau), etc.

3. Abbreviated words formed from proper names are usually written with capital letter: ՍՄԿԿ (CPSU), ԱՄՆ (USA), etc.

4. In syllable-word abbreviated words formed from common and proper names, only the abbreviated part of the common name is written with capital letter, e.g., Երբաղկոմ (Yerevan town's committee), Լենինյան կոմունիստական երիտասարդության միություն (Lenin's Communist Youth Union), etc.

Ex. 363

Copy out and underline abbreviated words.

1. Ծերունին ժամացույցը հանձնեց շրջգործկոմի նախագահին: 2. Իսկ երբ քաղաքում փոխօգնության կոմիտե՝ Փօկ ստեղծեցին, շատերի հետ բանեց նաև Ճեղ Ավան բիճայի բախտը: 3. Նեպի տարիներն էին: Նեպը գնաց, նեպմանը մնաց: 4. Հասնում են ու վազում զագս: 5. Քեռին միլպետի հայրն է, կինը՝ պարենային խանութում վաճառող: 6. Հիմա հին թեյարանը չկա: Քանդեցին, տեղը պետքանկի շենքը շինեցին: 7. Իր վաստակով ապրեց, սովորեց, գյուղբաժնում գոտեխնիկ դարձավ: 8. Հանեցին, սակայն բերին, նշանակեցին շրջանային անտառտնտեսության պետ: 9. Վարդանին կանչեցին զինկոմիսարիատ: 10. Սա ժողդատարանի շենքն է:

(Ս. Խանգաղյան, "Մատյան եղելություն")

Ex. 364

Write the following abbreviated words as full words.

Արիկոմ, բանկոռպ, գիտհրատ, ԼԿԵՄ, խնայողրամարկդ, կոմկուս, կուսկազմակերպիչ, ՄՏԿ, պետօպերա, պետքաղվարչություն, տեղկոմ, քաղգործկոմ, ֆինբաժին, արտգործմինիստություն.

Ex. 365

Write the abbreviated forms of given combinations and translate them into English.

Հայկական հեռագրական գործակալություն, ուսումնական մասի վարիչ, շրջանային գործադիր կոմիտե, արտաքին գործերի մինիստրություն, առողջապահության բաժին, Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Հանրապետություն, Հայաստանի պետական հրատարակչություն, սոցիալիստական մրցություն, պատասխանատու քարտուղար, զինվորական թղթակից.

Ex. 366

Translate into Armenian and explain differences between English and Armenian.

USSR, Institute of higher education, Political Bureau, Political worker, military registration and enlistment office, the State Bank.

Type of words by their meaning and sound

Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի

Section 227

In the Armenian language words divide by their meaning and sound into:

- a. homonyms (նույնանուն or համանուն)
- b. synonyms (հոմանիշ)
- c. antonyms (հականիշ)

Section 228

Homonyms are words that sound alike, but have completely different meanings, e.g., այր (man), այր (cave); ավել (more than), ավել (broom); կետ (spot), կետ (whale); հարկ (tax), հարկ (store); մատ (finger), մատ floormat; սեր (love), սեր (cream); փող (tube), փող (money), etc.

Section 229

Synonyms are words differently sounding, but similar or identical in meaning, e.g., պատուհան - լուսամուտ (window), մազ - վարս - հեր (hair), ձի - նժույգ - երիվար (horse), լավ - սիրուն - գեղեցիկ (good - pretty - beautiful), կռիվ - մարտ - պատերազմ - պայքար (fight - battle - war - struggle), կառուցել - շինել - պատրաստել - ստեղծել (build - erect - prepare - construct), մեծանալ - աճել - հասունանալ (grow - ripen), etc.

Note: Synonyms, identical by meaning, in the Armenian grammar are called նույնանիշ բառեր: (Not clear: does that include all synonyms, or only those that are identical (and excluding those that are just similar).)

Section 230

Antonyms are called those words that are opposite in meaning, e.g.

լույս (light) - խավար (dark), կարճ (short) - երկար (long), սև (black) - սպիտակ (white), մեծ (big) - փոքր (small), հաստ (thick) - բարակ (thin), գնալ (go) - գալ (come), լավ (good) - վատ (bad), etc.

Ex. 367

Copy out and underline homonyms.

1. Մարտը գարնան ամիս է: 2. Վերջապես մարտը ավարտվեց մեր հաղթանակով: 3. Ես բարձրացա ձեր շենքի 5-րդ հարկը: 4. Տերը ծառայից հարկ է պահանջում: 5. Դու չես մոռացել մեր նախկին սերը: 6. Երեխան ախորժակով կերավ կաթի սերը: 7. Բանակայինը մաքրեց հրացանի փողը: 8. Փողի քսա-կը, փողի քսակը, բարձրացնում է մարդու հասակը ([Հովհ. Թումանյան](#)): 9. Ոչխարի հոտը արածում է կանաչ դաշտերում: 10. Կարմիր վարդերի հոտը տարածվել էր պարտեզում:

Ex. 368

Find corresponding synonyms for the given words.

արեգակ, մեծ, պայծառ, հիանալ, ուտել, սպիտակ, նենգ, ծերունի, ծածկել, հիմար, քամի.

E.g., Արեգակ - արև - արփի - արեգ

Ex. 369

Translate the following words into Armenian using different synonyms.

read, rise, point, top, light, modest, leave taking, separately, greedy.

E.g., read - ընթերցել - կարդալ.

Ex. 370

Find antonyms for the given words and translate into English.

ուրախ, լայն, նեղ, ծնվել, առնել, հաղթանակ, գիշեր, աղջիկ, երկինք, սեր, վախ, դանդաղ, խելոք:

Ex. 371

Translate into Armenian.

live - dead, old - young, warm - cold, noise - silence, wet - dry, morning - evening, north - south, far - near, respect - contempt, dirty - clean, white - black, clever - fool, expensive - cheap.

Ex. 372

Analyze words by composition.

Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին տխուրացյա ու համեստ.
Այնպես վառ էր լեռնադաստեր դեմքը բաց,
Նայվածք այնպես հրեղեն ու անարվեստ:
Եվ հյուսիսային հեռուներում ու ցրտում,
Կարծես ցուլաց իմ նաիրյան արևն ալ,
Կարծես բոցե մի վարդ բացվեց իմ սրտում,
Եվ չի կարող արբած հոգիս լուռ մնալ,
Եվ չի կարող սիրտս չերգել այդ անբիծ
Հուրը, որ ինձ ժպտաց այսօր ցուրտ հեռվում.
Այդպես արևն է դուրս նայում մութ ամպից
Իմ նաիրյան բա~րձր, բա~րձր աշխարհում...
(Վ. Տերյան)

Chapter 9a

Syntax

Շարահյուսություն

Sentence

Նախադասություն

Section 231

A sentence (նախադասություն) is called a word or a group of words that express a finished thought.

Երևանը Սովետական Հայաստանի մայրաքաղաքն է:

Yerevan is the capital of Soviet Armenia.

Նա պարապում է գրադարանում:

He studies in the library.

Section 232

By their structure sentences divide into simple (պարզ) and compound (բարդ). Simple are called sentences that express only one idea, and compound are those that express more than one idea.

Նա աշխատում է գործարանում:

He works at the factory.

Գիշերը պարզ է, երկինքը ջինջ է ու կապույտ:

The night is clear, the sky is transparent and blue.

Section 233

According to the kind of statement they express, sentences can be:

a. Narrative (պատմողական) Գործարանի շինարարությունը ավարտվեց ճիշտ ժամանակին:

Building of the factory was finished at the exact time. Ինքնաթիռը սավառնում է կապույտ երկնքում: The airplane flies in the blue sky.

b. Interrogative (հարցական) Նա ե՞րբ է գալու: When will he come? Դու հայերեն գիտե՞ս: Do you know Armenian?

c. Imperative (հրամայական) Պայքարեցե՛ք արտադրանքի բարձր որակի համար: Struggle for high quality of production. Կատարի՛ր խոստումդ: Keep your promise.

d. Exclamatory (բացականչական) Հե՛յ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես: Oh, my dear country, how beautiful you are!

e. Note: In imperative sentences a stress mark (˘) is put over the word that expresses the order, in exclamatory sentences the exclamation mark (~), and in interrogative ones a question mark is put (°).

Section 234

The words that make up the sentence are called parts of the sentence (նախադասության անդամներ). Parts of the sentence can be principal (գլխավոր) and minor (երկրորդական). Principal parts of the sentence are the subject (ենթակա) and the predicate (ստորոգյալ). They express the general idea of the sentence. Minor parts of the sentence fall into two groups:

a. supplementing the subject (noun) (ենթակայի լրացումներ): attribute (որոշիչ), uncoordinated attribute (հասկացուցիչ) and apposition (բացահայտիչ).

b. supplementing the predicate (verb) (ստորոգյալի լրացումներ): object (խնդիրներ) and adverbial modifiers (պարագաներ).

Ex. 373

Read and point the simple and compound sentences.

Լուսանում էր: Շչակների տագնապալի սուլոցներն այլևս չէին լսվում: Լենինը ականջ դրեց. ինչ- որ մի հեռու տեղից երաժշտության ձայն էր գալիս: ՄԻ ընդհանուր հետո այդ ձայնը ավելի բարձրացավ, ռազմական երաժշտական խումբը քայլերգ էր նվագում: Լսվեց հրահանգը, և Սմոլնու լայն դարպասից մի գորամաս ներս մտավ: Լենինը պատուհանի մոտ կանգնած դիտում էր: Մարտիկները հագել էին կարճ կիսամուշտակներ, գլխներին՝ կլոր գլխարկներ: Այդ հագուստը նրան ծանոթ թվաց: Եվ նա հիշեց, որ այդպիսի հագուստով էին նրան դիմավորել զինված բանվորները, երբ ինքը վերադարձավ արտասահմանից: Երկինքը գնալով ավելի էր լուսավորվում, Սմոլնու միջանցքներում լսվում էին հաղթական քայլեր, ոգևորված ձայներ:

(Ա. Կոնստով)

Ex. 374

Read and define the sentences according to the purpose of the statement.

-Էյ, հսկեցե՜ք, ի՞նչ էք քնում,
Քաջ զինվորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսե՜ք, տանջվում մթնում,
Քուն չի աչքին մոտ գալի:
Չլինի՞ թե, հաղթահարված,
Ճարը հատած թշնամին
Դավ է դնում մութն ու մեռած
Կես գիշերվա էս ժամին:
Վե՛ր կացե՜ք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գնում ու գալի.
Հե՛յ, զարթնեցե՜ք, առյուծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:
Վե՛ր կացե՜ք, վե՛ր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:

Simple Sentence

Պարզ նախադասություն

Section 235

Simple sentences can be extended (ընդարձակ) and non-extended (համառոտ). Simple non-extended sentences consist of only principal parts of the sentence: subject and predicate.

Աշակերտները պարապում են:

The students are studying.

Երեխան քնած է:

The child is sleeping.

Simple extended sentences in their composition have not only principal, but also minor parts.

Մեր դասարանի աշակերտները պարապում են ջանասիրությամբ:

The students of our group study diligently.

Փոքրիկ երեխաները քնած են:

The small children are sleeping.

Ex. 375

Read and point out the simple extended and non-extended sentences.

1. Աղմուկը չէր դադարում: 2. Այդ խոսքերը նա ասել էր իր բարեկամներից մեկին: 3. Նա հանգստացավ: 4. Մանուկը սարսափեց: 5. Հրաշալի է այդ քաղաքի բնությունը: 6. Նա ոչ մի խոսք չարտասանեց: 7. Այսպես էին անցնում իմ երեկոները: 8. Բակում ձայներ լսեցի: 9. Տիկինը բարկացավ: 10. Ես կենդանիներ շատ էի սիրում: 11. Երկուսն էլ ծիծաղեցին: 12. Գուրգենը մտածում էր: 13. Վերջին խոսքերը ցնցեց Գուրգենին: 14. Նա չհամարձակվեց համբուրել Լիդիային: 15. Լիդիան հասկացավ նրա միտքը: 16. Ամենքը ոտքի կանգնեցին: 17. Շաբաթն անցավ: 18. Նա զգույշ չէր: 19. Գալոն զունատվեց: 20. Գնացքը պատերազմի դաշտից բերում էր մի քանի տասնյակ ծանր ու թեթև վիրավորներ: 21. Ակնարկը պարզ էր:

(Շիրվանզադե)

Principal parts of the sentence and their expression

Նախադասության գլխավոր անդամները և նրանց արտահայտությունը

Subject

Ենթակա

Section 235

The subject indicates an object, about which something is said in the sentence. It answers the questions ո՞վ who? or ի՞նչ what? and takes nominative case.

Subject in the Armenian language is usually expressed by:

1. Noun: Բանվորները եկան: The workers came. Ժողովը վերջացավ: The meeting is over.

2. Pronoun: Նա սովորում է կենսաբանական ֆակուլտետում: He studies in the biological department.
Ո՞վ գնաց: Who went?

As subject can also serve adjectives, numerals, infinitives, and subjective and effective participles playing the role of a noun, e.g.

Փոքրերը քնեցին, իսկ մեծերը դեռ կարդում են:

The little ones are sleeping, but the older ones are still reading.

Երեքը գնացին, երկուսը մնացին:

Three went, two stayed.

Կարդալը հաճելի է և օգտակար:

Reading is pleasant and useful.

Վազողները կանգ առան:

The runners stopped.

Ex. 376

Define by what part of speech the subject is expressed.

1. Սովետական ժողովուրդը հաջողությամբ է կատարում յոթնամյակի պլանները: 2. Բնության վերափոխումը մեր երկրին տալիս է հսկայական բարիքներ: 3. Մեծերը հետևում էին փոքրերի խաղին: 4. Բոլորը ոտքի կանգնեցին: 5. Նորից եկավ գարունը, հալվեց ձյունը, ծաղկեցին ծառերը, ուրախ քչքչում են առունները: 6. Նորը միշտ հաղթում է հինին: 7. Գրքերը սեղանի վրա են: 8. Նա սիրում է մենակ թափառել անտառում: 9. Դուք պատվով կատարեցիք ձեր խոստումը: 10. Խաղացողները հանգստանում էին: 11. Բժիշկը ուշադրությամբ քննեց հիվանդին: 12. Տասներկուսը չորսի վրա բաժանվում է առանց մնացորդի: 13. Դիմավորողները սպասում էին կառավարության: 14. Այնտեղ մնալը վտանգավոր էր: 15. Ես այսօր գնալու եմ կայարան՝ դիմավորելու քրոջս: 16. Երեխաները շարունակում էին իրենց ուրախ խաղը:

Predicate

Ստորոգյալ

Section 236

The predicate shows the action or the condition of the subject. Predicates can be simple (պարզ) and compound (բաղադրյալ). Compound predicates, in turn, can be nominal (անվանական) and verbal (բայական).

Մենք ուսումնասիրում ենք հայերեն:

We study Armenian.

Նրա հայրը բժիշկ է:

His father is a doctor.

Նա կարողացավ աշխատանքն ավարտել ժամանակին:

He managed to finish the work on time.

Simple predicate

Պարզ ստորոգյալ

Section 237

The simple predicate is expressed by conjugating forms of the verb.

Գարունը եկավ:

Spring is here.

Նրանք շուտով կվերադառնան:

They will return soon.

Ես կանգնած եմ պատշգամբում:

I am standing in the balcony.

Նա աշխատում է դաշտում:

He works in the field.

Compound nominal predicate

Բաղադրյալ անվանական ստորոգյալ

Section 238

Compound nominal is called the predicate expressed by a noun combined with forms of the auxiliary linking verb եմ, e.g.

Սուրենը ուսանող է:

Suren is a student.

The nominal part (ստորոգելիական վերադիր) of the compound predicate can be expressed by:

1. a noun: Նա բժիշկ է: He is a doctor. Սա թատրոնի շենքն է: This is the theatre building.
2. an adjective: Գրատախտակը սև է: The blackboard is black. Սենյակի պատերը սպիտակ էին: The walls of the room were white.
3. a numeral: Նրանք քսանվեցն էին: They were twentysix. Դու մեր կուրսում առաջինն ես: You are the first in our course.
4. a pronoun: Գնացողը նա է: He is the departing person. Եկողն ո՞վ է: Who is the coming person?
5. infinitive and subjective participle: Սա կարդալ չէ: This is not reading. Բոլորը գնացող են, մնացող չկա: Everyone is departing, no one is staying.

Notes:

1. Besides the auxiliary verb եմ, as copula can serve verbs: դառնալ to become, համարել to consider, համարվել to be considered, հանդիսանալ to appear, լինել to be, etc. 2. As with the copula եմ, so with these verbs the nominal part of the compound predicate takes the nominative case.

առերը գոլորշի դարձավ:

The water became steam (evaporated).

Դու համարվում ես առաջավոր ուսանող:

You are considered to be a leading student.

Compound verbal predicate

Section 239

Compound verbal is called the predicate consisting of conjugating verb and infinitive. The infinitive usually expresses the general meaning of the predicate, and the verbs in personal forms express various modal meanings. As conjugating forms serve verbs կարողանալ to be able, ուզել to wish, սկսել to begin, շարունակել to continue, etc.

Նա ուզում է շատ լեզուներ սովորել:

He wants to learn many languages.

Դու կարողանում ես հայերեն գրել ու կարդալ:

You are able to (can) write and read Armenian.

Ես սկսեցի թարգմանել հոդվածը:

I began translating the article.

Նրանք որոշեցին օգնել մեզ:

They decided to help us.

Note: In spoken language very often both parts of the compound predicate conjugate, e.g., ուզում եմ գնամ I want to go, ուզում ես գնաս you want to go, ուզում է գնա he wants to go, etc.

Ex. 377

Underline the compound nominal predicate and say what it is expressed by.

1. Բարձր են մթնածորի սարերը: 2. Եթե դռները բաց են, փողոցից կարելի է տեսնել բակն ու տան սրահը: 3. Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր: 4. Ես էլ այդպես էի մտածում, թեև արդեն պատանի էի: 5. Լեռնային կանաչը գրավիչ էր և՛ մեզ, և՛ հոգնած ձիերի համար: 6. Եվ ինչ բարակ էին նրա շրթունքները: 7. Մեր լողանալու չափը կապտելն էր: 8. Նրա սև աչքերը խոշոր են ու տխուր: 9. Հիվանդը պառավի ամուսինն էր: 10. Երիտասարդները Հրազդան շրջանի գյուղերից մեկի կոմերիտականներն էին: 11. Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: 12. Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ: 13. Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: 14. Այդ միտքը հանկարծ հավանական թվաց նրան:

(Ա. Բակունց)

Ex. 378

Read and copy out the compound verbal predicate.

1. Եփրեմ պապը չէր կարողանում երկար ման գալ, հեռու տեղ չէր գնում: 2. Գլուխը բարձր բռնած, աչքերը խուփ, նա կարծես կամենում էր լսել, թե ինչ է կատարվում գյուղում և գյուղից դուրս: 3. Գյուղացի Եփրեմի կենվորները նույնպես պատրաստվում էին քաղաք մեկնել: 4. Գյուղացի ամուսինները պատասխան տալ չէին կարողանում, որովհետև դժվարանում էին վճռել իրենց համար այդ անսովոր խնդիրը: 5. Անձրևների ժամանակ սիրում էր կանգնել բաց տեղ ու թախծոտ աչքերով նայել այդ զարմանալի ջրին, որ թափվում էր վերևից: 6. Աշխատում էր գնալ խիտ տեղերով ու, որքան կարելի է, անձայն: 7. Որոշեց աղաչանքով շարժել նրա գույթը և ներողամտությունը: 8. Նա չէր կարողանում աչքերը բաց անել: 9. Ավագյանը փորձեց մեկին բռնել: 10. Նա որոշեց վաղվանից բրիգադաները դաշտ հանել: 11. Մի առավոտ չկարողացավ ժամանակին

գարթնել: 12. Նա շարունակեց առաջ գնալ՝ մտքում շարադրելով իր ճառը: 13. Օսանը շարունակում է ողբալ: 14. Ժողովրդի մեծ մասը չի ուզում տեղից շարժվել:

Concordation of predicate with the subject

Ստորոգյալի համաձայնությունը ենթակայի հետ

Section 240

The predicate concords with the subject in person and number.

Ես հանգստանում եմ:

I am relaxing.

Դու հանգստանում ես:

You are relaxing.

Նա սպասում է ինձ:

He is waiting for me.

Նրանք սպասում են ինձ:

They are waiting for me.

Ուսանողը կարդում է:

The student is reading.

Ուսանողները կարդում են:

The students are reading.

Section 241

In case the sentence has two or more subjects, the predicate is put in plural.

Արամը և Աշոտը գնում են դպրոց:

Aram and Ashot are going to school.

Գիրքը և տետրակը դրված են սեղանին:

The book and the notebooks are on the table.

Ես, դու և նա բանվորներ ենք:

I, you and he are workers.

Section 242

If as predicate serve pronouns in various persons, the personal form of verb-predicate is put in plural and concords with the first person, and if there is no pronoun of first person, then with the second. (And if there is no pronoun of the second person either, then with the third person!)

(I suggest another way to put it: If the predicate contains pronouns in various persons, the personal form of the verb-predicate is put in the plural. Furthermore, it takes the first person if a first person pronoun is present in the predicate; otherwise, if a second person is present, it takes the second person; otherwise, it takes the third person.)

Ես և դու ընկերներ ենք:

I and you are friends.

Դու և նա դիտել եք այդ թանգարանը:

You and he have seen that museum.

Section 243

If the predicate is used in plural or there are two or more predicates in the sentence, the nominal part of the compound predicate can be both singular and plural.

Մենք Սովետական Միության քաղաքացի ենք:

We are citizens of the Soviet Union.

Մենք Սովետական Միության քաղաքացիներ ենք:

We are citizens of the Soviet Union.

Վահանը և Արշակը ուսանող են:

Vahan and Arshak are students.

Վահանը և Արշակը ուսանողներ են:

Vahan and Arshak are students.

Ex. 379

Say how the predicate concords with the subject.

1. Քաղաքի վրա բացվեց մայիսյան սքանչելի առավոտը: 2. Արևի ցուլքերը ընկնում են շենքերի վրա, աղմկում է իր առօրյան սկսող քաղաքը: 3. Մենք կարգի բերեցինք մեզ և նրա առաջնորդությամբ դուրս եկանք փողոց: 4. Ես արդեն ազատ էի և կարող էի զբաղվել իմ գործերով: 5. Երեխաները ուրախ ու զվարթ աղմկում էին պարտեզում: 6. Դու այսօր լավ պատասխանեցիր: 7. Դուք վաղն անպայման կտեսնեք նրան: 8. Նրանք երեկ են վերադարձել հանգստյան տնից: 9. Նա այսօր հանձնելու է իր վերջին քննությունը: 10. Ես ու դու միասին կգնանք նրանց մոտ: 11. Դու և նա կաշխատեք ժամանակին տեղ հասնել: 12. Մենք և դուք իրար կհանդիպենք "Հաղթանակի" կամուրջի մոտ: 13. Առյուծը և վագրը գիշատիչ կենդանիներ են: 14. Գայլը և արջը գազան են: 15. Մենք համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներ ենք:

Place of the subject and the predicate in the sentence

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը

Section 244

In the Armenian language the subject usually precedes the predicate.

Երեխան քնած է խախաղ քնով:

The child is sleeping quietly.

Լուսինը ծածկվեց ամպերի ետևում:

The moon hid behind the clouds.

The subject can be used after the predicate.

Անցավ ցուրտ ձմեռը:

The cold winter is over.

Եկան գարնան անուշ օրերը:

The nice spring days are here.

Word order in the Armenian language appears to be relatively free: one and the same idea can be expressed by various word orders.

Աշակերտները գնում են դպրոց: Students go to school.

Աշակերտներն են գնում դպրոց:

Աշակերտները դպրոց են գնում:
Գնում են դպրոց աշակերտները:
Դպրոց են գնում աշակերտները:

In usual word order the auxiliary verb is put after the participle (impersonal) forms of the verb, and the copula stands after the nominal part of the compound predicate. In reverse word order the auxiliary verb stands after the word, on which the logical stress falls.

Աշակերտը պատմում է դասը:
The student tells the lesson.
Արամը գերազանցիկ է:
Aram is an excellent student.
Աշակերտն է պատմում դասը:
The student tells the lesson.
Արամն է գերազանցիկ:
Aram is an excellent student.

The first two sentences show the usual word order, and the last two the reverse order.

Ex. 380

Find the principal parts and point out their place in the sentence.

1917 թվականի հոկտեմբերի 25-ին երեկոյան "Ավրորա" հաժանավը մտավ Նևա և կանգ առավ Չմեռային պալատի մոտ: Նավաստիները հանեցին թնդանոթների ծածկոցները, թնդանոթների մեջ արկեր դրին: Լսվեց հրահանգը և որոտաց կրակոցը: Դա պայմանական ազդանշան էր: Սկսվեց գրոհը Չմեռային պալատի վրա: Չմեռային պալատի առաջ կա լայնատարած հրապարակ: Սա հենց այն հրապարակն է, որտեղ 1905 թ. հունվարի 9-ին գնդակոծվեց Պետերբուրգի բանվորների խաղաղ ցույցը: Այն ժամանակ բանվորները գնացել էին ցարից ողորմություն խնդրելու: Հիմա եկել էր իշխանությունն ուժով գրավելու ժամանակը:

Ex. 381

Replace the usual word order with reverse.

1. Ես ապրում եմ հանրակացարանում: 2. Հանրակացարային կյանքը անցնում է շատ ուրախ: 3. Նա իր բոլոր քննությունները հանձնեց գերազանց գնահատականներով: 4. Պարտեզների ծաղիկները թարմ են և գեղեցիկ: 5. Մեր ֆուտբոլիստները դաշտից հեռացան հաղթանակով: 6. Հայ ժողովրդի զավակները Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկան իրենց հերոսությամբ: 7. Նա պարապմունքները անցկացնում էր դաշտում: 8. Կոլտնտեսականները աշխատում են դաշտում: 9. Մեր դասերը անցնում են հետաքրքիր: 10. Այս վեպը կարդացվում է հափշտակությամբ: 11. Բոլոր ծառերի տերևները դեղնել են: 12. Գետերն ու առուները ծածկվել են ձյունով: 13. Բառարանը սեղանի վրա է: 14. Աշխատավորները հավաքվել են կոլտնտեսության ակումբում: 15. Նրանք հետաքրքիր ներկայացում դիտեցին:

E.g., Ես ապրում եմ հանրակացարանում: Ես հանրակացարանում եմ ապրում:
Հանրակացարանում եմ ապրում ես:

Sentence with a missing subject

Զեղչված ենթակայով նախադասություն

Section 245

In the Armenian language one often finds sentences where the subject is missing, but is implied. E.g.

Այսօր տոմսը վերցրի և երեկոյան մեկնում եմ Թվիլիսի:
Today I took a (the?) ticket and will leave for Tbilisi in the evening.
Կգաս մեր տուն և կբերես գրքերդ:
Come to our place and bring your books.

In the first sentence the subject ես (I) is missing, and in the second one the subject դու (you). In Armenian such sentences are called գեղչված ենթակայով նախադասություններ: sentences with missing subject. Wide use of such sentences in the Armenian language is conditioned by the fact that in any tense the verb also has indication of person.

Subjectless sentence

Անենթակա նախադասություն

Section 246

Subjectless is called the sentence, in which there is no subject and it isn't implied. In such sentences the predicate is expressed:

a. By the third person singular, where the verb indicates natural phenomena, e.g. Մթնեց: It got darker.
Լուսացավ: The day broke. Ցրտեց: It got colder. Անձրևում է: It is raining. b. By the third person plural, where the verb indicates an action referring to all, e.g. Երկաթը տաք-տաք կծեծեն: "Cast" iron while it is still hot. Ճտերը աշնանն են համրում: Chickens are counted in autumn. (In this translation "chickens" is the subject!) c. By the third person singular, where the verb indicates an action referring to all, e.g. Ինչ որ ցանես, այն կհնձես: One must reap as one has sown. d. By the third person of passive verb, formed from middle and partly active verbs, e.g. Այս սենյակում չի նստվում: One can't sit in this room. Այդ մասին շատ է խոսվել: A lot has been said about it.

Note: Subjectless sentences of types b) and c) are usually found in proverbs and sayings.

Ex. 382

Copy out and underline the sentences with missing subject.

Մի օր աղախինը Եվային հանձնեց մի նամակ, որ փոստից հենց նոր էր ստացել: Եվան իսկույն ճանաչեց Աշխենի ձեռագիրը: Սաստիկ ճնշող մի զգացումով բաց արեց նամակը և կարդաց. "Եվ ջա'ն. Ուռա~... տոներին քեզ մոտ եմ: Գժվում եմ, որ մտածում եմ, թե ինչպիսի երջանիկ ժամանակ պիտի անցկացնեմ քեզ մոտ ամբողջ երկու~ շաբաթ: Կարծես տասը տարի է, որ չեմ տեսել քեզ: Ինչքան խնդրեցի, որ լուսանկարդ ուղարկես- չուղարկեցիր, ծուլացար: Շատ բարի. երևի առիթ կունենամ փոխարենը հատուցանելու: Սենյակս արդյոք պահպանե՞լ ես նույնությամբ: Մի վայրկյան անգամ չպիտի թողնեմ, որ հեռանաս ինձանից: Գիշերներն էլ պիտի միասին քնենք, իրար քնած: Այլապես թվում է, թե չեմ կարող բոլոր կարոտս հանել երկու շաբաթվա ընթացքում: Հայրիկն ինչպե՞ս է, մայրիկը, Սուրենը, վերջապես՝ դու ինչպես ես, դու, իմ ծվլան ծիծեռնակ: Ա'խ, ինչ սիրուն համեմատություն, գրիչս թռավ ինքնաբերաբար: Հիրավի, որ հիշում եմ անհանգիստ, սիրելի շատախոսությունդ, իսկույն աչքերիս առաջ պատկերանում է ծիծեռնակը գարնանային հրաշալի առավոտյան ծվլալիս": ([Նար-Ղու](#), "Մահը")

Sentence with missing predicate

Զեղչված ստորոգյալով նախադասություն

Section 247

In the sentence the predicate can be omitted partly and completely. Sentences with missing predicate are usually used in the following cases:

- a. If the given sentence has the same predicate as the preceding one. Ես գիրք եմ կարդում, իսկ դու՝ թերթ: I read a book, and you a paper. Աշխենը աշխատում է գործարանում, իսկ Հասմիկը կոլտնտեսությունում: Ashkhen works at the factory, and Hasmik in the farm. b. If there are several predicates with a subject. In this case the auxiliary verb is usually omitted. Նրանք վերցրել էին կարմիր դրոշները և դուրս եկել փողոց: They took (the) red flags and went out (to the street). Նրանք քայլում էին փողոցով և մտածում: They were walking down the street and were thinking. Դուք իսկական մարդ եք և քաղաքացի: You are a real man and a citizen. c. If the given sentence is the answer to the asked question. -Ե՞րբ եք եկել տուն: When did you come home? -Ժամը հինգին: At five o'clock.

Note: The auxiliary verb-copula is also omitted in complex sentences, if it contains two opposite sentences.

Եղբայրս աշխատում է, իսկ քույրս սովորում:

My brother works, and my sister studies.

Դու կարդում ես, իսկ նա գրում:

You read, and he writes.

Ես բանվոր եմ, դու կոլտնտեսական:

I am a worker, and you are a farmer.

Ex. 383

Restore the partly or completely omitted predicates.

1. Նա գյուղից է եկել, իսկ դու՝ քաղաքից: 2. Արամը գնում է տուն, իսկ Աշոտը՝ դպրոց: 3. Գոհարը կինոնկարներ շատ է տեսել, իսկ ներկայացումներ՝ քիչ: 4. Նա առավոտյան նախաճաշում է, վերցնում գրքերը և գնում գրադարան: 5. Դու ծույլ ես, իսկ նա՝ աշխատասեր: 6. Նա ոչ թե աշակերտ, այլ ուսանող է: 7. Նա և՛ սովորում է, և՛ աշխատում: 8. Դու բարեհոգի ես, բայց միևնույն ժամանակ խստապահանջ: 9. Նա ազնիվ է, սկզբունքային և անաչառ:

Impersonal sentence

Անդեմ նախադասություն

Section 248

Impersonal sentences in the Armenian language do not have subject and predicate. They contain an address, call, wish or utterance concerning all. Impersonal sentences generally form by means of the infinitive.

Անե՛ծք պատերազմի հրձիգներին:

Damnation to warmongers.

Խաղաղություն աշխարհին:

Peace to the world.

Պահպանել մաքրություն:

Keep clean.

Հասնել և անացնել կապիտալիստական առաջավոր երկրներին:
To catch up with and leave behind the leading capitalist countries.
Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:
Raise the productiveness of labour.

Ex. 384

Make up impersonal sentences using infinitive forms of the following verbs

պայքարել, բարձրացնել, աշխատել, հիշել, ավարտել, հաղթահարել:

Minor parts of the sentence

Նախադասության երկրորդական անդամներ

Minor parts elucidating the subject

Ենթակայի լրացումները

Section 249

Minor parts elucidating the subject are attributes (որոշիչ), uncoordinated attributes (հասկացուցիչ) and appositions (բացահայտիչ). These minor parts can also elucidate any other part of the sentence that has material meaning.

Կարմիր վարդը գեղեցիկ է:
The red rose is beautiful.
Ես կարմիր վարդ քաղեցի:
I picked a red rose.

In the first sentence the attribute կարմիր (red) refers to the subject, in the second to the direct object.

Attribute

Որոշիչ

Section 250

The attribute indicates sign, quality of the object and answers the questions ո՞ր, ինչպիսի՞նք which? որքա՞ն how much? how many?, etc. The attribute is expressed by adjectives, numerals, pronouns, and subjective and effective participles.

Լուսիկը օրինակելի ուսանողուհի է:
Lusik is a model student.
Երկրորդ կուրսի ուսանողները այսօր հանձնում են առաջին քննությունը:
The second year students were (are!) taking their first exam today.
Այդպիսի ներկայացում դեռ չէի տեսել:
I have never seen such a performance yet.
Բոլոր տեղերն զբաղված են:
All the places are occupied.
Լոնգ մոտեցող գնացքի սուլոցը:
The whistle of the approaching train died away.

Դեղնած դաշտերին իջել է աշուն:
Autumn came on the yellow fields.

In the Armenian language the attribute is always used in unchanged form and doesn't agree with the attributed word in number and case, e.g., սպիտակ թուղթ white paper, սպիտակ թղթի white paper's, սպիտակ թղթից from white paper, սպիտակ թղթեր white papers, etc.

In usual word order the attribute stands before the attributed word, in reverse word order after the attributed word. The postpositional attribute (հետադաս որոշիչ) is rather peculiar to poetic speech, e.g.

Մի' լար, բլբուլ, քես մի' տանջիր,
Որ փոթորիկն անիրավ
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր
Թփից պոկեց ու տարավ:

(Ալ. Ծատուրյան)

Ex. 385

Copy out attributes and say what part of speech they are expressed by.

Պիտի փարվեմ չքնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծուն.
Եվ մայրական անհուն շնչիդ՝
Ցորեն արտով ծփուն:
Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրազեղ կոչով՝
Դեմքդ եմ տեսնում նոր ու պայծառ
Քո հնազեղ ոճով:
Վառ ու հզոր քո ապագան
Կայծակնում է իմ դեմ.
Դու հավերժող իմ Հայաստան՝
Անուն քաղցր ու վսեմ:
(Ալ. Բսահակյան)

... Գիշեր էր, ցուրտ ու խավար: Բանտի կծու հոտերով լցված մթնոլորտի մեջ, սառը գետնի վրա պառկած էին բանտարկյալները: Աղոտ ու պղտոր լույսի տակ երևում էին ցրտից կծկված մարմինների շարքերը: Օրվա լուրերը հուզիչ էին: Կարմիրներն արդեն մոտեցել էին նախավերջին կայարանին: Վաղ առավոտից բանտը մեղվանոցի նման բզզում էր՝ արձագանքելով դրսից եկող տեղեկություններին: Այժմ էլ, ուշ գիշերին, բանտարկյալները քնած երազում էին այդ ցնցող ուրախության թևերի տակ: Միայն անկյունում մի խումբ մարդիկ դեռ արթուն քչփչում էին, քննում մոտավուտ իշխանության՝ ոնկումի կազմը, ընտրում թեկնածուներ:

(Արազի)

Ex. 386

Copy out and underline postpositional attributes with one and prepositional attributes with two lines.

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
Բա~րձր, բա~րձր, հեռավոր ու մենավոր,

Այնտեղ ցածում դեռ նիւրհում են դաշտ ու ձոր,
Դեռ խավար է այնտեղ դաժան ու լռին:
Սակայն շուտով կատարներից հեռանիստ
Արևն այնտեղ հուր կթափե և ոսկի,
Եվ կցնձան դաշտերը լուռ ու հանգիստ,
Երկիրն անհուն կարոտ կյանքի ու խոսքի:
Եվ դու կերգես, զարթնած աշխարհի իմ առաջ,
Կարձագանքես իմ ողջունին սիրառատ,
Կլսեմ ես դարձյալ աղմուկ ու շառաչ
Ու կսիրեմ հեքիաթային առօրյադ:
Լռություն է, մութ է այնտեղ, սակայն իմ
Սրտում արդեն արշալույս է հարություն.
Ողջուն ձեզ մութ ուղիներում երկրային,
Իմ եղբայրներ, հեռուներում ու բանտում:

(Վ. Տերյան)

Uncoordinated attribute

Հասկացուցիչ

Section 251

The uncoordinated attribute indicates possession and answers the question ու՞մ, ինչի՞՞ whose? The uncoordinated attribute is expressed by the genitive case of the noun, by pronouns or by any other substantivized word.

Երևանի ջուրը սառն է:
Yerevan's water is cold.
Ծառերի տերևները դեղնել են:
The leaves of the trees are yellow.
Մենք լսեցինք Աշոտի զեկուցումը:
We heard Ashot's speech.
Ձեր հասցեն չգիտեմ:
I don't know your address.

In Armenian the uncoordinated attribute stands before the attributed word.

Իմ եղբոր գիրքը:
My brother's book.
Գրքի թերթերը:
Lists of the book. (Book lists?)

Postpositional uncoordinated attributes only occur in Armenian in poetic speech, e.g.

Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չքացան:

(Հովհ. Թումանյան)

Ex. 387

Analyse the sentence and underline the uncoordinated attributes.

1. Գարեգին Միսակյանը քիչ թե շատ ունևոր ծնողների գավակ էր: 2. Իմ լուրջ և հանդիմանական հայացքի ազդեցության տակ երևի հասկացավ իր հիմարությունը և կարմրեց, բայց շարունակում էր ժպտալ: 3. Վերադարձա ննջարան և սկսեցի նորից դիտել քնած հյուրիս դեմքը: 4. Դանակով ծածեց գինու դատարկ շիշը և պատվիրեց, որ մի շիշ էլ բերեն: 5. Բայց նա դեռ երկար ժամանակ ինձ հանգիստ չտվեց հարբածի շատախոսությամբ: 6. Շունս մոտ վազեց նրան և սկսեց հոտոտել նրա վարարկուն: 7. Մեր տեսակցության տեղը միշտ անտառն էր: 8. Զարմանալու և հետաքրքրվելու հերթին ինձ հասավ: 9. Մի քանի խոսքով հայտնեցի Սառայի մահը:

(Նար- Դոս)

Ex. 388

Translate into Armenian and underline the uncoordinated attributes.

1. Bookshelves are nailed over the writing table. 2. A thunder clap was heard after the lightning. 3. A fresh smell of apples came from the yard. 4. He liked peasant songs. 5. The walls of the room were painted white. 6. Children made a toy from a match box. 7. The streets of Moscow were full of people in a nice May day. 8. The rain drops knocked on the roof. 9. He always liked grandmother's tales. 10. The river water warmed up by the hot sun rays.

Apposition

Բացահայտիչ

Section 252

The apposition is an attribute that is expressed by a noun and agreeing with the attributed word in number, case and person.

1. Ես՝ բանասիրական ֆակուլտետի ուսանողս, սիրում եմ գրականությունը:
2. Մենք՝ բանասիրական ֆակուլտետի ուսանողներս, բարեխղճությամբ ենք կատարում մեր պարտականությունները:
3. Դասախոսները գոհ են մեզնից՝ բանասիրական ֆակուլտետի ուսանողներիցս:

Agreement in person of the apposition is expressed by joining the corresponding article, e.g. Ես՝ գերազանցիկս, դու՝ գերազանցիկդ, նա՝ գերազանցիկը.

Notes:

1. The apposition is always used after the attributed word and is separated from it by a distributive sign (բութ).
2. Appositions can join the attributed word also by means of words ինչպես, որպես, իբրև (as).

Such appositions do not have their constant place in the sentence and do not agree with the attributed word.

Աշոտը, իբրև առաջավոր ուսանող, պարգևատրվեց:

Ashot, as a leading student, was rewarded.

Աշոտը պարգևատրվեց, իբրև առաջավոր ուսանող:

Ashot was rewarded, as a leading student.

Ex. 389

Copy out appositions with the words they attribute.

I. Այն ժամանակ Գյոթեն՝ խոսքի արքան, Ճանապարհից ելավ ակնածանքով, Կանգնեց հեռու որպես վսեմ արձան՝ Խոնարհելով գլուխը գանգրաթով:

(Ն. Ջարյան)

II. 1. Օդում զգացվում է գարնանային բույրը, դաշտը կանչում է հազարավոր ժպիտներով... իսկ նրանք՝ հացավանցիները, պնդում են, թե դեռ շուտ է, ցեխակոխ կանի: 2. Լուցկու լույսով երկու գիշատիչները՝ Ավագյանն ու կատուն, նայեցին իրար: 3. Ինքը՝ Մացակ Ավագյանը, ռայոնական մի խորհրդակցության ժամանակ նույնպես գովել էր նրան: 4. Ամենից առաջ եկավ հաշվապահը՝ բարձրահասակ, կուրծքը ներս ընկած, քիչ կուզիկ, քառասունի մոտ մի տղամարդ: 5. Սակայն շուտով նրան առաջարկություն արավ նոր ծանոթներից մեկը՝ Վարդան Ղազարյանը՝ ոչ ինժեներ, ոչ զինվորական, այլ հայկոռպի հրահանգիչ: 6. Իբրև նոր մարդ, նա ծանոթ չէր այդ խնդիրներին: 7. Գյուղացիները՝ տղամարդ, կին, երեխա, կանգնած գյուղի ծայրամասի բլուրին՝ դիտում էին, թե ինչպես տրակտորներն ու բրիգադները ցրվում էին գյուղի չորս բուրրը տարածված հանդամասերում: 8. Պողոսը սաստիկ սոված էր: Նրան պարզապես զրկում, կիսաքաղց էր պահում նրա սիրասուն ամուսինը՝ Յոթովիմերանը:

(Ն. Ջարյան)

Minor parts of the sentence elucidating the predicate

Ստորոգյալի լրացումներ

Objects

Խնդիրներ

Section 253

Objects can be direct (ուղիղ) and indirect (անուղղակի).

1. The direct object indicates an object towards which is directly directed the action. The direct object is always expressed by the accusative case and answers the questions ու՞մ whom? ի՞նչ what?

Սովետական ժողովուրդը մածարում է իր հերոսներին:

The Soviet people honours its heroes.

Մայրը գրկեց երեխային:

The mother hugged the child.

Երեկ ես նամակ ստացա:

I got a letter yesterday.

Նրանք կարդացել են այդ գիրքը:

They have read that book.

2. The indirect object indicates an object that has some connection with the action. It is expressed by the dative, ablative and instrumental cases and correspondingly is called indirect object of approaching (մատուցման or հանգման), removal (անջատման), means (միջոցի).

Գիրքը տվեցի Աշոտին: (Մատուցման անուղղակի խնդիր)

I gave the book to Ashot. (Indirect object of approaching)

Նրանք մոտեցան գետին:

They approached the river.

Բոլորը գոհ են Սուրենից: (Անջատման անուղղակի խնդիր)

Everyone is satisfied with Suren. (Indirect object of removal).

Ուսանողը պարգևատրվեց ռեկտորից:

The student was awarded by the rector.

Մեպը սեպով են հանում: (Միջոցի անուղղակի խնդիր)

Fight fire with fire. (Indirect object of means).

Մենք հպարտանում ենք մեր նվաճումներով:

We are proud of our success.

3. The indirect object is very often expressed by means of constructions with prepositions and postpositions.

Նա հերոսաբար մարտնչեց թշնամիների դեմ:

He heroically struggled against his enemies.

Սուրենը պատմում էր իր ճանապարհորդության մասին:

Suren was telling about his journey.

Objects can stand both before and after the predicate.

Ex. 390

Point out the direct objects.

Հասուն քարերն էր դողացնում, Ս-- ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, զեփյուռին ողբացնում, ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը գրգռում: - Բայց մի օր Հանն տեսավ աղայի միակ աղջկան: Տեսավ ու սիրեց: - Ջալիսեն էլ տեսավ Հասոյին, Ջալիսեն էլ սիրեց Հասոյին: Տխրեց խիստ Հասոն: Կորցրեց աշխուժությունը, կորցրեց զվարթությունը: Օրերով պտույտ էր գործում պալատի շուրջը, մինչև իսկ եթե ոչխարն այնտեղ ուտելու խոտ չգտներ: Աչքը աշտարակին նվազում էր տխրագին, սիրտը սրնգի մեջ դնում ու արտասվում:

- Հեռատես էր աղան ու խիստ խորամանկ: Շուտով նկատեց Հասոյի սերը: Բարկացավ, կատաղեց, ուզեց սպանել հանդուգն հովվին, բայց խոհեմ էր, չուզեցավ իր տան անունը կոտրել հավիտյան և մի հովվի արյունը մտնել ընդունայն:

- Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չէր սիրում Լեյլին Մեջլումին: Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չէր սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին:

(Վ. Փափագյան, "Լուր- Դա- Լուր")

Ex. 391

Translate into Armenian and underline the direct objects.

1. He wrapped his books in green paper. 2. The soccer player kicked the ball into the goal of the adversary. 3. Children were washed up in warm water. 4. They went fishing in the evening. 5. Physical training strengthens

ones health. 6. Ashkhen presented to her friend works of Armenian writers. 7. He didn't receive my letter. 8. Many workers of our factory got new departments this year. 9. The pupil didn't know his lesson. 10. By a litre of milk, bread, butter and fruits.

Ex. 392

Find the indirect objects.

Ակոբի ոտները դիպչում են թափված քարերին, ընկնում են ջրի ու ցեխի մեջ, դեմ առնում դիք ելնող ժայռերին: Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի զգում: Նա քայլում է, մտածում օրվա դեպքերի շուրջը և այս ու այն թփի, ժայռի նշանով չափում է մնացած տարածությունը սովոր աչքերով: Երբեմն նա կանգ է առնում, շունչը ետ բերում, նայում ներքևի լույսերին: Բաքվից է եկել Ակոբը, եկել է այնպիսի բուռն եռանդով, ասես մի երկու օրում ուզում է ավարտել ամբողջ հիդրոկայանի կառուցումը: Թունելի աշխատանքից հետո՝ հանգստյան ժամին էլ նա հանգիստ չի նստում. գյուղում կոլտնտեսության գործին է լծվում ու իր թափով վարակում, շարժում բոլորին:

- Նա օգնեց մորը, տաք ջրով լվաց Ակոբի վերքերը, կապեց մաքուր փալասներով ու պառկեցրեց անկողնում, չկարողանալով զսպել իր արցունքները:

- Նա առաջ է գնում, հասնում ձորին: Նայում է ձորին ու զարմանում. դիմացը բարձրացել է մի հսկա արձան: Արձան է կարծես, բայց միևնույն ժամանակ կենդանի մարդ, Լենինն է իր առաջ՝ լույսով ողողված: Նա խորաթափանց աչք է ածում չորս կողմը:

(Արագի)

Ex. 393

Translate into Armenian and underline the objects.

1. He touched my coatsleeve and gently spoke with me. 2. Nicolai finished talking, took off his glasses, cleaned them, looked at the light and began cleaning again. 3. Now soldiers didn't only hear words, but also saw two shadows... 4. Revolutionaries are called for destroying the old world and constructing new life. 5. She heard footsteps of runners from behind and from her side. 6. Grandmother took my hand and led. 7. They taught her to listen to words, dreadful by their straightforwardness and truthfulness. 8. When meeting each other, they talked about factory and cars. 9. Mother liked Natasha's serious face.

Chapter 9b

Adverbial modifiers

Պարագաներ

Section 254

According to their meaning adverbial modifiers divide into adverbial modifiers of place, manner, purpose, time, reason, basis, measure and quantity.

1. Modifiers of place (տեղի պարագա) show the place of the action and are expressed by:

a. nouns in dative, accusative, ablative and locative cases.

Նրանք նստած էին գետի ափին:

Երեխաները ուրախ աղմուկով մտան դպրոց:

Նա քաղաքից է եկել, իսկ դու՝ գյուղից:

Մեքենաներն անցնում են կամուրջով:

Նա ապրում է հանրակացարանում:

b. adverbs of place:

Ամենուրեք եռում է աշխատանքը:

Work is in full swing everywhere.

c. pronouns:

Քիչ առաջ նա նստած էր այստեղ:

He was sitting here a few minutes ago.

Որտե՞ղ ես դու ապրում:

Where do you live?

d. constructions with prepositions and postpositions.

Նստեցի նրա սեղանի մոտ, փոքրիկ նստարանի վրա:

I set (sat) near his table, on a small bench.

Նա գնաց դեպի համալսարան:

He went towards the University.

2. Modifiers of manner (ձևի պարագա) show the method (manner) of the action and are expressed by:

a. adverbs of manner:

Նա ազնվորեն է կատարում իր պարտականությունները:

He does his responsibilities honestly.

Հետզհետե քամին դադարեց, և սկսվեց անձրևը:

The wind gradually stopped and it began raining.

b. qualitative adjectives:

Լուսիկը գեղեցիկ է գրում:

Lusik writes nicely.

Նա լավ է սովորում:

He studies well.

c. nouns or infinitives in instrumental case:

Ուրախությամբ կկատարեմ քո պատվերը:

I will gladly do your request.

Մենք հաճույքով ենք լսում գրականության դասախոսությունները:

We listen to the literature lectures with pleasure.

Նա ծիծաղելով խոսում էր ընկերոջ հետ:

He speaks with his friend laughing.

d. effective participles:

Արամը զայրացած վիճում էր մեկի հետ:

Aram was arguing with somebody angrily.

Մենք զմայլված լսում էինք նրա նվագը:

We listened to her music enraptured.

- e. constructions with prepositions and postpositions.

Ծուխը հեղեղի պես ներս հոսեց:

Smoke as a stream burst into the room.

Վաշտը քայլում էր մի մարդու պես:

The company marched as one person.

Նա դուրս գնաց առանց գլխարկի:

He went out without a hat.

3. Modifiers of time (ժամանակի պարագա) show the time of the action and are expressed by:

- a. nouns in dative, accusative, ablative, instrumental and locative cases.

Լուսաբացին մենք արդեն որսատեղում էինք:

We were already in (at, at the) hunting place towards the sunrise.

Գիշերով նա դուրս եկավ տնից:

He left home at night.

Շաբաթ օրը աշխատանքը շուտ է վերջանում:

Work ends early on Saturday.

Գիշերվանից հորդ անձրև է գալիս:

It has been raining hard since last night.

Մի ամսում հիվանդը բավականին կազդուրվեց:

The sick quite recovered (recovered quite a bit, a lot) in a month.

- b. adverb of time:

Երեկ ես լսում էի "Անուշ" օպերան:

I was listening to the opera "Anush" yesterday.

Հիմա ուր ես գնում:

Where are you going now?

Այսօր հանդիպելու եմ ընկերոջս:

I will meet my friend today.

- c. second form of present participle:

Վազելիս երեխան ընկավ:

The child fell while running.

Փողոցով անցնելիս տեսա նրան:

I saw him cross the street.

Մեզ տեսնելիս դու միշտ ժպտում ես:

You always smile upon seeing us.

- d. constructions with prepositions and postpositions.

Ճաշից հետո նրանք գնացին զբոսանքի:

They went for a walk after dinner.

Համերգի ժամանակ լույսը հանգավ:

The light went out during the concert.

Մինչև ուշ գիշեր ես զբաղված էի:

I was busy till late at night.

4. Modifiers of purpose (նպատակի պարագա) show the purpose of the action and are expressed by:

- a. nouns or infinitives in dative case:

Նրան ուղարկել են հացի:

He was sent after bread.

Գնում եմ գրադարան պարապելու:

I am going to the library to study.

- b. constructions with postpositions համար for, նպատակով with the purpose of, հանուն for, etc.

Մենք պայքարում ենք կոմունիզմի հաղթանակի համար:

We struggle for the victory of the communists.

Նա այստեղ է եկել իր ընկերոջը հանդիպելու նպատակով:

He came here to meet (with the purpose of meeting) his friend.

5. Modifiers of reason (պատճառի պարագա) show the reason of the action and are expressed by: nouns in ablative case:

Նա հուզմունքից չէր կարողանում խոսել:

- a. He was not able to speak because of excitement.

Անքնությունից աչքերը կարմրել էին:

His eyes were red because of insomnia.

- b. constructions with postpositions համար for, պատճառով because of.

Հիվանդության պատճառով աշխատանքի չի եկել:

He didn't come to work because of being sick.

Անկարգապահության համար նկատողությունն արեցին:

He was rebuked for being undisciplined.

6. Modifiers of measure and quantity (չափ ու քանակի պարագա) show the degree and measure of display (?? progress maybe?) of the action and are expressed by:

- a. adverbs of measure and quantity.

Բազմիցս խոսվել է այդ մասին:

A lot has been talked about it.

Ձեր տղան շատ խելոք է:

Your son is very clever.

- b. combinations of numerals with other parts of speech.

Խաչատուր Աբովյանը երկու անգամ բարձրացել է Արարատի կատարը:

Khachatur Abovyan has reached Ararat's top twice.

Հինգ հարյուր տարի ապրել եմ կանգնած:

I lived 500 years standing.

7. Modifiers of basis (հիմունքի պարագա) show the bases (grounds) of the action and are expressed by:

- a. noun in instrumental case:

Գիտական խորհրդի որոշմամբ 4-րդ կուրսի ուսանողները գնալու են արտադրական պրակտիկայի Լենինգրադ:

As the study council decided fourth year student are to take their productive internship in Leningrad.

Ex. 394

Read and point out the modifiers.

Անիից էի վերադառնում: Անցնում էի հայկական մի գյուղի միջով: Գիշերը սաստիկ անձրև էր եկել, այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ էր փլցրել: Փողոցներից հեղեղներ էին վազում:

Երկինքը ծածկված էր միաձույլ կապտագույն ամպերով: Դեռ էլի մեկ- մեկ անձրևում էր: Լույսը նոր էր բացվել: Կանչում էին մի քանի ուշացած աքաղաղներ: Խրճիթների երդիկներից սկսել էին ծխի սյուներ բարձրանալ ու տարածվել տանիքների վրա: Գյուղի վերջին խրճիթին էին հասել, երբ նրա դուռը ճոնչաց, գոմի ներսում կովի բառաչ լսվեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան, և առաջս դուրս եկավ մի ալեգարդ ծերունի, բահն ուսին: Նա մի վայրկյան ինձ նայեց, հետո պատերի տակով տեղ փնտրեց քայլելու: Քիչ հետո գյուղից դուրս էինք եկել: Ես էլ նրա քայլերով սկսեցի գնալ: ...Անցնելով, մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը: Ամեն մի փոսի մեջ պղտոր, կարմրագույն ջուր էր կիտվել, և շատ հասկեր լողում էին նրանց երեսների, որպես խեղդվածներ:

(Վ. Փափագյան)

Ex. 395

Translate into Armenian and underline the modifiers.

1. We went for an interesting excursion yesterday. 2. The boy's face blushed with happiness at the news of his brother's arrival. 3. I forgot to take some needful stuff (necessities?) on the road because of hurrying. 4. It has been raining hard all day. 5. I didn't need to go to town. 6. My friend didn't come to classes because of being sick. 7. The wood work was done really skilfully. 8. We went to the mountains to see an old fortress. 9. In spite of first expression (??) the companion appeared to be very merry and talkative. 10. In spite of the bad weather everyone went hiking. 11. Suddenly a fire blushed in the turning (what is this about?). 12. We enraptured (delightedly) admired the picturesque sights of the Caucasian nature. Homogeneous parts of the sentence

Sentence?

Նախադասության համադաս անդամներ

Section 255

Parts of the sentence referring to one and the same word and answering one and the same question are called homogeneous parts (համադաս). Homogeneous parts of the sentence can be both principal and minor. E.g.

Homogeneous subjects.

Ոսկին, արծաթը և պլատինը թանկարժեք մետաղներ են:

Gold, silver and platinum are gems.

Հայր, մայր, տղա, աղջիկ կանգնած են պատշգամբում:

Father, mother, son, and daughter are standing in the balcony.

Homogeneous predicates.

Մենք խոսում, կարդում և գրում ենք հայերեն:

We speak, read and write in Armenian.

Քաղաքի հրապարակը լայն է ու գեղեցիկ:

The town's square is wide and beautiful.

Homogeneous attributes.

Պայծառ ու ջինջ երկնքում փայլում են աստղերը:

In the bright and clear sky shine stars.

Նա գնեց սպիտակ և կարմիր վարդեր:

He bought white and red roses.

Homogeneous objects.

Ես տեսել եմ Մոսկվան, Լենինգրադը և Թբիլիսին:

I have seen Moscow, Leningrad and Tbilisi.

Նա իր եղբորից և քրոջից շատ նամակներ է ստանում:

He receives many letters from his brother and sister.

Homogeneous modifiers.

Նա կարգապահ է և՛ տանը, և՛ աշխատանքում:

He is disciplined both at home and in the workplace.

Լուռ, դանդաղ, մտախոհ անցնում էր փողոցով:

He crossed the street silently, slowly and pensive.

Վարող ես գալ այսօր, վաղը կամ մյուս օրը:

You may come today, tomorrow or the day after tomorrow.

Ex. 396

Find homogeneous parts and point out what parts of the sentence they perform.

1. Մի ամբողջ ժամ հռռացին, աղաղակեցին և ցրվեցին: 2. Գարուն է: Մեր փողոցում ծաղկում են նշենիները, խնձորենիները, տանձենիները, սալորենիները, ակացիաները: 3. Նա կամացուկ և համարյա անլսելի բաց արեց դուռը, մտավ ներս: 4. Փոքրիկ փողոցը հեղեղվեց մարդկանցով և կառքերով: 5. Պայծառ ուրախությունն արևով ու ուրախությամբ փովել էր այգու վրա: 6. Տների առջևի հրապարակներում և փողոցներում դեռ ոչ ոք չկար: 7. Վարոսը հիշեց այն խաղաղ, մենավոր բնակարանը, որտեղ իրենց սերն էր ծաղկում: 8. Շուշանիկը հարգում էր նրա խելքը, կամքը, ուժը, կրթությունը, զարգացումը, բայց մտերմանալ... ոչ... դեռ չէր կարողանում: 9. Ամբոխը սանդուղքի վրա տեսնելով իր տիրոջը, աղաղակեց ուրախությունից ու հիացմունքից:

Address, parenthetical words, exclamations

Կոչականներ, միջանկյալ բառեր, միջարկություններ

Section 256

In the Armenian language in a sentence may be used words that are not parts of the sentence. Such are addresses (կոչականներ), parenthetical words (միջանկյալ բառեր), exclamations (միջարկություններ).

Section 257

Address is called words designating persons or subjects to which is addressed the speech.

Ընկերներ՛ր, միշտ բարեխղճորեն կատարեցե՛ք ձեր պարտականությունները:

Friends, always follow your responsibilities honestly.

Միրելի հայրենիք, ամեն ինչ կանենք քո բարգավաճման համար:

Dear Native land, we will do everything for your prosperity.

Addresses can have initial, middle, or final positions in a sentence.

Մանկության օրե՛ր, երազի նման

Անցաք գնացիք, այլ չեք դառնալու:

(Նալբանդյան)

Եկեք, քույրե՛ր, սեք սարերի
Չքնադագեղ ոգի՛նե՛ր,
Եկեք ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ:
(Թումանյան)
Քեզ ի՞նչ կարող է ասել իմ երգը,
Այնքան երգեր ես լսել, Արա՛քս:
(Սահյան)

Addresses usually carry a stress on themselves (or exclamations) and separate from other parts of the sentence by commas.

Section 258

Parenthetical words show the attitude of the speaker towards the utterance he expresses, e.g.

Նա, անշուշտ, կօգնի մեզ:
He, surely, will help us.
Բոլորը, ըստ երևույթին, գիտեն այդ մասին:
Everyone probably knows about it.
Նրանք, երևի, այսօր կգան:
They will probably come today.

As parenthetical words are used: *ասես* as if, *կարծես* seems like, *իհարկե* of course, *անշուշտ* undoubtedly, *ի միջի* այլոց by the way, *համենայն դեպս* in any case, *ըստ երևույթին* probably, *հավանաբար* probably, *անպայման* surely, *անկասկած* doubtless, *բարեբախտաբար* fortunately, *դժբախտաբար* unfortunately, etc. Parenthetical words are usually separated from the other parts of the sentence by commas.

Section 259

Exclamatory words are used to express emotions and feelings of the speaker.

- Վա՛յ, վա՛յ, Մոսի՛ ջան, ինձ մի՛ սպանիր:
- Ա՛խ, Անու՛շ, Անու՛շ, էդ ի՞նչ ես ասում:
- Օ՛հ, ի՛նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ:

(Հովհ. Թումանյան)

- Հե՛յ, ազատության անպարտ զինվորներ:

(Հ. Հակոբյան)

Exclamatory words take exclamation marks and are separated from other parts of the sentence by commas.

Ex. 397

Find addresses.

Ցնձա՛, երկիր, արևային Հայաստան,
Հայոց հարսներ, մայրեր, քույրեր, ցնձացե՛ք
Հնչե՛ք ուժգին, շեփոր թմբուկ հազար ձայն,
Լույս- աղջիկնե՛ր, վարդի անձրև տեղացե՛ք:

Բարով եկաք, հայոց հերոս զավակներ,
Ահեղ կռվով, փառքով մտաք դուք Բեռլին...
Ցնձա', երկի'ր, վարդեր քաղեք, աղջիկներ'ր,
Հպարտ նայեք գալիք պայծառ օրերին:
(Մարմեն)

Ex. 398

Find parenthetical words and explain the punctuation marks.

1. Ոչի'նչ, դա մի նորությունն չէ: 2. Բոլոր նորասակները լալիս են, այո', իհարկե, ուրախությունից:
3. Հացթուխի հուսակտուր խոսքերի մեջ, կարծես, զգաց և հասկացավ, թե ինչ պատուհաս էր եկել իր գլխին: 4. Մայրը զգաց, որ, անշուշտ, մի բան է պատահել, և, իհարկե, կասկածեց, թե ինչ կարող է պատահած լինել: 5. Ոչ, երևի այդպես չի, սուտ են ասում: 6. Ամենից առաջ, հարկավ, նա հիշեց աղջկան, թողեց խանութը բաց և ոտաբոբիկ, գլխաբաց վազեց տուն: 7. Այժմ նա, կարծես, մոռացել էր ամեն ինչ:

(Շիրվանզադե, "Չար ոգին")

Compound sentence

Բարդ նախադասություն

Section 260

The compound sentence consists of two or more simple sentences, expressing one complex idea. Compound sentences can be of two types:

1. Complex (բարդ համադասական)
2. Compound (բարդ ստորադասական) (this is a recursive definition...)

Complex sentence

Բարդ համադասական նախադասություն

Section 261

A complex sentence consists of two or more equal sentences (something like: of equal importance, but not equal: they are not the same). The simple sentences that make up the complex sentence are usually connected with coordinating conjunctions.

Զանգը հնչեց, և բոլորը ներս մտան դահլիճ:

The bell rang and everybody entered the hall.

Երկինքը աստիճանաբար սկսեց պարզել, բայց անձրևը դեռ չէր դադարում:

The sky gradually cleared up, but the rain didn't stop.

Նա երկար փնտրել է ինձ, իսկ ես չեմ իմացել այդ մասին:

He has looked for me for a long time, but I didn't know about it.

Simple sentences can be also connected without any conjunctions.

Գարունը եկավ, հալվեց ձյունը, քչքչում են առվակները:

Spring came, the snow melted, the streams bubble.

Պարզ գիշեր է, երկնքում փայլում են աստղերը:
It's a clear night, the stars are shining in the sky.

Compound sentence

Բարդ ստորադասական նախադասություն

Section 262

In the compound sentence one sentence serves for elucidation of the other. The sentence which is elucidated is called the principal (գլխավոր), and the sentence that elucidates the principal sentence the subordinate (երկրորդական). The subordinate sentence connects with the principal one by means of subordinating conjunctions or by relative pronouns.

Principal	Subordinate
Նա ասաց,	որ գալու է երեկոյան:
He said	that he will come in the evening.
Subordinate	Principal
Երբ անձրևը դադարեց մենք վերսկսեցինք աշխատանքը:	
When the rain stopped	we restarted the work.

In the formation of compound sentences there are the following peculiarities:

a. To the principal sentence can refer several equal compound (you probably mean subordinate here) sentences, independent from each other. Such sentences are called collaterally subordinated (համաստորադասական), e.g.

Երբ արևը մայր մտավ, և արևմուտքից սկսեց փչել մեղմ զեփյուռը, մենք շարունակեցինք մեր ճանապարհը:

When the sun set and light wind blew from the west, we continued our way.

b. A subordinate sentence not only can elucidate the principal sentence, but also another subordinate sentence.

The subordinate elucidating the principal sentence is called subordinate of the first degree (առաջին կարգի երկրորդական նախադասություն), and the subordinate elucidating a subordinate of the first degree is called subordinate of the second degree (երկրորդ կարգի երկրորդական նախադասություն), etc.

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը: 1. This is the house that built master Ohan. Էս էն ցորենն է, որ պահված է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը: 2. This is the grain that was hidden in the house that built master Ohan. Principal Subordinate of I degree Subordinate of II degree 3. Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը, որ պահված է էն տանը, This is the mouse that ate the grain that was hidden in the house Subordinate of III degree որ շինել է վարպետ Օհանը: that built master Ohan.

4. Principal Subordinate I Subordinate II Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը This is the cat that caught the mouse that ate the grain Sub. III Sub IV. որ պահված է էն տանը որ շինել է վարպետ Օհանը: that was hidden in the house that built master Ohan.

Section 263

In a compound sentence the subordinate sentence can stand:

a. before the principal sentence, e.g. Երբ արևը մայր մտավ, երկնքում փայլեցին աստղերը: When the sun set, stars shone in the sky. Եթե անձրևը չգար, մենք անտառում կլինեինք: If it didn't rain, we would be in the forest. b. after the principal sentence, e.g. Զգացվում է, որ նա այսօր հոգնած է: We can feel that he is tired today. Նա հայացքը չէր հեռացնում երեխաներից, որոնք խաղում էին պարտեզում: He didn't take his eyes off the children, that were playing in the park. c. in the middle of the principal sentence. Այս գիրքը, որ դու ինձ նվիրեցիր, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: The book you gave to me is very interesting to read. Բեռնատար ավտոմեքենաները, որոնք շինարարության համար քար, ավազ են բերում, այդ փողոցով են անցնում: The trucks that for building bring stone, sand pass by that street. (Maybe better: The trucks that bring stone and sand for the construction work, pass by that street.) d. According to the place of the subordinate clause in the sentence, they are called prepositional (առաջադաս), postpositional (հետադաս) and interpositional (միջադաս).

=Ex. 399

a. Show compound and complex sentences b. In the compound sentences underline the principal sentence with one and the subordinate sentence with two lines.

1. Աննան դրանով չխաբվեց: Նա թերահավատությամբ — լրջորեն նայեց նրա աչքերին — ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Զաքարը մտավ, — նա այլ—ս ոչինչ չասաց: 2. Բայց կինը մինչ—անգամ չժպտաց, այլ շատ լրջորեն — մտախոհ նայեց Զազունյանին: 3. Արամիկը գնաց դեպի հյուրասենյակ, իսկ Էմման՝ դեպի դուրս: 4. Երկրորդ օրը Զազունյանը հիշեց, որ պետք է գնա Մարկոսյանների տուն: 5. Խոսակցությամբ տարված՝ նրանք չնկատեցին, թե ինչպես ժամանակն անցավ: 6. Չանցավ երեք րոպե, հյուրանոցի երկրորդ հարկի պատշգամբներից մեկի դուռը բացվեց, — գլխաբաց դուրս եկավ Զազունյանը, իսկ նրա ետ—ից՝ Զաքարը: 7. Այդ րոպեին Էմման այնքան նազելի, այնքան հրապուրիչ, այնքան գեղեցիկ էր, որ Զազունյանը ակամա հիացավ: 8. Էմման գլուխն ավելի խոնարհեց ձեռագործի վրա, — նրա մատներն սկսեցին ավելի արագ շարժվել: 9. Նրանք դարձյալ նույն նյութի մասին էին խոսում, երբ Զաքարը վերադարձավ պաշտոնատեղից: 10. Նա անուշադիր — տխուր հայացքով նայեց իր շուրջը, մեծ մասամբ դատարկ աթոռներին, որովհետ—հանդիսականների մեծ մասը դուրս էր գնացել դահլիճից, նայեց — ծանոթ օթյակին, որպեսզի լավ տեսնի, թե այն ինչ մարդ է, որից Զազունյանն այնպես խորշում է: 11. Այդ րոպեին դուռը արագ բացվեց, — շտապով ներս մտավ մանկահասակ մի կին: 12. Արդեն բավական ուշ էր, երբ նա կամեցավ վերադառնալ իր սենյակը: 13. Եր—ում էր, որ շատ էր տանջվում: 14. Աննան արագ նայեց նրան, վեր թռավ — վազեց նրա ետ—ից, բայց դռան մոտ հանկարծ կանգ առավ — դառնությամբ ժպտաց: 15. Այլ—ս այնպես անհամբեր չէր, ինչպես գիշերը: 16. Բոլորովին չէր նեղանում Էմմայից, որովհետ—հասկանում էր, որ նրա փոփոխության պատճառը սերն էր: 17. Նա այն ժամանակ ուշքի եկավ, երբ սկսեցին ծափահարել: 18. Նա ծիծաղեց, — նրա աչքերում եր—ացին արտասուքի փայլուն կաթիլներ:

(Նար-Դոս, "Զազունյան")

Ex. 400

Define the place of the subordinate sentences.

1. Տիկին Անուշը շարունակ պնդում էր, թե պետք է անպատճառ ամուսնուց բաժանվի: 2. Կայարանում արդեն հավաքվել էր մի մեծ բազմություն, երբ Սմբատը հասավ այնտեղ: 3. Սմբատը, որ վաղուց չէր տեսել նման հանդեսներ, անցնում էր սենյակից սենյակ և հետաքրքրությամբ դիտում: 4. Նրանք եկան այն եզրակացության, որ այդ կինը վախենում էր տալ այդ լուրերը տարածող մարդկանց անունները: 5. Հասմիկը հիշեց, որ Էլուշը հաճախ ռուսերեն էր խոսում իր ամուսնու հետ: 6. Երբ արդեն լիովին ապահով էի սենյակիս մեջ, նոր զգացի, որ ամբողջ մարմնովս դողում եմ: 7. Նույն օրը ուշ երեկոյան, երբ Գարեգինի մոտից նոր էի վերադարձել տուն, նա եկավ

այնքան հարբած, որ ոտի վրա հագիվ էր կանգնում: 8. Այն ամառանոցը, ուր պատահել է այս դեպքը, այնքան փոքր է, որ աշխարհագրական մեծ քարտեզում ասեղի ծայրի չափ էլ չի բռնում: 9. Երբ տնեցիները դեռ քնած էին, Նարգիզը բարձրացավ գոմի կտուրը:

Types of subordinate sentences

Երկրորդական նախադասության տեսակները

Section 264

The subordinate sentence performs the function of one of the parts of the principal sentence-subject, the nominal part of a compound predicate, attributes, objects or modifiers.

Subordinate clause (sentence) - subject (ենթակա երկրորդական նախադասություն).

Պարզվեց, որ նա քո բարեկամն է:

It turned out that he is your relative.

1. Հայտնի է, որ նա ազնիվ մարդ է:

It's known that he is an honest man.

Ով շատ է աշխատում, նա շատ է ստանում:

Who works much, gets much.

Նրանք, ովքեր լավ են սովորում, բարձր գնահատական են ստանում:

Those who study well, get good marks.

Attribute subordinate clause (որոշիչ երկրորդական նախադասություն).

2. Ես կարդացի այն գիրքը, որ դու նվիրել էիր ինձ:

I read the book you gave to me.

Subordinate clause - uncoordinated attribute (հասկացուցիչ երկրորդական նախադասություն).

3. Հարգեցեք նրանց հիշատակը, ովքեր հերոսաբար զոհվեցին պատերազմում:

Respect the memory of those, who heroically died in the war.

4. Note: Subordinate clause - uncoordinated attributes are used comparatively seldom.

Subordinate clause - apposition (բացահայտիչ երկրորդական նախադասություն).

5. Երևանը, որ մեր հանրապետության մայրաքաղաքն է, օրեցօր գեղեցկանում է:

Yerevan, which is the capital of our country, gets prettier every day.

Դուք, որ լավագույն բանվորներ եք, գերակատարում եք ձեր պլանները:

You, as best workers, overfulfil your plans.

Subordinate clause - predicate (ստորոգելիական երկրորդական նախադասություն).

6. Ես այն չեմ, ինչ երեկ էի:

I am not what I was yesterday.

Subordinate clause - direct or indirect object (ուղիղ կամ անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն).

Նա զգաց, որ դրությունը անտանելի է:

7. He felt, that the situation is unbearable.

Մենք ջերմորեն ողջունեցինք նրանց, ովքեր հյուր էին եկել մեզ մոտ:

We warmly greeted those who came to us.

Մենք պարծենում ենք նրանցով, ովքեր ուսման առաջավորներ են:

We are proud of those who are study leaders.

Modifier subordinate clauses (պարագա երկրորդական նախադասություններ).

Երբ անձրևը դադարեց, մենք շարունակեցինք մեր ճանապարհը:

When the rain stopped, we continued our way.

Դու սիրում ես զբոսնել այնտեղ, ուր աղմուկ չկա:

8. You like to walk there, where there is no noise.

Նա պատմեց այնպես, ինչպես ես էի պատմել:

He told the same way as I had.

Այսօր չկարողացանք անտառ գնալ, որովհետև ուժեղ անձրև էր եկել:

We couldn't go to the forest today, as it had rained hard.

Եթե դու համաձայն ես, հեշտությամբ գլուխ կբերենք այդ գործը:

If you agree, we will easily deal with that matter.

Ex. 401

Define the types of subordinate clauses.

1. Երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնածորում ստվերները թանձրանում են: 2. Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը: 3. Իջավ ձորը, լսեց, թե ինչպես սառույցի տակ խոխոջում է ջուրը: 4. Վեր բարձրանալիս Ավին զգաց, որ մեկը հետևում է իրեն: 5. Նստում էր առվի մոտ, նայում ջրի հանդարտ հոսանքին, չոր ծղոտներին, որոնք գալիս էին հեռուներից և ջրի հետ գնում: 6. Գլխահակ ծաղիկները բարձրացնում էին իրենց գլուխը, նայում արևին, որ կեսօրին, երբ արևը թեժանա, նորից խոնարհեն: 7. Իմ ծանոթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով և դառնությամբ: 8. Մեր գրույցը խանգարվեց, որովհետև լավեց ոչխարների մայունի աղմուկը: 9. Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գրկում է տղային, որ կորյունի նման կռվում էր հասակակից երեք աղջիկների հատ: 10. Անտառն արդեն վերջացել և սկսել էր լեռնային փարթամ մարգագետինը, որի հատուկտոր թփերը ապացույց էին, թե ժամանակին մարգագետնի սևահողում աճել է կաղնին: 11. Կանաչների միջով հոսում էր գետակը, որի ակունքները անտառի մթին ձորերի աղբյուրներն էին: 12. Ձիապանի կանչը ինձ հիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու:

(Ա. Բակունց)

Ex. 402

Translate into Armenian, underline the subordinate clauses.

1. The car stopped near the house where the kolkhoz office was. 2. The book, that my friend gave to me, has many valuable practical advices in it. 3. If you do physical training every day, you will become a hardened person. 4. Our group organized a literature study group for better study of Armenian literature. 5. A pioneer camp was opened in the forest, nor far from the river for pupils to rest well during the summer. 6. The steam locomotive was late two hours as a big storm broke out in the sea. 7. In front, where the road to the forest turned to the river, a kolkhoz herd was seen. 8. As the summer is, so is the grain.

Reduction of subordinate clause

Երկրորդական նախադասության կրճատում

Section 265

A compound sentence can be turned into a simple one. While doing this the part of the sentence that was expressed by the subordinate clause kind of reappears. While converting the compound sentence the following happens:

Conjunctions and relative words are omitted.

Սա այն աշակերտն է, որը երեկ ուշացել էր դասից:

This is the student, that was late yesterday.

1. Սա երեկ դասից ուշացած աշակերտն է:

This is the student, who was late yesterday.

Ես անում եմ այն, ինչ դու ես պահանջում:

I do what you demand.

Ես անում եմ քո պահանջածը:

I do what you demand.

2. The verbal predicate of the subordinate clause is replaced with an adverbial participle (a predicate expressed by means of forms of the present and past imperfective tense, turns into a subjective participle, and the predicate, expressed by means of past tense turns into an effective participle).

Սա այն աշակերտն է, որ լավ է կարդում:

This is the student that reads well.

Սա լավ կարդացող աշակերտն է:

This is the student that reads well.

Սա այն աշակերտն է, որ լավ է կարդացել:

This is the student that used to read well.

Սա լավ կարդացած աշակերտն է:

This is the student that used to read well.

3. The nominal part of the compound predicate remains, and the copula is omitted or replaced by the impersonal forms of the verb.

Ես գիտեմ, որ նա բժիշկ է:

I know that he is a doctor.

Ես գիտեմ նրա բժիշկ լինելը:

I know his being a doctor.

4. The subject of the subordinate clause, expressed by relative pronouns is omitted, other forms of the subject remain the same and are used in nominative or genitive case.

1. Սրանք այն մարդիկ են, որոնք թշնամու դեմ պայքարել են հերոսաբար:

Սրանք թշնամու դեմ հերոսաբար պայքարած մարդիկ են:

2. Պարզվում է, որ նա քո ընկերն է:

Պարզվում է նրա քո ընկեր լինելը:

It turns out that he is your friend.

3. Տեսա Սուրենին, որը իմ երբեմնի դասընկերն էր:

Տեսա Սուրենին՝ իմ երբեմնի դասընկերոջը:

I saw Suren that once was my classmate.

4. Ասացին, թե Գուրգենը գնացել է տուն:

Ասացին Գուրգենի տուն գնալու մասին:

They told that Gurgen went home.

Ex. 403

Point out the type of the subordinate clauses. Turn the compound sentences into simple.

1. Այն, ինչ որ տեսա, ինձ հաճելի զարմացում պատճառեց: 2. Պարզվում է, որ նա անհույս սիրահարված է մի երգչուհու վրա: 3. Վիճաբանությունը գուցե շարունակվեր, եթե կրկին ներս չմտներ Լևոնը: 4. Հետևյալ օրն իսկ եկավ սենյակս և ուրախ- ուրախ հայտնեց, թե մայրն արդեն առողջանում է: 5. Վերջին յոթ տարվա ընթացքում նա լսել է գրեթե բոլոր նշանավոր երգիչներին ու նվագիչներին, որոնք այցելել են Ռուսաստան Օդեսայի վրայով: 6. Երբ ավարտվեց, մի քանի վայրկյան լուռ էր, անշարժ, աչքերը տակավին հառած արեգակի շողերին, որոնք հետզհետե գունատվում էին: 7. Բայց նա չլսեց: Անշարժ էր. նուրբ շրթունքները, որոնք միշտ սեղմված էին, դողում էին: 8. Չարմանալին այն էր, որ թատրոնների շուրջն էլ չէր հանդիպում Լևոնին: 9. Ցավալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ ստորին վայրերը: 10. Լևոնը փնտրում էր կիթառը, որ գնա յուր գործին: 11. Մի չնչին գումար, որ կարողացավ նա խնայել առաջին ամիսը, նորից վերակենդանացրեց նրա հույսերը: 12. Այդ օրը ես վերադարձա դրսից տուն ու զիջեցի, որպեսզի չհանդիպեմ Լևոնին: 13. Սակայն Լևոնն ավելի մեծահոգի և վեհանձն էր, քան կարող էի երևակայել:

(Շիրվանգադե, "Արտիստը")

Ex. 404

Find the subordinate clauses of the second degree and define their type.

1. Երբ լսեց, որ Շմավոնին հանում են և նրա փոխարեն իրենց կոլխոզի նախագահ նշանակում Լևոն Լամբարյանին, գլխին կացնի հարված ստացածի պես նայեց Մաթոս Գրիգորյանին: 2. Հաշվապահը փորձեց ժպտալ, բայց երկյուղն այնքան ծամածռեց նրա ժպիտը, որ Գրիգորին թվաց, թե նա պատրաստվում է լաց լինել: 3. Սրտատրոփ սպասում էր, թե Լիպարիտն ինչ կպատասխաներ մայրաքաղաքից եկած հեռագրին, որ գրված է Սանդարյանի համաձայնությունն առնելուց հետո: 4. Լիպարիտը մի պահ մտահոգ նայեց նրան և ապա սկսեց բացատրել, թե ինչպես եղավ, որ Ղազարյանն առաջադրվեց իբրև Հացավանի պարտկազմակերպության քարտուղար: 5. Ավելի հարմար բնակարան ընտրելու նպատակով Էլուշը շրջեց գյուղի բոլոր թաղամասերը և համոզվեց, որ ամենալավ բնակարանը հենց այն է, որ զբաղեցրել է իր ամուսինը: 6. Գիտե՞՞ արդյոք ընկեր Վաչագան Խորխոռունին, որ կոլխոզի դրությունն այնպես չէ, ինչպես նկարագրել է իր ակնարկում: 7. Կոլխոզի նախագահը վերադառնում էր հանդից, որպեսզի ստուգի գումերը և նորից ստուգի խոտի դեզը, որը նրա աչքին շատ արագ էր սկսում հալվել: 8. Եթե Մարիամից պահանջեցին, որ նա իր տասակետը հայտնի, պարզ է, որ Փիլոյից էլ կպահանջեն:

(Ն. Չարյան, "Հացավան")

Participle locution

Դերբայական դարձվածք

Section 266

Participle locution is called a part of the sentence, expressed by an impersonal form of the verb with elucidatory words. The fundamental part of participle locution can be infinitive, future participle, effective and subjective participles, also secondary form of present participle, e.g.

Ես սիրում եմ մենակ թափառել անտառում:

I like to ramble in the forest alone.

Նրա կարդացած զեկուցումը հետաքրքիր էր:

The speech (lecture?) he gave was very interesting.

Յրից փախչողը կրակի մեջ ընկավ:

The one running away from the water got into a fire.

Տուն գնալիս հանդիպեցի ընկերոջս:

When going home (When/as I went home) I met my friend.

Participle locutions in the sentence can serve as subject, attribute, object and other parts of the sentence.

Parts of the sentence, expressed by impersonal forms of verbs, in contrast to usual parts of a sentence, can have by their side verbal minor parts of the sentence, and also a subject.

Parts of participle locution are called secondary subject (կողմնակի ենթակա), secondary object (կողմնակի խնդիր), secondary attribute (կողմնակի պարագա).

Examples of secondary subjects:

1. Լույսը բացվելուն պես մենք շարունակեցինք մեր ճանապարհը:
As soon as the day broke we continued our way.
2. Քո կարդացած զեկուցումը հետաքրքիր էր:
The speech you read was really interesting.
3. Կատարիր բժշկի տված խորհուրդները:
Follow the doctor's advices. ("Follow the advices the doctor has given.")
4. Արևի մայր մտնելուց առաջ մենք վերջացրել էինք մեր աշխատանքը:
Before the sun set we had finished our work.

Secondary subject has the form of nominative or genitive case:

1. Գայլից վախեցողը անտառ չի մտնի:
Who is afraid of wolves will not go to the forest.
2. Գետին մոտեցողները հանկարծ կանգ առան:
People that were coming near to the river stopped.
3. Լույսերով ողողված դահլիճը լեփլեցուն էր:
The hall that was full of lights was full.

Examples of secondary attribute:

1. Պարտեզում նստած ծերունիները զրուցում էին անցած- գնացած օրերի մասին:
Old men sitting in the park were talking about their past days.
2. Ուրախությունից փայլող նրա աչքերում արցունքի կաթիլներ երևացին:
In his eyes that shone from happiness showed up drops of tears.
3. Չմռանը ձյունով պատած դաշտերը նորից կանաչեցին:
The fields that were covered with snow during the winter again became green.
4. Մրցության գնացածները վերադարձան հաղթանակով:
People that went for competitions came back with victory.

Participle locutions and subordinate clauses are usually mutually substituting syntactic constructions. Thus, for example, in the following sentences the subordinations can be replaced by participle locutions.

1. Ծերունիները, որ նստած էին պարտեզում, զրուցում էին անցած- գնացած օրերի մասին:
Պարտեզում նստած ծերունիները զրուցում էին անցած- գնացած օրերի մասին:
2. Դաշտերը, որոնք ձմռանը ձյունով էին պատած, նորից կանաչեցին:
Չմռանը ձյունով պատած դաշտերը նորից կանաչեցին:

Ex. 405

Copy out and underline the participle locutions.

1. Նրա մաքուր սափրված երեսի կարմիր գույնը մի վայրկյանում թռավ դժբախտ լուրը լսելու ժամանակ: 2. Թավ հոնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ արտահայտող սև աչքերը: 3. Մի քանի բոպեից հետո սևագույն նժույգներով լծված փառավոր կառքը թանկագին, տաք մուշտակի մեջ փաթաթված Իվան Գրիգորիչին տանում էր գործարան: 4. Տեղ հասնելով, Իվան Գրիգորիչի առաջին հայացքը հազիվ կարողացավ ճանաչել կրակի և ծխի մեջ կորած գործարանը: 5. Վերջին խոսքերն արտասանելիս ծերունու ձայնն աստիճանաբար փոխվում էր, հետզհետե թուլանալով: 6. Ամենքը փլչող պատերից հեռացած, խոնվում էին փողոցներում: 7. Սուսանի հետ խաղացող երեխաների թվում կար մոտ տասնմեկ տարեկան մի տղա: 8. Եվ այս նպատակին հասնելու համար գիշեր- ցերեկ նա մտածում էր, տեսակ- տեսակ ծրագրեր էր կազմում: 9. Այսպիսի մտածմունքներով պաշարված, մի երեկո Մեյրանը իրենց բակում գլուխը կրծքին թեքված շրջում էր հետ ու առաջ: 10. Վիրավորված սրտով, փշրված հույսերով Մեյրանը բաժանվելով Սուսանից, տուն վերադարձավ: 11. Փողոցների անկյուններում ցցված լապտերների լույսը սփռվել էր ցեխոտ ճահիճների վրա:

(Շիրվանզադե)

Ex. 406

Replace participle locutions with subordinate clauses.

1. Այդ խոսքերով հետ նա բաց արեց իր սենյակի դուռը և ետ կանգնեց՝ Էմմային ներս թողնելու համար: 2. Զազունյանի մեկնելուց հետո Էմմայի համար աշխարհը կարծես դատարկվեց: 3. Դեպի Զազունյանը տաժած զգացմունքը սառչում էր նրա սրտի մեջ և այլևս այնպես չէր անհանգստացնում նրան: 4. Զազունյանին տեսնելուն պես՝ մի դող անցավ նրա ամբողջ մարմնով: 5. Աննան Զազունյանի հետ ծանոթանալու հենց առաջին օրից զգում էր, որ նրա հետ կարելի է միայն հեզնորեն խոսել: 6. Այնուհետև մինչև Զազունյանի գնալը նրա խելքը կարծես գլխին չէր: 7. Արագ քայլերով Միքայելյանը փողոցի մի կողմից մյուսն անցնելիս, փոքրիկ կամուրջի վրա, որ զցած էր փողոցի և մայրի միջև անցնող ջրանցքի վրայից, մեկը հանկարծ կտրեց նրա առաջը:

(Նար- Դոս, "Զազունյան")

Ex. 407

Analyse the sentences and find minor parts.

1. Արահետով բարձրանալիս միշտ ետ էի նայում: 2. Նա կտրեց փողոցը, զգուշությամբ կոխելով անձրևից թրջված և լապտերների լույսից փայլվող սալաքարերը: 3. Այդ փողոցով էին անցնում և գյուղերից եկող սայլերը, որովհետև հին ճանապարհը նորոգում և լայնացնում էին: 4. Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզի մանուշակը ճոճք է թվում, աշխարհը ծիրանագույն բուրաստան: 5. Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են և չեն տեսել ոչ Կաքավաբերդը, ոչ նրա քարափը: 6. Ձիերը անգղների կոնչոցից վախեցան, խլշեցին ականջները, իրար մոտեցան: 7. Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը: 8. Անծանոթ մարդկանց ներս գալը նրանց զարմացրեց: 9. Ծառերին փաթաթված վագերը օրորվում էին քամուց, Դիլան Դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև: 10. Մինչև լուսաբաց իր ապրած տարիները հազար անգամ վերհիշեց:

(Ա. Բակունց)

Punctuation

Section 267

There are three groups of punctuation marks in the Armenian language:

- a. stops (տրոհության նշաններ)
- b. intonation marks (առոգանության նշաններ)
- c. explanatory marks (բացահայտության նշաններ)

Stops

Տրոհության նշաններ

Section 268

Stops are: վերջակետ (full stop) marked by two dots (:); միջակետ (colon) marked by one dot (.); ստորակետ (comma) (,); բուժ dividing mark, marked by the sign (˘).

1. The full stop վերջակետ (:) by its use corresponds to the English full stop. Սրաֆիոն Գասպարիչը գրեթե ուժով նրանց տարավ մյուս սենյակը: Այնտեղ նրանք կարող էին ազատություն տալ իրենց լեզուներին ու արցունքներին: Հետո նա բոլորին խնդրեց անցնել այնտեղ: Սմբատը դուրս եկավ, թաշկինակը աչքերին սեղմած: Նրա հետևից գնացին մյուսները:

(Շիրվանզադե) 2. The colon միջակետ (.) corresponds to English semicolon and sometimes to the colon. a. between two connected, but relatively independent sentences. Պարզ գիշեր է. լուսինը փայլում է երկնքում: b. before the direct speech, e.g. Վ. Ի. Լենինը ասել է. "Իմպերիալիզմը կապիտալիզմի բարձրագույն փուլն է": c. after reduced words (abbreviations, apparently), e.g. Ընկ. Վարդանյանը մեր սիրելի ուսուցիչն է: 3. The comma ստորակետ (,) is used in the same cases as in English. Այն ժամանակ, երբ հայերն իրենց երկրում զբաղված էին խաղաղ աշխատանքով, սուրհանդակ եկավ Արտաշատ՝ Հայաստանի մայրաքաղաքը, և հայտարարեց, որ պարսից զորքը պատրաստվում է հարձակվելու Հայաստանի վրա: 4. The dividing mark բուժ (˘) by its use in some cases corresponds to the colon, and in others to the English dash. The dividing mark is used: a. before the apposition to separate from the attributed word: Սուրենը՝ մեր կուրսի ավագը, կարդաց ուսանողների ազգանունները: Suren, the monitor of our group, read the students' surnames. b. instead of the missing part of a sentence: Մենք գնում ենք տուն, իսկ դուք՝ պարտեզ: We go home, and you to the park. c. to single out the participle locution: Ու թներն ահա փռած տիրաբար՝ Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:

(Հովհ. Թումանյան)

Intonation marks

Առոգանության նշաններ

Intonation marks of the Armenian language are: շեշտ stress (´), հարցական նշան question mark (?), բացականչության նշան exclamation mark (~).

1. Stress շեշտ is put on the last syllable of the word, to express order, address, command. Stress can also be used to stress some words in the sentence. Էս է, որ կա... Ճիշտ էս ասում. Թասդ բե՛ր, Էս էլ կանցնի հանց երագում, Թասդ բե՛ր:

(Թումանյան) Դու՛ ես իմ ճրագը, դու՛ ես իմ վարդը... - Թոե՛ք, անցե՛ք, իմ սիրուն ոչխարներ,- երգում էր Հասուն: - Թոե՛ք, իմ թավամագ գառնուկներ եկե՛ք ձեր տիրոջ մոտ:

(Վ. Փափագյան) 3. A question mark հարցական նշան is put over the last syllable of the word that expresses the question. Դու աշխատու՞մ ես գործարանում: Դու՞ ես աշխատում գործարանում: Դու գործարանու՞մ ես աշխատում: 4. An exclamation mark բացականչական նշան is put over the last syllable of the word, expressing exclamation, surprise, joy, happiness, fear, adoration, etc. Ինչպիսի~ հերոս ընկերներ մեռան,- Մեռան՝ չկորան...

(Հ. Հակոբյան)

Եփրեմ պապը շա~տ ծեր էր:

(Ստ. Զորյան)

-Հե~յ, քաջ Թաթուլ, կանչեց Շահր, Աննա՞հ էիր քեզ կարծում. Ե՛կ, բերել եմ ես քո մահը, Ի~նչ ես թառել ամրոցում:

(Թումանյան)

Explanatory marks

Բացահայտության նշաններ

Explanatory marks are:

a. Անջատման գծիկ dash (-)

The dash (անջատման գիծ) in the Armenian language is mainly used in dialogues, e.g.

- Դուք ճանաչում եք Լևոնին,- դիմեց ինձ օրիորդ Ռաիսան, հրեուհի ասամնաբույժը:

- Ո՛չ:

- Օ, այդ աններիելի է,- գոչեցին Լուիզան ու Լուկրեցիա Կավալարոն:

- Իմ կարծիքով,- ասաց Կավալարոն,- ով գեղարվեստագետ է, իրավունք չունի Լևոնին չճանաչելու:

(Շիրվանզադե)

b. Գծիկ hyphen (-)

The hyphen (գծիկ) is put between two words expressing one idea, e.g.

մեն- մենակ, քսան- երեսուն, կայարանում կանգ առավ Երևան- Թբիլիսի գնացքը, փունջ- փունջ, խումբ- խումբ, շուտ- շուտ:

c. Կախման կետ omission mark (...)

The omission mark (կապման կետեր) is put to indicate unfinished expressions, e.g.

"Լուր-դա-լուրը" դադարեց, նրա խաղի վերջին թրթռումը գնաց մեռնելու օդի մեջ...

Հետո... լավեց մի ճիչ:

Ու երկու մարմիններ արագ պտույտ գործելով օդի մեջ, գնացին միասին ջախջախվելու անդնդի խորքում... և միմյանց գրկում:

Հասոն ու Զալիսեն էին դրանք:

(Վ. Փափագյան)

d. Բազմակետ three dots (....)

Three (or four?) dots (բազմակետ) is used to indicate an expression given briefly (in abbreviated form), e.g. Բարձր սարեր, ա'յ սարեր.... Դուք էլ ինձ հետ ձեն տվեք....

(Հովհ. Թումանյան)

e. Չակերտներ quotation marks (" ")

Quotation marks (չակերտներ) (" ") are used in the same cases as in English, e.g.

Ես կարդում եմ "Կոմունիստ", "Պրավդա", "Գրական թերթ" և այլն:

Նրանք անգիր գիտեն Հովհ. Թումանյանի "Անուշ" և "Թմկաբերդի առումը" պոեմները:

f. Փակագծեր brackets ()

Brackets (փակագծեր) () are used in the same cases as in English, e.g.

Արամը (այդպես է իմ ընկերոջ անունը) այսօր մեկնում է գյուղ:

Մռայլ սպան լուռ շրջում էր աջ ու ձախ

(Արդյոք հիշե՞ց նա իր մորը սգավոր),

Գունատվում էր մութ գիշերը և ուրախ

Արեգակն էր ոսկեգոծում սար ու ձոր:

(Վ. Տերյան)

g. Ենթամնա transferring mark (-)

